



ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ
ՏԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ



947.925



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ.Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՉ

A II
87842



ՀՏԴ 941 (479.25)

ԳՍԴ 63.3(2Հ)

Վ 301

Տպագրվում է ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր. Բ.Յ.ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Յեղիմակը խորապես շնորհապարտ է
ՀՈՎԱՍԵՓ և ՅԱՐՄԻԿ ՍԱՆՈՒԿԻ ԱՎԵՏՅԱՆՆԵՐԻՆ
(Թեհրան) սույն գրքի տպագրությունը
հովանավորելու համար

Վ 301 Վարդանյան Վ.Ս.

Արժույթի մեջ հայոց պատմության մեջ – Եր., ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատ., 2002, 224 էջ:

Աշխատությունը նվիրված է հին և միջնադարյան Հայաստանի
նախարարական ականավոր տոհմերից մեկի Արժույթի մեջ
պատմությանը: Յեղիմակը հայ և օտարաբան սկզբնաղբյուրների լայն
հենքի վրա շարադրում է Արժույթի տոհմի պատմությունը սկսած
վաղնջական հնադարից մինչև նոր ժամանակները: Գրքում
լուսաբանվում են տոհմի անցած ուղու պատմարժան իրողությունները,
հայոց պետականության պահպանման գործընթացներում նրա
խաղացած դերը, Հայաստանի մյուս նախարարությունների, ինչպես նաև
հարևան պետությունների, ամիրայական տների հետ տոհմի
փոխհարաբերությունները: Քննության են առնվում Արժույթի
իշխանության (նաև թագավորության) զարգացման առանձնահատ-
կությունները:

Նախատեսվում է հայոց պատմությամբ հետաքրքրվողների և
ընթերցող լայն հասարակայնության համար:

Վ $\frac{0503020913}{703(02)-2002}$ 2002

ԳՍԴ 63.3(2Հ)

ISBN 5 – 8080 – 0504 – 3

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2002

ՆԱԽԱԲԱՆ

Հայոց պատմության սակավ ուսումնասիրված էջերի մանրաքննիչ լուսաբանման համար գիտական կարևոր նշանակություն ունի Հայաստանի նախարարական տոհմերի բազմադարյա պատմության հետազոտումը: Այդ կերպ հնարավոր է դառնում համակողմանիորեն ու քննախույզ մտահայեցմամբ վեր հանել ընդհանուրի և մասնավորի փոխառնչությունները, բացահայտել հայոց պատմության հանգուցային պահերը և ավելի լայն ու կատարյալ հենքի վրա ներկայացնել պատմական իրողությունները:

Արծրունիների նախարարական տոհմը Հայաստանի տեղաբնիկ, անդրածին տներից մեկն էր, հայտնի իր քաղաքական կշռով, լայնատարած հողատիրույթներով, ռազմուժով, պետական կենսունակությամբ: Տոհմի քաղաքական ճակատագիրը կոփվեց երկրին պատուհասված բազում փոթորիկների բովում, հայ ժողովրդի ինքնուրույնության, խաղաղակեցության, հոգևոր գոյատևման համար մղված պայքարի արյունոտ քառուղիներում: Վաղնջական հնադարից Արծրունի տոհմը կանգնած է եղել հայոց քաղաքակրթության ակունքների մոտ, դրսևորելով իր պետական կորովն ու քաղաքական, վարչական իրավախոհությունը: Արծրունիների իշխանությունը գորեղ գործոն էր հարավային Հայաստանի Վասպուրական աշխարհի և հարակից շրջանների քաղաքական կյանքում: Այն ապահովեց երկրամասի բնակչության ազգային և հոգևոր-մշակութային դիմազօծի, նրա ստեղծած հայրենավանդ արժեքների, ներքին ինքնուրույնության հարատևումը:

Սույն աշխատության մեջ փորձ է արվում համակողմանիորեն հետազոտել Արծրունյաց տոհմի անցած ուղու պատմաբան իրողությունները, վեր հանել հայոց պատմության մեջ այդ ականավոր տան խաղացած հիրավի շատ նշանավոր, հաճախ երկրի համար բախտորոշ դերը: Հնագույն և

թարգմանածո արձանագրային տվյալների հենքի վրա քննության են առնվում տոհմի ծագումնաբանությանն առնչվող կնճռոտ խնդիրները: Աղբյուրագիտական լայն հետմախորքի վրա հետազոտվում է Արծրունիների պատմական բազմաեւեջ անցյալը, ցույց է տրվում նրանց ծավալած գործունեությունը, ռազմաքաղաքական խոյանքները, պետական կորոպը, խավարակուռ ու բռնարկու ուժերին դիմակայելու նրանց վճռականությունը: Արծրունիները խիզախորեն մարտադաշտ էին նետվում, երբ չարագոր ոսոխը վիճարկում էր նրանց քաղաքական շահերը:

Իր աշխարհագրական դիրքով Արծրունիների իշխանապետությունը (ապա նաև թագավորությունը) կապող միջնօղակ էր հյուսիսային Հայաստանի և Միջագետքի ու Պարսկաստանի, ինչպես նաև Արևմուտքի ու Արևելքի միջև, քանի որ այնտեղով էր անցնում միջագային տարանցիկ առևտրաուղու հարավային ճյուղավորումը: Այդ հանգամանքը եականորեն նպաստեց Արծրունյաց իշխանության տնտեսական զարգացմանը, սակայն այն նաև ունեցավ հույժ բացասական հետևանքներ, քանի որ տարանցիկ դիրքը պատճառ դարձավ, որպեսզի Արծրունիների տիրույթները դառնան քոչվոր թուրքական ցեղերի առավել ծանր ու աղետաբեր հետևանքներով հղի գաղթաշարժի, կործանիչ հրոսումների հիմնական թատերաբեմերից մեկը:

Արծրունյաց տոհմը բազում դարեր դիմակայեց փորձության որոգայթներին, քաղաքական կյանքի ալեբախումներին, իր անձնվեր հայրենասիրությամբ հյուսելով հայրենի փառքի թագապսակը: Նրանց մեջ եղան նաև մուրաշավիղ գործիչներ, սակայն նրանց ուղեգիծը ոչ մի եզրով չէր կարող խաթարել տոհմի ընդհանուր նկարագիրը: Չնայած ավատական կարգի կողմից կյանքի կոչված տարանջատ միտումներին, Արծրունիները հաճախ հանդես էին գալիս որպես ազգային միասնության, հաներաշխության դարբնողներ, սատարում էին հայոց թագավորների միարարական ջանքերին:

Ընթանալով օտար բռնատիրությունների դեմ ընդվզումի, ոգորումների ուխտված ճանապարհով, Արծրունիները կիսում

էին Հայաստանին պատուհասված դառնութիւնները, մնալով նրա ընդհանուր պետական շահերի ոլորտում: Նրանց գործունեությամբ հայրենիքի մի հատվածում կերտվեց ու բյուրեղացավ ժողովրդի քաղաքական ու հոգևոր նկարագիրը: Արծրունիների իշխանությունն անշուշտ ուներ, իր յուրահատուկ կյանքը, զարգացման ուրույն ծիրը, որը պայմանավորված էր ժամանակի տնտեսական, քաղաքական և գաղափարական, հոգևոր խթաններով: Դրանք երբեմն ծնունդ էին ներհակ տրամադրություններ, որոնք, սակայն, չէին խաթարում պետականության պահպանմանն ուղղված Արծրունիների նպատակասլաց ջանքերը: Նրանց քաղաքական ձգտումների առանցքը հայրենիքի ինքնուրույնության ու հոգևոր նկարագրի պահպանման հոգսերն էին: Քաղաքական հողները հաճախ էին ալեկոծում Արծրունյաց գերակայությանը ենթակա գավառները, չխնայելով դարակուտակ ազգային արժեքները: Սակայն, քանի դեռ պահպանվում էր Արծրունիների զորութուն ու զինական ավյունը, ի դերն էին հանվում ոսոխների նյութած բոլոր պատուհասները, երկիրը պահպանում էր իր ազգային նկարագիրը, ինքնուրույնությունը:

Աշխատության համար աղբյուրագիտական հենք են ծառայել հայկական և օտարաբան մատենագիրների երկերը, երբեմն նաև վարքագրական, մեկնողական գործերը: Արծրունիների պատմությանն անդրադարձել են հայագետ ուսումնասիրողները, որոնք առավելապես շոշափել են մասնավոր խնդիրներ: Ելնելով իրենց հետազոտության բնույթից, նրանք քննության են առել Արծրունիների պատմության առավել կարևոր և Հայաստանի ընդհանուր պատմությունը երանգավորող իրողությունները, գերազանցապես նրա՝ IV - V դարերի, ապա նաև IX - XI դարերի պատմության համապատկերում, կատարելով արժեքավոր դիտարկումներ:

ԳՆՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԾՐՈՒՆՅԱՅ ՏՈՀՄԸ ՀՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՄԻՆ

Արծրունիները հին Հայաստանի բնիկ նախարարական տոհմերից մեկն էին: Ուրարտական արձանագրություններում այդ տոհմի կենտրոնը հիշատակվում է Արծունիունի (Ar-su-ni-u-i-ni-ni) անունով: Այսպես, Վան քաղաքի մերձակայքում գտնվող Միերի դռան վրա Ուրարտուի թագավոր Սենուա I-ի կողմից մ.թ.ա. IX դարի վերջին թողած արձանագրության մեջ նշվում են Արծունիունի քաղաքի աստվածներին արված զոհամատուցումները¹: Սենուայի մեկ այլ արձանագրության մեջ (պահվում է Հայաստանի պատմության թանգարանում) ասվում է, որ այն թողնվել է Արծունիունի քաղաքում, ի պատիվ Խալդ աստծու²: Արծունիունի քաղաքում նույն արքայի թողած մեկ այլ արձանագրություն հայտնաբերվել է Վասպուրականի Բերկրի քաղաքում³: Վանա լճի ափերքին (ներա մեջ Բերկրի (Բենդիմահի) գետի թափվելու մերձակայքում) ընկած Կարախան գյուղում ի հայտ բերված մեկ ուրիշ արձանագրության մեջ Սենուա I-ը նշում է, որ «Արծունիունի քաղաքի համար կառուցել է Խալդյան հոյակերտ դարպասները»⁴: Վերջիններս, ինչպես վկայված է նույն թագավորի մեկ այլ արձանագրության մեջ (պահվում է Վանի թանգարանում), պետք է հավերժացնեին Ուրա աստծու հիշատակը⁵: Նույն աստծու անունով լեռ է հիշվում Վասպուրականի Շուշանց (Քևանլի) գյուղում

¹ Н. Арутюнян, *Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, с. 48.*

² *Նույն տեղում, էջ 153:*

³ *Նույն տեղում, էջ 61:*

⁴ *Նույն տեղում, էջ 63:*

⁵ *Նույն տեղում, էջ 153:*

հայտնաբերված արձանագրության մեջ, որտեղ ասվում է, որ Ուրա լեռան դիմաց, Մենուան կառուցել է Խալդի աստծու դարպասները⁶:

Ըստ երևույթին, Ուրան եղել է Արծունիունի քաղաքի հովանավոր աստվածը: Արծունիունիի բնակիչները թերևս երկրպագել են նաև ուրիշ երկու աստվածների, որոնք հիշատակված են Միերի դռան արձանագրության մեջ Ուա, Նալաիների անուններով⁷:

Գ.Ղափանցյանի կարծիքով Ուրա աստվածությունն ունի շումերաաքադական ծագում⁸ (հիշենք շումերական Ուր, Ուրուկ քաղաք-պետությունները): Գուցե Ուրա դիցանվան հետ աղերսվում է խեթական թագավոր Սուրսիլիս II-ի (մ.թ.ա. մոտ 1347 – 1317թթ.) տարեգրության մեջ Հայասա երկրում հիշվող Ուրա անունով բերդաքաղաքը (տեղորոշվում է Բաբերտ քաղաքին հարող տարածքում)⁹: Իհարկե, հնարավոր չէ այս անունների միջև վստահելի աղերսներ գտնել:

Այն փաստը, որ Մենուա I-ը շինություններ է կատարել Արծունիունի քաղաքի համար, վկայում է, որ այդ շինարար արքան Արծունիունիի աստվածներին ճանաչել է իբրև իր թագավորության պաշտոնական դիցարանի անդամներ: Դա բխում էր այն իրողությունից, որ թե՛ Արծրունի, և թե՛ հայկական մյուս տոհմերն ու ցեղերը, որպես հայկական լեռնաշխարհի բնիկ կազմավորումներ, հետագայում (մ.թ.ա. IXդ. հետո) ընդգրկվելով Վանի թագավորության կազմում, շարունակել են երկրպագել իրենց տոհմական աստվածություններին, որոնք տեղ են գտել նաև համաուրարտական դիցարանում:

Տակավին 1880-ական թվականներին, անգլիացի արևելագետ Ա.Սեյսը Արծունիունին նույնացրեց Արծրունի

⁶ Նույն տեղում, էջ 138: Նշելի է, որ Արծունիունի անունը հիշվում է նաև Վասպուրականի Տոսպ գավառի Սղզա գյուղում Մենուա I-ի թողած մեկ այլ արձանագրության մեջ (նույն տեղում, էջ 127):

⁷ Ա.Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 105:

⁸ Գ.Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 49:

⁹ Վ.Խաչատրյան, Հայաստանը մ.թ.ա. XV - VII դարերում, Երևան, 1998, էջ 34, 71:

տոհմանվան հետ¹⁰: Հետագայում այդ կարծիքը պաշտպանություն գտավ ուսումնասիրողների մոտ¹¹:

Ստուգաբանորեն Արծունիունի տեղանունը առնչվում է բնիկ հնդեվրոպական «արծիվ» գոյականի հետ: Այն կազմված է հայերեն «արծիվ» արմատից և հետագայում ավելացված ուրարտական -ունի վերջածանցից, որը հարակցվել է հայկական հիմքին¹²: Հավանական է համարվում, որ արծիվ բառը հայերենից փոխ են առել ուրարտացիները¹³: Մի ենթադրության համաձայն արծիվ բառը բիաիներեն է, ի հաստատումն որի վկայաբերվում է դադստանյան լեզուներում այդ բառի առկայությունը¹⁴: Վաղուց ապացուցված է, որ կովկասյան լեզվախմբին պատկանող ժողովուրդները հայերենից են փոխ առել «արծիվ» բառը¹⁵: Ուստի հնարավոր է, որ Դադստանի լեզուներում ևս օգտագործվեր հայերենից փոխառյալ այդ բառը:

Միերի դռան արծանագրության մեջ¹⁶ հիշվող Արծիբիդինի (Ar-si-be-di-ni-e) դիցանունը ևս կազմված է հայերեն «արծիվ» արմատից: Այն համարվել է արական աստվածություն¹⁷, նաև Արծրունյաց տոհմի գլխավոր աստվածություն¹⁸, մեկնվել է

¹⁰ A. Sayce, *The Cuneiform inscriptions of Van* ("Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland", XIV. London, 1882, p. 502).

¹¹ Գ. Ղափանցյան, *Ուրարտուի պատմություն*, էջ 48; С. Бархударян, *Урартское происхождение армянского нахарарского рода Арцруни* ("Исследования по истории культуры народов Востока", Москва-Ленинград, 1960, с. 29 – 38); V. Banateau, *Beitrag zum studium der urartischen Ortsnamen in der armenischen Toponime* («Հանդես Անտոնայ», 1961, Ժ-ԺԲ, էջ 1071):

¹² Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, Երևան, 1987, էջ 107, 441 – 447:

¹³ Г. Джаукян, *Урартские заимствования в армянском языке* ("Культурное наследие Востока", Ленинград, 1985, с. 369).

¹⁴ Հ. Կարազեոզյան, *Սեպագիր տեղանուններ*, Երևան, 1988, էջ 70:

¹⁵ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. I, Երևան, 1971, էջ 320: *Եշելի է նաև այն փաստը, որ հայերեն «արծուի» (արծիվ) բառն ունի վեդայական իր գուրահեռը (տես Օ. Շնրոков, Место Армянского языка среди индоевропейских и проблема армянской прародины («Լրաբեր ՀԽՍՀ ԳԱ» (հաս. գիտութ.), 1980, N5, էջ 83):*

¹⁶ *Корпус урартских клинообразных надписей*, с. 45, 47.

¹⁷ Г. Меликишвили, *Наири-Урарту*, Тбилиси, 1954, с. 370 – 372.

¹⁸ С. Бархударян, *ук. ст.*, с. 36.

«արծիվ-աստված» իմաստով, առնչվել է Արծրունյաց տոհմի հետ և ընկալվել որպես նրանց հովանավորող երևույթ¹⁹: Հավանաբար Արծիբիդիների դիցանունը կազմված է հայերեն «արծիվ» և «դիք» բառերից²⁰:

Սիերի դռան արծանագրության մեջ նշված «Արծունիունի քաղաքի աստվածներ» հոգնակի ձևը թույլ է տալիս ենթադրելու, որ այստեղ «աստվածներ» արտահայտությունը հայերեն «դիք» բառի համարժեքն է: Հայտնի է, որ հին հայ հեղինակները արական աստվածներին կոչում էին սոսկ հոգնակի ձևով՝ «դիք», ինչն արտահայտում էր հեթանոսական բազմաստվածության իրողությունը²¹: Արծանագրության փորագրողը թերևս հնուտ է եղել Արծունիունի քաղաքի բնակիչների լեզվին՝ հայերենին:

«Արծունիունի քաղաքի աստվածները» արտահայտությունից կարելի է նաև մակաբերել, որ այդ քաղաքը եղել է Արծրունի տոհմի հոգևոր կենտրոնը և նրա բնակիչների կողմից ընկալվել է իբրև սրբազան վայր՝ Վանի թագավորությունից շատ դարեր առաջ: Նկատենք, որ հին (մինչև լուրարտական) Հայաստանի դիցարանը հիմնականում ներկայացնում էին քաղաքների աստվածները: Այսպես, Հայասայի դիցարանում բացի գլխավոր աստված Ուգուռից, մնացած բոլոր աստվածությունները ներկայացնում էին որևէ քաղաք²²: Այդ քաղաքներից յուրաքանչյուրը հայկական որևէ ցեղի անրացված կենտրոնը՝ բերդավանը կամ պարզապես բերդն էր, ինչը հատկանշական էր նաև Վանի թագավորության մեջ ընդգրկված «քաղաքների», այդ թվում նաև Արծունիունիի համար: Բացի պաշտամունքային կենտրոն լինելուց, Արծունիունին Վանի թագավորության առաջացումից շատ առաջ հավանաբար ունեցել է նաև պաշտպանական նշանակություն: Արծրունյաց տոհմի աստվածությունը, իբրև նրա հովանավոր պաշտվել է վաղագույն ժամանակներից և մ.թ.ա. IXդ. ընդգրկվելով

¹⁹ Ս.Հմայակյան, *Նշվ. աշխ.*, էջ 60:

²⁰ Գ.Զահուկյան, *Հայկական շերտը ուրարտական դիցարանում* («Պատմա-բանասիրական հանդես», 1986, N 1, էջ 49):

²¹ Նույն տեղում:

²² Ն.Ադոնց, *Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 46:*

ուրարտական դիցարանում, խորհրդանշել է տոհմի կարևոր գործառնությունը երկրի կենտրոնական շրջանում, նաև նրա տոհմական ինքնավարության ու հոգևոր արժեքների ճանաչումը իշխող արքայատոհմի կողմից:

Արծրունիների տոհմական կենտրոն Արծունիունին ուսումնասիրողները տեղադրել են Աղբակում²³, կամ Բերկրի քաղաքի տարածքում²⁴: Հարկ է նշել, որ Արծրունիների ոստան համարվող Աղբակ գավառը, համաձայն Թովմա Արծրունու վկայության, այդ տոհմին է շնորհվել ուշ ժամանակներում՝ Արտաշես I թագավորի կողմից²⁵: Աղբակը (Աղբակ Մեծը) շատ հեռու էր Վանա լճի ոլորտի Արծրունյաց տիրույթներից և Այե ու Գազրիկեան գավառների հետ սահմանակցում էր Կործայք ու Պարսկահայք նահանգներին և ընկած էր Վասպուրականի ծայր հարավում: Ընդսմին Յ.Մարկվարտը և Ն.Ադոնցը Արծրունիների նախնական հայրենիքը տեղադրում են Մեծ Հայքի Ծոփք նահանգում²⁶, ինչն իհարկե, հնարավոր չէ ապացուցել: Նկատենք նաև, որ Միերի դռան և մյուս վայրերի արծանագրությունների հիման վրա հնարավոր չէ Արծունիունիի ստույգ տեղորոշումը: Սակայն արծանագրությունների վայրերը մոտիկ էին Տուշպա մայրաքաղաքին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ դրանցում հիշատակված Արծունիունին շատ հեռու չպետք է գտնվեր Վան (Տուշպա) քաղաքից, որը հետագայում Արծրունիները դարձրեցին իրենց իշխանանիստը: Բիայնիայի սրտում Արծրունիների հաստատվելն ինքնին ապացույց կարող է լինել ուրարտական պետության անկման գործում նրանց խաղացած աչքառու դերի մասին:

Վերոնշյալ իրողությունների լույսի տակ հերքվում է

²³ Գ.Ղափանցյան, *Ուրարտուի պատմությունը*, էջ 48; С.Бархударян, *ук. см.*, с. 37.

²⁴ Ն.Ադոնց, *Հայաստանի պատմություն*, էջ 227:

²⁵ Թովմա Արծրունի և Անանուն, *Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխ. Վրեժ Վարդանյանի, Երևան, 1985, I, Ը, էջ 90:*

²⁶ I. Marquart, *Eranšahr nach der Geographie des ps. Moses Xorenaci*, Berlin, 1901, s. 176; Н. Адонц, *Армения в эпоху Юстиниана*, С.Петербург, 1908, с. 390; N.Adontz, *Etudes Armeno-Byzantines*, Lisbonne, 1965, p. 43 – 44.

Ասորեստանի հայրասպան արքայորդի Ադրամելեքից Արծրունիների առասպելական ծագման մասին տեղեկությունը, որը տեղ է գտել Մովսես Խորենացու և նրա հետևողությամբ՝ Թովմա Արծրունու մատենագրած երկասիրություններում: Ըստ Մովսես Խորենացու, Ասորեստանի թագավոր Սենեքերիմի (Սինախերիբ) որդիներ Ադրամելեքն ու Սանասարը սպանելով իրենց հորը, «եկին փախստական առ մեզ»:

Եղբայրներից Սանասարին Սկայորդին՝ «մեր քաջ նախնին», բնակեցնում է «յարևտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի»: Սանասարի սերունդներն աճելով ու բազմանալով «լցին զՍիմն ասացեալ լեառն»: Նրանցից «պերճքն և գլխաւորքն» հավատարմորեն ծառայելով հայոց թագավորներին, «զբղէշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ»: Իսկ Ադրամելեքը (որին պատմագիրն անվանում է նաև աղավաղված ձևով Արդամոզան) «յարևելից հարաւոյ նորին կողմանն բնակեալ. ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս»²⁷:

«Բաբելոնյան ժամանակագրության» մեջ նշվում է, որ «տերետ ամսի 20-րդ օրը (մ.թ.ա. 681թ. նոյեմբեր-դեկտեմբերին) Ասորեստանի թագավոր Սինախերիբին խռովության ժամանակ սպանեց նրա որդին»²⁸ (առանց վերջինիս անունը հիշատակելու):

Որդիների ձեռքով Սենեքերիմի սպանությունը վկայված է նաև Աստվածաշնչում, ուր ասվում է, որ երբ Նինվեում Սենեքերիմը աղոթում էր իր Նեսրաք աստծու տանը, նրա որդիներ Ադրամելեքն ու Սարասարը (Շարեցեր) նրան սրով հարվածեցին և փախան Սրարադի երկիրը»²⁹: Այն տեղ է գտել նաև մ.թ.ա. IV - IIIդդ. բաբելոնացի պատմագիր Բերոսոսի «Բաղդեականք» ցարդ կորած համարվող երկում, որից օգտվելով Յովսեփոս Փլավիոսը իր «Հրեական հնախոսություն»

²⁷ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխ., Ս.Աբեղեան և Ս.Յարութիւնեան, Տիփղիս, 1913, I, ԻԳ, էջ 70 – 71:

²⁸ И Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту ("Вестник древней истории", 1951, № 3, с. 215 (№ 63).

²⁹ ԴԹագ., XIX, 36 – 37:

գրքում նշում է, որ Ասորեստանի թագավոր Սենաքեյրիմը Նինվեում «դավադրաբար սպանվում է իր ավագ որդիներ Անդրոմաքոսի և Սելևկարոսի կողմից»³⁰ (անունները հելլենականացված են):

Ինչպես տեսանք, Մովսես Խորենացին Արծրունիներին սերած է համարում Ադրամելեքից, որի իսկական անունը եղել է Արադ-Նինլի, բայց Աստվածաշնչում դարձվել է Ադրամելեք³¹: Վերջինիս դավակից Նեբուսարեսեր պաշտոնյան Ա. գրքում ձևափոխվել է Սարասար անունով: Իր հերթին Խորենացին օգտվելով Աստվածաշնչից, նրան հիշում է Սանասար ձևով: Պատմահոր հետևողությամբ Արծրունյաց տոհմի պատմիչը ևս Արծրունիներին սերած է համարում Ադրամելեքից, նշելով, որ «յետ սպանմանն Սենեքերիմայ յորդոց իւրոց բուռն գնդաւ Ադրամելէք և Սանասար գան մտանեն ի լեառն Սիմ, որ յանուն հաւոյն իւրոյ Սենայ անուանեալ էր լեառն»³²:

Ինչպես նշվեց, Մովսես Խորենացին Ադրամելեքի բնակության վայր է համարում Սիմ լեռան (Հայկական Տավրոսի միջին մասի) հարավ-արևելյան հատվածը³³: Ենթադրվում է, որ Ադրամելեքն ու Սանասարը ապաստան են գտել Սասունում՝ ասորեստանյան արձանագրությունների Շուպրիա երկրում³⁴, որը նույնացվում է ուրարտական արձանագրություններում վկայված Արմե երկրի հետ³⁵:

Ասորեստանի արքայատոհմից Արծրունիների ծագումը համահնչում էր թովմա Արծրունու ապրած դարաշրջանում այդ

³⁰ Հովսեպոս Փլավիոս, *Դիոն Կասսիոս, թարգմ., առաջաբան և ծան. Ս.Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 57*:

³¹ Ն.Ադոնց, *Հայաստանի պատմություն, էջ 130*:

³² Թովմա Արծրունի և Անանուն, *Պատմութիւն տանն Արծրունեաց, I, Ա, էջ 16*:

³³ *Բ. Հարությունյանի կարծիքով հայրասպան արքայազները ապաստանել են ոչ թե Վանի թագավորությունում, այլ սկյութների ռազմառաջնորդի մոտ (տե՛ս Բ. Հ. Հարությունյան, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII - VIդդ.), Երևան, 1998, էջ 39 - 40)*:

³⁴ Б.Пнотровский, *Ванское царство, Москва, 1959, с. 176, Д.Саркисян, Страна Шубриа, Ереван, 1989, с. 68*.

³⁵ Վ.Խաչատրյան, *Նշվ. աշխ., էջ 134 - 135: Արմեն նույնացվում է նաև Աղծնիքի և հարակից շրջանների հետ (Բ. Հարությունյան, Նշվ. աշխ., էջ 57)*:

տոհմի ականավոր ներկայացուցիչների հետամտած նպատակներին, որոնք հանգում էին ինքնուրույն թագավորություն ստեղծելու գաղափարին³⁶, ինչի մեջ լուծվել է տոհմական ավանդույթը: Անշուշտ, չէր բացառվում, որ Ասորեստանից Շուարիա և հարակից շրջաններ տեղափոխված գաղթականության մի զգալի մասը միախառնվեր և ծուլվեր տեղաբնիկ հայկական ցեղերի, այդ թվում նաև Արծրունիների հետ: Շուարիան իր անմատույց դիրքով գրավում էր ասորեստանցի փախստականներին, որոնց զգալի մասն այնտեղ էր դիմում քաղաքական դրդապատճառներով: Նրանց տեղափոխվելը Շուարիա շարունակվել է նաև հետագայում: Այսպես, մ.թ.ա. 673թ. Աշուր աստծուն Ասորեստանի թագավոր Ասարխադդունի գրած ուղերձում նշված է, որ «Շուարիա են փախել հրամանատարներ, մարզերի կառավարիչներ, վերակացուներ, կառավարիչներ, պետեր»³⁷: Նույն թագավորի կողմից Շուարիայի «թագավորին» հղած առաջին նամակում սպառնագին պահանջ է հնչում բոլոր փախստականներին Ասորեստան վերադարձնելու մասին³⁸:

Հասկանալի պատճառներով Արծրունյաց տան պատմագիրը պետք է ջանար վերահառնել տալ հարազատ տոհմի հնավանդ և արդեն խամրող հիշողությունները, դրանք հարմարեցնելով իր ապրած ժամանակաշրջանի քաղաքական նախասիրություններին: Հենց քաղաքական խթաններն էին դրդում Արծրունիներին սերած համարելու աստվածաշնչյան Նոյ մահապետի որդի Սեմից³⁹, անշուշտ ելնելով պատմության խորենացիական ըմբռնումներից: Մովսես Խորենացին հայերի նախնի Թորգոմին համարում է Նոյի որդի Հաբեթի թոռ, հայերի անվանադիր Հայկին՝ Հաբեթի թոռնորդի, այդպիսով հայերին դասելով աստվածաշնչյան ժողովուրդների շարքը⁴⁰: Պատմահայրը չի զլանում աստվածաշնչյան ծագում վերագրել նաև

³⁶F. Neve, *Histoire de la Maison des Ardzrounnis, par le vartabied Thomas Ardzrouni* ("Le Museon", VI, Louvain, 1887, p. 375).

³⁷ *ABHY*, № 67 (с. 218).

³⁸ *Նույն տեղում*:

³⁹ Թովմա Արծրունի և Անանուն, *I, U*, էջ 16:

⁴⁰ Մովսես Խորենացի, *I, Ե*, էջ 19:

իր նախասիրած Բագրատունիներին: Թովմա Արծրունին բնական մղումով հարազատ տոհմին վերագրում է նույնպիսի ակունքներ, նպատակ ունենալով հիմնավորել իր հովանավոր Գագիկ Արծրունու հետապնդած նպատակների գաղափարական եզրերը:

Առասպելից առասպել է ծնվում, ի դերև հանելով ժամանակագրական ստույգ ու վստահելի հենքը: Թովմա Արծրունին Սենեքերիմ արքայի որդիներ Ադրամելեքին ու Սանասարին և նրանց եղբորը Քսերքսեսին (որը վկայված չէ որևէ այլ սկզբնաղբյուրում) համարում է Տիգրան Երվանդյանի և Աքեմենյան աշխարհակալության հիմնադիր Կյուրոսի ժամանակակիցներ: Դա անշուշտ, ինքնանպատակ չէր. պատմագիրը ջանում է այդպիսով իր տոհմի հեռավոր անցյալի ականավոր, իհարկե, մեծ մասամբ անգո ներկայացուցիչների գլուխներին հյուսել Արծրունիների տոհմական ինքնասիրությունը շոյող փառապսակ: Նրա հավաստմամբ Տիգրան Երվանդյանը Մարաստանի Աժդահակ թագավորին կարողանում է սպանել Արծրունիների նախնիներից մեկի՝ վերոհիշյալ Քսերքսեսի զորակցությամբ: Ավելին. Լյուդիացոց թագավորին պարտության է մատնում Կյուրոս Աքեմենյանը՝ դարձյալ նույն Քսերքսեսի օգնությամբ⁴¹: Իսկ Սենեքերիմյաններից Ասուղը նույնիսկ հայտնի էր Ալեքսանդր Մակեդոնացու օրոք⁴²: Նրա ժառանգներից Կյուրոսն աչքի է ընկնում պարթևաց արքա Արշակի մղած պատերազմներում, և հայոց թագավոր Վաղարշակը տեղեկանալով նրա ծագման մասին, տեղափոխում է Հայաստան «և անուանե՛ զնա Արծրունի» իբր թե Արծվիք անունով դաշտավայրում ծնված լինելու, արծվաքթության պատճառով⁴³: Սակայն պատմագիրը երկմտելով իր ասածի մեջ. գրում է. «Ոչ գիտեմ, թե յանուն աշխարհի՞ն, թե ըստ կերպարանին անուանեաց զնոսա Արծրունիս»: Թովմա Արծրունին կարծում է նաև, որ Արծրունի տոհմն իր անունն ստացել է Արզն տեղանունից, այնտեղ տոհմի նախնիներ Ադրամելեքի ու Սանասարի բնակության պատճառով:

⁴¹ Թովմա Արծրունի և Անանուն, *1, Ե, էջ 62 – 66*:

⁴² *Նույն տեղում, էջ 70*:

⁴³ *Նույն տեղում, էջ 72*:

Պատմագիրը բերում է նաև Արծրունիների ծագման երրորդ վարկածը, այն է՝ «վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջասրտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա»⁴⁴: Նա թեև ախորժելի է համարում Արծվիք դաշտավայրից իր տոհմի ծագումը⁴⁵, սակայն չի տեղորոշում այն: Մովսես Խորենացին Արծրունիների ծագումը աղերսակցում է արծիվ բառի հետ, ելակետ ունենալով հայոց արքունիքում նրանց ունեցած գործառույթը, այն է՝ թագավորի առջևից արծիվներ կրելու պարտականությունը⁴⁶: Պատմահոր այս հաղորդումը թեական է՝ Արծրունիների գործառնության (թագավորի առջևից արծիվ կրելու) առումով, բայց տոհմի անվան նրա ստուգաբանությունն ունի հավաստի հենք: Փաստորեն Խորենացին Արծրունիների տոհմանունն աղերսակցում է արծիվ բառի հետ, ինչն, իհարկե, գիտականորեն հիմնավորված է: Թովմա Արծրունին զանց է անում իր տոհմի՝ արծվակիր լինելու մասին Խորենացու հաղորդումը: Նա յուրովի է մեկնում Արծրունի տոհմանվան ծագումը, ինչն իհարկե զուրկ է իրական-պատմական հիմքից:

Մովսես Խորենացին գրում է, որ Սկայորդու կողմից Հայաստանում բնակության իրավունք ստացած Արծրունիների նախնի Սանասարից «աճումն և բազմասերութիւն լեալլցին զՍիմն ասացեալ լեառն: Իսկ պերճքն և գլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբոշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ»⁴⁷: Պատմահոր մեկ այլ վկայության համաձայն, հայոց ավանդական թագավոր Վաղարշակը Սենեքերիմյան Սանասարի (Սարասար) տոհմից Շարաշանին «հաստատէ բղեաշխ մեծ և կուսակալ յարևմտից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, զաւառս պարգևելով զԱրծն և որ շուրջ զնովազ և զլեառն Տաւրոս, որ և Սիմ և զԿղեսուրն ամենայն»⁴⁸: Այլ առիթով Խորենացին նշում է, որ բղեշխու-

⁴⁴ Թովմա Արծրունի և Անանուն, I, 2, էջ 72:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Մովսես Խորենացի, II, է, էջ 111:

⁴⁷ Նույն տեղում, I, ԻԳ, էջ 70 – 71:

⁴⁸ Նույն տեղում, Ը, էջ 116:

թյունները հիմնվել են Արտաշես I-ի կողմից⁴⁹, առանց հիշատակելու Արծրունի բղեշխի մասին:

Ինչպես տեսանք, պատմագիրը Արծրունի Շարաշանին ներկայացնում է իբրև Աղծնիքի բղեշխ: Հավանաբար Խորենացու հետևողությամբ, «Աշխարհացոյց»-ի հեղինակը Աղծնիքը նույնական է համարում Արծնի հետ⁵⁰: Դա բխում էր նաև Հայաստանում ստեղծված վարչաքաղաքական կացությունից, որի պայմաններում Աղծնիք նահանգն իբրև միասնական վարչաաշխարհագրական հասկացություն, այլևս գոյություն չուներ: Պահպանվեց Աղծնյաց բղեշխության կենտրոն Արծն (հունա-հռոմ. Արզանենե) գավառի անունը⁵¹: Վերջինս Աղծնիքի մյուս գավառների հետ ընդգրկված էր Բյուզանդիայի Հերակլիոս կայսեր (610-641) հիմնած Մեսոպոտամիա (Միջագետք) բանակաթեմի մեջ իբրև առանձին վարչամիավոր («կլիմա»):

Ենթադրվում է, որ Տիգրան Մեծը Արծրունիներին շնորհել է Նոր Շիրականի բղեշխին պատկանող գավառները⁵²: Բղեշխի պատվին արժանանալու համար Արծրունիները պետք է լինեին Նոր Շիրականի տերերը և Տիգրանի օրոք օժտված լինեին բարձրազդեցիկ ռազմաքաղաքական գործառնությամբ: Ըստ Պլուտարքոսի, Լուկուլլոսի հարձակմանն առաջինը դիմագրավող հայոց զորապետն էր Միթրոբարզանեսը⁵³ (համանշանակ է համարվում հայկական (Արծրունի) Մեիրուժանին)⁵⁴: Համաձայն Ագաթանգեղոսի վկայության, Տրդատ Մեծ թագավորի օրոք երկրի պաշտպանական համակարգում նշանավոր էին «զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բղեաշխքն կոչին, գառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդ սահմա-

⁴⁹ Նույն տեղում, II, ԾԳ, էջ 183 – 184:

⁵⁰ Ս.Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 114:*

⁵¹ Բ.Յ.Հարությունյան, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 199-201:*

⁵² J. Marquart, *Iranšahr*, s. 176.

⁵³ Պլուտարքոս, *Կենսագրություններ, թարգմ., առաջաբան և ծան. Ա.Գրքաշարյանի, Երևան, 2001, էջ 62:*

⁵⁴ Н.Адонц, *Армения в эпоху Юстиниана*, с. 413.

նակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդն յԱրուաստան կողմանէն, զչորրորդն ի Սասքթաց կողմանէն»⁵⁵: Եթե ընդունենք, որ իրոք Արծրունիները կարգվել են բղեշխներ, ապա ավելի հավանական կլինի ենթադրել, որ նրանք այդ պաշտոնը վարել են Ասորեստանին մերձակա Մեծ Հայքի ծայրագավառներում, որն, ինչպես տեսանք, վկայված է Մովսես Խորենացու մոտ: Ենթադրվում է, որ Տիգրան Մեծի օրոք Նոր Շիրականի բղեշխը նրա որդի Ջարեհն էր⁵⁶: Թեև, ինչպես ընդունված է կարծել, բղեշխությունները ձևավորվել են Տիգրան Մեծի օրոք⁵⁷, սակայն Ջարեհին հոր կողմից բղեշխի գործառնությամբ օժտելու մասին տեղեկություններ չկան:

Ազաթանգեղոսը Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցող նախարարների մեջ հիշատակում է «առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ իշխանն Աղծնեաց, որ է բղեշխն մեծ. երրորդ իշխանն մարդպետութեան իշխանութեանն», որին հետևում են Բագրատունի, Մամիկոնյան և ուրիշ նախարարներ, բայց երկու բղեշխները չեն հիշվում⁵⁸, հավանաբար ավելի անհրաժեշտ գործերով զբաղված լինելու պատճառով: Հ.Մարկվարտի կարծիքով երրորդ տեղում հիշվող մարդպետը պետք է լիներ Նոր Շիրականի բղեշխը⁵⁹: Մովսես Խորենացին հավաստում է, որ հայոց Վաղարշակ արքան Հայր մարդպետին իշխան է կարգել «յևտրպատական է մինչև ցնուաշ և ցնախճաւան, և նահապետութեան ազգին սա մեծարոյ»⁶⁰: Արդյոք մարդպետները կատարե՞լ են Հայաստանի արևելյան սահմանների պաշտպանությունն ապահովող պարտավորություններ, հար և նման բղեշխների ռազմաքաղաքական

A 87842

⁵⁵ Ազաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց, աշխ. Գ.Տէր-Սկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիֆլիս, 1909, ԾԻԶ, էջ 459-460*:


⁵⁶ С.Т.Еремян, *Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху («Տեղեկագիր ՀՍՍՐ ԳԱ» (հաս. գիտ.), 1948, N 11, էջ 72)*:

⁵⁷ J.Marquart, *Eranšahr*, s. 172; Н.Адонц, *Армения в эпоху Юстиниана*, с. 283; Ս. Կրկյաշարյան, *Բղեշխությունների առաջացումը Հայաստանում («Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 4, էջ 259-261) և այլն*:

⁵⁸ Ազաթանգեղոս, *ԾԺԲ, էջ 414*:

⁵⁹ J.Marquart. *Eranšahr*, s. 167.

⁶⁰ Մովսես Խորենացի, *II, էջ 112*:



գործառույթներին: Հնարավոր չէ միանշանակ այդպիսի եզրակացության հանգել, քանի որ հայ մատենագիրների մոտ մարդպետների գործառույթները բոլորովին այլ բովանդակություն ունեն: Ավելի հավանական է կարծել, որ մարդպետները Հայաստանում ունեցել են թագավորահոր պարտավորություններ: Այսպես կարծելուն թելադիր է Փավստոս Բուզանդի վկայությունն այն մասին, որ «Դղակ մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն հայր թագաւորին»⁶¹: Հատկանշելի է, որ մարդպետները գրեթե միշտ հիշվում են «հայր» վերադիրով: Արշակունյաց հայոց թագավորների արքունիքում նրանց հեղինակությունը խիստ բարձր էր, հար և նման միջադարյան ֆեոդալական պետություններում գերազդեցիկ գործառնությամբ օժտված թագավորահայրերի (նշելի են Բյուզանդիայում՝ կայսերահայրը («վասիլետոպատոր»), Վրաստանում աթաբեկը, Կիլիկյան Հայաստանում թագավորահայրը և այլն):

Այսպիսով, Ասորեստանի հայրասպան որդի Ադրամելեքից Արծրունիների ծագման մասին հայ մատենագրության մեջ տեղ գտած հաղորդումը չի հաստատվում գիտության նորագույն տվյալներով: Ասորեստանյան և ուրարտական արձանագրությունների ընձեռած տեղեկությունների լույսի տակ հնարավոր է դառնում պարզել, որ Արծրունիները Հայկական լեռնաշխարհի բնիկ հայկական տոհմերից մեկն էին, որոնց նշանավոր դեր էր վերապահված երկրի հասարակական-քաղաքական և հոգևոր կյանքում:

Բ. ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ ՏՈՂՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆՃԱՆԿԱՐՈՒՄ

Արծրունիների տոհմում պահպանվել են պատմական անցյալի մասին ավանդություններ, որոնց հենքի վրա թովմա Արծրունին ջանացել է վեր հանել իր տոհմի վաղնջական ժամանակների պատմությունը, հաճախ մատուցելով

⁶¹ Փավստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, V, 2, էջ 170:

տարաներժ ու այլ պատմադրյուրներում չվկայված իրողութիւններ: Պատմագիրը փորձում է թափանցել հայոց հեթանոսական ժամանակների խորքերը և պատմության լուսի տակ դնել հարազատ տոհմի հեռավոր անցյալը: Այսպես, նա Ալեքսանդր Մակեդոնացու և նրա զորապետ Պտղոմեոսի զորակից է ներկայացնում Ասուդ Արծրունուն, որի սխրագործություններից հիացած Պտղոմեոսը նրան նշանակում է իրեն ժառանգորդ, շնորհելով «ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն եգիպտոսի և Յնդկաց»¹: Չափազանցությունն անշուշտ, ակնբախ է նաև այստեղ:

Սովսես Խորենացին այս մասին ոչինչ չի հաղորդում, բայց Աբգար թագավորի ժամանակակից և նրան սատարող զորապետ է հիշում ոմն Խոսրան Արծրունու, որի գլխավորությամբ Աբգարը զորք է ուղարկում իր դաշնակից պատրիացոց Արետ արքային՝ զորակցելու Յերովդես թագավորի դեմ նրա մղած կռիվներում²: Ղ.Ալիշանի կարծիքով Խոսրանը նույնական է ասորի Խոսրոնի հետ, որին պատմահայրը հայացրել է³: Թովմա Արծրունին Խոսրանին հիշում է Խուրան ձևով և օժտում է մեծ զորավարի, բարեպաշտի ու բարեգործի գծերով, նրան դիտում որպես «զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի գէն և յասպազէն», որն առաջինն է հավատում Քրիստոսին, մկրտվելով Թադեոս առաքյալի ձեռքով, զորակցում է Ղոմի Տիբերիոս կայսեր՝ իսպանացիների դեմ մղած կռիվներում, շահում բազմաթիվ հաղթանակներ, արժանանալով բարձր պարգևների ու պատիվների, ապա մեկնում է Եգիպտոս՝ օգնում որբերին ու այրիներին, տնանկների⁴: Պարսից Արտավան III արքայի (մոտ մ.թ. 12-37թթ.) օրոք, ըստ Թովմայի, Խուրանի եղբայր Արշավիրն ու որդին՝ Վաչեն, Բաբելոնի պարսից փոխարքայի կողմից կարգվում են բարձր պաշտոններում⁵:

Թովմա Արծրունին անշուշտ, օգտագործել է հարազատ

¹ Թովմա Արծրունի և Անանուն, I, 2, էջ 70:

² Սովսես Խորենացի, II, Իթ, էջ 147:

³ *Լաբունեա դիւանագիր դպրի եղեսիոյ թուղթ Աբգարու, Վեներտիկ, 1868, էջ 19, ծան, 2:*

⁴ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 78-80:

⁵ *Նույն տեղում, էջ 84:*

տոհմի մասին ավանդություններն ու մշուշապատ տեղեկությունները, հաճախ ընկնելով չափազանցությունների, անախրոնիզմի մեջ: Այդուհանդերձ այդ տեղեկություններում հնարավոր է գատորոշել պատմականության որոշ տարրեր, հատկապես Արծրունիների քաղաքական կողմնորոշման վեր հանման, ինչպես նաև այդ տոհմի իշխանության ոլորտը ճշգրտելու առումով: Անհամաժամանակության խորը կնիք ունի նաև Վաչե Արծրունու որդի Սահակի մասին պատմագրի հաղորդումը⁶: Նույնն ենք տեսնում նաև հայոց թագավոր Արտաշես I-ի կողմից Արծրունիների հանդեպ ցուցաբերած բարեհայեցողության պարագայում: Ի հատուցումն Վաչե և Արշավիր Արծրունիների կողմից իր հանդեպ ցուցաբերած գորակցության, Արտաշեսը նրանց է վերադարձնում Սանատրուկ արքայի կողմից խլված Արծրունիների հայրենական տիրույթը՝ «զլեառն Սիմ և զԱղծնիս մինչև ի սահմանս Ասորեստանի»⁷: Ստացվում է, որ Արտաշես I-ը թագավորել է Սանատրուկից հետո, մինչդեռ վերջինս, ինչպես հայտնի է, ավելի ուշ է գահակալել՝ մ.թ. I դ. վերջին և II-ի սկզբներին⁸:

Թովմա Արծրունին ջանում է նաև վեր հանել հարագատ տոհմի նախարարների հավատարմությունը հայոց թագավորներին, նաև Բագրատունի տոհմի հետ նրանց մերձակցությունը: Թե Սահակ Արծրունին և թե նրա հաջորդը՝ Խուրանի եղբորորդի Համանը անխառն հավատարմությամբ ծառայում են Արտաշեսին, օժտվելով պատասխանատու գործառնությունամբ⁹: Բագրատունի Սմբատին զինական աջակցություն է ցույց տալիս Բաբկեն Արծրունին՝ հյուսիսաբնակ ցեղերի («խազիրների») դեմ մղած պատերազմի ժամանակ, ապա այդ երկու նախարարները պարսից արքայի օժանդակությամբ նույն պատերազմում զոհված հայոց թագավոր Վաղարշի փոխարեն թագավորեցնում են նրա որդի Խոսրովին¹⁰: Սակայն Մովսես Խորենացին այս մասին իր հաղորդման մեջ սոսկ նշում է, որ

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 86:

⁸ Հ.Մանանդյան, *Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 19*:

⁹ Թովմա Արծրունի և Անանուն, *1, Ը, էջ 90 – 92*:

¹⁰ Նույն տեղում, էջ 92:

հյուսիսի ցեղերի դեմ մղած կռիվներից մեկուն սպանված Վաղարշի փոխարեն «առնու զթագաւորութիւնն խոսրով որդի նորին յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի»¹¹. առանց դուլզն իսկ ակնարկ անելու Արծրունի նախարարի և Սմբատ Բագրատունու կողմից խոսրովի գահակալմանը սատարելու մասին, ինչն անշուշտ, չէր վրիպի Բագրատունյաց տոհմի ջատագով հորենացու աչքից:

Տրդատ Մեծի օրոք Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Արծրունիները հիշվում են ավագ նախարարների շարքում: Թովմա Արծրունու հաղորդմամբ Տրդատի օրոք «Ընդ մեծ նախարարսն Հայոց մկրտեալ լինի Տիրոց»: Արծրունյաց այս նախարարին պատմիչը բնութագրում է իբրև «այր հեզ, խոհական, խորհրդական, համեստ ի բանս»¹²: Ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորչի կաթողիկոս ձեռնադրվելու առթիվ Կեսարիա մեկնած 16 նախարարներից վերջինը Արծրունյաց իշխանն էր¹³: Թովմա Արծրունին փորձում է լրացնել Ագաթանգեղոսին, նշում է Կեսարիա մեկնած Արծրունի նախարարին (նույն Տիրոցին) հիշելով իբրև մի անձնավորություն, որը համեստ բարքի պատճառով «ոչ յառաջանայր ի բարձր նախագահս ճոխանալ երևելեօքս»: Տիրոցն ըստ պատմագրի, առաջին գահին («բարձին») չէր բազմում ոչ թե այն պատճառով, որ ավագ նախարարների մեջ չուներ «բարձրագահ պատիւս», այլ որովհետև հետևում էր Ավետարանի պատվիրաններին¹⁴: Նրան հաջորդած Մուշեղ և Վահան Արծրունիները տիրում էին հայոց թագավորի կողմից վավերացված հողատիրությունների և «բարձրագոյնք և նախապատիւք ի թագաւորաց անտի էին»¹⁵: Նկատելի է տոհմասեր

¹¹ Մովսես Խորենացի, *II, ԿԵ, էջ 200*: Պատմիչների հիշատակած խոսրովը իրականում Տրդատ II-ն է (216-253), որին տրված «խոսրով» անունը նաև տիտղոս էր, հայկական ավանդությանը «թագավոր» բառի հոմանիշ (տես Հայ ժողովրդի պատմություն (բազմահատորյակ), հ. II, Երևան, 1984, էջ 25, 1. 18):

¹² Թովմա Արծրունի և Անանուն, 1, Ժ, էջ 94:

¹³ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 414:

¹⁴ Թովմա Արծրունի և Անանուն, I, Ժ, էջ 96:

¹⁵ Նույն տեղում:

պատմագրի միտումը բարձրացնել հարազատ տոհմի վարկը, նրան ներկայացնել իբրև առաջինը հայ նախարարությունների մեջ, շեշտելով Հայաստանում քրիստոնեության պետականացման գործընթացներում նրա աչքառու դերը:

*Գ. ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ԵՎ ՍԱՐԴՊԵՏՆԵՐԻ
ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ*

Փավստոս Բուզանդը հայոց թագավոր Տիրանի օրոք (338-348) Արծրունյաց տոհմը համարում է ավագ նախարարություններից մեկը, որը թշնամանքի մեջ էր մարդպետների հետ: Վերջիններս գերազդեցիկ դեր էին խաղում Արշակունյաց արքունիքում, ուստի նրանց հակադրվելու փաստն ինքնին Արծրունիների զորության նշան է: Հակամարտությունը հավանաբար կալվածային վեճերի բնույթ ուներ և հետզհետե վերաճեց սուր թշնամանքի: Սակայն թագավորահոր գործառնությամբ օժտված մարդպետը Տիրան թագավորի օրոք կարողացավ ոչ միայն քաղաքական ասպարեզից դուրս վանել Արծրունիներին, այլև կոտորել տվեց նրանց և Ռշտունիներին, որոնք հավանաբար զորակցում էին առաջիններին: Մարդպետը, – գրում է պատմագիրը, – «մանաւանդ անելի գերկու տոհմսն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր, և անունդ առնել միահաղոյն զտոհմսն Ռըշտունեաց և զտոհմն Արծրունեաց», որոնց «առանց որևէ վնասի ու հանցանքի» իսպառ բնաջնջեցին: Այս նախարարություններից փրկվում են սոսկ երկու կրծքի երեխաներ Վաչե Արծրունու որդի Շավասպը և Մեհենդակ Ռշտունու Տաճատ անունով որդին, որոնց Տիրանը (անշուշտ, մարդպետի դրդմամբ) հրամայում է գլխատել, սակայն Վասակ Մամիկոնյանը և նրա տոհմակից Արտավազը, մանուկներին փախցնում են իրենց հայրենի Տայք նահանգ, պահում, մեծացնում, ամուսնացնում են իրենց դուստրերի հետ, ինչի շնորհիվ «դարձեալ միւս անգամ ազգն այն սերեցան. և ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև ի բազում ամս»¹:

Մովսես Խորենացու հավաստմամբ Տիրանը կոտորել է

¹ Փավստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, III, ԺԸ, էջ 40-41:

տալիս միայն Ռշտունիներին, իսկ նրանցից փրկված մանկանը փախցնում են ոչ թե Մամիկոնյանները, այլ մանկան դայակները, ինչն անհավանական է, քանի որ վերջիններս համեմատվել չէին կարող Մամիկոնյանների հետ: Խորենացին անշուշտ, տուրք է տալիս իր մեկենասների՝ Բագրատունիների մրցակիցներն հանդիսացող Մամիկոնյան փառապանծ տոհմին ստվերարկելու մտայնությամբ: Անշուշտ, վերապահությամբ պետք է մոտենալ երկու զորեղ տոհմերի բնաջնջման պատմությանը, որը հավանաբար, առնչվում է դրանց տոհմաճյուղերից մեկին: Ասվածին ի հիմնավորում նշենք, որ նույն Փավստոս Բուզանդը Ներսես Մեծի հետ Կեսարիա մեկնած նախարարների մեջ հիշում է նաև Մեհենդակ Ռշտունուն՝ Մամիկոնյանների փրկած մանկան հորը², հետևաբար, վերջինս այդ ոճրից հետո ողջ էր մնացել և վայելում էր հայոց թագավորի վստահությունը: Հասկանալի է, կոտորածից հետո Արծրունիները որոշ ժամանակ հետին դիրքեր մղվեցին, թեև նրանց հովանավորող Մամիկոնյանները Արշակ II-ի օրոք զբաղեցնում էին բարձր պաշտոններ: Արշակ II-ը նրանց ետ կանչեց Տայքից և ավագ եղբորը՝ Վարդանին կարգեց Մամիկոնյան տոհմի նահապետ, իսկ միջմեկ եղբորը, որը ժամանակին եղել էր Արշակ II-ի դայակը, նշանակեց սպարապետ: Թագավորը, – գրում է Փավստոսը, վերահաստատեց մյուս նախարարությունների զորքերը ըստ թվաքանակի, որ ճանաչված էր նախկին թագավորների ժամանակ³: Հետևաբար, Արշակ II-ը հաստատել է նախարարությունների մինչ այդ վավերացված զորաբաժինների թվակազմը: Թերևս, Վասակ Մամիկոնյան սպարապետի օրոք Արծրունիների զորաթիվը ևս պահպանվեց ըստ Ջորանամակ անունով պաշտոնական ցուցակի, որտեղ Արծրունիների իշխող ճյուղը զբաղեցնում է պատկառելի տեղ՝ 1000 հոգուց բաղկացած զորաբաժնով⁴: Ջորք ունենալու հանգամանքը ենթադրում է նաև սեփական զինանշանի առկայություն: Մովսես Խորենացին, ինչպես նշել ենք, Արծրունի տոհմանունը բխեցնում է հայոց

² Փավստոս Բուզանդ, IV, Բ, էջ 57:

³ Նույն տեղում, էջ 56-57:

⁴ Н.Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 251.

թագավորի առջևից տոհմի անդամների կողմից արծիվներ կրելու համգամանքից⁵, ինչը սակայն հիմք չի կարող դառնալ Արշակունյաց արքունիքում այդ տոհմի ունեցած գործառնության ճշգրտման համար: Փավստոս Բուզանդը արծիվը համարում է Մամիկոնյանների զինանշանը, այդ տոհմը հիշելով «արծուէնշանք» վերադիրով⁶: Ըստ երևույթին, արծիվը վաղնջական ժամանակներում եղել է Արծրունյաց տոհմի տոտեմը, ապա դարձել նաև զինանշան: Թերևս այդ իմաստն է պարունակում Խորենացու «զԱրծրունիսդ գիտեմ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս» դարձվածը⁷:

Արշակ II-ի օրոք ևս շարունակվեց Արծրունիների և մարդպետների միջև եղած հակամարտությունը: Հավանաբար մարդպետի ազդեցությամբ էր, որ դիվանագիտական առաքելությամբ կայսեր մոտ մեկնող Ներսես կաթողիկոսին ուղեկցող նախարարների մեջ չընդգրկվեց Արծրունի նախարարը, այն դեպքում, երբ ուղեկցողների մեջ հիշվում են երկրորդական տների իշխաններ⁸: Հավանաբար որոշակի նշանակություն ունեցավ նաև Արծրունիների ոչ արևմտամետ դիրքորոշումը:

Սակայն դա չխանգարեց, որպեսզի Արծրունիները զորակցեն կաթողիկոսին ընդդեմ իրենց ախոյան մարդպետի: Շավասայ Արծրունին լուծեց իր տոհմի վրեժը սպանելով մարդպետին՝ Տիրանի օրոք իր տոհմը բնաջնջել տվողին, այն բանից հետո, երբ մարդպետը Աշտիշատում կայացած ճաշկերույթի ժամանակ Ներսես Մեծին սպառնաց հարքունիս գրավել տալ եկեղեցապատկան հողատիրույթները⁹: Այս փաստը վկայում է, որ մարդպետների և Արծրունիների հակամարտության ընթացքում եկեղեցին սատարում էր վերջիններին:

⁵ Փավստոս Բուզանդ, II, I, էջ 111:

⁶ Փավստոս Բուզանդ, IV, Բ, էջ 57:

⁷ Սովսես Խորենացի, II, է, էջ 111: *Տես նաև Ս. Орбели, Избранные труды, т. I, Москва, 1968, с. 124.*

⁸ Փավստոս Բուզանդ, IV, ԺԱ, էջ 88:

⁹ *Նույն տեղում, ԺԴ, էջ 98*; Թովմա Արծրունի և Անանուն, I, Ժ, էջ 100:

Դ. ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Մարդպետների և Արծրունիների միջև արծարծվող թշնամանքը նպաստեց 360-ական թթ. վերջիններիս հակաարշակունի դիրքավորմանը, քանի որ նախարարական տոհմերի նկատմամբ մարդպետի բռնած դիրքը խրախուսվում էր Արշակունի թագավորների կողմից: Արծրունիների դիրքորոշումը պայմանավորված էր նաև 360-ական թթ. Արևելքում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակով: 359թ. վերսկսվեց պատերազմը Հռոմի և Պարսկաստանի միջև: Բարձրադիր Հայաստանը ուներ հույժ կարևոր ռազմավարական նշանակություն պատերազմող կողմերի համար: Նրանցից յուրաքանչյուրը հաղթանակի վճռորոշ պայմաններից մեկը համարում էր Հայաստանը իրեն կողմը գրավելը, ինչը ցանկալի էր, որ իրականացվեր հայ նախարարների միջոցով:

Պատերազմի եռուն պահին՝ 363թ. կողմերի միջև կնքվեց հաշտության պայուսի II արքայի (309-379) զորքերը ներխուժեցին Հայաստան: Ըստ Փավստոս Բուզանդի, նրանց առաջնորդում էր Մերուժան Արծրունին, որը պատմիչի ասելով «գրգռել թթագաւորն Պարսից զՇապուհն ի վերայ թագաւորին Արշակայ...»¹: IV դարի հռոմեացի պատմագիր Ամմիանոս Մարկելլիանոսը հավաստում է, որ այդ դավաճանական դերը կատարել է Անտոնիոս անունով հռոմեական դասալիք սպան²: Հասկանալի է, պատերազմի առաջին տարում, երբ հայտնի չէր նրա ելքը, Մերուժան Արծրունին նախընտրեց պարսկամետ դիրքորոշումը: Այլ իրադրություն ստեղծվեց 363թ. հռոմեապարսկական «ամոթալի դաշինքի» կնքումից հետո, երբ Հովիանոս կայսրն անարգաբար լքեց իր դաշնակից Արշակ թագավորին, և Հայաստանն ստիպված եղավ մեն-միայնակ պատերազմել Շապուհ II-ի զորքերի դեմ: Վերջինս, գրավելով Հայաստանը, ջանաց հենարան ստեղծել այնտեղ ի դեմս

¹ Փավստոս Բուզանդ, IV, ԻԴ, էջ 120:

² J. Markwart. *Südarmenien und die Tigrisquellen*, Wien, 1930, s. 115;
Հ. Մանանդյան, *Երկեր*, Բ, էջ 175:

պարսկամետ նախարարների, որոնց թիվն աճել էր, քանի որ 363թ. պայմանագրից հետո Հռոմի վարկը խիստ ընկել էր Հայաստանում: Այդ պայմանագրի կնքումից հետո, ըստ Փավստոսի վկայության, Մերուժանը մեկնեց պարսից արքայի մոտ և «դներ ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա... եթող զօրէնս քրիստոնէութեան, և խոստովան եղև վասն անձին իւրոյ թէ չեն քրիստոնեայ. և կալաւ զօրէնս մագդեգանց»³:

Մերուժան Արծրունին սպարապետ Վասակ Մամիկոնյանի քրոջ որդին էր, ուստի կարողացավ իր կողմը հակել նաև Վասակ սպարապետի եղբորը՝ Վահանին (իր քեռուն), ըստ երևույթին նրան համոզելով պայքարի անհեռանկար լինելու մեջ: Նրանց հետևեցին ուրիշ նախարարներ: Այդուհանդերձ, Արշակ II-ին նվիրված նախարարների զորագնդերը Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ շարունակում էին անհավասար գոտեմարտը ոսոխի դեմ: Սակայն երկրի ուժերը տարանջատվեցին, նվազեց նրանց դիմադրական կորովը: Արշակ II-ի դեմ ծառացան նաև նրան զորակցող նախարարները, այդ թվում Աղծնիքի և Գուգարքի բռեշխները, Ծոփքի նախարարը և ուրիշներ: Ապա «ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Հայոց» և հայոց կաթողիկոս Ներսես Մեծին հայտնեցին, որ այլևս չեն կարող պատերազմել հզորագոր ախոյանի դեմ, ուստի ավելի լավ կլինի, որ «ծառայեսցուք մեք թագաւորին Պարսից որպես ընկերքն մեր արարին», – գրում է Փավստոս Բուզանդը: Կաթողիկոսը թեև ընդդիմացավ նրանց, սակայն նախարարները չանսացին նրան, և Արշակին հրաժարվեց պաշտպանել «ամենայն զօրքն աշխարհին Հայոց», որից հետո Արշակը ստիպված էր հաշտության եզրեր գտնել Շապուհ արքայի հետ, թեև այլևս ուշ էր, և հաշտության մասին խոսք չէր կարող լինել: Ավելին. այդ հույսով Շապուհ II-ի մոտ մեկնած հայոց թագավորն ու սպարապետը նետվեցին Անհուշ (Անդշմն) Բերդ, որով իսկ Հայաստանը մատնվեց հաղթողի քմահաճույքին⁴:

³ Փավստոս Բուզանդ, *IV, ԻԳ, էջ 118 – 119*:

⁴ *Նույն տեղում, էջ 135 – 139*:

Մովսես Խորենացու վկայությամբ Արշակ II-ի մահից հետո Շապուհ II արքան Մերուժան Արծրունուն մեծ զորքով առաքեց Հայաստան «և խոստացաւ տալ նմա գՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելով՝ դէն մագղեզանց զաշխարհս դարձուցէ»։ Մերուժանն այդպիսով, որոշակի պարտավորություններ էր ստանձնել Շապուհ II-ի առջև։ Նա, – հավաստում է Խորենացին, «զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել։ Ջեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել... հրաման տայր մի՛ ուսանել զգպրութիւն յունարէն, այլ զպարսիկ..., զի ամենևին մի՛ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ»⁵։

Փավստոս Բուզանդի մոտ Մերուժան Արծրունու հայրենադավ ուղեգիծը խիստ չափազանցված երանգներ ունի։ Այսպես, պատմագիրը գրում է, որ պարսից զորքերը Մերուժանի առաջնորդությամբ քանիցս հարձակվում են Հայաստանի վրա և ամեն անգամ նրանք, մինչև վերջին զինվորը կոտորվում են Վասակ սպարապետի կողմից, և միայն Մերուժանին է հաջողվում մագապուրծ ճողոպրել Պարսկաստան⁶։ Եկեղեցու, քրիստոնեական հավատի դէմ մեղանչող Մերուժան Արծրունին բնականաբար հայ մատենագիրների կողմից պետք է ներկայացվեր խիստ բացասական կերպով։ Անգամ Արծրունյաց պատմիչը չի զլանում նշավակել նրան, շեշտելով նաև հայոց թագավորի գահին բազմելու նրա մտահղացումը⁷։

Մերուժան Արծրունին ջանում էր պահպանել Հայոց թագավորությունը Սասանյանների գերակայության տակ, բազմել նրա գահին, կրոնափոխել ժողովրդին, վերականգնելով հեթանոսական կրոնը՝ Շապուհ II-ին ցանկալի զրադաշտության ձևով։ Դա բացարձակ մարտահրավեր էր Հռոմեական կայսրությանը, որը չէր հրաժարվում Արևելքում Հայաստանը դաշնակից ունենալու մտադրությունից։ Նրա հույսերն անշուշտ, խարսխվում էին հռոմեասեր հայ իշխանների և նրանց

⁵ Մովսես Խորենացի, III, L2, էջ 301։

⁶ Փավստոս Բուզանդ, IV, LU - ԽԳ, էջ 126 – 131 և հտ.։

⁷ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 102 – 106։

ոգեշնչող Հայոց եկեղեցու աջակցության վրա: Իր հերթին Շապուհ II-ը չէր վստահում Մերուժանին և նրա շուրջը համախմբված նախարարներին, ուստի նրա զորքերը ողողեցին բովանդակ Հայաստանը, նպատակ ունենալով այն վերածել պարսկական նահանգի և մեկընդմիջտ վերջ տալ Հայաստանի նկատմամբ Հռոմի հավակնություններին:

Սասանյանները ջանում էին տիրել Փոքր Ասիային, որի համար անհրաժեշտ էր վերացնել իրենց ճանապարհին ընկած խոչընդոտը՝ Հայաստանը: Մինչդեռ Հայոց թագավորության պահպանմամբ հնարավոր չէր դառնա այդ ծրագրի իրագործումը: Բացի այդ, Շապուհ II-ը համոզված չէր, որ Մերուժանին և նրա հետևորդներին կհաջողվի հավատափոխ անել հայ ժողովրդին, քանի որ վերջինիս ճնշող մեծամասնությունը հետևում էր հռոմեամետ ուժերին, որոնց ոգին Հայ եկեղեցին էր: Փառանձեմ թագուհու շուրջը համախմբված հայոց ռազմուժը 14 ամիս դիմադրեց հունասեր հոսանքի և եկեղեցի:՝ ոգեշնչմամբ: Փառանձեմի եղբրական վախճանը տեղի ունեցավ պարսից Զիկ և Կարեն զորապետների առաջնորդած զորքերի հրոսումների հետևանքով: Մերուժանը չի հիշվում այդ գործողությունների ընթացքում⁸, ինչը նրա հանդեպ պարսից արքայի անվստահության վկայությունն է: Մովսես Խորենացին գրում է, որ Շապուհը «բազում զօրս գումարեալ ի ձեռն Մեհրուժանայ Արծրունույ և Վահանայ Մամիկոնէի, ուրացողաց գթրիստոս, արծակե յաշխարհս Հայոց. որք եկեալ նստան շուրջ զբերդաւն Արտագերից»⁹: Սակայն տվյալ դեպքում ավելի հավաստի ու անկողմնակալ է Փավստոս Բուզանդը: Խորենացին հայոց եղբրաբախտ թագուհու անկման գործում մեղավորներ է համարում Մերուժանին և Վահան Մամիկոնյանին: Պատմափոր գրչի տակ անգույն ու անդեմ են մահ Մամիկոնյան փառապանժ տան մյուս գործիչները՝ Վասակ և Մուշեղ սպարապետները, Վահանի հայրենասեր որդին՝ Սամվելը և ուրիշներ, ի հաճույս իր մեկեմաս Սահակ

⁸ Փավստոս Բուզանդ, *IV, Ծե, էջ 144*:

⁹ Մովսես Խորենացի, *III, Լե, էջ 300*:

Բագրատունու և նրա տոհմակիցների, որոնք մրցակցում էին Մամիկոնյանների հետ:

Փավստոս Բուզանդի վկայությամբ Մերուժանն ու Վահանը Փռռանծեմի անկումից հետո, Շապուհ II-ի առաջնորդած զորքի հետ խուժեցին Հայաստան: Պարսից զորքը բանակեց Բագրևանդ գավառում: Որպեսզի հայ նախարարներին հարկադրի հպատակության, Շապուհը, հավանաբար Մերուժանի ու Վահանի խորհրդով, հրամայեց Հայաստանի ամրանիստ վայրերում կառուցել բերդեր և նրանցում տեղավորել ազնվագարմ տիկնանց, «զի եթէ ոչ արք նոցա եկեսցեն նմա ի ծառայութիւն, սպանցեն զկանայս նոցա...»¹⁰: Պատմագիրը գրում է, որ այնուհետև Շապուհ արքան Հայոց աշխարհի վրա իշխողներ կարգեց Զիկին ու Կարենին՝ «զօրոք բազմօք», մինչդեռ մնացորդների վրա միայն իշխանություն տվեց «ի ձեռս Վահանայ և Մերուժանայ», իսկ ինքը մեկնեց Ատրպատական¹¹: Մերուժանն ու Վահանը ջանացին իրականացնել երկրի հավատափոխության գործը: Նրանք, ըստ Փավստոս Բուզանդի, «սկսան այնուհետև յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց... Եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր ի բուռն արկանէին, թողուլ զաստուածպաշտութիւն և ի պաշտօն դառնալ Մազդեզանցն», այդ թվում նաև բերդերում կալանված հայ տիկնանց, սպառնալով չարաչար մահով սպանել տալ հրաժարվողներին: Մերուժանն ու նրա աջակիցները «ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանցն...»¹²: Հնարավոր է, որ նրանք որոշ հաջողության են հասել, շնորհիվ այն հանգամանքի, որ հայերեն լեզվով ժամասցության բացակայության պայմաններում Հայաստանում քրիստոնեական կրոնը մնում էր մակերեսային, և շատերը հետևում էին նախնյաց հեթանոսական հավատալիքներին ու կենսակերպին: Սակայն եկեղեցին ու նրան սատարող հռոմեասեր նախարարները տենդագին

¹⁰ Փավստոս Բուզանդ, IV, ԾԸ, էջ 150:

¹¹ Նույն տեղում:

¹² Փավստոս Բուզանդ, IV, ԾԹ, էջ 151 – 152:

գործունեությունն ծավալեցին արյաց արքայի նվաճողական ծրագրերը ի դերև հանելու համար: Մովսես Խորենացին վկայում է, որ Ներսես կաթողիկոսը Հռոմի Թեոդոս կայսրից (պետք է լինի Վաղեսից) խնդրում է Հայաստանում թագավորեցնել Արշակի ու Փառանծենի որդի Պապ արքայազնին: Կայսրը ստվար զորքով Հայաստան է առաքում Տերենտիոս զորապետին և Պապին, որոնք «եկեալ գտանեն զամբարիշտն Մեիրուժան պետացեալ կալեալ զերկիրս Հայոց, և հալածական արարեալ՝ յինքեանս թափեն զաշխարհս»¹³: Այնուհետև Մերուժանն այդ մասին իրազեկում է Խորասանում գտնվող Շապուհ արքային, որը հրամայում է «ամենայն զօրացն Պարսից երթալ ընդ Մեիրուժանայ ի Հայս ի պատերազմ»¹⁴: Ստացվում է, որ պարսից զորքը Հայաստանում չէր և միայն Շապուհի հրամանից հետո էր, որ խուժեց այնտեղ: Այնինչ, ինչպես վերևում նշվեց, պարսկական զորքը Ջիկի և Կարենի գլխավորությամբ հաստատվել էր Հայաստանում, որտեղից նրա հեռանալու պարագայում երկիրն իր դռները լայնորեն կբացեր հռոմեացիների առջև, և նրանց սատարմամբ կվերահաստատվեր Արշակունիների թագավորությունը, վիժեցնելով արյաց տիրակալի ծրագրերը:

Համաձայն Փավստոս Բուզանդի մի վկայության, երբ Պապն ու Մուշեղ Մամիկոնյանը Հռոմեական կայսրությունից ժամանեցին Հայաստան, Մուշեղը հայոց զորագնդերով ջախջախեց պարսից զորքին, սպանելով Ջիկ և Կարեն զորապետներին, բայց «միայն Մերուժանն չարագործ փախչել միածի»¹⁵: Մուշեղը 40 հազարանոց բանակով կոտորում է նաև Շապուհի գլխավորած բանակի ողջ կազմը: Վերջինում մի զորագնդի առաջնորդն էր Մերուժան Արծրունին¹⁶: Սակայն Բագրևանդի Բագավան ավանի մոտ 371թ. գարնանը տեղի ունեցած ճակատամարտում հայ-հռոմեական զորքերը Մուշեղ սպարապետի գլխավորությամբ փայլուն հաղթանակ տարան

¹³ Մովսես Խորենացի, III, ԼԶ, էջ 302:

¹⁴ Նույն տեղում, ԼԷ, էջ 302 – 303:

¹⁵ Փավստոս Բուզանդ, V, Ա, էջ 157:

¹⁶ Նույն տեղում, Բ, էջ 158:

Շապուհ II-ի զորքերի դեմ: Մարտից առաջ Մերուժան Արծրունին լրատարի միջոցով Մուշեղ սպարապետին զգուշացրեց Շապուհ II-ին զորակցող աղվանից Ուռնայր թագավորի մտադրությունների մասին¹⁷: Այս մարտում Մերուժան Արծրունին բնավ չի հիշվում Փավստոսի մոտ: Դա թույլ է տալիս ենթադրելու, որ Մերուժանը այլևս հույսեր չէր կապում արյաց տիրակալի հետ, նկատի առնելով այն զորեղ փաստը, որ Հայաստանն արդեն ուներ իր թագավորը, հանձին երիտասարդ ու կարողունակ Պապ Արշակունու, որին պաշտպանում էին հռոմեական զորագնդերը: Ըստ Մովսես Խորենացու, ճակատամարտը տեղի է ունեցել Ձիրավի դաշտում (ինչն իհարկե ճիշտ չէ)¹⁸, և մարտը գլխավորել է ոչ թե Մուշեղ Մամիկոնյանը, այլ Սմբատ Բագրատունին, որը մարտին մասնակցող Մերուժան Արծրունուն ձերբակալում է «յեզեր շամբին Կոզայովտի» և սպանում տանջալի մահվամբ¹⁹: Խորենացին նաև նշում է, որ կալանված Մերուժանին Սմբատը չի տանում բանակատեղ, «զմտաւ ածեալ, թէ գուցէ թափից է զնա մեծն Ներսես»²⁰: Ուրեմն հայոց կաթողիկոսը կարող էր փրկել Մերուժանին՝ եկեղեցու և քրիստոնեական կրոնի երդվյալ ախոյանին: Դա հնարավոր էր Մերուժանի վերակողմնորոշման պարագայում, ինչին չէր կարող վերահասու չլինել հայոց հովվապետը: Սակայն Խորենացին Բագրատունյաց իշխանին պանծացնելու միտումով Մերուժանին սպանել է տալիս նրա ձեռքով: Մինչդեռ Փավստոս Բուզանդի մոտ նման վկայություն չկա: Բացի այդ, վերջինս Մերուժանին հիշում է նաև այդ ճակատամարտից հետո, նշելով, որ Արշակ III Արշակունու գահակալման տարիներին նա դեռևս գտնվում էր «առ թագաւորին Պարսից»: Մերուժանը կարողանում է համոզել Շապուհ II-ին և ստանալով զորաբաժին մտնում է Հայաստան, սակայն չարաչար պարտություն կրելով սպանվում է Մանվել

¹⁷ Նույն տեղում, Դ, էջ 161 – 162:

¹⁸ Տես Յ.Սանանդյան, *Երկեր*, Բ, էջ 211:

¹⁹ Մովսես Խորենացի, III, ԼԷ, էջ 305:

²⁰ Նույն տեղում: *Մերուժանի դիրքավորման վրա կարող էր ազդել նաև Պապի հրամանով Արծրունյաց ախոյան մարդպետի սպանությունը (տես Ս Փավստոս, V, 2, էջ 171 – 172):*

Մամիկոնյանի նիզակակից Բաբիկի սյունյաց իշխանի ձեռքով²¹: Սպանությունից առաջ Մանվելը Մերուժանին ձայնում է՝ «Այ կախարդ, մինչև ե՞րբ պիտի խաբես մեզ»²², ինչը թերևս վկայում է, որ Մերուժանը փորձել է սողանցքներ գտնել նաև Արշակ III-ի և Մանվել Մամիկոնյանի հետ կապեր հաստատելու համար, ինչն իհարկե չի հաջողվել նրան: Մերուժանը, համաձայն Փավստոս Բուզանդի, արդեն կորցրել էր վստահությունը հաջող հեռանկարի նկատմամբ և նույնիսկ փորձում էր հմայությամբ (որին նա տիրապետում էր) գուշակել իր ապագան, բայց «ոչ գոյր նմա յաջողակ յուռութ կախարդանացն յոր յուսարն»²³: Նման իրավիճակում բնական էր, որ նա պետք է դիմեր հուսահատ փորձերի, ջանալով կապեր հաստատել Հայաստանում իշխող Մանվել Մամիկոնյանի հետ, սակայն այլևս ուշ էր. նա լիովին կորցրել էր իր վարկը հայ նախարարների միջավայրում, ինչը և հանգեցրեց նրա անփառունակ վախճանին:

Թովմա Արծրունին հայոց Վարազդատ թագավորի օրոք հիշում է մեկ այլ Մերուժան Արծրունու, որին Վարազդատն ուղարկում է Շապուհ II-ի մոտ՝ նրան հպատակվելու առաջարկով²⁴: Նկատենք, որ Մովսես Խորենացին գրում է, որ Վարազդատը «ոչ հնազանդէր խրատու վերակացութեան զօրացն Յունաց: Վասն որոյ առաքէ հրեշտակս առ Շապուհ, զի տացէ ի դստերաց իւրոց նմա կնութեան, և սա դարձուսցէ առ նա զաշխարհս Հայոց»²⁵, այսինքն հայոց թագավորը Շապուհին խոստանում է հնազանդություն: Գուցե իրոք վերջինիս մոտ հայոց պատանի թագավորը (հետևելով իր հորեղբայր Պապին) պատվիրակություն է ուղարկել, հավանաբար 377թ., երբ վեստգոթերի սպառնալիքի պատճառով Վաղես կայսրն ստիպված զորքերը հանեց Հայաստանից, նետելով Թրակիա՝ Վեստգոթերի դեմ²⁶: Փավստոս Բուզանդը վկայում է, որ

²¹ Փավստոս Բուզանդ, V, ԽԳ, էջ 214:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 213:

²⁴ Թովմա Արծրունի, էջ 108:

²⁵ Մովսես Խորենացի, III, Խ, էջ 308 – 309:

²⁶ Հ.Մանանդյան, *Երկեր, Բ, էջ 234, История Византии, I, Москва, 1967, с. 177 – 178.*

Վարազդատի օրոք քուշանական ցեղերի դեմ պատերազմող պարսից արքայի գործում էին նաև գերյալ հայ զորայիններ, որոնց թվում էին նաև Մանվել Մամիկոնյանն ու իր եղբայր Կոմսը, որոնք թեև «բազում քաջութիւնս կատարեալ ի նմին ճակատուն», սակայն հալածվելով արյաց տիրակալի կողմից, վերադարձան հայրենիք²⁷: Պատմիչը չի նշում Վարազդատի կողմից Շապուհ II-ի մոտ պատվիրակներ ուղարկելու մասին: Վարազդատի հրամանով Մուշեղին գլխատելու փաստը²⁸ հավանաբար հետևանք էր նրա օրոք եղած հայ-պարսկական մերձեցման:

Ե. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՓՈՒԼՈՒՄ

Վերջին Արշակունիների օրոք Արծրունիների և մարդպետների միջև եղած հակամարտությունն ավելի խորացավ: Թեև Պապ թագավորը սպանել տվեց Դղակ մարդպետին¹, սահմանափակելով մարդպետների իրավունքները, սակայն նրա հաջորդների օրոք մարդպետները շարունակեցին հավատարմորեն ծառայել հայոց թագավորներին, վայելելով նրանց վստահությունն ու հովանավորությունը: Գուցե այդ էր պատճառներից մեկը, որ հայոց վերջին Արշակունի արքայի՝ Արտաշեսի գահընկեցության գործում որոշակի դեր կատարեց Վաչե Արծրունին, որը, համաձայն խորենացու մի վկայության, Հայաստանում նախարարական այն խմբավորման պարագլուխն էր, որը ներհակում էր Արշակունիների թագավորությունը պահպանելու կողմնակիցներին²: Ուստի Արշակունյաց թագավորության բարձունից հետո մարդպետները կորցրեցին իրենց գերագոյեցիկ դերը և հողատիրույթները: Մինչդեռ նրանց հակառակորդ Արծրունիների ազդեցությունը մեծացավ: Ուշագրավ է, որ եթե Ազաթանգեղոսի մոտ մարդպետը հիշվում է երրորդ տեղում, իսկ Արծրունիները՝

²⁷ Փավստոս Բուզանդ, V, ԼԷ, էջ 201 – 202:

²⁸ Նույն տեղում, էջ 199 – 200:

¹ Նույն տեղում, V, Զ, էջ 171 – 172:

² Մովսես Խորենացի, III, ԿԵ, էջ 350:

16-րդ տեղում, ապա Խորենացին հայ նախարարների մեջ մարդպետին դնում է վերջին, իսկ Արծրունիներին՝ 7-րդ տեղում: Ղազար Փարպեցու մոտ Արծրունիները հիշվում են երրորդ տեղում, իսկ մարդպետները բնավ չեն հիշվում հայ նախարարների մեջ: Պատմիչը Մերշապուհ (Ներշապուհ) Արծրունուն անվանում է մարդպետ³, ինչը վկայում է Արծրունիների հետ մարդպետների միաձուլման մասին, որը անշուշտ, հետևանք էր վերջիններիս կալվածները Արծրունիներին անցնելու հանգամանքի: Մարդպետական անունով կոչվեց նաև Արծրունիների իշխանության եպիսկոպոսությունը⁴:

Ըստ Թովմա Արծրունու, Վասակ Արծրունին հայոց Արշակ III թագավորի կուսակիցների մեջ էր և նրանց հետ իր գերդաստանով հետևեց Մեծ Հայքի արևմտյան բաժին հեռացած Արշակ III-ին, քայց հետո վերադարձավ հայոց թագավոր Խոսրով Արշակունու մոտ և տիրացավ հայրենի իշխանությանը: Ապա նա դիմեց պարսից Արտաշիր արքայի մոտ և մտահղացավ վրեժխնդիր լինել Մամիկոնյանների նկատմամբ՝ «վասն սպանման Մեհուժանայ հաւոյն իւրոյ», ինչին խիստ ընդդիմացավ Վասակի որդի Աղանը⁵, որը հայտնի էր իր սրբակենցաղ վարքով: Սակայն, քանի որ տարբեր ժամանակ են գահակալել Սասանյան Արտաշիր արքան (379 – 383) և հայոց թագավոր Խոսրով Արշակունին (385 – 388), ուստի Արտաշիրի մոտ Վասակի հեռանալու մասին պատմագրի հաղորդումը հավաստի չէ:

Ըստ երևույթին Վասակ Արծրունին ունեցել է հեթանոսամետ ուղեգիծ, ինչի մասին է վկայում զրադաշտության հետևորդ Մերուժան Արծրունու մահվան համար Մամիկոնյաններին վրիժախատույց լինելու նրա ձգտումը: Սակայն Աղան Արծրունին, խորախոհուն ու բարեպաշտ այդ մտավորականը, դատաւիեւեց հորը՝ նրա անխոհեմ այն քայլի համար, որ նա

³ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխ., 9. Տէր-Սկրտչեան և Ստ.Մալխասեան, Տփղիս, 1904, II, ԼԹ, էջ 71 – 72:

⁴ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 70, 73, 76:

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 110, 112:

գթացել ու ազգական էր ճանաչել Մերուժան Արծրունուն, մինչ-դեռ «ատել արժան էր և չար ի չարի վերայ, թե հնար էր՝ հասուցանել» այդ «աստվածամարտին»⁶: Իհարկե, ինքը՝ Վասակ Արծրունին Մերուժանի հետևորդը չէր և բնավ էլ չէր կամենում հարություն տալ նրա քաղաքական ուղեգծին: Դա հավաստվում է պատմագրի մեկ այլ վկայությամբ, ըստ որի հետագայում՝ 450 – 451թթ. ազատագրական պատերազմից հետո Վասակը եղբայրների՝ Տաճատի ու Գոտերի հետ մեկնում է Բյուզանդիա՝ «մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս», ինչը ենթադրել է տալիս, որ նա, չհանդուրժելով պարսից շահատակությունները, հեռացել է երկրից: Բյուզանդիայի կայսրը նրան ու եղբայրներին ընդունել է «սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պատիւ յառաջ ածեալ, իբրև զքաջամարտիկ ակոյեանս որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ծգնեալ» տառապեցին: Եվ երբ կայսրը նրանց առաջարկել է ընդունել քաղկեդոնյան դավանանքը, նրանք մերժել են նրան: Պատմագրի խոսքերից երևում է, որ Աղան Արծրունին ևս հոր հետ մեկնել էր Բյուզանդիա: Բայց, եթե հայրն ու հորեղբայրները չեն վերադարձել հայրենիք և վախճանվել են կայսրության մայրաքաղաքում, ապա Աղանը վերադարձել է Հայաստան և ապրել միանձնի կեցությամբ⁷:

Նկատենք, որ Աղան Արծրունուն մեծ գովեստով է հիշում Ղազար Փարպեցին, որին անշուշտ, կրկնում է Արծրունի պատմիչը: Աղանը, համաձայն Փարպեցու վկայության, եղել է նրա ուսուցիչն ու դաստիարակը: Պատմագիրը նշում է, որ ինքը «սնեալ և ուսեալ առ ոտս առաքինակրօն երանելւոյն Աղանայ, որ էր ազգաւ ի հոյակապ և յականաւոր տոհմէն Արծրունեաց, որդի Վասակայ, եղբոր Տաճատայ և Գոտորգի»⁸: Պատմիչը իր «Թղթում» ևս հիշում է, որ «սուրբ և ստոյգ» հաւատը մանկուց սովորել է «յերանելւոյ Աղանայ՝ կեան նովիմբ ի նմին անփոփոխութեամբ մինչև ի վախճան կենցաղոյս իմոյ...»⁹:

⁶ Նույն տեղում, էջ 112:

⁷ Նույն տեղում, էջ 112, 132:

⁸ Ղազար Փարպեցի, I, 9, էջ 5:

⁹ Նույն տեղում, էջ 202:

Մատենագրական կցկտուր տեղեկություններից երևում է, որ 450 – 451թթ. ժողովրդական պատերազմից առաջ Արծրունիները չեն ունեցել պարսկամետ դիրքորոշում: Մովսես Խորենացու վկայությամբ Շավասպ Արծրունին ծառանում է հայոց արքա Խոսրով Արշակունուց (Վռամ շապուհի հաջորդից) հետո Հագկերտ I-ի կամքով Հայաստանում թագավորող նրա որդու՝ Շապուհի դեմ (մոտ 416 – 420), որը մականախաղի ժամանակ իրեն հաղթող Շավասպին սաստում է՝ նրան նետելով «ճանաչիր ինքդ քեզ» խոսքերը, որին ի պատասխան, Շավասպը խրոխտաբար ասում է. «ճանաչեմ և գիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ, և ունիմ իշխանութիւն ընդ եղբարս քո զբարձն արքայի համբուրել, որպէս և անուանակոչեցեալս եմ»¹⁰: Թովմա Արծրունին այս միջադեպը հիշելիս Շավասպ Արծրունու շուրթերին չի դնում «գիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ» արտահայտությունը: Բայց նա մի էական հավելում է անում Խորենացու հաղորդածին, նշելով, որ Շավասպը քամահրելով Շապուհին, հեռանում է բյուզանդական Անատոլիոս զորապետի մոտ, և իբր թե Թեոդոս կայսրը Շավասպին է վստահում «գիագարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչ ի յանցս Եփրատ գետոյ», որից հետո Շավասպը չորս տարի վարում է այդ պաշտոնը, ապա վերադառնում հայրենիք¹¹: Այս վկայություններից երևում է, որ Շավասպ Արծրունին դիմադիր դիրքավորում ուներ պարսից արքայի և նրա կամակատար Շապուհ թագավորի նկատմամբ, որն, ըստ Ղազար Փարպեցու, հոր կողմից կարգվել էր հայոց թագավոր, քանի որ հայրը չէր կամեցել «թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց», նպատակադրվելով հայերին կրոնափոխ անել ու ծուլել¹²:

Անշուշտ, Շավասպին կայսեր կողմից բարձր պաշտոնների արժանացնելու մասին Թովմայի հաղորդումը վավերական չէ և չի հաստատվում որևէ այլ սկզբնաղբյուրով և ոչ էլ նրա հետագա վկայություններով: Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու մոտ հիշվում է նաև մեկ այլ

¹⁰ Մովսես Խորենացի, III, ԾԵ, էջ 331:

¹¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 114 – 116:

¹² Ղազար Փարպեցի. I, ԺԲ, էջ 18 – 19:

Շավասպ Արծրունի, որն իր անվանակցի հակապատկերն է և բնավ հնարավոր չէ նույնացնել նրա հետ: Այս Շավասպը Թովմայի մոտ հիշվում է որպես Աղանի հորեղբայր և Վասակի եղբայր, որը «խորհեցաւ զտիրելն Հայոց» և մեկնելով պարսից արքայի մոտ, «յանձն առեալ ինքնական մուրուրութեամբ զօրէնս մազդեգանց... և խնդրեալ յարքայէ զիշխանութիւն Հայոց», ապա Վնդո մոգպետի հետ (որին պատմիչը թյուրիմացաբար համարում է նաև մարգպան) վերադարձավ Հայաստան և «ձեռնամուխ եղեն աւերել քանդել զեկեղեցիս», կատարելով անլուր չարագործություններ: Նրանք նույնիսկ կրակապաշտական մեհյան են հիմնում Արտաշատում: Նրանց արարքների հետևանքով «կայր աշխարիս ի մեծ վտանգաւոր աղետս», – դառնությամբ նշում է պատմագիրը¹³:

Շավասպ Արծրունու և Վնդո մոգպետի խուժադուժ արարքների լուրը հասնում է Տավրոսյան լեռների փեշերին (Մոկաց աշխարհում) ամրացած Վարդան Մամիկոնյանին, որը չհանդուրժելով դրանք, առլցվում է բուռն զայրույթով՝ «սուրբ հավատի կորստյան և մեր Հայոց աշխարհի կործանման պատճառով», ապա իր մոտ է հրավիրում Ռշտունյաց Տաճատ և Անձևացյաց Վահրիճ իշխաններին՝ իրենց զորագնդերով և միասին խոյանում են Շավասպի ու Վնդոյի զորականների վրա, սպանելով Շավասպին: Վնդոյին այրում են Դվինում հիմնված կրակապաշտական մեհյանում, որն ավերելով տեղում կառուցում են Ս.Գրիգոր եկեղեցին: Նույն ժամանակ ըստ Թովմայի, հայ նախարարները Վահան Արծրունուն հանձնում են «զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ», որպեսզի այնտեղ կառուցի արքունի ապարանք: Այնուհետև նրանք «խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց», քանզի արիաջան էր ու կորովամիտ: Սակայն ի վերջո նախարարները հրաժարվում են Վահան Արծրունուն թագավորեցնելու մտքից և մեկնում Վարդան Մամիկոնյանի մոտ: Նրանց հետ էր նաև Վահան Արծրունին, որը բոլորից առաջ է ներկայանում Վարդանին, և «տայ՛ նմա զվերակացութիւն Հայոց»¹⁴: Նկատելի

¹³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 124 – 126:

¹⁴ Նույն տեղում, էջ 126 – 128:

է պատմագրի միտումը չարագործ Շավասպի կողքին Արծրունյաց նախարար Վահանին մեջտեղ բերելով բարձրացնել հարազատ տոհմի վարկը:

Ղազար Փարպեցի 452թ. Հազկերտ II-ի հրամանով կալանված հայ նախարարների մեջ հիշում է նաև Շավասպ Արծրունուն¹⁵, որը հավանաբար խորենացու և նրա հետևողությամբ թովմա Արծրունու մոտ հիշվող հայրենասեր իշխանն է:

¹⁵ Ղազար Փարպեցի, II, *ևէ*, էջ 86:

ԳՆՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀՈՐԶԱՆՈՒՏՆԵՐՈՒՄ

Ա. 450 – 451ԹԹ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

V դարը հայոց պատմության հեղաբեկյալ շրջափուլն էր, որը նշանավորվեց ոչ միայն հոգևոր-մշակութային, այլև ազատագրական դարակազմիկ խոյանքներով: Հայ ժողովուրդը նետվեց ազատագրական ոգորումների դաշտ, չհանդուրժելով խավարակուռ ուժերի բռնարարքները: Այդ պատերազմներում կոփվեց նրա ճակատագիրը: Ազատագրական պայքարին անմասն չէր մաս Արծրունյաց տոհմը:

450թ. սկսված ժողովրդական պատերազմում Արծրունիները՝ Փարպեցու բնորոշմամբ «հոյակապ և յականաւոր» տոհմի ներկայացուցիչները զորակցում էին Վարդանանց: Պարսից Հազկերտ II արքայի անհանդուրժող ու մոլեկրոն քաղաքականությունը սպառնում էր մաս Արծրունիների իրավունքներին: Հայոց Արշակունիների անկումից հետո Արծրունիները ոչ միայն պահպանել, այլև ավելի էին ընդլայնել իրենց կիսանկախ իշխանությունը՝ ուրույն աստիճանակարգով, զորուժով և ավատատիրությանը ներհատուկ այլ հատկանիշներով: Արծրունյաց ավատիշխանները իրենց հողատիրույթներում օժտված էին գրեթե ոչնչով չսահմանափակվող իրավագործությամբ: Նրանց իշխանությունը բառիս բուն իմաստով մնում էր աննվաճ:

Սասանյան դռան քաղաքականությունը ուղղված էր առաջին հերթին Հայաստանի հոգևոր և աշխարհիկ ազնվականության դեմ, որին ծնկի բերելու համար արյաց տիրակալը դիմեց մինչ այդ չտեսնված միջոցառումների, ջանալով կրոնափոխ անել հայ վերնախավին, ապա մաս

հասարակ ժողովրդին: Հայաստանի քաղաքական մթնոլորտը հատկապես թունավորում էր Հազկերտ II-ի կրոնահալած ծրագիրը, որը դրսևորվեց հայերին ուղղված հավատափոխության առաջարկով: Բայց այն պատշաճ հակահարված ստացավ Արտաշատում 450թ. կայացած ժողովում: Ղազար Փարպեցին այդ ժողովի մասնակիցների մեջ երկրորդ տեղում (Վասակ մարզպանից հետո) հիշում է Ներշապուհ Արծրունուն, իսկ հոգևորականների մեջ երրորդ տեղում (կաթողիկոսից և Սյունիքի եպիսկոպոսից հետո)՝ Արծրունյաց Մուշե եպիսկոպոսին¹: Եղիշեն ևս այդ ժողովի մասնակիցների անունները նշելիս Ներշապուհ Արծրունուն հիշում է երկրորդ տեղում՝ Վասակ Սյունեցուց հետո, բայց Արծրունյաց Մուշե եպիսկոպոսին դնում է 12-րդ տեղում², հավանաբար, նկատի առնելով ազատագրական պատերազմում նրա ունեցած պակաս առաջատար դերը: Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Փարպեցու և Եղիշեի մոտ Արծրունիների տոհմին այդպիսի նախապատվություն տալը պայմանավորված չէր հայոց Գահնամակում այդ տանը հատկացված տեղով: Այդ փաստաթղթում Արծրունիները զբաղեցնում են երրորդ «գահը» Սյունյաց և Բագրատունյաց նախարարներից հետո: Ընդամին Փարպեցու և Եղիշեի բերած ցանկերում Բագրատունի իշխանը չի նշված, և Արծրունիները հիշվում են երկրորդ տեղում: Համանման պատկեր է դիտվել նաև Ջորանամակում³:

450 – 451թթ. ժողովրդաազատագրական պատերազմում Արծրունիների կողմից Վարդանանց զորակցելն ինչ-որ չափով պայմանավորված էր նաև Մամիկոնյանների հետ նրանց խնամիությամբ: Վասակ Արծրունու դուստր Չվիկը կնության էր տրվել Վարդան Մամիկոնյանի եղբայր Յմայակին՝ 481 – 484թթ. ազատագրական պատերազմի առաջնորդ Վահանի հորը: Փարպեցու բնութագրմամբ Չվիկը «եղև կին անուանի և

¹ *Տես նույն տեղում, II, ԻԳ, էջ 44:*

² *Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ. Ե. Տեր-Սիմայանի, Երևան, 1957, էջ 28, 43:*

³ *Տես Ն.А.Донц, Армения в эпоху Юстиниана, с. 249, 263.*

առաւելելալ ամենայն լաւ և մտաւոր մասամբք յամենայն կանայս ի Հայաստան աշխարհիս»⁴:

450 – 451թթ. պատերազմում նկատելի է նաև Արծրունի իշխանի դիվանագիտական առաքելությունը: Բյուզանդիայի կայսեր զորակցությունն ստանալու ակնկալիքով 450թ. նրա մոտ մեկնեց Հմայակ Մամիկոնյանի գլխավորած պատվիրակությունը, որի անդամներն էին նաև Վահան Ամատունին և Մերուժան Արծրունին՝ Աղանի եղբայրը⁵: Հավանաբար նախ կայսեր մոտ է ուղարկվել միայն Ատոմ Գնունին⁶: Հույժ կարևոր այդ առաքելության համար անհրաժեշտ էր ծանրակշիռ պատվիրակություն՝ առաջատար նախարարություններից համալրված կազմով: Ընդ որում եղիշեն բնավ չի նշում Ատոմ Գնունու դիվանագիտական առաքելության հետագա ընթացքի մասին, մինչդեռ Փարպեցին հիշում է պատվիրակության գործունեության և վերադարձի մասին⁷:

Ազատագրական պայքարի ալիքներն ընդգրկեցին նաև Արծրունիների իշխանության գրեթե բոլոր հորիզոնները: Եկեղեցին տենդագին աշխատանք տարավ, ժողովրդի մեջ վառելով հայրենի հավատը պաշտպանելու բուռն մղումներ: Եղիշեի վկայությամբ Արծրունիների իշխանության մեջ ընդվզված ժողովուրդը ավերեց զրադաշտական կրակատունը⁸:

Ազատագրական պատերազմի սկզբնափուլում ապստամբներին գլխավորող Վասակ մարզպանի կամքով ազատամարտի ելած ուժերը բաժանվեցին երեք մասի, որոնց գլուխ կանգնեցին Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունեցին և Ներշապուռի Արծրունին: Վերջինիս զորաբաժինն ուղարկվեց հայ-պարսկական սահմանագլուխ: Սակայն ապստամբության ճակատագրական պահին Վասակը լքեց նրա մասնակիցներին և միացավ պարսիկներին, հուսալով այդ կերպ պահպանել իր պաշտոնն ու տիրույթները, նաև պատանդ որդիներին: Դրանից

⁴ Դազար Փարպեցի, III, 4Բ, էջ 110:

⁵ Նույն տեղում, II, LԳ, էջ 63:

⁶ Եղիշե, էջ 71:

⁷ Դազար Փարպեցի, II, ԽԱ, էջ 74:

⁸ Եղիշե, էջ 129:

հետո ապստամբության առաջատար գործիչներ էին Մամիկոնյանները և նրանց սատարող Արծրունիները (Բագրատունիները հարեցին Վասակին): Եղիշեն ուխտապահ նախարարների մեջ առաջին տեղում նշում է Ներշապուհ Արծրունուն⁹: Ազատագրական պատերազմում Վարդանանց կողմում էին նաև հարավային Հայաստանի այլ նախարարներ՝ Խորեն Խորխոռունին, Արտակ Պալունին, Վահան Ամատունին, Գյուտ Վահուունին, Շնավոն Անձևացին և Ատոմ Գնունին¹⁰: Նրանց վրա հավանաբար մեծ էր Արծրունիների ազդեցությունը:

Ներշապուհ Արծրունու գլխավորությամբ հայ-պարսկական սահման ուղարկված զորքի կազմում էր նաև Առանձար Ամատունու գլխավորած ջոկատը, որը պատշաճ հակահարված տվեց Հայաստանի Հեր և Ջարևանդ գավառներ թափանցած պարսից զորամասին¹¹: Այս ջոկատի հետագա ճակատագրի մասին պատմիչները ոչինչ չեն հաղորդում: Այն անշուշտ, որպես Ներշապուհի գլխավորած զորաբաժնի մաս, մասնակցեց նաև Ավարայրի դյուցազնամարտին: Հայ-պարսկական սահմանագլուխը պաշտպանական մեծ կարևորություն ուներ: Ուշագրավ է, որ Վարդան Մամիկոնյանի կողմից Արտաշատում անցկացրած ուխտապահ զորքի ստուգատեսի մասնակիցների մեջ առաջին տեղում հիշվում է Ներշապուհ Արծրունու գլխավորած միավորումը¹²:

*Բ. ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԱՌԵՂԾՎԱԾԸ*

Ավարայրի ճակատամարտը ազատագրական պատերազմի գագաթնակետն էր: Եղիշեի դյուցազնաշունչ Պատմության մեջ հառնում են այդ դյուցազնամարտի մանրամասները: Թե եղիշեն և թե Փարպեցին դեպի Ավարայրի

⁹ Նույն տեղում, էջ 74:

¹⁰ Նույն տեղում, էջ 99, Ղազար Փարպեցի, II, ԼԴ, էջ 64:

¹¹ Եղիշե, էջ 105-106, Ղազար Փարպեցի, II, ԼԷ, էջ 69:

¹² Եղիշե, էջ 99:

դաշտ¹³ շարժվող հայոց զորամիավորումների մեջ առաջին տեղում հիշում են Արծրունյաց զորաբաժինը՝ Ներշապուհ Արծրունու գլխավորությամբ: Նրան զորակցող Արծրունի ազատներից հիշվում են Ապրսամը, Մերուժանը, Շավասպը, Տաճատը, Շնգինը և Պարզևը, որոնք հավանաբար, ավելի մանր զորամասերի հրամանատարներ էին և որոշապես աչքի են ընկել մարտերում: Գակատամարտից առաջ, ինչպես ընդունված էր, Վարդան Մամիկոնյանը զորքը բաժանեց երեք մասի, կենտրոնում դասավորված զորաթևի հրամանատար նշանակելով Ներշապուհ Արծրունուն, որի տրամադրության տակ դրվեց նաև մոկաց Մեծ իշխանի զորագունդը: Ըստ Եղիշեի, Վարդան զորավարը «զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց և նիզակակից նմա զմեծ իշխանն Սոկաց. և զայլն ամենայն նախարարեան համհարզս երկոցունց, և զամենայն բազմութիւն գնդին թևս աստի և անտի կազմէր նոցա»¹⁴: Ըստ Փարպեցու, Վարդանը «միջոցի գնդին կարգէր գլխաւոր զտէրն Արծրունեաց, և զմարդպետն Սիհրշապուհի՝ հանդերձ իշխանաւն Արշարունեաց Արշաւրաւ և Երանելի արամբն Արտակաւ, իշխանաւն Սոկաց, և այլ աւագ նախարարօքն»¹⁵: Ինչպես տեսնում ենք պատմիչը Ներշապուհին կոչում է «մարդպետ» և «Արծրունյաց տեր», ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ «մարդպետ»-ը իբրև տիտղոս, կրում էր Արծրունյաց մեծ իշխանը¹⁶, անշուշտ, ասպարեզից մարդպետների դուրս մղվելուց հետո:

Հայոց երեք զորաթևերը անցան Տղմուտ գետը և նստելով ձիերին, հարձակվեցին պարսիկների վրա՝ «մեծաւ զօրութեամբ» և հետ շարտեցին նրանց, ջախջախելով նրանց աջ զորաթևն ու մատյան գունդը (արքունի գվարդիան): Բայց հակառակորդը վերախմբավորելով իր զորուժը, շրջապատեց

¹³ Տեղորոշվում է Վասպուրականի Արտագ գավառում, Տղմուտ գետի հովտում, այժմյան Կարազիադին գյուղի (Իրանի Մակու գավառում) հարավակողմում: Եղիշեն (էջ 100) հիշում է «Ղաշտն Արտագու», Փարպեցին՝ (II, ԼԷ, էջ 69) «հուպ ի գեօղն որ կոչի Աւարայր» ձևով:

¹⁴ Եղիշեն, էջ 116:

¹⁵ Ղազար Փարպեցի, II, ԼԹ, էջ 71 – 72:

¹⁶ Н.Адонц, Армения в эпоху Юстиниана, с. 320.

իր զորքի մեջ մխրճված հայոց հեծելազնոյին: Այդտեղ քաջաբար մարտնչող Վարդանն ու իր զինակիցները զոհվեցին¹⁷: Ճակատամարտը տևեց 451թ. մայիսի 26-ի ամբողջ օրը և դադարեց երեկոյան կողմը: Վարդանի զոհվելուց հետո, ինչպես հաղորդում է պատմիչը, «ոչ ոք գոյր այնուհետև ի մեջ գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդք մնացելոցն», ուստի հայոց զորքը ցանուցիր եղավ «ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վերայ բազում գաւառաց և բերդից...»¹⁸: Անշուշտ, նահանջեց նաև Ներշապուհի գլխավորած զորաբաժինը, փրկվելով անխուսափելի կործանումից: Եղիշեն և Փարպեցին Ավարայրի հերոսամարտում զոհված ազատների մեջ թեև չեն հիշում Արծրունիների, բայց Եղիշեն թվելով մարտում զոհված իշխաններին, հավելում է նաև «յարքունի տանէն և ի տանէն Արծրունեաց»՝ մարտում նահատակված 1036 ռազմիկների մեջ¹⁹: Ուստի չի ապացուցվում այն ենթադրությունը, որ իբր Ներշապուհ Արծրունու գլխավորած զորաթևը կամ չի մասնակցել Ավարայրի ճակատամարտին, կամ էլ մարտի սկզբում փախուստի է դիմել²⁰: Եղիշեն «արքունի տան» տակ անշուշտ, նկատի ունի Այրարատի ազատներին, որոնք հասկանալի պատճառներով միացան Սասանյանների դեմ ծառայած ուժերին: Բայց ոչ նրանցից և ոչ էլ Արծրունիներից հանվանե ոչ ոք չի հիշվում զոհված հայ իշխանների մեջ, քանի որ նրանց ականավոր ներկայացուցիչները ողջ էին մնացել, զոհվածները մանր ազատներ էին: Հատկանշական փաստ է նաև այն, որ ազատագրական պատերազմին մասնակցելու մեղադրանքով կալանված և 12 տարի քստորում անցկացրած հայ ազատների մեջ նշվում են (երկրորդ տեղում) Ներշապուհ Արծրունին և նրա հինգ տոհմակիցներն, իսկ հոգևոր այրերից Մուշե Արծրունին հիշվում է Ապար աշխարհի (Խորասան) Ռևան գյուղում նահատակված հոգևորականների մեջ²¹:

Սակայն Թովմա Արծրունին Ավարայրում զոհված

¹⁷ Եղիշեն, էջ 117 – 118:

¹⁸ Նույն տեղում, էջ 119:

¹⁹ Նույն տեղում, էջ 120:

²⁰ Հ.Ք.Արմեն, Մարզապետը և սպարապետը, Լոս Անճելըս, 1952, էջ 243:

²¹ Եղիշեն, էջ 193, Ղազար Փարպեցի, II, ԽԷ, էջ 86:

հերոսների շարքում դասում է նաև Արծրունի նախարարի վերոհիշյալ Վահանին, որն ինչպես տեսանք, մի պահ նույնիսկ հայ ազատանու կողմից առաջադրվում է հայոց թագավորի գահին: Ի դեմս Վահան Արծրունու, պատմագիրը նպատակ ուներ բարձրացնել իր տոհմի վարկը²²: Այդ միտումը համահունչ էր Թովմայի ապրած դարաշրջանին, երբ Արծրունիները հավակնում էին հայոց թագավորի գահին: Սակայն Վարդանանց պատերազմի մասին պատմող ժամանակակից մատենագիրներ Եղիշեն և Ղազար Փարպեցին բնավ չեն հիշում Վահան Արծրունուն: Վերջինս ծանոթ չէ նաև Հովհաննես Դրասխանակերտցուն, որն իր կյանքի վերջալույսին ապաստանեց Վասպուրականում, վայելելով Արծրունյաց թագավոր Գագիկի հովանավորությունը, և թվում է, թե պետք է շոյեր նրա տոհմական ինքնասիրությունը, կրկնելով Թովմա Արծրունու հաղորդածը Վահան Արծրունու մասին: Սակայն նա թեև Թովմայի հետևողությամբ հիշում է Մովսես Վարդան Մամիկոնյանի գտնվելու, Վնդոյին և Շավասայ Արծրունուն նրա և իր զինակիցների կողմից սպանելու մասին²³, սակայն ոչ մի բառով չի հիշում Վահան Արծրունուն: Բնականաբար Վահանի անձնավորության մասին հիմնավոր կասկած է առաջանում: Որտեղի՞ց կարող էր Արծրունի պատմագիրը տեղեկություններ քաղել նրա մասին: Ինքը՝ մատենագիրը փորձում է գտնել այդ նրբախնդիր հարցի պատասխանը, նշելով, որ Վահանի մասին գրելիս օգտվել է V դարի մատենագիր Աբրահամ Խոստովանողի երկասիրությունից (ցարդ այն կորած է համարվում): Թովմա Արծրունին գրում է նաև, որ իբր թե Եղիշե պատմիչը իր երկի սկզբնօրինակում գրած է եղել Վահան Արծրունու մասին, սակայն նեստորական եպիսկոպոս Բարձուման, որին հալածում էին Ներշապուհ Արծրունին և ուրիշ նախարարներ, Ռշտունիքում գտնվող Եղիշեից վերցնում է նրա Պատմությունը, դուրս նետելով Վահանի մասին պատմող հատվածը, այդ կերպ վրիժախատույց լինելով իրեն հալածող

²² M. Brosset, *Notice sur l'historien Armenien Thoma Ardzrouni X-es ("Melanges Asiatiques"*, IV, st. Petersbourg, 1862, p. 698).

²³ Տես Յովհաննու կաթողիկոսի *Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Դայոց, Թիֆլիս, 1912, էւ 59 – 60:*

նախարարներից: Փոքր-ինչ հետո վախճանվում է եղիշե պատմիչը, այդպես էլ չկարողանալով վերականգնել վրիժաժարավ նեստորականի եղծած հատվածը²⁴:

Սակայն, եթե անգամ ընդունենք, որ Բարծուսյան իրոք ոչնչացրել է եղիշեի գործի խնդրո առարկա հատվածը, ապա տարակուսանքի տեղիք է տալիս այն փաստը, թե ինչու Վարդանանց պատերազմի մասին պատմող մյուս մատենագրի՝ Փարպեցու երկում դույզն իսկ ակնարկ չկա Վահան Արծրունու մասին: Բացի այդ, անբնական կլիներ, որ հայրենավանդ հավատքի նվիրյալ եղիշեն իր ոսկեղենիկ մատյանը վստահեր Յայաստանում հալածվող օտարափառ եպիսկոպոսին, որի քարոզչական առաքելությունը նպատակ ուներ խարխլել հայոց հավատքի ու եկեղեցու հիմքերը, ուստի նա բնավ չէր վարանի ոչնչացնել պատմիչի ամբողջ գործը: Թովմա Արծրունու հաղորդումը հակասական երանգներ է ստանում նաև իր իսկ բերած տեղեկությունների համատեքստում: Այսպես, պատմագիրը վկայում է, որ Բարծուսյանի հալածողը ոչ թե Վահան Արծրունին էր, այլ Ներշապուհ Արծրունին, որին սակայն եղիշեն հիշատակում է հինգ անգամ, և այն էլ դրական կերպով, իբրև ազատագրական պատերազմում Վարդան Մամիկոնյանի գորակից: Ընդսմին թե եղիշեն և թե Փարպեցին, ինչպես նշվել է, հիշում են Արծրունի ուրիշ ազատների, որոնք առաջատար դեր չունեին ազատագրական պայքարում: Չասկանալի է, Արծրունյաց պատմիչը որքան էլ արդարախույզ լիներ, չէր կարող տուրք չտալ իր ապրած ժամանակաշրջանի հուզած խնդիրներին: Վահանի մասին շարադրված անվավեր պատումը նպատակ ուներ ցույց տալ, որ հայոց պատմության բախտորոշ ու հերոսական ժամանակաշրջանում Արծրունիները եղել են Յայրենիքի ազատության ու պատվի պահապանների առաջին շարքերում և արժանացել են հայոց արքաների թագը կրելու պատվին, ինչին նրանք իրոք հավակնում էին պատմիչի ապրած դարաշրջանում:

Որոշ ուսումնասիրողներ Վահան Արծրունուն դիտում են որպես իրական-պատմական գործիչ, որն անձնավորում էր 450

²⁴ Թովմա Արծրունի և Անանուն, II, Բ, էջ 131:

– 51թթ. ազատագրական պատերազմի ժամանակ Հայոց թագավորությունը վերականգնելու ձգտումները²⁵: Սակայն վերը բերված փաստարկները թույլ չեն տալիս նման եզրակացության հանգեցնելու: Վահան Արծրունին անգո անձնավորություն է, և բացի այդ, կենաց և մահու պայքարի դաշտ նետված հայ ժողովրդի նպատակը քրիստոնեական հավատի, երկրի ներքին ինքնավար իրավունքների պահպանությունն էր, ինչը հավաստվեց Արտաշատի ժողովում Հազկերտ արքային ուղղված պատասխանում, որտեղ ասվում էր, որ եթե արյաց տերը հայերի քրիստոնեական կրոնին չդիպչի, ապա նրանք պատրաստ են «կամալ իսկ և յօժարութեամբ՝ յամենայնի զծեր կամս և զհրաման կատարել. և ծառայել ձեզ... և զարիւն անձանց մերոց և որդւոց ի վերայ ձեր դնել»²⁶:

Գ. 481 – 484ԹԹ. ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ

481թ. Հայաստանում վերստին բռնկվեց ապստամբության հրդեհը, որն ուղղված էր Սասանյան Պերոզ արքայի հայանենգ ձեռնարկումների, հայրենասեր նախարարներին (հատկապես Մամիկոնյաններին) հալածելու և ուրացողներին, հայրենադավներին առանձնաշնորհումներով օժտելու քաղաքականության դեմ: Փարպեցին գրում է, որ Մամիկոնյան կորյունների՝ Վահանի և նրա եղբայրների հանդեպ նենգադավ վերաբերմունք էին դրսևորում այն ազատները, որոնք «ի պարսկաց զտանուտերութիւնն գնեալ ուրացութեամբ ըստ անարժանութեանն» և որոնք ժամանակին զորակցել էին Վասակ Սյունեցուն: Վերջինիս զինակիցներից էր նաև Գաղիշո Խորխոռունին, որը 481 – 484թթ. ապստամբության ժամանակ

²⁵ Տե՛ս Վ. Նալբանդյան, 451թ. ազատագրական շարժման հետ կապված մի հարցի շուրջը («ՀՍՍՌ ԳՍ Տեղեկագիր», (հաս. գիտ.), N 12, 1953), նույնի՝ Հայոց թագավորության վերականգնման հարցը Վարդանանց պատերազմի ժամանակ («ՊԲՀ», 1986, N 1, էջ 97-98): Տե՛ս նաև Ա. Գովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, I, Երևան, 1957, էջ 97 – 98:

²⁶ Ղազար Փարպեցի, II, ԻԴ, էջ 45:

«զօրագլուխն և քաջալերիչն էր ամենայն ամբարշտելոցն դասու»¹: Նկատենք, որ նույն Խորխոռունիների տոհմում Խորեն իշխանը զորավիգում էր Վարդանանց (նույն երևույթն ենք տեսնում նաև ուրիշ (ամգամ սյունյաց) իշխանների պարագայում): Արծրունիներից հիշվում են միայն Վարդանին զորակցող ազատներ, իսկ 481 – 484թթ. պատերազմի ժամանակ Արծրունիները թեև չունեին Ներշապուհի և մյուս Արծրունիների ապստամբական կորովը, սակայն ըստ էության դրական դիրքավորում ունեին Վահան Մամիկոնյանի հարուցած շարժման հանդեպ: Ղազար Փարպեցին Վահանի զինակիցների մեջ հիշում է Մամիկոնյան, Սյունյաց, Խորխոռունյաց, Գնունի և այլ իշխանների, սակայն ոչ Արծրունիների:

481 – 484 թվականների ապստամբությունը ծագեց հյուսիսային Հայաստանում, 482թ. հետո ծավալվելով նաև Հայաստանի արևմուտքում: Սակայն Վահանը փորձեց շարժման մեջ ներգրավել նաև իր քեռիներին՝ Արծրունյաց իշխաններին և նրանց ազդեցությամբ նաև Մոկաց, Անձևացյաց և Ռշտունյաց նախարարներին: Փարպեցին վկայում է, որ «առաքելը զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան յերևելի և յականաւոր ազգն Արծրունեաց, և յազգս գաւառիւն Անձևացեաց և Մոկաց և առ ազատորեարն Ռշտունեաց», առաջարկելով միանալ ազատագրական պայքարին: Արծրունիների և մյուս նախարարների մոտ Վահանի ուղարկած պատվիրակությունը նրանց հորդորեց միանալ շարժմանը և «խնդրել զվրէժ եկեղեցւոյ թշնամանաց, որով թշնամանեցաւ ի բազում ժամանակաց և ամաց յարհամարհող ուրացողացն»: Սակայն Վահանի օգնակոչին արձագանքողների մեջ չկային ոչ Արծրունիները, և ոչ էլ Մոկաց ու Ռշտունյաց տերերը: Դվին ժամանեցին զորաջուկատներով միայն Հովհան սեպուհը Անձևացյաց տոհմից և Ներսեհ Երվանդունի²: Պարսից զորքերի դեմ Ակոռիում, Ներսեհապատում և այլուր Վահանի մղած կռիվներում չեն հիշվում Արծրունիներ: Վահանի զորապետներ են նշվում Բագրատունի, Վահևունի, Սյունյաց, Գնունի, Կամսարական,

¹ Ղազար Փարպեցի, II, 49, էջ 111 – 113:

² Նույն տեղում, II, 7, էջ 126-127:

Պալուսի և այլ տոհմերի ներկայացուցիչներ³: Ուստի պետք է կարծել, որ Արծրունիները չեն մասնակցել ազատագրական այս պատերազմին, իհարկե չեն խոչընդոտել նաև Վահան Մամիկոնյանի ձեռնարկումներին, հնարավոր է, որ նյութական ու բարոյական աջակցություն են ցույց տվել նրան: Այդ նկատառումով է, որ Փարպեցին Արծրունի իշխանին համարում է Վահանի ուխտակից: Սասանյան պաշտոնյաների հետ բանակցելու համար Վահանը 484թ. ուղարկում է «յիւր ուխտակցացն զՅաշկուր Արծրունի և զՍահակ Կամսարականն» և ուրիշների, որոնք պարսիկներին հանդգեցին Վահան Մամիկոնյանի արդարացի լինելու մեջ, ապստամբության մեղքը բարդելով Պերոզ արքայի վրա⁴: Ղազար Փարպեցու վկայությամբ Վաղարշ թագավորը պարսից ավագանու կարծիքով «կարի սիրով ախորժէ և կամի լսել և առնել տալ Մամիկոնենին Վահանայ զտէրութիւն Մամիկոնենից և զսպարապետութիւնն Յայոց», ինչը և կատարվեց արյաց արքայի և ավագանու կամքով: «Շնորհէին, – շարունակում է պատմագիրը, – և այլոց ուխտապահ նախարարացն Յայոց, որք ի միաբանութեանն էին ընդ տեառն Մամիկոնենից և սպարապետին Յայոց Վահանայ»⁵: Սակայն արյաց արքան՝ վերապահ վերաբերմունք ցուցաբերեց Արծրունիների նկատմամբ: Երբ Վահան Մամիկոնյանը նրանից խնդրեց տանուտիրության իրավունք շնորհել նաև Արծրունի նախարարին, Վաղարշ թագավորը չբավարարեց Վահանի խնդրանքը, ասելով. «Իսկ յաղագս տէրութեանն Արծրունւոյն թո՛ղ վայր մի, զի գիտասցեն մարդիկն թէ որ ի տոհմէն են, սպաս ինչ արժանաւորապէս ցուցանել առ մեզ և վաստակս ինչ յօգուտ Արեաց աշխարհիս վաստակել. հայեսցուք ապա և մեք յարժանն»⁶: Այս խոսքերից երևում է, որ պարսից արքան դեռևս չէր վստահում Արծրունիներին և ջանում էր հավատարմության

³ Նույն տեղում, 7Ա, էջ 129:

⁴ Նույն տեղում, Դ, էջ 162: Յաշկուր Արծրունուն իբրև Վահանի հավատարիմ զինակից հիշում է նաև Թովմա Արծրունին, այդ իշխանին ներկայացնելով իբրև Երեզ ավանում ուխտապահների տարած հաղթանակը շահած զորապետներից մեկը (Թովմա Արծրունի, էջ 136):

⁵ Ղազար Փարպեցի, III, ԴԶ, էջ 174-175:

⁶ Նույն տեղում, էջ 176:

երաշխիքներ ստանալ նրանցից, ինչը հավանաբար չէր արել Հաշկուր Արծրունին:

Անշուշտ, Վահան Մամիկոնյանը արյաց արքայի առջև հարկ է որ միջնորդություն աներ իր կուսակից նախարարությունների համար: Արծրունիների պարագայում նա առաջին հերթին նկատի ուներ նրանց ուխտապահ ուղեգիծը, իհարկե, նաև իր տոհմի հետ նրանց ազգակցության փաստը (գուցե Վահանը իր շնորհասուն մոր խնդրանքով է միջնորդություն կատարել): Անշուշտ, Վահան Մամիկոնյանն իր մարզպանության ժամանակ հաստատել է Արծրունիների տանուտիրական իրավունքը, ինչը քաղաքական կարևոր նշանակություն ուներ, քանի որ օրինականացնում էր Արծրունիների ինքնավար իրավունքները նրանց իշխանության սահմաններում: Հատկանշելի է, որ Փարպեցին Վահանին ուղղած թղթում գրում է, որ վերջինս «գահ և փառք» է շնորհել շատերին⁷, հասկանալի է, նա չէր անտեսի նաև իր քեռիներին:

7. ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 570-572ԹԹ.

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

572թ. վերստին Հայաստանում ապստամբություն բռնկվեց Սասանյանների դեմ: Պատճառը խոսրով I Անուշիրվան արքայի քրիստոնեահալած քաղաքականությունն էր: Վաղարշ թագավորը Վահան Մամիկոնյանին 484թ. ընդունելության ժամանակ հավաստիացրեց, որ նրա պահանջները (այդ թվում նաև քրիստոնեությունն ազատ դավանելը) հարգվելու են «այսօր մինչև ցյաւիտեանս»¹: Նրա հաջորդներից Կավատն ու խոսրով I-ը Անուշիրվանը հաստատեցին 484թ. հրովարտակը, բայց վերջինս 550-ական թվականներից փոխեց իր վերաբերմունքը հայերի նկատմամբ, ատրուշաններ կառուցել տալով Դվինում և այլուր:

572թ. ապստամբության առաջնորդը Վարդան Մամիկոնյանն էր («Կարմիր Վարդանը»): Ապստամբությանը ոչ բոլոր նախարարներն էին մասնակցում²: Հավանաբար նման

⁷ Տես նույն տեղում, էջ 203:

¹ Նույն տեղում, III, ԴԵ, էջ 174:

դիրքավորում ունեին նաև Արծրունիները, հատկապես 576թ. հետո, երբ նոր ուժով շարունակվեց պատերազմը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, և հաջորդ տարի արդեն պարսիկները վերագրավեցին մարզպանական Հայաստանի ողջ տարածքը: Ցավոք, այս ժամանակահատվածի պատմությունը չի արտացոլված Արծրունյաց պատմիչի երկուն: Թովմա Արծրունին Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության մասին պատմելիս լոկ հիշատակում է ապստամբության առաջին տարվա անցքերը, ապա շարադրում է VI դարի վերջին տեղի ունեցածը, բաց թողնելով մոտ մեկդարյա պատմական եղելությունները³: Մ.Չամչյանն այդ շրջանում հիշում է Արծրունյաց տանուտեր Սահակին⁴, որին չեն հիշում ոչ Ղազար Փարպեցին և ոչ էլ մյուս մատենագիրները: Հավանաբար Թովմա Արծրունու երկասիրության սկզբնագիր օրինակում եղել է թերի մասը, որտեղ թերևս տեղ է գտել նաև Սահակ Արծրունու մասին պատումը: Հնարավոր է, որ Մ.Չամչյանն օգտվել է Թովմա Արծրունու երկի ցարդ անհայտ մի ձեռագրից, որն ունեցել է թերի մասը⁵:

Արծրունիները մյուս հայ նախարարների պես բնավ չարձագանքեցին խոսրով II Փարվեզ արքայի դեմ ծառայած նրա զորապետ Վահրամ Չուբինի օգնակոչին, նույնիսկ զորակցեցին արքային նրա քեռու՝ Վստամի ապստամբության ժամանակ⁶: Արծրունիների օրինապահ դիրքավորումը պարսից դռան հանդեպ նրանց մերժեցրեց սասանյան արքունիքում մեծ հեղինակություն վայելող Սմբատ Բագրատունու և նրա տոհմակիցների հետ: Սերբեսը Սմբատի զինակից նախարարների մեջ հիշում է (առաջին տեղում) Վարազշապուհ Արծրունուն՝ իր զորագնդով ու դրոշով⁷: Հայ նախարարներին

² Հայ ժողովրդի պատմություն (բազմահատորյակ), հ. II, էջ 257:

³ Տես Թովմա արծրունի և Անանուն, էջ 136-138:

⁴ Տես Սիք. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ, Վեներտիկ, 1785, էջ 210:

⁵ Տես Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ, Երևան, 1948, էջ 353:

⁶ Տես Պատմութիւն Սերբեսի, աշխատասիրութեամբ Գ.Հ. Աբգարյանի, Երևան, 1979, ժԱ, էջ 77-78, ԻԵ, էջ 97-98:

⁷ Տես նույն տեղում, էջ 101:

իր արքունիքի հետ ավելի սերտորեն կապելու նպատակով Խոսրով Փարվեզը Հայաստան ուղարկեց իր պաշտոնյային, որին Սեբեոսը հիշում է «վասպուրական համարակար» անունով: Վերջինս տնօրինում էր Պարսից տերության պետական հասույթները⁸ և մեծ ազդեցություն ուներ երկրում: Համարակարը հայ նախարարներին հորդորեց հավատարմորեն ծառայել արյաց արքային: Ընդ որում նրա դրոժամբ նախարարներն իրենց զորագնդերով մեկնեցին Խոսրով արքայի մոտ՝ «չամի վեցերորդի թագաւորութեան նորա», իմա՝ 597թ.: Այս նախարարների մեջ պատմագիրը հիշատակում է նաև Վարդան Արծրունուն⁹: Արյաց արքան բարեհաճորեն ընդունեց հայ նախարարներին, այդ թվում նաև Վարդան Արծրունուն «և երևելի շքեղութեամբ մեծացոյց պատուովք», այնուհետև հրաման արձակեց, որպեսզի նրանց պահեն «ի դրանն արքունի, կարգել նոցա ռոճիկս յարքունուստ», իսկ նրանց զորամասերը տեղակայել «ի Սպահան աշխարհի, և դարմանել զնոսա սիրով և ամենայն կամակարութեամբ»¹⁰: Սպահանը համարվում էր արքունի ոստան և թագավորական տան անդամների՝ վասպուրների կենտրոնատեղին, որտեղ իր գրասենյակն ուներ վասպուրական համարակարը¹¹: Ըստ երևույթին հայ նախարարներին պահելով արքունի դռանը, խոսրով Փարվեզը նրանց օժտել է վասպուրների առանձնաշնորհումներով: Նկատենք, որ Խոսրով Փարվեզի արքունիքում վասպուրների մեջ երրորդ տեղն էր դասվում Վրկան աշխարհի մարզպան Սմբատ Բագրատունին (Խոսրով Շունը), որի գլխավորությամբ Վարազշապուհ Արծրունին և ուրիշ հայ նախարարներ իրենց զորագնդերով արյաց արքայի կամքով մեկնեցին Միջին Ասիա՝ քուշանների դեմ պատերազմելու նպատակով¹²:

⁸ А.Перчханян, *Сасанидский судебник, Ереван, 1973, с. 389-390:*

⁹ Սեբեոս, *ԻԱ, էջ 94:*

¹⁰ *Նույն տեղում:*

¹¹ А. Christensen, *L' Iran sous les Sassanides, Copenhague. 1944, p. 506-507.*

¹² Սեբեոս, *ԻԸ, էջ 101:*

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ ԱՐԱՔԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Ա. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԱՔՆԵՐԻ ՀԵՏ

640թ. արաբական զորքերը թափանցեցին Հայաստան: Արծրունյաց նախարարները ստիպված էին վարել համակերպողական քաղաքականություն նվաճողների նկատմամբ: Վասպուրականի Անձևացիք գավառի տերը 640թ. հարկադրված պայմանագիր կնքեց իր իշխանությունն թափանցած արաբ զորապետի հետ, խոստանալով հարկ տալ արաբներին¹: Արաբ պատմագրի հաղորդումից երևում է, որ Վասպուրականի իշխանները, այդ թվում նաև Արծրունիները զերծ են մնացել արաբների ասպատակություններից², անշուշտ նրանց հետ կնքելով համապատասխան պայմանագիր: Նույնը հավաստված է նաև արաբ մատենագիր Յակուտի երկում³: Հովհան Մամիկոնյանի ավանդախառն Պատմության մեջ եղած տվյալներից երևում է, որ դեպի հյուսիս արշավող արաբական զորքը չի մտել Վասպուրական, այլ «անցան է ի Հարք և ի Բասեան, ի Վիրս և ի Ջաւախս, և ի Վանանդ, առեալ հարկս դառնայ ի Տաճկաստան»⁴:

Ահեղագոր նվաճողների հետ կնքված պայմանագրերը կյանքի էին կոչվել դաժան իրադրության պայմաններում, հաղթողի թելադրանքով և վաղանցուկ էին ու անհաստատ:

¹ Balādhuri. *The origins of the islamic state (Kitab futuh al Buldan)*, I, by P.Hitty, New York, 1916, p. 313-315.

² Տե՛ս նույն տեղում, էջ 275, 313-315:

³ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, թարգմ. և ծանոթագրութ. Հ.Նալբանդյանի, Երևան, 1965, էջ 76:

⁴ Հովհան Մամիկոնեան, *Պատմութիւն Տարօնոյ, աշխ., Ա, Արրահամյանի, Երևան, 1941, էջ 286:*

Ուստի 647թ. արաբական զորքերը ներխուժեցին նաև Սեպհական գնդի կողմանքը, ինչ Կասպուրական⁵, ասպատակելով նաև Արծրունյաց տիրույթները: Նվաճողների հետ փոքր ի շատեխաղաղության երաշխիքներ ստանալու միակ կռվանը շարունակում էր մնալ նրանց հետ նոր պայմանագրերի կնքումը: Ընդսմին պարսից ազնվականները ևս դիմեցին այդ միջոցին, ապահովելով երկրի խաղաղությունը⁶: Պարսկաստանը գրաված խալիֆայությունը պատրաստվում էր կործանիչ հարվածներ հասցնել Բյուզանդիային: Ուստի արաբների համար Հայաստանն ստանում էր հույժ կարևոր ռազմավարական նշանակություն: Դա ավելի էր դյուրացնում նրանց հետ հայ նախարարների մերժեցումը: 652թ. Թեոդորոս Ռշտունու և Մուսվիհայի միջև կնքված պայմանագիրը հայ նախարարների իրավունքների ճանաչումն էր արաբների կողմից: Այդ պայմանագիրը վիժեցնելու և հայ նախարարներին իր կողմը գրավելու նպատակով Բյուզանդիայի կայսրը մեծ զորքով 652թ. խուժեց Հայաստան, հասավ Կասպուրական, սպառնալով նաև Արծրունիներին, որոնք, դատելով ըստ ամենայնի, հարում էին Թեոդորոս Ռշտունուն: Վերջինս ամրացավ Աղթամար կղզուն: Կասպուրականը և Սյունիքը, ըստ Սեբեոսի «ոչ հնազանդեցան» բյուզանդական զորքին, որն ասպատակեց այդ նահանգները՝ «աւար առեալ տարան զինչ և գտին»⁷:

Բյուզանդիայի կայսրին հնազանդություն հայտնեցին որոշ հայ նախարարներ, որոնց օգնությամբ կայսրը տիրացավ Հայաստանի մեծ մասին, մարտահրավեր նետելով խալիֆայությանը: Եվ 655թ. վերջինիս զորքերը վերստին արշավեցին Հայաստան, նրա իշխաններին հարկադրելով կնքել նոր պայմանագրեր գլխահարկ տալու պայմանով: Ըստ Բելագուրիի, Նախճավանուն արաբ զորապետի մոտ «ժամանեց Բասֆուրջանի (Կասպուրականի – Վ.Վ.) բատրիկը Հաբիբ

⁵ Սեբեոս, *ԽՂ*, էջ 145, Պատմութիւն Ղևոնդեայ Սեժի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, Գ, էջ 11:

⁶ Հմմտ. А. Колесников, *Завоевание Ирана арабами, Москва, 1982, с. 153.*

⁷ Սեբեոս, *ԽԸ*, էջ 166:

գորագլխի հետ կնքելով պայմանագիր իր ամբողջ երկրի ու նահանգի անունից: Այդ պայմանագրով նա պարտավորվեց ամեն տարի վճարել որոշակի չափով հարկ»⁸: Վասպուրականի պատրիկի տակ արաբ պատմագիրն, անշուշտ, նկատի ունի Արծրունյաց գահերեց իշխանին, որը հանդես էր գալիս նահանգի և իր իշխանության անունից (այս իմաստն է պարունակում Բելագուրիի «իր ամբողջ երկրի ու նահանգի անունից» արտահայտությունը):

700թ. հետո, երբ արաբները վերջնականապես տիրեցին Հայաստանին, նրանց դիրքորոշումը հայ նախարարների հանդեպ ավելի կոշտացավ: Արմինիայի արաբ կառավարիչը (ոստիկանը) հայ նախարարների դիմադրական կորովը կոտրելու նպատակով 705թ. նենգադավ միջոցներով հայ նախարարներին հավաքել տվեց Նախճավանի և մոտակա խրամ ավանի եկեղեցիներում, ողջակիզմամբ ոչնչացնելով նրանց: Ողջակիզված նախարարների զգալի մասը Արծրունիներ և Վասպուրականի մյուս տներից սերած ազատներ էին: «Վասմ ամիրայ՝ զՎասպուրականի իշխանսն կոտորեաց», – այդ ոճրի մասին գրում է Սամվել Անեցի⁹: Հանվանե միայն Վասպուրականի իշխաններին է ողջակիզվածների մեջ նշում Ստեփաննոս Տարոնեցի, հիշելով Գրիգոր ու Կորյուն Արծրունիներին և Գողթնի իշխան Խոսրովին¹⁰: Արաբները հույս ունեին նման դաժան պատժամիջոցով գլխատել Հայաստանը: Հայ իշխանների հանդեպ անվստահությունը փաստորեն չէր փարատվել վերը նշված պայմանագրերով: X դարի արաբ պատմիչ Մուհամմադ ալ-Բուֆին գրում է, որ Արմինիայի ոստիկանն ասում է հայ նախարարներին. «Ես վստահություն չունեմ ձեր նկատմամբ, ուստի մտեք ձեր այս եկեղեցիները և ինձ երդում տվեք, որ չեք խախտի ձեր պարտավորությունները: Ապա բոլոր հայ իշխաններին ողջ ողջ այրեցին»¹¹:

⁸ Baladhuri, I, p.315.

⁹ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 85:

¹⁰ Տես Ստեփաննոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, II, 7, էջ 125:

¹¹ Абу Мухаммад ибн Асам ал Куфи. Книга завоеваний, Баку, 1981, с. 13-14.

Հայ նախարարների վիճակն ավելի ծանրացավ Աբբասյան խալիֆաների իշխանության գլուխ անցնելուց հետո:

*Բ. ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ
ԼԻՇՆԱՆ ՏԵՐԵՐ*

Հայաստանում արաբական գերիշխանության պայմաններում հարավային Հայաստանի ազատանու զգալի մասը համախմբվում է հետզհետե գորացող Արծրունիների շուրջը: 704թ. հետո քաղաքական ասպարեզից գրեթե անհետացավ երբեմնի ազդեցիկ Ռշտունյաց նախարարական տոհմը¹, որի հետնորդները հավանաբար միաձուլվեցին Արծրունիների հետ: Թերևս այդ պատճառով է, որ անգամ ավելի վաղ շրջանի Ռշտունի իշխանները ավանդության ուժով հետագայում հիշվում են Արծրունի տոհմանունով²: Անգամ VII դարի մատենագիր Յովհան Սամիկոնյանի մոտ Վարդ Ռշտունին հիշվում է իբրև «իշխանն Արծրունեաց»³: VIII դ. կեսերից Վասպուրական աշխարհի պաշտպանության գործը գլխավորում է Արծրունյաց նախարարությունը: 750-ական թթ. Միջագետքից Վասպուրական է թափանցում արաբական մի հրոսախումբ՝ Սուլեյմանի գլխավորությամբ⁴, որը մինչ այդ շահատակում էր Միջագետքը⁵: Հրոսախմբին Վասպուրականում դիմակայում են Վահան Արծրունու որդիներ Համագասպը և Սահակը՝ «սակաւ արամբք» և ընկնում են անհավասար մարտում⁶: Այս անցքը դրվում է 757 թվականին⁷:

Արծրունի եղբայրների զոհվելուց հետո նրանցից կրտսերը՝ Գագիկը շարունակում է դիմադրությունը Վասպուրական թափանցած հրոսակներից: Գագիկի շուրջն են համախմբվում նաև «այլոց նախարարաց» գորայինները: Ոսոխը պարտվում է,

¹ I. Markwart, *Südarmerien*, s. 79.

² Տե՛ս Յուզակ հայերեն ծեռագրաց Վասպուրականի, I, կազմեց Երվանդ Լալայան, Թիֆլիս, 1915, էջ 318:

³ Յովհան Սամիկոնեան, էջ 149:

⁴ Ղևոնդ Լ., էջ 130, *Ստեփաննոս Տարոնեցի*, II, Դ, էջ 132:

⁵ Michel le Syrien, *Chronique*, II, Paris, 1901, p. 526:

⁶ Ղևոնդ, Լ. էջ 131.

⁷ I. Markwart, *Südarmerien*, s. 80.

նրա հրոսապետը սպանվում⁸: Այնուհետև Գագիկ Արծրունին ամրանում է տոհմական դոյակ Նկանում, որը փաստորեն Արծրունյաց իշխանանիստն էր: Գագիկը, ինչպես հավաստում է Ղևոնդ պատմիչը, իր շուրջը համախմբեց «զնախարարս աշխարհին նոցին հեծելովք»⁹: Այնուհետև նա գրավեց Պարսկահայք նահանգի մի մասը, նրա բնակիչներին ենթարկելով հարկահանության¹⁰: Ընդսմին պատմագիրը հիշատակում է այդ նահանգում Գագիկ Արծրունու գրաված վայրերը՝ Բուտակ, Զիդռո, Տասուկ, Գագնակ, Որմի, Սուրենապատ «և այլ ևս մերձակա գաւառսն»¹¹: Հիշյալ վայրերից Բուտակը, որ ունի Բուտակ տարընթերցվածը, թերևս ընկած էր Ռոստակում, որի տակ միջին դարերում նկատի էին առնվում Հեր և Զարեվանդ գավառները Պարսկահայքում¹²: Ընդսմին Ղևոնդը Բուտակը հիշատակում է Զարևանդին առընթեր¹³, ինչը թույլ է տալիս այն տեղորոշելու Ռոստակում: Իսկ Զիդռո տեղանունը, որ ունի Շիդռեց տարընթերցվածը, Հ.Մանանդյանն ուղղում է Շիգռո ձևով և տեղադրում Պարսկահայքում, այժմյան Սեդիկան և Ռևանդուզ բնակավայրերի հյուսիսում¹⁴: Իսկ Գագնակը նույնական է Ատրպատականի Գանձակի հետ¹⁵: Սուրենապատը տեղորոշվում է Պարսկահայքի Այլի (Կուռիճան) գավառում¹⁶: Հայտնի է նաև Որմիի տեղադրությունը: Այն համընկնում է հետագայի Ռեզայե բնակավայրի հետ, որը գտնվում է Ուրմիա լճի մոտ: Իսկ Տասուկը հավանաբար հեռու չէր Գագնակից:

Պարսկահայքում վերը նշված վայրերին տիրելու փաստն ինքյան ապացույց է Արծրունիների աճող զորության: Սակայն նրանց չհաջողվեց ամրանալ գրաված շրջաններում:

⁸ Ղևոնդ, *Լ*, էջ 131:

⁹ *Նույն տեղում*, *ԼԲ*, էջ 133:

¹⁰ *Նույն տեղում*, էջ 133-134:

¹¹ Ղևոնդ, *ԼԲ*, էջ 134:

¹² Ս.Երենյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 63:

¹³ Ղևոնդ, էջ 134:

¹⁴ Հ.Մանանդյան, *Երկեր, հ. Ե, Երևան, 1984*, էջ 310:

¹⁵ *Տես Հայ ժողովրդի պատմություն (բազմահատորյակ), հ. 3, Երևան, 1976*, կից քարտեզը:

¹⁶ Ս.Երենյան, *նշվ. աշխ.*, էջ 35:

խալիֆայության գերակշիռ ուժերն այնտեղից դուրս մղեցին Վասպուրականի զորուժը: Արաբական զորագլուխ Ռուհը ստվարաթիվ զորուժով հարձակվեց Յեր գավառում հաստատված Արծրունյաց զորքի վրա, պարտության մատնեց նրան, ապա ներխուժեց Վասպուրական: Գագիկ Արծրունին ամրացավ Նկան դոյակում, որը թշնամին չկարողացավ գրավել: Թեև այդ անառիկ ամրոցը պաշարած արաբական ջոկատին օգնության հասավ մեկ այլ զորաբաժին՝ Մուսեի գլխավորությամբ¹⁷, սակայն նրանք չկարողացան գրավել այն և մեկ տարի պաշարելուց հետո հրաժարվեցին Նկանը գրավելու մտքից¹⁸: Մուսե զորապետը դավադիր միջոցներով կարողացավ կալանել Գագիկ Արծրունուն, ապա խլելով նրա կողմից Պարսկահայքի գրավյալ շրջաններից գանձված հարկագումարը, նենգադրժորեն սպանել տվեց նրան: Սակայն նրա որդիները՝ Յամագասպն ու Սահակը, որոնց նույնպես ձերբակալել էր Մուսեն, կարողացան դուրս պրծնել հրոսապետի ճիրաններից և վերադառնալ Վասպուրական, ճանաչվելով որպես նրա լիիշխան տերեր¹⁹:

Թովմա Արծրունին ոչինչ չի հաղորդում այս իրադարձությունների մասին, բայց չի զլանում մանրամասնել Մուհամմեդ մարգարեի ասպարեզ գալու, նրա քարոզչության և հետագա արաբ խալիֆաներին առնչվող եղելությունները: Պատմագիրն իր վերապահումը հիմնավորում է նրանով, որ «զրոյցք ժամանակաց սոցա յայլոց գրեալ յառաջագոյն աւելորդ համարեցաք երկրորդել»²⁰, նկատի առնելով հավանորեն Ղևոնդ պատմագիրին:

Գագիկ Արծրունու եղերական մահվանից հետո Վասպուրականի Արծրունյաց գահերեցի (Մեծ իշխանի) պատիվը վերապահվեց նրա անդրանիկ որդի Յամագասպին, ինչը վկայված է Աղթամարի Ս.Խաչ վանքի հարավային ճակատի աջ կողմում փորագրված արձանագրությամբ: Այդտեղ

¹⁷ *Հավանաբար նույն ժամանակ Սիջագետքն ասպատակող նույնանուն զորապետն էր (տես Michel le Syrien, II, p. 526):*

¹⁸ Ղևոնդ, էջ 134:

¹⁹ *Նույն տեղում, ԼԲ, էջ 134-135, Ստեփաննո Տարոնեցի, II, էջ 133:*

²⁰ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 168:

բարձրաբանդակված Համազասպի և Սահակի պատկերներից առաջինի կողքին փորագրված են «Սբ. Համազասպ Վասպուրականի իշխան» բառերը, այն դեպքում, երբ Սահակի պատկերի կողքին սոսկ նշված է՝ «Ս.Սահակ եղբայր Համազասպայ»²¹: Այդպիսով Մ. սկզբներին (երբ վեր խոյացավ Աղթամարի հրաշակառույց վանքը) Արծրունյաց տոհմում տակավին արթուն էր VIIIդ. կեսերից Վասպուրականում այդ տոհմի լիիշխան գերակայության մասին գիտակցությունը: Անշուշտ, Սահակ Արծրունին կիսում էր եղբոր իշխանությունը, ուստի նրա հետ միասին հիշվում է իբրև Արծրունյաց տան նախարար²²: Այդ ժամանակներից արդեն բովանդակ Վասպուրականը համարվում է Արծրունիների «սեպհական տերութիւն»: Ուշագրավ է, որ Համազասպ և Սահակ Արծրունիների «Վարք»-ում նշվում է, որ Համազասպը «տիրեր սեպհական տերութեան Վասպուրական կոչեցեալ իշխանութեան»²³: Վասպուրականում գերիշխելու հանգամանքը վճռորոշ նշանակություն ունեցավ Հարավային Հայաստանում Արծրունիների հեղինակության բարձրացման համար: Եվ, ինչպես իրավամբ նկատում է Հ.Մարկվարտը, VIIIդ. կեսից Արծրունիներն արդեն Հարավային Հայաստանի ամենանշանավոր տոհմն էին²⁴:

Հավանաբար Սահակ Արծրունին հաջորդել է եղբորը: Ըստ երևույթին, Մովսես Խորենացուն վերագրված «Պատասխանի թղթոյն Սահակայ» գրվածքն ուղղված է նույն Սահակ Արծրունուն, որն հիշված է որպես «Վասպուրականի Սեծ իշխան»²⁵: Այն հավանաբար գրվել է X դարի սկզբներին, երբ

²¹ «Ազգագրական հանդես» XX(2), Թիֆլիս, 1910, էջ 202, M. Ipsirogly, *Die Kirche von Achtamar, Berlin und Mainz, 1963, s. 74*; Ստ. Մնացականյան, *Հայկական աշխարհիկ պատկերաբանդակը, Երևան, 1976, էջ 47*:

²² *Տես Ցուցակ հայերեն ձեռագրաց Սատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 12*:

²³ *Տես Սուփերը Հայկականը, ԺԲ, Վենետիկ, 1854, էջ 64*:

²⁴ I. Markwart, *Südarmenien, s. 79, 85*.

²⁵ *Տես Սրբոյ հորն մերոյ Սովսեսի Խորենացւոյ Սատենագրութիւն, Վենետիկ, 1843, էջ 284*:

Վասպուրականում Արծրունիները հռչակեցին տեղական թագավորություն, որը երփնագարդելուն էր կոչված նշված գրությունը²⁶:

Գ. 774 – 775ԹԹ. ԱՊՍՏԱՍԲՈՒԹՅՈՒՆԸ

Հարավային Հայաստանում Արծրունիների գերազդեցիկ դերը հատկապես նշանակալից էր 770-ական թվականներին, երբ այդ տան նախարարները փաստորեն գլխավորեցին երկրամասի նախարարների և նրանց հետ ռազմի դաշտ մեկնած հասարակ ժողովրդի ընդվզումը խալիֆայության գերակշիռ ուժերի դեմ: Ղևոնդ պատմիչը նշում է, որ ապստամբ ուժերը թեև «նուազունք էին», սակայն ապստամբեցին «և ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի»¹: Ապստամբության նախածեռնողը Մամիկոնյաններն էին: Հայրենի երկրի պատվի ու ազատության համար մարտի ելան նաև մյուս տոհմերը: Բագրատունիներն անհեռանկար ու վտանգավոր համարեցին անհեղազոր ախոյանի հետ առճակատումը, ուստի չհարեցին ապստամբներին:

Ապստամբական ուժերը գործում էին տարանջատված, կամենալով առաջին հերթին պաշտպանել սեփական իշխանությունը: Նախարարները «քակեալ ի միմեանց անմիաբանք լինէին: Ձի նախարարք տանն Արծրունեաց Համազասպ և եղբարք իւր և զօրք նորին մնացին անդէն ի կողմանս Վասպուրական աշխարհին»: Ամատունիները, Տրունիները և ուրիշներ ամրացան իրենց տիրույթներում²: Պատմիչի այս վկայության հիման վրա Արծրունիների գործելակերպը տվյալ պարագայում որակվել է իբրև անջատամետ և նրանց կողմից ապստամբությանը չհարելու միտում³: Բայց հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ թե՛ Արծրունիները և թե՛ նրանց զորակցող մյուս նախարարները ապստամբություն են հարուցել արաբների դեմ, իհարկե, առաջին հերթին ուժերը ծավալելով

²⁶ Տես Լ.Ս.Խաչիկյան, *Աշխատություններ, Ա, Երևան, 1995, էջ 114*:

¹ Ղևոնդ, *ԼԴ, էջ 137-138*:

² Տես նույն տեղում, էջ 144:

³ R.Grousset, *Histoire de l'Arménie des origines a 1071, Paris, 1947, p.*

իրենց տիրույթների սահմաններում: Ավատական տարանջատվածությունը զգալ տվեց իրեն նաև այս ընթացքում: Երկրի ապստամբ ուժերը չմիաբանվեցին, ուստի պարտությունն անխուսափելի էր:

775թ. գարնանը «գունդ կազմեր իշխանն Իսմայելի ի վերայ երկրիս Յայոց» և Ամր զորապետի գլխավորությամբ 30 հազարանոց զորքը նետեց հարավային Յայաստան՝ «բազում պատրաստութեամբ զինուց»: Այդ զորքը մտավ Խլաթ քաղաք, որտեղ էր նաև Աշոտ Բագրատունին: Նա ապստամբներին հորդորեց զգուշանալ հակառակորդից, գործել միաբան ուժերով⁴: Այնուհետև, ինչպես վկայում է պատմագիրը, «գունարէին նախարարք ազգին Արծրունեաց զգօրս Վասպուրական աշխարհին, Յամազասպ և եղբարք իւր և որք ի տոհմէ Ամատունեաց և զօրքն որ ընդ նոսա», օգնակոչ ուղղելով նաև Վասակ Բագրատունուն՝ Սմբատ սպարապետի եղբորը: Ապստամբները շարժվեցին դեպի Արճեշ ավան, նպատակ ունենալով «բրել զնա ի հիմանց և զգօրսն որ ի նմա՝ հարկանել սրով»⁵:

Արծրունիների գլխավորած ապստամբների հավաքակայանը Վասպուրականի Առբերանի գավառի Բերկրի ավանն էր: Այստեղից նրանք շարժվեցին Արճեշի վրա, «զբազունս յաշխարհականացն հրապուրեալ զկնի ինքեանց՝ ի հետիոտս տանէին ի մարտ պատերազմի»: Նույն պահին ինչ-որ մեկը Յամազասպ Արծրունուն իրազեկեց, որ «զօր բազում յորդուցն Իսմայելի հասեալ ի վերայ՝ սպասէ ձեզ», բայց Յամազասպ Արծրունին քամահրելով նրան, «հարուածովք տանջեր զնա իբրև զհրապուրիչ ստութեան. և ինքն խրոխտացեալ զնաց ի վերայ Արճեշն աւանի հանդերձ զօրօքն իւրովք»: Արճեշի արաբ բնակիչները Խլաթ՝ Ամր զորապետին գուժեցին այդ մասին: Վերջինս սովարաթիվ զորքով դարանամուտ եղավ Արճեշի մատույցներում: Յամազասպ Արծրունին ջանում էր գրավել Արճեշը և Վանա լճի ոլորտից դուրս վանել օտար ցեղերին, որոնք որոգայթալիք գործոն էին Արծրունիների և մյուս տոհմերի

⁴ Ղևոնդ, *ԼԴ*, էջ 145-146:

⁵ *տես նույն տեղում*, էջ 146:

խաղաղ գոյատևման համար և բնականաբար ջլատում էին նրանց ուժերը: Սակայն ապստամբները չկարողացան տիրանալ Արձեշին, քանի որ անսպասելիորեն թաքստոցից դարանամուտ զորքը գրոհեց նրանց վրա և փախստյան մատնելով՝ «կոտորեցին զմեծ մասն հետևակ զօրում, որ յաշխարհաբնակ մարդկանէն էին. քանզի էին մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի»⁶: Արձեշի մարտը տեղի ունեցավ 775-ի ապրիլի 15-ին: Նույն ժամանակ, ինչպես հավաստում է Ղևոնդը, հակառակորդ ուժերը «դարձեալ յարծակէին» և հասան Բագրևանդ, որով իսկ կանխեցին Մամիկոնյանների գլխավորած ապստամբ զորքի միացումը Արծրունիների շուրջը համախմբված ապստամբական ուժերին: Արածանի գետի ափին, Արծնի գյուղի մոտ տեղի ունեցած մարտում (775թ. ապրիլի 24) հայ զորականները քաջաբար խոյացան թշնամու վրա⁷: Հարավային Հայաստանից մարտին մասնակցում էր նաև Գնունիների զորագունդը⁸: Ապստամբությունը պարտվեց:

7. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Թեև ապստամբության պարտությունից հետո արաբ զորականները ամրոցներում փակված հայ ազատներին խաղաղության կոչ արեցին «և տային գիր երդման և իջուցանէին յամրոցացն»¹, սակայն հետագայում Արմինիայի ոստիկան Խուզայմա իբն Խազիմին (786 – 787) դաժանաբար վարվեց հայ նախարարների հետ: Երբ ոստիկանը ժամանեց Դվին, նրան դիմավորելու մեկնեցին նաև Համազասպ, Սահակ և Մերուժան Արծրունիները, որոնց նա բանտ նետեց և ամբաստանելով խալիֆայի առջև, նրանից ստացավ Արծրունի իշխանների մահավճռի հրաման: Բայց Մերուժանին ուրացության գնով հաջողվեց փրկվել տաժանալից մահից

⁶ Նույն տեղում, էջ 146 – 147:

⁷ Ղևոնդ, ԼԴ, էջ 147 – 148: *Պատմիչի հավաստմամբ այդ մարտում հայ ռազմիկների նշանաբանն էր՝ «քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի՛ տեսցեն աչք մեր կրիսան ոտից լեալ պղծալից արանց զսրբարանս մեր...» (նույն տեղում, էջ 149):*

⁸ Նույն տեղում, էջ 151:

¹ Ղևոնդ, ԼԵ, էջ 152:

մինչդեռ եղբայրները նախընտրեցին մահը և նահատակվեցին: Ղևոնդը նկարագրում է Արծրունի եղբայրներին տաժանամահ անելիս դահիճների գործադրած քստմնելի միջոցները: Նախ Սահակին, ապա Համազասպին ենթարկեցին անլուր խոշտանգումների, հուսալով կոտրել նրանց կամքը և հարկադրել ուրացության: Բայց երբ տեսան, որ նրանք արհաբար տանում են բոլոր լլկանքները, գլխատեցին նրանց, այրելով դիակները (հողին հանձնելն արժանի չհամարեցին): Մերուժանն ըստ երևույթին չի դիմացել տանջաքննությանը, հոգին հանձնելով դահիճներին: Նույն Մերուժանն էր, որ տակավին պատանի, մասնակցեց Պարտավի 768թ. եկեղեցաժողովին², սակայն հասուն տարիքում դավեց իր հավատին:

Ղևոնդի հավաստմամբ Համազասպ և Սահակ Արծրունիները նահատակվել են Հայոց ՄԼԳ, այն է՝ 784 թվականին³, ըստ Ասողիկի՝ ՄԼԴ (785) թվականին⁴, ինչն ավելի ստույգ է: (Հավանաբար Ղևոնդի մոտ այդ շփոթն առաջացել է Գ և Դ գրերի նմանության պատճառով, որ թույլ են տվել հետագայի օրինակողները): Արծրունիների նահատակությունը դրվում է 785թ. հունվար ամսին⁵: Արծրունիների մահապատիժը գործադրվել է խուզայմա ոստիկանի օրոք⁶: Վերջինս այդ պաշտոնին է նշանակվել 786թ., ուստի Արծրունիների նահատակությունն այդ թվականից շուտ չէր կարող տեղի ունենալ:

Հավատուրացությամբ իր անձը փրկած Մերուժան Արծրունին հարկ է որ արաբ ոստիկանի առջև հանձն առներ որոշակի պարտավորություններ, հալածելով հայրենասեր ուժերին, առաջին հերթին, իհարկե, Մամիկոնյաններին: Այդ կերպ նա հույս ուներ շահել արաբների վստահությունը,

² Տես Կանոնագիրք Հայոց, Բ, Երևան, 1971, էջ 5:

³ Ղևոնդ, *Խ*, էջ 165:

⁴ Ստեփաննոս Տարոնեցի, *II*, Դ, էջ 133:

⁵ Տես E. Dulaurier, *Recherches sur la Chronologie Arménienne*, Paris, 1859, p. 251; I. Markwart, *Südarmanien*, s. 85, R. Grousset, *Histoire de l'Arménie*, p. 337.

⁶ Ղևոնդ, *Խ*, էջ 165:

մթագնելով իր նահատակ եղբայրների հիշատակը: 774 – 775թթ. ապստամբության փառապանծ առաջնորդ Մուշեղ Մամիկոնյանի որդիներն ապաստանեցին Արծրունիների իշխանության մեջ, սակայն Մեհրուժանը, ի հաճույս արաբների, սպանել տվեց նրանց, ի հատուցումն նրանց հոր հարուցած ապստամբության: Վարդան պատմիչն այդ արյունոտ ոճրի շարժառիթ է համարում այն «մեծ աղետը» (ապստամբությունը), որ տեղի էր ունեցել «ի պատճառս հօրն նոցա»⁷ (Մամիկոնյան եղբայրների): Այդ կերպ Մեհրուժանը ջանում էր ոստիկանի առջև ապստամբության մեղքը բարդել Մամիկոնյանների վրա և մեղսագերծել իրեն: Վասպուրականում Մամիկոնյանների ապաստանելը պատահական ընտրություն չէր: Վերջիններս Արծրունյաց իշխանությունը դիտում էին որպես ապստամբության կենտրոններից մեկը: Նրանք նույնիսկ չապաստանեցին Տարոնում Մամիկոնյանների երբեմնի տիրույթում⁸, ուր այդ ժամանակ արդեն իշխում էր Բագրատունիների հարավային ճյուղը: Արծրունյաց իշխանությունում Մամիկոնյան եղբայրների ապաստանելն ամենայն հավանականությամբ կատարվել է Համազասպ և Սահակ Արծրունիների կամքով: Վերջիններիս «Վարքի» հավաստմամբ, երբ Համազասպն ու Սահակը մեկնում են արաբ ոստիկանի մոտ, «զվերակացութիւն աշխարհին և զգործ իւրեանց տային ի ձեռն Դավթի Մամիկոնէի»: Վերջինս պատշաճ հատուցեց Մեհրուժանի չարագործության համար, սպանելով նրան⁹: Ըստ երևույթին Համազասպ և Սահակ Արծրունիները չվստահելով իրենց եղբորը, գերադասել են նահանգի վերակացությունը հանձնել Մամիկոնյան իշխանին: Սակայն վերջինիս գերակայությունը Վասպուրականում կարճ

⁷ Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վեներտիկ, 1862, էջ 76:

⁸ Տարոնը մինչև 785թ. համարվում էր «Մամիկոնեաց աշխարհ», (տես սուրբ Գրիգորի հայերեն ձեռագրաց Մխիթարեան Սատեմադարանին ի Վիեննա, Ա, էջ 158): Սակայն 774 – 775թթ. ապստամբության պարտությունից հետո այնտեղ գերիշխանություն հաստատեցին Բագրատունիները:

⁹ Տես Սուփերք Հայկականը, ԺԲ, էջ 65 – 68:

տևեց, քանի որ Արծրունյաց իշխող ճյուղը վերակողմնորոշվելով դեպի արաբները, դուրս մղեց Դավիթ Մամիկոնյանին, որի ժառանգներն հնարավոր է, որ հողատիրույթ ստացան Վասպուրականում: Քառորդ դար հետո Արծրունիների երկրորդական ճյուղերից մեկի պարագլուխ Ապուլպելճն ամուսնացավ Մամիկոնյան իշխանադատեր հետ¹⁰, որը թերևս նույն Դավիթի ժառանգներից էր: Այդ ամուսնությունից ծնվեց Գուրգենը (Գուրգեն Ապուլպելճ)՝ IX դարի 2-րդ կեսի փառապանծ զորավարը:

¹⁰ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 301:

ԳՆՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՎԵՐԱԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ԴԵՊԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ԵՎ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ

774 – 775թթ. ապստամբության պարտությունից հետո Արծրունիները հետզհետե կողմնորոշվեցին դեպի արաբները, հաշվի առնելով այն ծանրակշիռ իրողությունը, որ Արևելքում արդեն միակ գերիշխող ուժը նրանք էին: Քանի որ արաբների տիրապետությանը հարմարվել էին նաև Բագրատունիները, ուստի այդ երկու տոհմերը Չայաստանի արտաքին և ներքաղաքական գործառույթներում հաճախ դրսևորում էին համաշապիղ ընթացք: Սակայն արաբները ջանում էին խոչընդոտել հայ նախարարների միաբանմանը, նոր ընդվզման հնարավորությանը: Արմինիայի ոստիկանը գերադասեց հայոց իշխանի պաշտոնում առաջ քաշել ոչ թե Բագրատունի կամ Արծրունի իշխանների, այլ Տաճատ Անձևացուն¹, որին իբրև բյուզանդական փորձառու զորապետի օգտագործեցին իրենց թշնամիների դեմ: 785թ. նա զոհ գնաց Դերբենտի լեռնանցքի պաշտպանության ժամանակ, խազարների դեմ մղած կռիվներում²: Այնուհետև խալիֆայությունը օգտագործում է Արծրունիների և Բագրատունիների միջև եղած մրցակցությունը, սրելով այն: Այդուհանդերձ, Չայաստանը մնում էր աննվաճ, քանի որ «Չայաստանի իշխանները նստել էին իրենց երկրներում և նրանցից յուրաքանչյուրը պաշտպանում էր այն, հարկ եղած դեպքում քամահրելով արաբ պաշտոնյաներին»³: Օտար ցեղերի (ուբմանիկներ, կայսիկներ և այլք) թափանցումը

¹ Ղևոնդ, *ԼԹ*, էջ 159 – 160:

² *Նույն տեղում*, էջ 160 – 161:

³ Baladhuri. *1*, p. 330.

Վասպուրական և հարակից շրջաններ վտանգում էր Արծրունիների իշխանության կիսանկախ կացությունը: Այս հողի վրա ևս տեղի է ունենում Արծրունիների մերժեցում Բագրատունիների հետ: Արծրունիները ճանաչում են Աշոտ Մսակեր Բագրատունու գերակայությունը Հայաստանում, իսկ վերջինս՝ Արծրունիների տոհմական իրավունքները հարավային Հայաստանում: Խալիֆայությունը ևս ճանաչում է Արծրունիների տոհմական իրավունքները, սիրաշահում նրանց, ջանալով կասեցնել Բագրատունիների ազդեցության ընդլայնումը Հայաստանում⁴: Սակայն Արծրունիները զորակցում են Աշոտ Մսակերին ընդդեմ Հայաստանում հաստատված արաբական ցեղերից մեկի պարագլուխ Ջահհաֆի⁵, որն ստիպված չափավորեց իր նվաճողական փորձակները: Արծրունիների զորակցությունը Բագրատունիներին նպաստեց նաև վերջիններիս իշխանության տարածմանը Մոկքում և Տարոնում: Աշոտ Մսակերի երկու որդիները՝ Դավիթն ու Բագարատը հաստատվեցին Տարոնում, Խլաթում, մյուս երեք զավակները՝ Սահակը, Սմբատը և Մուշեղը՝ Մոկքում: Սակայն հարավային Հայաստանում աճում էին նաև Արծրունիների գերակայության ուղորտները: Ասողիկը վկայում է, որ Աշոտ Մսակերը Կամսարականներից գնելով Արշարունիքը, իր նստավայրը Կոզովիտ գավառից տեղափոխեց այնտեղ⁶: Բագրատունյաց իշխանապետի այդ քայլը, նկատում է Հ.Մարկվարտը, հետևանք էր հարավային Հայաստանում Արծրունիների աճող ազդեցության, հզորության⁷:

Աշոտ Մսակերը իր հեռատես քայլերով ապահովեց այդ երկու զորեղ տոհմերի քաղաքական դաշինքը նաև ամուսնական կապերով, իր Յոփսիմե դստերը կնության տալով Արծրունյաց նախարարին՝ Աշոտ Արծրունու հորը, որի անունը

⁴ I. Markwart, *Südarmenien*, s. 327.

⁵ *Այս ամիրան ամուսնացավ 774 – 775թթ. ապստամբության առաջնորդներից մեկի՝ Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, այդ կերպ կամենալով ձեռք բերել Մամիկոնյանների տիրույթները գավթելու իրավական հիմք (տես Վարդան, ԽԱ, էջ 76):*

⁶ Ստեփաննոս Տարոնեցի (*Ասողիկ*), III, Բ, էջ 106:

⁷ I. Markwart, *Osteyropaische und ostasiatische Streifzüge*, Leipzig, 1903, s. 452.

չի նշվում հայ մատենագիրների մոտ: Սակայն Բելագուրին IXդ. կեսերին Վասպուրականում տեղի ունեցած դեպքերի մասին պատմելիս մեծ իշխան Աշոտ Արծրունուն անվանում է «Համգայի որդի»⁸: Արաբները Համգայի տակ նկատի ունեին հայերեն Համազասպ անունը: Արաբ մատենագիր Միսկավայիը 950-ական թթ. անցքերի առնչությամբ Վասպուրականի թագավոր Համազասպ-Աբուսահլին հիշում է Համգա անունով⁹:

Բ. ՆԵՐՏՈՂՅԱԿԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համազասպ Արծրունին փեսայանալով Բագրատունիներիին, ավելի ընդլայնեց իր ազդեցությունը հարավային Հայաստանում: Բագրատունիները չէին խոչընդոտում դրան, ջանում էին ավելի ամրապնդել համագործակցությունը Արծրունիների հետ: Սակայն Արծրունիների տոհմում հակամարտություն ծագեց իշխող տոհմաճյուղի և նրա երկրորդական ճյուղերից մեկի միջև: Վերջինիս պարագլուխ Ապուլպելծ Արծրունին, ինչպես նշվեց, ամուսնացավ Մամիկոնյան օրիորդի հետ և հակադրվեց Համազասպ Արծրունուն: Ենթադրվում է, որ Ապուլպելծը թռճ էր հավատուրաց Մեհրուժան Արծրունու¹: Բայց վերջինս Մամիկոնյանների ոխերիմ թշնամին էր, ուստի նրա ժառանգների հետ Մամիկոնյանների խնամությունը կասկածելի է: Մեկ այլ ենթադրության համաձայն Ապուլպելծները սերում էին մարդպետներից: Իբրև կռվան վկայաբերվում է այն փաստը, որ Թովմա Արծրունին Մարդաստան գավառը համարում է Ապուլպելծի որդի Գուրգենի «բուն բաժինը»²: Բայց պատմիչի ուրիշ տեղեկություններից երևում է, որ այդ գավառը Ապուլպելծների բուն ոստանը չէր: Այսպես, ըստ Թովմա Արծրունու, Վասպուրականի գահերեց Աշոտ Արծրունին (IXդ. 2-րդ կեսին) Ապուլպելծի որդի Գուրգենից պահանջում է

⁸ Baladhuri, I, p. 331.

⁹ Miskawayh, *The Concluding Portion of the Experiences of the Nations, II*, transl. by D. Margoliouth ("The eclipse of the Abbasid Caliphate", vol. I). Oxford, 1921, p. 159.

¹ I. Markwart, *Südarmerien*, s. 85.

² Տես Ն. Աղոնց, *Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948*, էջ 74 – 75:

հեռանալ նրա գրաված Անձևացիքից, վերջինս հիշեցնում է, որ իրեն արդեն վտարել են «ի հայրենեացն», «ի ժառանգութենե»³, այն դեպքում, երբ Գուրգենն այդ պահին տիրում էր նաև Մարդաստանին⁴: Ուրեմն Ապուլպելճի որդու ժառանգական հայրենիքը ոչ թե այդ, այլ մեկ այլ գավառ էր, որը տվյալ պահին խլվել էր նրանից: Թովմա Արծրունու մշուշապատ տվյալները որոշ հիմք են տալիս Ապուլպելճների ժառանգական տիրույթների տեղորոշման համար: Պատմագիրը IXդ. կեսերին Ապուլպելճի որդու իշխանանիստ է հիշում Ռշտունիք գավառի Ոստան բերդաքաղաքը⁵, որը նրա մեկ այլ վկայությամբ, եղել էր Ապուլպելճ Արծրունու եղբրական սպանության վայրը: Ընդսմին Գուրգենը ջանում էր այդ բերդաքաղաքը պահել իր իշխանության տակ և ջանքեր չէր խնայում այդ ուղղությամբ⁶: Այս տվյալների լույսի տակ հնարավոր է դառնում ենթադրել, որ Ապուլպելճը եղել է Արծրունիների հետ միախառնված Ռշտունիների շառավիղը և որպես նրանց իրավահաջորդ, շարունակել է տիրել Ռշտունիքին և ընդդիմացել է Արծրունյաց իշխող ճյուղի գահերեց իշխանին: Սակայն այդ հակամարտությունն ավարտվել է վերջինիս հաղթանակով և Ապուլպելճի սպանությամբ: Արյունոտ այդ ոճիրը կատարվել է Ռշտունյաց Ոստան բերդաքաղաքում⁷: Պայքարի ելքը կանխորոշված էր նաև այն հանգամանքով, որ Ապուլպելճ Արծրունին թերևս Մամիկոնյան տան (որի փեսան էր) ազդեցությամբ կողմնորոշվում էր դեպի Բյուզանդիան, մինչդեռ Արծրունիների իշխող ճյուղը շարունակում էր արաբամետ դիրքորոշումը:

³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 330:

⁴ Նույն տեղում, էջ 327:

⁵ Նույն տեղում, էջ 311:

⁶ Նույն տեղում, էջ 363:

⁷ Նույն տեղում:

Գ. ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՄԵԾ ԻՇԽԱՆ ԱՇՈՏԻ ԵՎ ՏԱՐՈՆԻ ՏԵՐ ԲԱԳՐԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԶԻՆԱԴԱՇԻՆՔԸ

Համազասպին հաջորդած Վասպուրականի մեծ իշխան Աշոտ Արծրունին շարունակեց նրա քաղաքական ուղեգիծը: Նրա օրոք Արծրունիները համագործակցում են Բագրատունիների հետ, շարունակելով արաբամետ դիրքորոշումը: IX դ. սկզբին Արմինիայի ոստիկանը ջանում էր ի դեմս Արծրունիների և Բագրատունիների, հուսալի հեմարան ստեղծել Հայաստանում, քանի որ սուր հակադրություն էր ծագել Արմինիայի նախկին ոստիկան Իսահակ իբն Սուլեյմանի և 813 թվականից Հայաստանի ու Ատրպատականի կուսակալ նշանակված Թահիր իբն Մուհամմադի միջև: Երբ վերջինս ժամանեց Փայտակարանի Վարդանակերտ քաղաք, նրան ներկայացան Արմինիայի իշխանները, ընդունելով նորընծա կուսակալի գերիշխանությունը: Բայց երբ վերջինիս դեմ խռովություն բռնկվեց, Արմինիայի իշխանները հակվեցին նախկին ոստիկանի կողմը: Վերջինիս կողմնակիցների մեջ արաբ պատմագիր Յակուբին կողք-կողքի հիշում է նաև «Օմար ալ Հագուն» անունը¹, որն ըստ երևույթին պետք է լինի Համզա Արզուն, իմա Համազասպ Արծրունի²: Վերջինիս այդ քայլը հավանաբար չի խաթարել հայարաբական հարաբերությունները և այդ հետնախորքի վրա նաև Արծրունյաց արաբամետ դիրքորոշումը: Այս մասին ուշագրավ վկայություն կա բյուզանդացի մատենագիր Գենեսիոսի մոտ, որի հավաստմամբ «հայոց զորուժը վասպուրականցու և արքունների արքունտի գլխավորությամբ» մասնակցել է Բյուզանդիայի դեմ արաբների ձեռնարկած արշավանքին³, որը տեղի է ունեցել 838թ⁴: Թեև բյուզանդացի պատմիչը չի նշում

¹ Из соч. Якуби История, пер. П. Жизе, Баку, 1927, с. 13.

² Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 62:

³ Genesisii Regum. Bonnae, 1834, p. 67.

⁴ Այս մասին տես J. Laurent, L' Arménie entre Byzance et l' Islam depuis la conquete arabe jusquen 887, Paris, 1919, p. 212, R. Grousset, Histoire de l' Arménie, p. 354 A. A. Tojnbce, Constantine Porphyrogenitus and his world, London, 1973, p. 405.

հայ զորուժը գլխավորած իշխանների անունները, սակայն հայ մատենագիրների տվյալների համադրմամբ պարզ է դառնում, որ այդ ժամանակ Վասպուրականի գահերեց իշխան էր Աշոտ Արծրունին⁵, իսկ հայոց իշխանը՝ Տարոնի տեր Բագարատ Բագրատունին (816 – 850)՝ Աշոտ Մսակերի որդին:

Սակայն Մութավաքիլ խալիֆայի (847 – 861) օրոք ծայր առած անհանդուրժող քաղաքականությամբ խիստ վատթարացան հայ-արաբական հարաբերությունները: Դա հատկապես զգալի էր հարավային Հայաստանում, որտեղ առաջատար դեր ունեին Բագարատ Բագրատունին և Աշոտ Արծրունին, ուստի հենց նրանց դեմ էլ ուղղվեցին խալիֆայի հայադավ ծեռնարկումների առաջին սլաքները: 849թ. հարավային Հայաստան խուժած Աբու Սայիդ (Ապուսեթ) զորապետը խալիֆայի հանձնարարությամբ պետք է վերացներ հայ նախարարների արտոնյալ իրավունքները: Սակայն հանդիպելով Բագարատ Բագրատունու և Աշոտ Արծրունու վճռական դիմակայությանը, նա ստիպված հեռացավ Հայաստանից, Ալա Օովափի (Սավաֆի) զորապետին հրահանգելով ասպատակել Արծրունիների իշխանությունը, որն ըստ Արծրունյաց պատմիչի, ենթարկվեց խժոժությունների: Օովափիի զորքը «գերփեր, աւերեր, յափշտակեր, կապուտ կողոպուտ գործեր ընչից և ստացուածոց. յափշտակէին զայր և զկին և զժառանգութիւն նոցա»⁶:

Աշոտ Արծրունին փորձեց բանակցությունների միջոցով հարցերը լուծել, խոստանալով վճարել խալիֆային տրվող հարկը, սակայն նրա պատվիրակներն արժանացան արաբ զորապետի քամահրալից վերաբերմունքին: Այնժամ Աշոտ Արծրունին իր զորքը բաժանեց երեք մասի, առաջին զորաթևը հանձնելով եղբորը՝ Գուրգենին, երկրորդը՝ Ապուսեթի որդի Գուրգենին, երրորդը վերցրեց իր տնօրինության տակ, միաժամանակ գլխավորելով ամբողջ զորքը: Ապա խիզախաբար

⁵ *Ըստ Թովմա Արծրունու, Աշոտ Արծրունին իբրև Վասպուրականի մեծ իշխան, մինչև 851թ. 16 տարի վարել է այդ պաշտոնը (տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 336), հետևաբար, նա Վասպուրականի գահերեց եղել է 835 թվականից:*

⁶ *Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 176:*

խոյացան թշնամիների վրա և մեկ ժամ տևած մարտում ջախջախեցին նրան: Ալա Օովափին մազապուրծ ճողոպրեց Բերկրիի ութմանիկների մոտ⁷, ապա նա հայերի դեմ նետեց Մուսե իբն Ջուրարայի գլխավորած զորքը, որը սակայն ջախջախվեց Բագարատ Բագրատունու և Աշոտ Արծրունու միացյալ զորուժի կողմից: Թովմա Արծրունու տվյալներից երևում է, որ այդ բախտորոշ պահին Արծրունիների զորուժն անհամեմատ ավելի մեծ էր քան Բագարատինը, և որ մարտում վճռական դեր խաղացին Աշոտ Արծրունու գլխավորած զորագնդերը⁸: Ենթադրվում է, որ այս ընդհարման ժամանակ Արծրունյաց զորքն իր կազմում ուներ ընդամենը 19 զորաբաժին, իսկ Բագարատի բանակը՝ 36 զորագունդ⁹: Սակայն Թովմա Արծրունու հաղորդումից երևում է, որ Արծրունյաց զորքի կազմում էին նաև Վասպուրականի գահերեցից կախյալ մյուս տոհմերից համալրված զորաբաժինները, ուստի պատմագիրը Արծրունյաց զորքից հետո վերը հիշված 36 զորագնդերից ևս 14-ը նշում է Աշոտ Արծրունու բանակի կազմում, նրանց զորապետներին անվանելով «ի մախարարացն Վասպուրական իշխանին»¹⁰: Բագարատի և Բագրատունիների հյուսիսային ճյուղի միջև եղած մրցակցության պայմաններում նա չէր կարող մեծ ուժեր ունենալ իր տրամադրության տակ: Նույնն էր նաև Բագարատի որդի Աշոտի օրոք, որը լինելով Տարոնի իշխան, կրում էր նաև Հայաստանի իշխանաց իշխանի տիտղոսը, այն դեպքում, երբ Հայաստանի իշխանաց իշխանի իրական իրավագործությունը Սմբատ սպարապետի որդի Աշոտ Բագրատունու մենաշնորհն էր: Նկատենք նաև, որ «իշխանաց իշխան» Աշոտին (Բագարատի որդուն) իր կամքն էր պարտադրում հետագայում Վասպուրականի Դերենիկ՝ Արծրունի իշխանը¹¹:

⁷ Նույն տեղում, էջ 178:

⁸ Տես նույն տեղում, էջ 174 – 176:

⁹ Տես Գնել Գրիգորյան, *Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX - X դարերում, Երևան, 1983, էջ 84 – 85:*

¹⁰ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 174:

¹¹ Տես նույն տեղում, էջ 342:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ա. ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԴԻՍԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոգեվարք ապրող Աբբասյան խալիֆայությունը հուսահատ ճիգերով ջանում էր պահպանել իր տիրապետությունը Հայաստանում և մյուս երկրներում: Ապուսեթի, Ալա-Ծովափիի ծախողանքից հետո արաբական զորագնդերը խուժեցին հարավային Հայաստան, այս անգամ Ապուսեթի որդի Յուսուփի գլխավորությամբ: Բելազուրին այդ արշավանքը դնում է Մութավաքիլ խալիֆայի երկրորդ տարում¹, իմա՝ 849թ., իսկ ըստ Թովմա Արծրունու, այն կատարվել է Հայոց Յ (300), այսինքն 851 թվականին²: Պատմիչը նշում է, որ խալիֆան մեծամեծների հետ Յուսուփին հրահանգում է, «զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ, զի մեր լիցի ժառանգութիւն նոցա. և նախ ձեռս արկցէ յԱշոտ և ի տուն նորա և ի Բագարատ և ի տուն նորա», որով և կվերացվի հայերի ընդդիմությունը³:

Յուսուփին Ատրպատականից մտավ Արծրունիների իշխանություն, գրավեց Աղբակ գավառը և բանակեց «ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց», այնտեղից ասպատակներ սփռելով ու ավարի մատնելով գավառը: Նա փորձեց խաբեությամբ իր մոտ կանչել ու կալանել Աշոտ Արծրունուն, որին սակայն չհաջողվեց ծուղակը գցել: Աշոտը զինավառ ազատագործով անցավ Մարդաստան գավառ, որտեղից պատվիրակներ հղեց Յուսուփի մոտ: Նրանց մեջ էր նաև Աշոտի մայրը՝ Զեփսիմե տիկինը, որը «ընծայիւք բազմօք» հանդիպեց

¹ Baladhuri, I, p. 331.

² Թովմա Արծրունի և Անանուն, II, 2, էջ 184:

³ Նույն տեղում:

Յուսուփին, խնդրելով հեռանալ Արծրունյաց իշխանությունից: Նրա խնդրանքը կատարվեց⁴: Յուսուփը վերցնելով ընծաները, ինչպես և պատանդներ, Վասպուրականից հեռացավ «խաղաղութեամբ», ապա ժամանեց Խլաթ քաղաք, որտեղ նա «կամեր անսալ ժամու դիպողագունի», որպեսզի ծուղակը զցի հայ նախարարների: Նրան հաջողվեց խաբեպատիր խոստումներով իր մոտ հրավիրել և կալանել Բագարատ Բագարատունուն, ինչը հարուցեց Խութ գավառի քաջարի լեռնցիների ընդվզումը⁵: Ըստ Բելագուրիի, խութեցիներին օժանդակել են նաև Հայաստանի մյուս շրջանների իշխանները⁶: Թեև հայ մատենագիրները գրում են, որ ապստամբել են և Յուսուփին հաղթել ու սպանել են խութեցիները⁷, բայց հավանաբար, նրանց օժանդակել են հարակից գավառների զորաբաժինները, այդ թվում թերևս, նաև Արծրունյաց զորուժը: Մուշ քաղաքում որջացած Յուսուփին ու նրա զորքին ծանր պարտության մատնող ապստամբները բանտից ազատ արձակեցին վասպուրականցի պատանդներին, ազատեցին գերիներին⁸:

Սակայն Յուսուփի ու նրա զորականների անփառունակ վախճանը չսթափեցրեց խալիֆային ու նրա պալատականներին, որոնք 851թ. իրենց ընտիր զորքը բաղկացած թուրք վարձկաններից, Բուղա զորապետի (ազգով թուրք) գլխավորությամբ նետեցին Հայաստանի ու բախտակից երկրների դեմ: Այս զորքը նախ մտավ Խլաթ, որտեղից Բուղան իր զորքի մի մասը ժիրաք զորապետի գլխավորությամբ առաքեց Արծրունիների դեմ: Այս զորաբաժինը Հողցով մտավ Ռշտունիք: Հողցը գտնվում էր Աղծնիքի և Արծրունյաց իշխանապետության սահմանագլխին⁹, Թուխ գյուղից Վան տանող ճանապարհին, Օխվանց գյուղի տեղում, որտեղից ճանապարհն Առվենից ձոր

⁴ *Նույն տեղում, էջ 186:*

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, *էջ 186 – 190:*

⁶ Baladhuri, I, p. 331.

⁷ *Տես* Թովմա Արծրունի և Անանուն, *էջ 190*, Հովհաննես Արասխանակերտցի, *էջ 119 – 120, Սամվել Անեցի, էջ 92:*

⁸ Թովմա Արծրունի և Անանուն, *էջ 190:*

⁹ I. Markwart, *Sudarmenien, s. 489.*

գավառով ուղիղ ձգվում էր դեպի Վան քաղաք¹⁰: Հարկավ, Հողցի գրավումից հետո ժիրաքի զորաբաժինը մտավ Ռշտունիք և Արտամետով հասավ Վանտոսպ գավառ, ուղղվելով դեպի Վան, դեպի ուր իր զորքի մնացած մասը նետեց նաև Բուղան: Վերջինիս զորակցում էին Վանա լճի ոլորտում հաստատված արաբական ցեղերը: Բուղան կամենում էր տիրանալ Վան քաղաքին, Արծրունյաց իշխանապետության այդ հռչակավոր կենտրոնին: Նրա դժնաբարք զորականները մոլեգնում էին Վասպուրականում, փորձում էին հավատափոխ անել ժողովրդին, ավերում էին եկեղեցիները, գործում անլուր խժժություններ¹¹: Արաբ մատենագիրների վկայությամբ Բուղան ասպատակել է Աղբակ գավառը¹²:

Արծրունյաց մեծ իշխան Աշոտը հոգ տարավ իր իշխանապետության ռազմուժը պահպանելու մասին: Ջորքի հիմնական մասն իր եղբոր՝ Գուրգենի առաջնորդությամբ ուղարկելով Կորճայքի Որսիքանք գավառի անմատույց վայրեր, նա ամրացավ Նկան ամրոցում, շեղելով Բուղայի ուշադրությունը Արծրունյաց գլխավոր ուժերից: Նկանում իրենց զորականներով ամրացան նաև Մուշեղ և Վահան Արծրունիները, Մուշեղ Վահուտունին, Վահրամ սեպուհի և այլոց հետ: Նկանի մատույցներում բանակեց Վահան Ամատունին: Բուղա զորապետն անձամբ զորքը գրոհի տարավ Նկանի դեմ, օգտագործելով քարծիզ մեքենաներ, կրականետ սարքեր: Թշնամու գերազանց ուժերի գրոհները պառակտում մտցրին ամրոցի պաշտպանների մեջ, որոնց զգալի մասն անհեռանկար համարելով հետագա դիմադրությունը, փորձեց հաշտության եզրերի հասնել Բուղա զորապետի հետ¹³: Սակայն նրանց հղացումը չէր կիսում Աշոտ Արծրունին, որը «թեպետև հանդերձեր զինքն իւրայօքն վառելովք մարտ ընդ բռնադատին Բուխայի դնել, սակայն նախարարքն իւր ոչ գտանէին նմա համամիտք ի գործ պատերազմին», –

¹⁰ M.Thierry, *Notes de Géographie historique sur le Vaspurakan* ("Revue des Etudes Byzantines", t. 34, Paris, 1976, p. 172).

¹¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 206:

¹² Baladhuri. I. p 331, *Արձու*, c. 20.

¹³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 206 – 210:

գրում է Հովհաննես Դրասխանակերտցին¹⁴: Փաստորեն Նկանի ներսում դավադրություն նյութվեց Աշոտ Արծրունու դեմ, որին մասնակից էր անգամ նրա թիկնապահ Վահրամը: Դավադիրները Բուղային խոստացան, որ Աշոտին կհանձնեն նրա ձեռքը՝ «առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան», նաև իրազեկեցին, որ Արծրունյաց հիմնական զորուժը հեռացել է ուրիշ վայրեր¹⁵: Երբ Աշոտ Արծրունու համար պարզ դարձավ իշխանների մտադրությունը, ստիպված համաձայնվեց, որպեսզի նրանք մեկնեն Բուղայի մոտ և փորձեն հասնել խաղաղ ելքի: Բայց նրան համոզեցին, որպեսզի անձամբ մեկնի զորապետի մոտ, անշուշտ, վերջինիս հետ կանխավ իրենց ձեռք բերած համաձայնությամբ: Աշոտը կռահեց նրանց դիտավորությունը, կշտամբանքի խոսքեր ուղղելով դավադիրներին: Բայց նրանք շարունակեցին պնդել իրենցը, հուսալով շահել զորապետի ներողամտությունը: Աշոտ Արծրունին ստիպված էր տեղի տալ և մեկնել դաժանաբարո զորապետի մոտ, որը կապանքների մեջ դնելով նրան և ուրիշ ազատների, ուղարկեց խալիֆայի նստավայր՝ Սամառա քաղաք¹⁶:

Բ. ՀԱՂԹԱՆԱԿ ԵՎ ՆՈՐ ՈՐՈՉԱՅԹՆԵՐ

Արծրունյաց իշխանության կացությունը ավելի վատթարացավ Մոկքի տիրոջ՝ Սմբատ Բագրատունու (Աշոտ Մսակերի թոռը և Բագարատի եղբորորդին) կողմից Բուղային հնազանդություն հայտնելուց հետո: Վերջինս, ինչպես վկայում է Թովմա Արծունին, Սմբատին նախապատվություն էր տալիս «առաւել քան զամենայն մեծամեծսն»¹: Բուղան 15 հազարանոց զորք նետեց Որսիրանք գավառի Թով գյուղի մոտակայքի Արյան լիճ անունով վայրում ճամբարած Արծրունյաց զորքի դեմ, որին

¹⁴ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 119 – 120:

¹⁵ Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 212:

¹⁶ Նույն տեղում, էջ 216, 220:

¹ Թովմա Արծունի և Անանուն, էջ 213: Այս Սմբատը տարբեր է Աշոտ I Բագրատունու հորից՝ Սմբատ խոստովանողից, որը Աշոտ մսակերի որդին էր:

ապավինել էր ոչ միայն Վասպուրականի, այլև հարակից գավառների բնակչությունը: Ջորքի հրամանատարն էր մեծ իշխան Աշոտ Արծրունու եղբայր Գուրգենը, որն իր մորը՝ Յոթիսիմե իշխանուհուն ուղարկեց Բուղայի մոտ, թերևս հուսալով, որ վերջինս հաշվի կառնի նրա Բագրատունի ծագումը: Խորամանկ զորապետը սիրալիոր ընդունելություն ցույց տվեց իշխանուհուն, հայերի զգոնությունը բթացնելու նպատակով, ապա զորքը շարժեց Արծրունյաց զորուժի դեմ: Այդ զորքը բանակեց Ջավ գետի ափին, որտեղից բանագնացներ ուղարկեցին Գուրգեն Արծրունու մոտ, «զի եկեսցէ առ նոսա առանց պատկառանաց և երկիւղի և առանց միոյ իւիք կասկածանաց»: Յրավերը կրկնեցին և «բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի անվեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա»²: Այնժամ Գուրգենը իր փոխարեն զորապետ թողնելով Ապուլպեւծի որդի Գուրգենի եղբայր Սուշեղին, ինքը ելավ գնաց կոչնակների ետևից: Բայց երբ իշխան Ապունկդեմ Արծրունին անձամբ նկատեց թշնամու զորքի տեղաշարժը դեպի Արծրունյաց բանակատեղ, հրամայեց զինավառվել և պատրաստվել մարտի, հարդարեց մարտակարգերը, ապա նստելով արագասույր ձին, սլացավ Գուրգենի ետևից: Վերջինս կռահեց նրա մտադրությունը և ետ դարձավ զորաճամբար, ապա մեկ անգամ ևս փորձեց բանակցությունների միջոցով կանխել պատերազմը, սակայն հակառակորդը չամսաց նրան³: Այնժամ Գուրգենը զորքին հրամայեց պատրաստվել մարտի: Արծրունյաց զորքը ոսոխի դեմ շարժվեց վիմաձև, կուռ շարքերով, ըստ ազգատոհմերի⁴:

Գուրգենը ստանձնեց նաև ծախ զորաթևի հրամանատարությունը, աջակողմյան զորամասը հանձնելով Ապունկդեմին, «և այլքն մի ըստ միոջէ կացին ի կարգի ճակատուն»:

² Նույն տեղում, էջ 226:

³ Նույն տեղում, էջ 228 – 230:

⁴ Թովմա Արծրունին Գուրգենի զորքի կազմում հիշում է բացի Արծրունյաց զորագնդերից, նաև Գնունիների, Գազրիկյանների, Ամատունիների, Վարաժնունիների, Ընտրունիների, Ակեացոց տոհմի, Վահևունիների և Անձևացյաց զորամասերը (նույն տեղում, էջ 230): Յասկանալի է, նշված տոհմերն ընդունում էին Արծրունիների գերակայությունը:

Ընդամին որոշ ռամիկներ կողքերից քարեր էին նետում թշնամիների վրա: Արծրունյաց զորքը կուռ շարքերով անցավ հարձակման և ճեղքեց թշնամու զորքի ճակատը: Ամբողջ օրը տևած արյունահեղ մարտում Արծրունյաց զորքը փայլուն հաղթանակ չահեց: Թշնամին կորցրեց 1800 զինվոր, տալով նաև բազմաթիվ գերիներ, վիրավորներ: Գուրգեն Արծրունին մարտից հետո, գիշերը հետապնդեց թշնամուն և վտարեց «ի սահմանացն Հայոց»⁵: Սակայն նա կանոնավոր մարտում իր տարած հաղթանակի պտուղներից ոչ միայն չկարողացավ օգտվել, այլև ընկավ Բուղայի լարած որոգայթը: Վերջինս իր բանագնացների միջոցով Գուրգենին հայտնեց, որ նրան ճանաչում է Վասպուրականի իշխան: Գուրգենը անշրջահայաց կերպով կուլ տվեց այդ խայծը, հուսալով, որ այդ կերպ իր իշխանության համար կընձեռվի հնարավոր և ցանկալի գոյավիճակ: Ջորապետի մոտ մեկնելուց երեք օր հետո Գուրգենը դրվեց կապանքների մեջ և ուղարկվեց Սամառա, որտեղ նրան նետեցին արքունի բանտ, ուր արգելված էին նաև նրա եղբայր Աշոտը «և այլ նախարարք ի տանեն Արծրունեաց»⁶: Որդիների հետևից կամովին արքոր մեկնեց վշտակեզ Հռիփսիմե տիկինը «զհերս խզեալ և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով», – հոգու մորմոքով գրում է Արծրունյաց պատմիչը⁷: Արծրունյաց տիկնոջ անձնվեր արարքն անշուշտ մեր ժողովրդի ազգային բարոյականությունը պանծացնող փաստ է:

Գ. ԱՐԾՐՈՒՆՅԱՅ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Արյան լճի ճակատամարտից հետո կարճ ժամանակահատվածում Արծրունիներն ստիպված էին ճաշակել օտարի դառնաշունչ լուծը: Սակայն շնորհիվ Ապուպելճի որդի Գուրգեն Արծրունու խիզախ ձեռնարկումների, աղետահար Վասպուրականն ապրեց հույսի մթնոլորտում: Բուղայի կողմից

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 232:

⁶ Նույն տեղում, էջ 238:

⁷ Նույն տեղում:

հայ նախժարարների գերեվարումից հետո Գուրգենը հրաժարվեց նրա մոտ մեկնելուց (անշուշտ, հասու էր դավին) և անցավ Բագրևանդ գավառ իր քեռու՝ Քուրդիկ Մամիկոնյանի տիրույթը¹: Մի ենթադրության համաձայն, Գուրգենը Բագրևանդ հեռացավ իբր թե այն պտճառով, որ «այդ մուլեզին ռազմիկները սիրում էին պատերազմը, էլ ավելի կողոպուտն ու դյուրին շահստացությունը... Նրանց միակ նպատակն էր իրենց կրքերին ու անձնական շահերին գոհացում տալը»²: Բայց մի՞թե Արյան լճի հաղթանակը շահողները նման նպատակների էին հետամուտ, երբ կենաց և մահու պայքարի դաշտ նետվեցին ահեղազոր ոսոխի դեմ, պաշտպանելով հայրենի երկրի պատիվն ու ազատությունը:

Երբ Վասպուրականի իշխանների զգալի մասը գերեվարվեց, Գուրգեն Ապուլպելճն ստիպված հեռացավ հայրենի տիրույթներից, որպեսզի գերծ մնա թշնամու որոգայթներից: Վասպուրականի արծիվը չկամեցավ գլուխը խոնարհել անարգ ոսոխի դեմ: Ջինական կորովով իրենց դրսևորեցին նաև Արծրունյաց գլխավոր ճյուղի ներկայացուցիչները, որոնց իբրև ռազմական կարող դեմքեր, արաբները դատապարտեցին աքսորի: Երբ Գուրգենը տեղեկացավ, որ թշնամին սպառնում է նաև Բագրևանդին, (որն իրոք գրավվեց, և նրա քեռին գերվեց), հեռացավ Տայքի Սպեր՝ գավառ, Իշխանիկ Բագրատունու տիրույթ: Վերջինիս սպառնում էին սահմանամերձ բյուզանդական ուժերը, որոնց դեմ Գուրգենը մի քանի հաղթանակ տարավ³: Դրան նպաստեց այն հանգամանքը, որ նույն պահին բյուզանդացիների դեմ պատերազմում էին նաև պավլիկյանները⁴: Սակայն, երբ Բուղայի զորքը հարձակվեց Բյուզանդիայի վրա, Գուրգենը զորակցեց հույներին, պատերազմելով արաբների դեմ և «բազում անգամ ոչ սակաւ օճիրս գործէր ընդ զօրս Տաճկաց»⁵: Սպերից Գուրգենը մեկնեց Սմբատ

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 302:

² J.Laurent, *Un feodal Arménien au IX^e siècle: Gourguen Ardzrouni fils d' Abou Beldj* ("Etudes d' Histoire Arménienne". Louvain, 1971, p. 28 – 29).

³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 302:

⁴ J.Laurent, *Etudes d' Histoire Arménienne*, p. 25.

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 302:

սպարապետ Բագրատունու մոտ⁶: Նրա այս քայլը դիտվել է իբրև միջոց «հույների դեմ ցուցաբերած իր արիությանը պարծենալու» արաբների առջև, նրանց դեմ իր տարած հաղթանակները մոռացության տալու համար⁷:

Գուրգենը հույս ուներ Սմբատ Բագրատունու աջակցությամբ տիրանալ Վասպուրականին և այն ազատագրել արաբներից: Բուղա զորապետը ստիպված էր համակերպվել Սմբատ սպարապետի մոտ Գուրգենի ծառայության փաստի հետ, քանի որ այդ պահին նա արյունոտ մարտեր էր մղում Կովկասում: Բայց երբ Բուղան հաղթանակ տարավ Կովկասի ցեղերի և Արցախի քաջակորով իշխան Եսայի Ապունուսեի դեմ, կտրուկ փոխեց իր վերաբերմունքը, նույնիսկ գերի տարավ հայ իշխաններին: Գուրգենն այս անգամ ևս խուսափեց Բուղայի որոգայթներից և անցավ Վասպուրական, քայլեր ձեռնարկեց նրա իշխաններին միավորելու և այնտեղ Արծրունիների գերիշխանությունը վերահաստատելու համար: Վասպուրականում այդ պահին կար 4000-անոց ազատագործ՝ Ապուջափր և Ապունկդեմ Արծրունիների գլխավորությամբ⁸: Այս զորքը ջախջախեց Նախճավանի արաբ ամիրայի ուժերին: Սակայն,

⁶ Նույն տեղում, էջ 304:

⁷ J. Laurent, Etudes, p. 32.

⁸ Թովմա Արծրունին այս նախարարներին հիշում է «տէր» պատվանունով (էջ 228), որը համանշանակ է «իշխան»-ին: Ենթադրվում է, որ «իշխան» են կոչվել միայն այն «տէր»-երը, ովքեր գյուղացիների նկատմամբ ունեցել են «քաղաքական իշխանություն» (Բ.Ութմազյան, Սյունիքը IX - X դդ., Երևան, 1958, էջ 153 – 154): «Տէր»-ը և «իշխան»-ը օժտված էին իշխողի իրավագործությամբ ոչ միայն գյուղացիների, այլև իրենց ենթակա գավառի, նահանգի ամբողջ բնակչության նկատմամբ: Արծրունյաց իշխանապետությունը հիշվում է «տէրութիւն», ինչպես և «իշխանութիւն» ձևով (տես Զոպի. Դրասխանակերտցի, էջ 173, 177): Պատմագիրը նույն իշխաններին հիշում է «տէր» և «իշխան» պատվանուններով (նույն տեղում, էջ 114, 241, 301-302 և այլն): Ստ. Օրբելյանը Սյունյաց իշխանապետությունը հիշում է որպես «տէրութիւն» (էջ 51, 173 և այլն) և «իշխանութիւն» (էջ 52, 63 և հտ.), Սյունյաց Գրիգոր Սուփան իշխանին անվանում է «տէր» և «սիւնեաց իշխան» (էջ 175, 220, 231, 234): Թովմա Արծրունին Գագիկ Ապունրվանին հորջորջում է որպես «իշխան Վասպուրական տէրութեանն» (էջ 364), նաև իբրև «տէր» (էջ 340), Գրիգոր Արծրունուն «իշխան» և «տէր» (էջ 238, 340): «Իշխանութիւնը», «տէրութիւնը» արտահայտում են իշխելու, տիրելու գաղափարը:

երբ սպանվեց Ապունկդեն Արծրունին՝ քաջակորով զորապետը, վասպուրականցիները հուսաբեկվեցին և լքեցին մարտադաշտը: Արծրունյաց ռազմիկները քաշվեցին Աղբակ գավառ, այնտեղից՝ Ռշտունյաց Ոստան բերդաքաղաք, իշխան կարգելով Վասակ Կովակեր Արծրունուն: Սա արդեն լցրեց Գուրգեն Ապուպելճի համբերության բաժակը: Նա Ոստանը համարում էր իր հայրենի ստացվածքը: Այդ լուրը լսելուն պես նա Սմբատ սպարապետի կամակցությամբ ժամանեց Վասպուրական, գրավեց Ջլմար և Սրինգ ամրոցները Արծրունյաց ոստան Փոքր Աղբակում, կալանեց Վասակ Կովակերին և տիրեց Վասպուրականին: Բուղայի հրամանով արաբական զորքը շարժվեց Գուրգենի դեմ, սակայն թե այդ զորքը և թե նրան օժանդակող ութմանիկները և ուրիշ ուժեր չարաչար պարտություն կրեցին Գուրգենից Հայոց ձոր գավառում: Այդ պահից, ինչպես վկայում է Արծրունյաց պատմիչը, արաբական զորքերն այլևս չէին համարձակվում խախտել Վասպուրականի անդորրը: Գուրգենը զորքով շրջում էր իր իշխանության մեջ, այն լիովին մաքրելով օտար ցեղերից⁹: Բուղա զորապետը ստիպված ճանաչեց Գուրգեն Ապուպելճի իշխանությունը, ուղարկելով պատվանշաններ¹⁰: Բուղայի նման վերաբերմունքը բացատրվել է այն փաստով, որ վերջինս մինչ այդ «սկանատես էր եղել Գուրգենի հավատարմությանը նրա հավատուրացությամբ»¹¹: Բայց ինչպե՞ս էր այդ «հավատուրացը» քանիցս ջախջախում «հավատակից» արաբներին, նրանցից մաքրում իր իշխանությունը: Բուղան համաձայնվել էր Վասպուրական Գուրգենի վերադարձին, նպատակ ունենալով նրան օգտագործել իր ախոյանների դեմ, ինչը սակայն չստացվեց: Այդուհանդերձ նա սիրաշահեց Գուրգենին, ելնելով ոչ թե նրա հավատուրացության փաստից, այլ որովհետև հնարավոր չէղավ նրան ծնկի բերել: Հատկանշելի է նաև այն փաստը, որ հետագայում երբ Տփխիսի ամիրայի արքանյակները դավադրաբար կալանեցին Գուրգենին, ամիրան նրան

⁹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 306-308:

¹⁰ Նույն տեղում, էջ 308:

¹¹ J.Laurent, *Etudes*, P. 36.

հարկադրեց հրաժարվել քրիստոնեական կրոնից, սակայն Գուրգենը ծաղրեց նրան, նախընտրելով բանտը, նույնիսկ մահը «վասն անուանն Քրիստոսի»¹²: Հասկանալի է, իսլամն ընդունածին՝ չէին ստիպի վերստին այն դավանել: Բացի այդ, եթե Գուրգենը իրոք մինչ այդ հավատափոխ էր եղել, ուրեմն հետագայում վերստին դարձել էր քրիստոնյա, որի համար շարիաթի համաձայն նա պետք է մահապատժի ենթարկվեր, ինչը սակայն տեղի չունեցավ:

¹² Թովմա Արծրունի և Անանուն, *էջ 316 – 318*:

ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

Ա.ԱՐԾՐՈՒՆԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԳԵՐԵՂԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

855թ. Բուղա զորապետը վերադարձավ խալիֆայի մոտ՝ Սամառա, հետը տանելով կալանված հայ իշխաններին, անգամ իրեն հանդեպ հավատարմություն ցուցաբերած Սմբատ սպարապետին: Նրանից հետո Հայաստանի կառավարիչ նշանակվեց Մուհամմադ իբն Խալիդը, որը «խաղաղացրեց երկիրը, ներում («ամման») շնորհեց խռովարարներին»¹:

856թ. պատերազմը վերսկսվեց խալիֆայության և Բյուզանդիայի միջև: Մութավաքիլ խալիֆան ստիպված իր զորքերը հանեց Հայաստանից և նետեց կայսրության դեմ, որը հաջող հարձակումներ էր սկսել Եփրատի կողմից²: Այդ պահին Ափխազաց երկրից Վասպուրական վերադարձավ Արծրունիների իշխող Ճյուղից Գրիգորը (մեծ իշխան Աշոտի եղբայրը) վրաց և ափխազաց ջոկատներով: Թովմա Արծրունին այս անցքը դնում է Ջաքարիա Ջազեցի կաթողիկոսի գահակալելուց չորս տարի հետո³, այսինքն 859թ., ինչն ի հարկե, ճիշտ չէ: Գրիգորի վերադարձը կատարվել է 856թ.՝ արաբների դեմ Բյուզանդիայի հաջողությամբ սկսած պատերազմի տարում: Գրիգորի թիկուն-

¹ Якыбс, с. 21, Baladhuri. I, p. 333. Բուղայից հետո Արմինիայի կառավարիչ է համարվում Իբրահիմը (տես Ա. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977, с. 284): Երբ Բուղա զորապետը արտրեց հայ նախարարներին (852թ.), Հայաստանում կառավարիչ կարգեց Իբրահիմին, որին հիշում է միայն Թովմա Արծրունին, որպես «հազարապետ հայոց և վերակացու ի վերայ հարկաց արքունի» (Թովմա Արծրունի և Անանուն, էջ 298): Բայց Իբրահիմն ի զորու չեղավ կատարել Բուղայի հրահանգները, ուստի վերջինս Հայաստանի վերակացությունը վստահեց Սմբատ Բագրատունուն: Դրանից հետո Իբրահիմը՝ «ամիրայն Նախճատանու» ութմանիկների զորակցությամբ արշավեց Վասպուրական, բայց պարտություն կրեց Արծրունիներից (նույն տեղում, էջ 304 – 306):

² J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, p. 215.

³ Թովմա Արծրունի և Անանուն, III, ԺԳ, էջ 310:

քին կանգնած էր Բյուզանդիան⁴: Սակայն Գրիգորի հետ եկած օտարազգի զորայինները շուտով լքեցին նրան, տեղեկանալով Գուրգեն Ապուպելճի զորության մասին: Գրիգորը նրանց Վասպուրական էր բերել իշխանությունը Գուրգենից խլելու համար, անշուշտ տալով առատ խոստումներ: Դրանից հետո Գրիգորը գործը վերջացրեց Գուրգենի հետ կնքված հաշտությամբ, և նահանգը բաժանեցին միմյանց միջև: Գուրգենը «նստեր յնստանին Ռշտունեաց», – գրում է պատմագիրը⁵: Ուրեմն Գրիգոր Արծրունին իբրև Արծրունիների իշխող ճյուղի ներկայացուցիչ, ճանաչել է Գուրգենի իրավունքները Ռշտունիքի նկատմամբ: Խալիֆան նույն ժամանակ Վահան Արծրունուն (մեծ իշխան Աշոտի որդուն) ուղարկեց Վասպուրական այն տիրելու իրավունքով: Արաբները հավանաբար Գուրգեն Ապուպելճին և Գրիգոր Արծրունուն համարում էին Բյուզանդիային սատարողներ, ուստի կամեցան ասպարեզից հեռացնել նրանց: Սակայն Վահան Արծրունին չարդարացրեց արաբների հույսերը. նա պարտվեց Գուրգենից և վերադարձավ Սամառա՝ հոր մոտ կատարվածի մասին տեղեկացնելու համար⁶: Հաջորդ տարի վախճանվեց Գրիգոր Արծրունին: Վասպուրականում շարունակեց միայնակ իշխել Ապուպելճի որդի Գուրգեն Արծրունին, որն «իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս... սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս... Խռովեցան առ հասարակ ազգքն տաճկականք յերեսաց նորա և ահիւ մեծաւ ըմբռնեալք լինէին... Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն», – գրում է Արծրունի պատմիչը⁷:

858թ. աքսորից վերադարձան նաև մյուս հայ նախարարները, որոնք առերես ընդունել էին մահմեդականությունը⁸, ուստի խալիֆան ակնկալում էր նրանց հնազանդությունը և հույս ուներ նրանց օգնությամբ դիմադրել առաջխաղացող Բյուզանդիային⁹:

⁴ J.Laurent. *Etudes d' Histoire Arménienne*, p. 38 – 39.

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 310:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 312:

⁸ Նույն տեղում, էջ 248:

⁹ J.Laurent. *Etudes d' Histoire Arménienne*, p. 39.

Խալիֆան չէր վստահում Արծրունի նախարարներին: Նա Վասպուրականի մեծ իշխան Աշոտ Արծրունուն պահեց իր մոտ: Թեև նրան ճանաչեց (որդու՝ Դերենիկի հետ) իբրև Վասպուրականի տեր, բայց Հայաստան ուղարկեց միայն Դերենիկին և նրա հորեղբայր Գուրգենին¹⁰, որը մանկահասակ Դերենիկին պետք է օժանդակեր նահանգում իշխանությունն իրականացնելու համար: Սակայն նա ոչ միայն չօգնեց Դերենիկին, այլև Գուրգեն Ապուլպելճին հորդորեց Վասպուրականը բաժանել միմյանց միջև, անտեսելով Աշոտ Արծրունու և Դերենիկի իրավունքները: Սակայն Գուրգեն Ապուլպելճը չհամաձայնվեց նրա հետ, քանզի չէր հավատում Գուրգեն Արծրունուն «զհօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով»: Բացի այդ, նա չէր կամենում իշխանությունը խլել Արծրունյաց իշխող ճյուղից, մանավանդ որ վերջինիս իրավունքներն արդեն վերահաստատել էր խալիֆան: Ուստի Գուրգեն Ապուլպելճը հեռացավ Բյուզանդիա, որի կայսրը նրան կամենում էր պատիվներ շնորհել, հուսալով թերևս այդ կերպ Գուրգենին օգտագործել արաբների դեմ մղվող կռիվներում: Սակայն Գուրգենին հետևում էին արաբները: Ուստի, երբ նա հասավ Կարին, դարանամուտ արաբ զորականները բռնեցին նրան և տարան Սմբատ սպարապետի մոտ: Վերջինս ստիպված Գուրգենին ուղարկեց Թիֆլիսի ամիրայի մոտ, որը բանտ նետեց նրան, ստիպելով ուրանալ հավատը, սակայն չկարողացավ բռնանալ նրա անկոտորում կամքին: Գուրգենը բանտից ազատվեց «յետ աուրց բազմաց... և ելեալ փրծեալ ի բանտէն՝ եկն եմուտ յաշխարհ իւր»¹¹:

Ինչպես նշվեց, 858թ. գերեզարծ եղավ նաև Դերենիկ Արծրունին: Մայրը՝ Հռիփսիմե տիկինը նահատակվեց՝ հավատը չուրանալու պատճառով¹², հայրը՝ Աշոտը երկար մնաց խալիֆայի նստավայրում: Թեև վերջինիս հրամանով գլխատվել էր Բուղա գորապետը¹³, սակայն արքունիքում աչքառու դեր ուներ նրա որդի Մուսեն, որը փաստորեն փոխարինեց հորը: Նա Աշոտ Արծրունուն խոստացավ վերադարձնել «յիւր բնիկ

¹⁰ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 314:

¹¹ Նույն տեղում, էջ 320:

¹² Նույն տեղում, էջ 324:

¹³ Նույն տեղում, էջ 326:

տէրութիւնն», կամենալով այդ կերպ օգտագործել նրան ընդդէմ իր թշնամիների: Աշոտը Մուսեի մղած կռիվներուն աչքի ընկալ քաջութեամբ, սակայն զորապետը չկատարեց իր խոստումը, չցանկանալով արքունիքից հեռացնել «զայսպիսի քաջ այր և պատերազմող» Աշոտ Արծրունուն¹⁴: Աշոտը Վահան Արծրունու հետ կարողացավ փախչել Սամառայից: Թեև Արծրունյաց պատմագիրը նշում է, թէ Աշոտը գերությունից հայրենիք է վերադարձել «ի Յէ ամի Հայոց թուականութեանս»¹⁵, իմա 858թ., սակայն այլ առիթով նա գրում է, որ Աշոտ Արծրունին գերեզարծությունից հետո ապրեց վեց տարի և վախճանվեց Հայոց Յիգ թվին, հռոմի ամսի վեցին և թաղվեց «ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի»¹⁶: Ըստ այսմ նա մահացել է 874թ. մայիսի 27-ին: Մահվանից վեց տարի առաջ, ինչպես տեսանք, նա արքորից վերադարձավ: Եթէ նրա վախճանվելուց վեց տարի ետ գնանք, կստացվի նրա տունդարձի ստույգ տարին՝ 868 թվականը (հավանաբար գրիչները տասը տարով շփոթել են վերադարձի ժամանակը): Նշելի է նաև այն փաստը, որ 860-ական թվականներին տեղի ունեցած իրադարձությունների մասին խոսելիս Թովմա Արծրունին բնավ չի հիշում Արծրունի Աշոտին իբրև Վասպուրականի տեր: Բացի այդ, պատմագիրը գրում է, որ Աշոտ Արծրունին մասնակցել է Մուսե զորապետի կողմից Ղազվին քաղաքի գրավման համար մղած մարտերին¹⁷, որոնք ըստ արաբ պատմագիր Թաբարու, տեղի են ունեցել 867թ. դեկտեմբերի 1-ին¹⁸: Թովմա Արծրունու վկայությամբ հայրենիք վերադառնալուց հետո Աշոտ Արծրունին ընդհարվում է ութմանիկների հետ, որոնց սատարում էր ոստիկան Իսա իբն աշ-Շայխը (Հիսե)¹⁹: Վերջինս Արմինիայի ոստիկան էր 870 թվականից²⁰:

¹⁴ *Նույն տեղում, էջ 328:*

¹⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ . 326:

¹⁶ *Նույն տեղում, էջ 338:*

¹⁷ *Նույն տեղում, էջ 328:*

¹⁸ I. Markwart, *Südarmenien*, s. 368.

¹⁹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 332 – 334:

²⁰ I. Markwart, *Südarmenien*, s. 369, R. Vasmser, *Chronologie der arabischen Stahalter von Armenien unter den Abbasiden*, Wien, 1931, s. 98 – 100; A. Тер-Гевондян, *Армения*, с. 285.

Գերեղարծվելուց փոքր-ինչ հետո Աշոտ Արծրունին քայլեր ձեռնարկեց Ապուպելճի որդի Գուրգենին չեզոքացնելու համար: Նա «զօրու ծանու» հարձակվեց Գուրգենի վրա և պահանջեց հրաժարվել Անձևացյաց գավառի մի մասից: Սակայն Գուրգենը պարտության մատնեց Աշոտին, որը ստիպված ամրացավ Ռշտունյաց Ոստան քաղաքում, ապա որդու՝ Դերենիկի հետ արշավեց Գուրգենի դեմ՝ Անձևացիք, օգնական ունենալով Աշոտ իշխանաց իշխանի, Սահակ Բագրատունու, Մոկաց նախարար Մուշեղ Բագրատունու և Արզնի ամիրայի զորքերը (վերջինիս գերդաստանը խնամություն ուներ Բագրատունիների հարավային Ճյուղի և Արծրունիների իշխող տոհմաճյուղի հետ): Երկու ամիս շարունակվող կռիվները ցանկալի արդյունքներ չստվեցին, ուստի Աշոտ Արծրունին Սահակ Բագրատունու և ուրիշ իշխանների միջնորդությամբ հաշտվեց Գուրգենի հետ «և սեր բարեկամութեան ի մէջ երկոցունց հաստատեալ... և ուխտեցին ուխտ խաղաղութեան մինչև ցայսօր ժամանակի»²¹:

Այս հաշտությունից հետո 870թ. Աշոտ Արծրունին զենքն ուղղեց ութմանիկ ցեղի դեմ, ջանալով գրավել Ամյուկ ամրոցը, որը նրանք զավթել էին 774 – 775թթ. ապստամբության պարտությունից հետո: Բայց Արմինիայի ոստիկանը պաշտպանեց ութմանիկներին, ուստի Աշոտ Արծրունին ստիպված հրաժարվեց իր մտադրությունից²²:

Բ. ԴԵՐԵՆԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ

Թովմա Արծրունու հավաստմամբ գերեղարծության պահին Աշոտ Արծրունու որդին՝ Դերենիկը տասը տարեկան էր, երբ «նստաւ իշխան յաթոռ տէրութեան հօր իւրոյ»¹: Սակայն պատմագրի այլ տեղեկությունների համադրմամբ պարզ է դառնում, որ հայրենիք վերադառնալիս Դերենիկն ավելի հասուն տարիքի է եղել: Այսպես, ըստ Թովմա Արծրունու, Դերենիկի անդրամիկ որդի Աշոտը ծնվել է Հայոց ՅԻԶ (326) թվականին,

²¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 330 – 332:

²² Նույն տեղում, էջ 332 – 334:

¹ Տես Նույն տեղում, էջ 314:

այսինքն 877-ին և հոր սպանության պահին եղել է ինը տարեկան, հետևաբար, հայրն սպանվել է 885թ. ծնռանը, ըստ Թովմայի, 40 տարեկան հասակում²: Ուստի Դերենիկը ծնված պետք է լինի 845թ. և գերությունից վերադառնալիս եղել է 12 – 13 տարեկան, խալիֆայի կողմից հոր հետ օժտվելով Վասպուրականի իշխանապետի իրավունքներով³: Ինչպես տեսանք, Դերենիկի հորեղբայր Գուրգենին չհաջողվեց Դերենիկից խլել գահերեցի իշխանությունը, քանի որ նա կարճակյաց եղավ. վախճանվեց իր վերադարձից մեկ տարի հետո⁴:

861թ. մահացած Մութավաքիլ խալիֆայից հետո ծայր առած գահակալական երկպառակություններն հաճախակի փոփոխվող խալիֆաներին հարկադրեցին աչքաթող անել ծայրերկրներին առնչվող գործերը⁵: Դրանից օգտվեցին Արծրունյաց նախարարները, այդ թվում նաև Ապուպելճի որդի Գուրգենը, որը հավանաբար 861թ. վերադարձավ Վասպուրական, ազատվելով բանտարգելությունից: Դերենիկը հարձակվեց նրա վրա, սակայն առաջին պահ «դառնայր փախստեայ»⁶: Երկրորդ անգամ, երբ Դերենիկը հարձակվեց Գուրգենի վրա, ձին ցած գցեց վերջինիս, որին այնուհետև նետեցին Չաղամակերտի բանտը: Սակայն բանտապահը ազատ արձակեց Գուրգենին և տարավ Դերենիկի ննջասենյակ: Գուրգենը վրիժախատույց չեղավ Դերենիկի պապի կողմից իր հոր սպանության համար, գրում է պատմագիրը, հավելելով նաև, որ սուրը ձեռքին պահած Գուրգենը Դերենիկի գլխավերևում սոսկ ողջունեց նրան ու հեռացավ⁶: «Այս տեսարանը, – գրում է Ժ.Լորանը, – արժանի է նկարչի վրձնի: Դրա մնանը կարելի է գտնել միայն Արևմուտքի որևէ ականավոր ռազմիկի մասին եղած պատմության մեջ»⁷:

² Տես նույն տեղում, էջ 354:

³ Նույն տեղում, էջ 315:

⁴ Նույն տեղում, էջ 318:

⁵ J.Laurent. *Etudes.* p. 42:

⁶ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 320:

⁷ J.Laurent, *Etudes.*, p. 43.

Սակայն Երազանի⁸ գյուղի մի կրոնավորի մոտ ապաստանած Գուրգենին Դերենիկը կալանեց, ապա ազատ արձակեց Ջաքարիա կաթողիկոսի խնդրանքով, Մարդաստան գավառը վերադարձնելով Գուրգենին: Իսկ երբ Հայաստանի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին ժամանելով Վասպուրական ձերբակալեց Դերենիկին իբրև «զանհնազանդ ոմն», Գուրգենը իշխանաց իշխանից պահանջեց ազատ արձակել Դերենիկին, սպառնալով զորքը շարժել նրա դեմ: Աշոտ Բագրատունին խոհեմաբար անսաց Գուրգենին, և վերջինիս միջնորդութեամբ նրա դուստր Սովին կնության տրվեց Դերենիկին, որի հետ միասին Աշոտը «զնաց ի տուն իւր Բագարան»: Այս անցքը ըստ պատմիչի, տեղի ունեցավ «ի թուականութեան Հայոց ՅԺԱ-երորդ ամին», իմա՝ 862թ.⁹: Այս փաստը վկայում է, որ Ապուպելճի քաջակորով որդին և Դերենիկը բարեկամության ուխտ են կռել:

Բայց Աշոտ իշխանաց իշխանի և Դերենիկի միջև ձեռք բերված բարեկամությունը հաճախ դառնում էր թեական ու վաղանցուկ, քանի որ այդ երկու ականավոր իշխանների քաղաքական ծրագրերը, միտումները միաշավիղ չէին: Դերենիկի համաձայնությամբ Գուրգեն Ապուպելճ Արծրունին իշխեց Ռշտունիքում, Մարդաստանում և Անձևացյաց գավառում: Հայրենիք վերադարձած Աշոտ Արծրունին զորքով հարձակվեց Գուրգենի վրա, կամենալով նրանից խլել Անձևացիքի մի մասը, բայց ոչինչ չստացվեց: Դերենիկը չկարողացավ արաբ ամիրանների իշխանությունից դուրս կորզել Վարագա վանքը, ինչպես և անառիկ Ամյուկ ամրոցը, քանի որ նրան տիրում էր Արմինիայի ոստիկանը¹⁰: Վերջինս Արծրունիներին թուլացնելու համար դիմեց որոշակի քայլերի, ջանալով սեպ խրել Դերենիկ Արծրունու և Տարոնի իշխան Աշոտ Բագրատունու (կյուրապաղատի) միջև: Անսալով մութ լուրերին, Դերենիկը բանտարկեց Աշոտին, զցելով իր քեռորդի Հասան Արծրունու

⁸ Այս գյուղը «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում (հատ. 2, Երևան, 1988, էջ 209) վկայված է համարվում սուսլ Ծերենցի «Երկունք Թ դարու» վեպում, մինչդեռ այդ գյուղը հիշում է Թովմա Արծրունին, որից է անշուշտ վերցրել վիպասանը:

⁹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 320 – 322:

¹⁰ Տես նույն տեղում, էջ 334:

Սևան ամրոցը¹¹: Ըստ Թովմա Արծրունու, Դերենիկն այդպիսով կամենում էր Աշոտ կյուրապաղատի փոխարեն Տարոնի (և հայոց) իշխան («իշխան Տարունոյ որ ասի Հայոց իշխան») կարգել տալ իր քույր Մարիամի ամուսնուն՝ նույն Աշոտի եղբորը Դավթին: Հարկավ, Դերենիկ Արծրունին իր զորագնդերը շարժեց դեպի Տարոն, գրավեց այն, ապա Մուհամմադ իբն Խալիդ ոստիկանից խնդրեց Դավթին հաստատել Տարոնի իշխան: Այդ խնդրանքը կատարվեց¹²: Այս փաստն անշուշտ, վկայում է Դերենիկի աճող զորության մասին: Այն չէր կարող չանհանգստացնել իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն, քանի որ Դերենիկի կամքը կատարելուց հետո ոստիկանը կարող էր ազատորեն գործել Աշոտ իշխանաց իշխանի դեմ, ապահոված լինելով Արծրունիների չեզոքությունը: Հարկավ, նույն տարում 878թ. (այդ տարում է նա ոստիկան եղել) Մուհամմադը կայսիկների զորակցությամբ փորձեց հարվածել Աշոտ իշխանաց իշխանին, հարձակվելով Դվինի վրա¹³: Սակայն դա ոստիկանի վերջին երգն էր, որից հետո Աշոտ Բագրատունին նրան վտարեց Հայաստանից:

Հայոց Գևորգ կաթողիկոսը փորձեց միջամտել և ազատ արձակել տալ կալանակյաց Աշոտ կյուրապաղատին, անձամբ մեկնելով Վասպուրական Դերենիկի մոտ: Սակայն վերջինս չանսաց հայոց հայրապետին¹⁴: Աշոտ կյուրապաղատին հաջողվեց Հասանի և Դերենիկի միջև թշնամություն ձգել: Հասանը կեղծեց հիվանդություն, նրան տեսակցության մեկնած Դերենիկը կալանվեց Հասանի և նրա մարդկանց կողմից, իսկ Աշոտ կյուրապաղատն ազատ արձակվեց¹⁵: Այդ պահին Աշոտ իշխանաց իշխանը պատերազմում էր կայսիկների դեմ, պաշարել էր Մանազկերտը: Լսելով Դերենիկի կալանվելու մասին, նա թողեց քաղաքի պաշարումը և Գուրգեն Ապուպելճի, կաթողիկոսի և ուրիշների հետ աճապարեց Վասպուրական, բանակեց Սևան բերդի մոտ և Հասանից պահանջեց ազատ

¹¹ Նույն տեղում, էջ 342:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 344:

¹⁴ Նույն տեղում, էջ 346:

¹⁵ Նույն տեղում, էջ 346 – 348:

արծակել իր փեսա Դերենիկին: Գևորգ կաթողիկոսի միջնորդությամբ Դերենիկն ազատ արծակվեց, Հասանի մոտ պատանդ թողնելով իր ավագ որդուն Գագիկին: Սակայն Դերենիկը չհանդուրժելով Հասանի կատարածը, գրավեց նրա Սևան բերդը գավառով հանդերձ և Հասանին արգելեց Նկան բերդում: Վերջինիս հաջողվեց ազատվել բանտարգելությունից: Հասանը Դերենիկին իրազեկեց, որ Գագիկ Ապունրվան Արծրունին ամրացել է ճահուկ ամրոցում և դավեր է նյութում Դերենիկի դեմ: Վերջինս կալանքից ազատ արծակելով Հասանին, ուղարկեց Ապունրվանի մոտ: Հասանը մթության քողի տակ հանկարծակի իր մարդկանցով վրա հասավ և կապանքների մեջ դնելով նրան, հանձնեց Դերենիկին, որն Ապունրվանին փակել տվեց Վանում¹⁶:

Գ. ԴԵՐԵՆԻԿ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դերենիկ Արծրունին, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, իր իշխանապետության սկզբնաշրջանում իր աներոջ՝ Աշոտ Բագրատունու խրատներն ընդունում էր «հլու և զգոն մտօք», սակայն հետագայում «ոչ անսայր բանի խրատու աներոյ իւրոյ»¹: Այս խոսքերից պետք է հետևեցնել, որ քանի դեռ Դերենիկը չէր զորացել, հնազանդ էր աներոջը, բայց հետզհետե նա դրսևորեց անկախ գործելակերպ, հրաժարվեց կախման մեջ լինել նրանից: Այս հանգամանքն անշուշտ, չէր կարող չզգաստացնել Աշոտ իշխանաց իշխանին: Հարկ է նշել, որ Պարտավի Յամանիկ ամիրան, Հայաստանից Մուհամմադ ոստիկանի վտարվելուց հետո քսությամբ ջանաց սեպ խրել Դերենիկ Արծրունու և Աշոտ Բագրատունու միջև: Նա «զրեր առ Աշոտ զԴերանկէն՝ լի ապիրատութեամբ խորիել վասն Աշոտի: Եւ արար՝ մինչ ճեղքեաց խզեաց զմիաբանութիւնն Հայոց»², – վկայում է Արծրունյաց պատմիչը: Յամանիկն այս քայլին դիմեց, քանի որ ոստիկանի վտարումից հետո «զօրհասն ի վերայ

¹⁶ Նույն տեղում, էջ 350:

¹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 135 – 136:

² Թովմա Արծրունի և Անանու, էջ 350:

իւր համարեցաւ տեսանել»։ Յետևաբար, նա երկյուղուն էր, որ Աշոտ Բագրատունին հաշվեհարդար կարող է տեսնել նաև իրեն հետ, ուստի «սկսաւ ոգորել եղջիւր ածել ի վերայ Աշոտի...»³։ Ստեփաննոս Օրբելյանը գրում է, որ Դերենիկ Արծրունին մյուս հայ նախարարների հետ խալիֆայից խնդրել է Աշոտ Բագրատունուն ճանաչել հայոց թագավոր⁴։ Դա հավանաբար, տեղի է ունեցել Սուհամնադ ոստիկանի հեռանալուց հետո։ Հովհաննես Դրասխանակերտցին և Վարդան Արևելցին վկայում են, որ հայ նախարարները նման խնդրանքով դիմել են խալիֆային Հիսե (Իսա) ոստիկանի միջոցով⁵։ Այս փաստը համարվել է անհամաժամանակություն, քանի որ Հիսեն ոստիկան է եղել 870 – 875 թվականներին⁶։ Բայց հնարավոր է, որ Արմինիայի վերջին ոստիկանի վտարումից հետո հայ իշխանները 883 կամ 884թ. այդ խնդրանքով դիմել են հենց Հիսեին, իբրև իրենց վաղածանոթ և խալիֆայի վստահությունը վայելող պաշտոնյայի։ Հավանաբար Դերենիկի և Աշոտ Բագրատունու հարաբերությունները սրվել են այդ անցքից հետո։

Դերենիկ Արծրունու կացությունը բարդանում էր նաև նրանով, որ նա գրավել էր Հեր և Ջարևանդ գավառները⁷, որոնց մինչ այդ իշխում էր Ատրպատականի ամիրան⁸։ Հերի և Ջարևանդի մահմեդական կառավարիչները թեև առերևույթ ստիպված էին հնազանդել Դերենիկին, սակայն «սիրտը իւրեանց հեռացեալք մեկուսի էին ի նմանէ», – գրում է պատմագիրը⁹։ Դերենիկի հանդեպ թշնամություն էր տածում նաև Գագիկ Ապունրվանը, որին, ինչպես վերը նշվեց, Վանում փակել էր տվել Դերենիկը։ Խորամանկ Ապունրվանը կարողացավ շահել Դերենիկի վստահությունը, նրան զգուշացնելով դավի մասին¹⁰։ Թովմա

³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 350:

⁴ Ստեփաննոս Օրբելյան, *Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, Լէ, էջ 175:*

⁵ *Տես* Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 138 – 139, Վարդան, էջ 85:

⁶ I. Markwart, *Sudarmemen*, s. 325.

⁷ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 140 – 141:

⁸ I. Marquart, *Eranšahr*, s. 109.

⁹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 141:

¹⁰ *Պատմութիւն Անանուն գրուցագրի, Կարծեցյալ Շապուհ, աշխ., Մ. Դարբինյանի, Երևան, 1971, էջ 167:*

Արծրունին գրում է, որ երբ Դերենիկը մեկնեց իր ծնեռոց Մառական ավան (որտեղ կարող էր հասնել Զեր գավառով), ազատագործից փորձեցին ետ պահել նրան այդ քայլից, «քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտ իշխանաց իշխանի»: Ըստ այդմ Աշոտ իշխանաց իշխանը դավ էր նյութել Դերենիկի դեմ: Մինչդեռ Զովհաննես Դրասխանակերտցին չի ակնարկում այդ մասին, այլ նշում է, որ երբ Դերենիկը «յաւուրս աշնայնոյն... չուէր գնայր գկողմամբք Զերայ ի հանդիպումն գլխաւորի քաղաքին», վերջինս ծածկաբար դավադիր գինյալներին «թագուցանէր ի խոխոմս յայգեստանին»: Ապա ամեն ինչ ընթացավ ըստ Զերի քաղաքագլխի հղացած ծրագրի: Դարանամուտ գինվորները «ի թիկանց կուսէ իշխանին» հարձակվեցին ու սրախողխող արեցին Դերենիկին¹¹: Այդ արյունոտ ոճիրը մտահղացվել էր «ի բազում աւուրց»¹²:

Կարծեցյալ Շապուհը Դերենիկի սպանությունը ներկայացնում է ընտանեկան հողի վրա: Իբր թե Դերենիկը սիրահետում էր Զերի քաղաքագլխի քրոջը՝ Քուլինարին: Այդ մասին վերջինիս եղբայրը տեղեկացնում է հայոց թագավորին, որը մամակով Դերենիկին պարսավում է նրա սիրային կապերի համար: Սակայն Դերենիկի ընթոստ պատասխանը թագավորին ստիպում է Զերի քաղաքագլխին դրդել նյութելու այդ ոճիրը¹³: Այս պատմությունը թեև ունի վիպական երանգավորում, բայց գուրկ չէ իրական հետմախորքից¹⁴, այն է՝ Դերենիկի և Աշոտ իշխանաց իշխանի միջև հետզհետե խորացող հակասությունների առկայության փաստից: Ուշագրավ է, որ Դերենիկի սպանությունից հետո Վասպուրական ժամանեց Աշոտ իշխանաց իշխանի որդի Շապուհը, որը Գագիկ Ապունրվանի աներն էր և նրան կարգեց Վասպուրականի կառավարիչ¹⁵, մինչդեռ, ինչպես տեսանք, Ապունրվանը ևս հաշտ չէր Դերենիկի հետ: Հատ-

¹¹ Զովհաննես Դրասխանակերտցի, էջ 141:

¹² Թովմա Արծրունի և Անանուն, էջ 352:

¹³ Անանուն գրուցագիր, էջ 163 – 165:

¹⁴ Գմտ. Վ.Սելիքյան, Վասպուրականի մեծ իշխան Դերենիկի սպանության պարագան («Անդաստան», Գ, Փարիզ, 1953, էջ 90 – 93):

¹⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 354:

կանչական փաստ է նաև այն իրողությունը, որ Աշոտ Բագրատունին ոչ մի քայլ չձեռնարկեց Դերենիկին սպանողների դեմ, թեև Դերենիկի սպանության գույժը, ինչպես հավաստում է Անանուն պատմիչը, թանձրամած ամպի պես «տարածեցաւ ի վերայ Յայաստանեայցս, մանաւանդ ի վերայ բաժրագոյն և սեփական Վասպուրականն կոչեցեալ նահանգի»¹⁶: Պատմագիրը նկարագել ձևով է ներկայացնում Դերենիկի կնոջ՝ Սոփիի՝ «արփիագեղ տիկնոջ» անել վիշտն ու ողբը¹⁷: Դերենիկի վշտակեզ տիկինը նրանից հետո ապրեց ընդամենը մեկ տարի ութ ամիս¹⁸ (ըստ Անանունի՝ յոթ ամիս)¹⁹, ինչը պետք է սրբագրել մեկ տարի և յոթ ամիս ձևով²⁰:

Թովմա Արծրունու հավաստմամբ Դերենիկն սպանվել է 885թ., 40 տարեկան հասակում²¹: Սպանությունը դրվում է 887թ.²²: Բայց այն փաստը, որ Թովմա Արծրունին Աշոտ Բագրատունուն թագավոր է կոչում Դերենիկի սպանությունից հետո, գալիս է ապացուցելու, որ Դերենիկը եղերամահ է արվել 885 թվականին:

Դերենիկի օրոք Արծրունյաց իշխանապետությունը մեծ վերելք ապրեց, դուրս գալով քաղաքական նեղ հորիզոններից: Մեծ էր նրա պատմական կշիռը նաև օտարների մոտ: Արաբ մատենագիրները Դերենիկի որդիներին հիշում էին հոր անունով՝ «Իբն ալ Դարամի»:

7. ԳԱԳԻԿ ԱՊՈՒՄՐՎԱՆԻ ԴԱՎԱԴԻՐ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Դերենիկ Արծրունու սպանությունից հետո հայոց թագավոր դարձած Աշոտ I Բագրատունին իր որդու՝ Շապուհի միջոցով Վասպուրականի իշխանապետ հաստատեց Դերենիկի

¹⁶ Նույն տեղում (Անանուն մատենագիր, Ա, էջ 412):

¹⁷ Նույն տեղում, էջ 412 – 414:

¹⁸ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 357:

¹⁹ Նույն տեղում, էջ 418:

²⁰ N. Adontz, *Etudes Armeno-byzantines*, p. 207.

²¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 354: Պատմիչը Դերենիկի ավագ որդի Աշոտի ծնունդը դնում է 876թ. (նույն տեղում, էջ 384), նշում նաև, որ հոր սպանության պահին նա եղել է 9 տարեկան (նույն, էջ 354):

²² I. Markwart, *Südarmenien*, s. 314, 325. R. Grousset, p. 388, N. Adontz, *Etudes*, p.

անդրանիկ որդուն՝ Աշոտին, որը սակայն դեռ փոքր էր, նոր էր բոլորել նրա ինը տարին¹, ուստի նահանգի փաստական կառավարիչ կարգվեց Արծրունիների երկրորդական տոհմա-ճյուղերից մեկի պարագլուխ փառամուլ Գագիկ Ապունրվանը: Վերջինս արդեն դրսևորել էր իր անջատամետ հակումները, ուստի Վասպուրականի ազատամին դժգոհությամբ ընդունեց նրա գերակայությունը: Աշոտ I-ը ժամանեց Վասպուրական, ամրակայացնելով Ապունրվանի իշխանությունը²: Անշուշտ, վերջինիս խրախուսանքով էր, որ Աշոտը, Գագիկն ու Գուրգենը՝ Արծրունի սիրագորով եղբայրները, որ «անկշիռ վայելչոթեամբ» մեծարում էին միմյանց, Արծրունյաց իշխանության տարածքը բաժանեցին երեք մասի: Աշոտին, իբրև առաջնեկի, վերապահվեց «զգահն նախնական իշխանութեան» և բաժին հասավ «յուլովագոյն միջոցոք աշխարհիս, մինչև յամուրն Նախճաւանու»: Միջմեկ եղբորը՝ Գագիկին տրվեց Ռշտունիքը, հարակից շրջաններով, այլև ինչ նա կկարողանար ձեռք բերել զորությամբ (այդ թվում նաև Մոկքը, որը հետագայում Գագիկը միացրեց իր իշխանությանը): Վերջմեկ եղբորը՝ Գուրգենին բաժին հասավ Վասպուրականի արևելյան կողմերը՝ «յելից Աղբագոյ և որ շուրջ գնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զծեռամբ»³: Այս վկայությունից երևում է, թե որքան փոփոխական էին միջնադարյան պետական կազմավորումների սահմանները, որոնք գծողը ոչ թե միջազգային իրավունքն էր, այլ սուրը, զորաբազուկ ուժը:

Թովմա Արծրունին այս բաժանումը հիշում է Դվինի՝ 893թ. երկրաշարժից երկու տարի հետո կատարված դեպքերի ժամանակ, այսինքն 895թ.⁴, երբ Աշոտ Արծրունին արդեն բոլորել էր իր 19 տարին, հետևաբար, առանց Ապունրվանի հովանավորության կարող էր իրականացնել գահերեցի իշխանությունը: Սակայն Արծրունյաց իշխանապետության մեջ

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 338:

² Նույն տեղում, էջ 354 – 356:

³ Նույն տեղում, էջ 360:

⁴ Նույն տեղում, էջ 358 – 360:

Ապումրվանն արդեն սարդոստայն էր հյուսել, խորամանկությամբ իր կողմը գրավելով շատ իշխանների, նրանց շնորհելով գահեր ու պատիվներ⁵: Նա պատրվակելով Արծրունի եղբայրների «մանկահասակությունը», գրավեց Վասպուրականի ամրոցները՝ Նկանը, Կոտորը, Սևանը, իսկ մյուս բերդերի տերերին «պարզևս և պատիւս օրըստօրէ բաշխէր», ջանալով այդ կերպ նրանց զցել իր ազդեցության տակ, հարուցելով շատերի խուլ ընդդիմությունը: Ստեղծված կացությունից օգուտ քաղեց Ատրպատականի Ափշին ամիրան, որը նպատակադրվել էր մասնատել Հայաստանը և ջլատել նրա զորությունը: Նա Աշոտ Արծրունուն առաջարկեց հպատակվել իրեն, ինչին Աշոտն ստիպված էր համաձայնել, քանի որ մերժելու դեպքում Վասպուրականը կենթարկվեր նրա հարձակմանը⁶: Չկամենալով վաստակել նոր և ախարկու հակառակորդ, թերևս նաև Ապումրվանին չեզոքացնելու հույսով, Աշոտ Արծրունին մեկնեց Ափշինի մոտ⁷: Հայոց թագավոր Սմբատ I Բագրատունին խոցվեց դրանից և չվարանեց. Աշոտ Արծրունուն ետ պահել այդ վտանգավոր քայլից: Սակայն նրա հորդորները ներգործություն չունեցան, ուստի նա դիմեց վճռական միջոցի, Ապուլպելճի որդի Գուրգենին և Ապումրվանին, իբրև Արծրունի իշխանների արտոնելով տիրել Արծրունյաց իշխանությունը: Վերջիններս առանց վարանելու ջանացին զենքով իրականացնել իրենց վերապահված իրավունքը: Ապումրվանն առաջին հարվածն ուղղեց Արծրունյաց քաղաքական կենտրոն Վան քաղաքի վրա, որը պաշտպանում էր Աշոտ Արծրունու կնոջ՝ Սեդայի (Ապումրվանի դստեր)⁸ և Ակեացի տոհմի քաջարի իշխանների գլխավորած զորագունդը: Ապումրվանին թեև հաջողվեց գրավել Վանը, սակայն փոքր-ինչ հետո Աշոտ Արծրունին Ափշինի օգնական զորքով վերագրավեց այն⁹:

Գուրգեն Ապուլպելճը նույնպես պատրաստվեց գրավել

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 354:

⁶ Տես նույն տեղում, էջ 360:

⁷ Նույն տեղում, էջ 362:

⁸ Նույն տեղում, էջ 419:

⁹ Նույն տեղում, էջ 362:

«զմասն աշխարհին», մանավանդ Ռշտունիքի Ոստանը, «որ էր տեղի սպանման հոր իւրոյ»¹⁰: Ապունրվանը Աշոտ Արծրունուն հանձնեց, որ իբր իր գործողությունները նպատակ ունեն թույլ չտալ Գուրգենին տիրանալու Արծրունյաց իշխանության ամրոցներին և իրեն ենթարկելու Արծրունիների ազատագործը: Հեզաբարո Աշոտը անսաց խորամանկ աներոջը և զորքը շարժեց Գուրգենի դեմ, բայց բախում տեղի չունեցավ: Կողմերը հաշտվեցին, և Գուրգենը մեկնեց «յաշխարհն իւր յամուրն Կանգուար», իմա՝ Անձևացյաց գավառ: Շատ չանցած, գրում է Թովմա Արծրունին, սանձակոտոր ծին վար գցելով սպանեց Գուրգեն Ապուպելճին՝ «զքաջարանցն զմեծն տերանց զքաջ զօրաւարն և զզօրագլուխն Հայոց մեծաց»¹¹: Գուրգենի իշխանությունը ժառանգեց որդին՝ Ատոնը¹²:

Գուրգենի մահը արձակեց Ապունրվանի ձեռքերը: Նա վճռեց ասպարեզից հեռացնել Արծրունի եղբայրներին և դառնալ Վասպուրականի լիիրավ տեր: Խորամանկությամբ նա ծուղակը գցեց Արծրունի եղբայրներին, որոնք միամտորեն մեկնեցին Ապունրվանի մոտ՝ արձագանքելով նրա հրավերքին: Ապունրվանը նրանց դրեց կապանքների մեջ և զցեց բանտ, Աշոտին՝ Նկան, Գագիկին՝ Սևան, Գուրգենին՝ Կոտոր ամրոցները¹³: Անանուն պատմիչի մոտ Աշոտն ու Գուրգենը զգվում են Նկան, իսկ Գագիկը՝ Շամիրամ բերդը¹⁴: Բայց նույնի հաղորդման համաձայն հետագայում Գագիկ Արծրունին ազատվելով բանտից, Աշոտին հանում է Կոտոր, Գուրգենին Աշինոտ ամրոցներից¹⁵: Ըստ երևույթին բանտից Գագիկի փախուստից հետո Ապունրվանը Աշոտին ու Գուրգենին տեղափոխել է հիշյալ ամրոցներ՝ փախուստը կանխելու մտահոգությամբ: Ապունրվանին զորժակցում էր Սևանի տեր Հասանը, բայց Վասպուրականի իշխանների մեծ մասը հրաժարվեց ճանաչել Ապունրվանի

¹⁰ Նույն տեղում: Այս դեպքը հավանաբար տեղի է ունեցել 895 թվականին (հմմտ. J. Laurent. *Etudes*, p. 48):

¹¹ Նույն տեղում, էջ 364:

¹² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 177:

¹³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 364:

¹⁴ Նույն տեղում, էջ 418:

¹⁵ Նույն տեղում, էջ 420:

գերակայությունը և մեկնեց Ատոմի՝ Անձևացյաց իշխանի (Գուրգեն Ապուպելճի որդու) մոտ: Նույն ժամանակ Վասպուրական ժամանած Շապուհը (Սմբատ I-ի եղբայրը) Ապուրվանին՝ իր դստեր ամուսնուն հաստատեց «իշխան Վասպուրական տէրութեան»¹⁶, ուստի Ատոմը չարձագանքեց իրեն ապավինած իշխաններին՝ «վասն թագաւորին ակնածութեան»¹⁷: Վասպուրականի իշխանները ստիպված հեռացան Միջագետքի ամիրա Ահմադ Շայբանիի մոտ՝ Ամիդ քաղաք: Այս ամիրան Արզնի Ջուրարիկ ցեղի (որը խնամությամբ կապված էր Արծրունիների և Բագրատունիների հետ)¹⁸ իշխանությունը վերացնելուց հետո զավթեց նաև Տարոնը և կամենում էր «ամիրայապետել ամենայն Հայոց»¹⁹: Ապուրվանն այստեղ էլ դրսևորեց իր նենգադրուժ էությունը:

*Ե. ԳԱԳԻԿ ԱՊՈՒՄՐՎԱՆԻ
ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԱԽՃԱՆԸ*

Կամենալով ապահովել իր իշխանության պահպանումը Միջագետքի ամիրայի հնարավոր ոտնձգություններից, ինչպես նաև նկատի առնելով վերջինիս հետ Վասպուրականի որոշ ազատների մերժեցումը, Ապուրվանը ծածուկ հարաբերությունների մեջ մտավ Ահմադ Շայբանիի հետ¹, առերևույթ պահպանելով մերձակցությունը հայոց թագավորի հետ: Այդպիսով վատահամբավ այդ իշխանը հույս էր ակնկալում հակամարտող կողմերի միջև պայքարի ցանկացած ելքի պարագայում պահպանել իր դիրքերը Արծրունյաց իշխանապետությունում: Նա փաստորեն պատրաստ էր ուզած գնով վաճառել հայոց թագավորի կողմից իրեն հանդեպ ցուցաբերած վստահությունը: Ապուրվանը վստահ չէր Ահմադի դեմ հայոց զորուժի հաղթանակի նկատմամբ: Նրա երեսպաշտությունը Սմբատ I-ի հանդեպ քողագերծվեց հայոց և Ահմադ ամիրայի զորքերի միջև

¹⁶ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 364:

¹⁷ Նույն տեղում, էջ 364 – 366:

¹⁸ Նույն տեղում, էջ 176, Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 173:

¹⁹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 366:

¹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 174:

տեղի ունեցած ընդհարման ժամանակ: Պատերազմը կողմերի միջև անխուսափելի դարձավ Ահմադի կողմից Տարոնը զավթելուց հետո, ըստ երևույթին դրա հաջորդ տարում: Տարոնը նա գրավեց հավանաբար 895թ.²: Հաջորդ տարի կատարվեց Ապունրվանի սպանությունը:

Հայոց զորքը ռազմի ելավ Բագրատունիների իրավունքները ոտնահարող ամիրայի դեմ: Սմբատ I-ը հասու չէր Ապունրվանի նենգադավ ծրագրերին, ուստի առաջնորդվելով նրա, իբրև հարավային Հայաստանի տեղագրությանը քաջածանոթ (գոնե իրեն այդպես էր թվում) իշխանի խորհուրդներով, զորքը շարժեց Ապահունիք գավառով, ապա Բզնունիքով իջավ հարավ և բանակեց Արևելյան Տիգրիսի վտակ Տատիկի ափին, Հողցից ոչ հեռու ընկած Թուխ գյուղի մերձակայքում³: Վասպուրականի այն ազատները, ովքեր չտանելով Ապունրվանի դավադիր ձեռնարկումները, ժամանել էին Ահմադ ամիրայի մոտ, տեղեկանալով Սմբատ I-ի զորքի արշավանքի մասին, ի հեճուկս Ապունրվանի, զինակցեցին հայոց թագավորին ընդդեմ ռազմաշունչ ամիրայի և քաջաբար պատերազմեցին նրա հրոսակների դեմ⁴:

Հողց գյուղաքաղաքը իր պաշտպանական հույժ կարևոր դիրքի շնորհիվ փակում էր Միջագետքից օտար ցեղերի մուտքը Հայկական լեռնաշխարհ: Ըստ երևույթին նրա այդ դիրքը պատճառ դարձավ, որպեսզի հայոց զորքը բանակի հենց նրա մատույցներում: Գակատամարտին մասնակցեց անձամբ Սմբատ թագավորը, որը թեև «բազում արիության մահատակութեան ցուցեալ»⁵, սակայն մարտի ելքը կանխավճռված էր Գագիկ Ապունրվանի դավաճանության պատճառով: Ապունրվանը, ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, կանխորեն Ահմադի հետ պայմանավորվել էր հայոց զորքի վրա հարձակվելու շուրջ և «ինքն առաջնորդի բազմութեան զօրացն ընդ լեռնակողմն՝ անջրդի ապառաժ մացառախիտ քարաժայռ» ու

² N. Adontz, *Etudes*, p. 211.

³ Հովհաննես Դրասխանակերտցի, *էջ 174 – 175*, Թովմա Արժրունի և Անանուն, *էջ 366*:

⁴ Թովմա Արժրունի և Անանուն, *էջ 368*:

⁵ *Նույն տեղում*:

ջրագուրկ ճանապարհով: Հայ զորայիններից շատերը «ի ծարաւս իւրեանց կթուցեալք» մահանում էին: Հոգնատանջ ու «թալկացեալ... հագիւ հասանէին ի ջուր ինչ գեղջ մի Թուղխ անուն»⁶: Ապոււրվանի խորհրդով առաւոտյան աղջամուղջին Ահմադի զորքը նետվեց հայոց բանակի վրա, հանկարծակի բերելով նրան: Բայց հայ ռազմիկները չընկրկեցին և արագ հագնելով զենք ու զրահ, նստեցին ծիերն ու խոյացան թշնամիների վրա, սասանելով նրանց շարքերը: Ապոււրվանը կարողացավ իրարանցում զգել հայոց զորքի մեջ, որը դիմեց անկանոն մահանջի: Սմբատ արքան լքելով մարտադաշտը, ստիպված հեռացավ Բագրևանդ⁷:

Ճակատամարտից առաջ Ապոււրվանը, հավանաբար, անսալով Սմբատ I-ի հորդորներին, նաև Արծրունիների համակրանքը շահելու, նրանց զգոնությունը բթացնելու միտումով բանտից ազատ էր արձակել Գագիկ Արծրունուն, թերևս հուսալով, որ նա կգործակցի իրեն: Բայց Գագիկը լավ էր ճանաչում Ապոււրվանին և Թուխի մարտից հետո մտահոգացավ սպանել դավաճանին⁸: Հաշվեհարդարին անհաղորդ չէր և, անշուշտ, հավանություն տվեց Սմբատ I-ը: Թովմա Արծրունու հաղորդումից պարզ է դառնում, որ թագավորը Բագրևանդ է ժամանել, անցնելով Արծրունյաց իշխանանիստ Վան քաղաքով, մինչև այնտեղ Ապոււրվանի ժամանելը⁹: Գուցե Վանում թագավորը հանդիպել է Գագիկ Արծրունուն և միասին հղացել են Ապոււրվանի սպանությունը: Եվ երբ վերջինս Վան ժամանեց «զկնի թագավորին», թերևս հուսալով այս անգամ ևս մոլորեցնել նրան, Գագիկ Արծրունու մտահոգացումը «հաստատապէս կատարվեց»: Երբ Սմբատ I-ը տեղեկացավ սպանությունն ի կատար ածելու մասին, ասաց, որ «արժանապէս այն գործ նոյն գործեցաւ»¹⁰: Գագիկը բանտից ազատեց եղբայրներին:

Անանուն պատմիչի հավաստմամբ, Ապոււրվանի

⁶ Հովհաննէս Դրասխանակերտցի, էջ 175:

⁷ Նուն տեղում, էջ 176:

⁸ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 368:

⁹ Տես նույն տեղում, էջ 368:

¹⁰ Նույն տեղում, էջ 370:

սպանության ժամանակ Գագիկ Արծրունին դեռևս 15 տարեկան էլ չկար¹¹: Պատմիչի «ամաց ժե» դարձվածը պետք է սրբագրել «ամաց ժե» ձևով¹², հետևաբար, սպանության պահին Գագիկ Արծրունին արդեն բոլորում էր իր 17-րդ տարին: Սմբատ I-ը պատշաճը հատուցեց նրա սխրանքի համար, ճանաչելով Գագիկին «հայոց զորավար», իմա՝ Բագրատունյաց թագավորության սպարապետ: Աշոտ Արծրունուն թագավորը վերահաստատեց Վասպուրականի մեծ իշխանի պաշտոնում, իսկ մյուս եղբորը՝ Գուրգենին շնորհեց «զպատիւ մարզպանութեան... ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց»¹³, անշուշտ կանենալով եղբայրներին կապել իր արքունիքի հետ: Մինչդեռ Անանունը զանց է առնում այս փաստը, նշելով միայն, որ Գագիկ Արծրունին բանտից ազատելով եղբայրներին, «տայ զմատանի ի ձեռս Աշոտոյ և տիրեցուցանէ սեփական ժառանգութեանն հանդերձ իշխանական ճոխութեամբ»¹⁴: Տվյալ դեպքում թովմա Արծրունին ավելի ստուգախոս է, քան Անանունը, որը ջանում է ամեն պատեհ առիթով պանծացնել իր գործի պատվիրատու և արդեն թագ կրող Գագիկ Արծրունուն, նրան հանդես բերելով իբրև ավագ եղբորը Արծրունյաց իշխանապետ կարգողի դերում, ինչն իհարկե, հավաստի չէ, քանի որ վերջինս ցկյանս ընդունում էր Սմբատ I-ի գերակայությունը, որից էր օժտվել Արծրունյաց գահերեցի իրավունքներով: Բնական է, որ Աշոտի եղբայրը իրենից փոքր լինելով, նման իրավագործություն չէր կարող ունենալ: Հովհաննես Դրասխանակերտցին չի նշում Գագիկին «հայոց զորավար» կարգելու մասին, բայց Գուրգեն Արծրունուն մարզպան է, հիշում անգամ Գագիկի թագավորելու տարում՝ 908թ.¹⁵: Սակայն Արծրունիների եղբայրներին տրված կոչումները սոսկ պատվատիտղոսներ էին, որոնք վերացվեցին 908թ. հետո, երբ Արծրունիները հրաժարվեցին Սմբատ I-ի հետ ունեցած համադաշինքից:

¹¹ *Նույն տեղում, էջ 420:*

¹² I. Markwart, *Südarmenien. s. 323*

¹³ *Թովմա Արծրունի և Անանուն, էջ 370:*

¹⁴ *Նույն տեղում, էջ 420:*

¹⁵ *Տես Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 211:*

2. ԱՓՇԻՆ ԱՍԻՐԱՅԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ: ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԵՎ ՍՄԲԱՏ Ի-Ի ՁԻՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Աշոտ Արծրունու իշխանապետության տարիներին սերտ համագործակցությունը շարունակվեց հայոց թագավորի հետ: Այն կայուն երաշխիք էր Հայաստանի անվտանգության պահպանման համար: Թեև 898թ. վախճանվեց Միջագետքի Ահմադ ամիրան¹, սակայն Հայաստանի դեմ դավեր էր լարում Ատրպատականի Սաջյան ամիրա Ափշինը, որը ջանում էր Արծրունիներին ստիպել «հատուցանել ծառայական սպասաւորութիւնս»²: Նա կարողացավ Արծրունիներին հակել իր կողմը: Դրանում ըստ երևույթին էական դեր խաղաց այն փաստը, որ 898թ. խալիֆան Ափշինին ճանաչեց Ատրպատականի և Հայաստանի կառավարիչ³ (Արմինիա ոստիկանությունը վերացված էր): Հավանաբար նույն տարում էր, որ Ափշինը հարձակվեց Բագրատունյաց թագավորության վրա⁴: Ափշինը Աշոտ Արծրունուց պահանջեց զորակցել իրեն ընդդեմ Սմբատ Ի-ի, սակայն Աշոտը մերժեց այդ առաջարկը, պատրվակելով Ապունրվանի դեմ Ափշինի կողմից Արծրունիներին չօժանդակելու փաստը, ապա նա մեկնեց քեռու՝ Սմբատ Ի-ի մոտ՝ «սիրով խաղաղութեամբ»⁵: Հետևաբար, Աշոտ Արծրունին պահպանել է դաշնությունը Բագրատունյաց արքայի հետ, բնականաբար հարուցելով Ափշինի թշնամանքը, ի հետևանս որի, վերջինս հարձակվեց նաև Արծրունյաց իշխանապետության վրա, գրավեց Վանը: Աշոտ Արծրունին եղբայրների հետ զորքով անրացավ Կործայքի Որսիրանք գավառում⁶: Ըստ Թովմա Արծրունու, Աշոտ Արծրունին եղբայրների հետ խույս են տվել «զկողմամբքն Փոքր Աղբագոյ, մերձ առ յամուրսն Ջղմար և

¹ I.Markwart. *Sudarmenien*, s. 324, N.Adontz, *Etudes*, p. 213.

² Թովմա Արծրունի և Անանուն, III, ԻԵ, էջ 370:

³ Տես Իբն ալ-Ասիր. *թարգմ. և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 172:*

⁴ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 178:

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, (Անանուն, 9), էջ 422 – 424:

⁶ Նույն տեղում, էջ 424:

Արինգ»⁷ : Փոքր Աղբակին հարավից սահմանակից էր Որսիրանք գավառը: Ափշինի հրոսակների կողմից Վասպուրականը գրավելուց հետո Ափշինն այնտեղ կառավարիչ նշանակեց իսլամացած մի հույն ներքինու՝ Սափիին, որին սակայն չհաջողվեց ծնկի բերել Արծրունիներին: Ափշինը Յադամակերտից իր Յյուսրանունով զորապետին «զօրօք բազմօք» նետեց Աշոտ Արծրունու դեմ, բայց թշնամին պարտվեց ու նահանջեց «մեծաւ ամօթով, ոչ ինչ կարացեալ ստնանել նոցա վասն տեղւոյն ամրութեան և զօրացն քաջամարտիկ լինելոյ», – վկայում է Անանուն պատմիչը⁸: Այդուհանդերձ Արծրունյաց տիրույթները դեռևս մնացին ոսոխի ձեռքում: Վանում և Ոստանում նստած էին Ափշինի դրածոները⁹: Սակայն կարճ տևեց նրանց «վերակացությունը»: Նույն՝ 898թ. Ափշինի ստորադրյալներից Վասիֆը (Յովսեփ) ապստամբեց և գրավեց Միջագետքը: Ափշինն ստիպված եղավ Սափիին Վանից կանչել իր մոտ՝ Մարաղա, որպեսզի նրա ուժերն օգտագործի խռովարար ամիրայի դեմ: Նույն ժամանակ Ափշինի բանակում մուլեզնոդ համաճարակը վերջ տվեց թե նրան և թե նրա զորքին, և «մեր աշխարհը ոգի առավ, խաղաղվեց», – գրում է Արծրունի պատմագիրը¹⁰:

Ափշինի խժոժություններն ավելի մերձեցրին Արծրունիներին և Բագրատունիներին: Եվ երբ Բագրատունյաց թագավորության դեմ ոտնձգություններ կատարեց կայսիկ ցեղը, Սմբատ I-ը Արծրունյաց Աշոտ իշխանի և նրան ենթակա Մոկաց և Անձևացյաց նախարարների զորակցությամբ պարտության մատնեց կայսիկներին¹¹: Աշոտ Արծրունու միջնորդությամբ հայոց թագավորը ընդառաջեց կայսիկների աղերսանքին և նրանց հետ կնքեց պայմանագիր, ենթարկելով իր գերիշխանությանը¹²: Ընդամին Սմբատ I-ին զորակցողների մեջ չի հիշվում

⁷ Նույն տեղում, էջ 372:

⁸ Տես նույն տեղում, էջ 426:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, էջ 376:

¹¹ Նույն տեղում, էջ 382:

¹² Նույն տեղում: Ռ. Գրուսեի կարծիքով Աշոտ Արծրունին կողմ չէր Մանազկերտում Սմբատ I-ի հաստատվելուն, ուստի միջնորդեց կայսիկների համար (R. Grousset, p. 420):

Սյունիքի իշխանը: Հարկ է նշել, որ կայսիկների դեմ տարած հաղթանակից հետո Սմբատ I-ը Նախճավան քաղաքը շնորհեց Արծրունիներին: Ըստ Անանունի, այդ հաղթությունից հետո Աշոտ Արծրունին «երթայ ի քաղաքն Նախճաւան զոր ընդ իւրումն կարգեալ էր իշխանութեամբ»¹³: Կայսիկների դեմ տարած հաղթանակն ըստ Թովմա Արծրունու, տեղի ունեցավ Հայոց ՅԾԱ (351) թվականին¹⁴, իմա՝ 902թ.: Հաջորդ տարի Սյունյաց իշխանը հրաժարվեց հայոց թագավորին հնազանդվելուց և Ատրպատականի Յուսուփ ամիրային խոստացավ հարկ տալ, թերևս հույս ուներ նրա օգնությամբ վերադարձնել Նախճավանը, որը սակայն Արծրունիները համարում էին իրենց հայրենական սեփականությունը: Սյունյաց Աշոտ իշխանը 10 հազարանոց զորքը շարժեց Վայոց ձոր, մերձենալով Նախճավանին, բայց ստիպված ետ ընկրկեց, իր առջևում տեսնելով Արծրունյաց և հայոց թագավորի միացյալ զորագնդերը¹⁵: Աշոտ Արծրունու հորդորով Սյունիքի գահերեց Աշոտը հնազանդություն հայտնեց Սմբատ I-ին¹⁶: Աշոտ Արծրունու դերը մեծ էր Հայաստանում: Փաստորեն նա համարվում էր առաջինը Բագրատունյաց թագավորից հետո, ուստի Արծրունյաց պատմիչը Աշոտ Արծրունուն անվանում է «բարձրագահ ճոխացյալ վսեմապետ», որը բոլոր հայաստանցիների մեջ նստում էր առաջին գահաթոռին¹⁷: Սակայն տիրասեր Արծրունին երկար չապրեց, մոտ 904թ. նա վախճանվեց Նախճավանում, 29 տարեկան հասակում: Կինը՝ Սեդան ամուսնու դին ամփոփել տվեց Արծրունիների տոհմական դամբանատեղում՝ Աղբակի Օսի գյուղի Ս.Խաչ վանքում¹⁸:

¹³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 429:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 382:

¹⁶ Նույն տեղում. էջ 382 – 384:

¹⁷ Նույն տեղում, էջ 384:

¹⁸ Նույն տեղում:

ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՏԻՐԱԿԱԼ

Ա. ԳԱԳԻԿԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Աշոտ Արծրունուն հաջորդեց միջնեկ եղբայր Գագիկը՝ խորատես ու կարողունակ իշխանը, որի օրոք Արծրունիները այնքան զորացան, որ ցուցահանեցին ինքնուրույնանալու բացորոշ միտումներ: Գագիկ Արծրունին առաջին հերթին ձեռնամուխ եղավ խռովարար իշխանների հնազանդեցմանը: Առաջին հարվածը նա ուղղեց Կորճայք նահանգի ճահուկ գավառի տեր Շապուհի և նույն գավառի մեկ այլ իշխանի՝ Գրիգոր Ապուհամզայի (Վասակի որդու) դեմ, նախապես պաշարելով Շապուհի ճահուկ (Ագարակ) ամրոցը: Վերջինս, որ բռնությամբ տիրացել էր ճահուկ գավառին, չդիմացավ Գագիկի զորայինների հարվածներին և «յաններձանալի ծայրից ամրոցին ստոր իջեալ անկանի առ ոտս... Գագկայ, և խնդրէ զարիւնն իւր և զիւրոյ ազգին՝ պարգևք և զինք վարձուց ծառայութեան յաւիտենականի»¹: Գագիկը նույն կերպ վարվեց նաև Գրիգոր Ապուհամզայի հետ, որն իր աներն էր²: Վերջինիս, որդիներով հանդերձ, բերեցին Գագիկի մոտ, որը գթասիրաբար զիջեց նրանց տիրույթները, հավանաբար անսալով նաև իր կնոջ հորդորներին: Հայտնի է Գագիկի կնոջ Մլքե անունը: Վերջինս համարվել է Շապուհ Բագրատունու (Գագիկի քեռու) դուստր³, կռվան ունենալով Թովմա Արծրունու մի հաղորդումը, որի համաձայն, Սմբատ I արքայի եղբայր Շապուհը 895թ. ժամանու՛

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 430:

² Նույն տեղում, էջ 432:

³ Տեն Լեո, *Երկերի ժողովածու*, II, Երևան, 1967, էջ 520, Գ. Պոստոլեան, *Զարդանկարք Աւետարանի Մլքե թագուհու, Վենետիկ, 1902*, Ս.Տեր-Ներսեսյան, Թ. Դեղեյան և ուրիշներ, *Հայկական մանրանկարչություն, Վենետիկ, 1966*, էջ 23:

է Վասպուրական և իր փեսա Գագիկին կարգում նրա կառավարիչ⁴: Սակայն պատմագիրն այստեղ նկատի ունի Գագիկ Ապունը՝ Թովմա Արծրունին և Անանունը չեն հիշում Գագիկ Արծրունու կողակցի անունը: Բայց այլուստ հայտնի է, որ վերջինս կրում էր Մլքե անունը⁵, հիշվում է նաև Թամար անվամբ⁶: Մեկ այլ ենթադրության համաձայն, Մլքեն պետք է լիներ Ափշին ամիրայի կինը և ոմն Շապուհի դուստրը⁷, ինչը սակայն չի հաստատվում սկզբնաղբյուրներով:

Աշոտ Արծրունու վախճանվելուց հետո նրա եղբայրները իրենց տիրույթները բաժանեցին միմյանց միջև: Թովմա Արծրունին պատմելով այս մասին, շեշտում է Գագիկի ու Գուրգենի համերաշխության, միմյանց զորավիզելու, հայրենաշահի ու խաղաղամետ վարքագիծը, որի շնորհիվ բարելավվեցին «զվտոթեալ և զվրդովեալ կարգս աշխարհիս... և ամենայն ուրեք ամենեցուն բնակաց աշխարհիս անդորրեալ յանհոգս և յապահովս լինել ի ներքին և յարտաքին հազմարարաց»⁸:

Եղբայրների միջև Արծրունյաց տիրույթների բաժանումը տեղի է ունեցել մոտավորապես 903թ.: Բաժանման արդյունքում Վասպուրականի հյուսիս-արևմտյան գավառները բաժին ընկան Գագիկին, իսկ հարավ-արևելյանը՝ Գուրգենին: Թովմա Արծրունին մեկառմեկ թվում է եղբայրների բաժիններում ընդգրկված տարածքները, որտեղ բացակայում են Վասպուրականի մի քանի գավառներ, այդ թվում Նախճավանն ու Գողթնը, որոնք հավանաբար, Աշոտ Արծրունու մահից հետո Սմբատ I-ը դրել էր Սյունիքի իշխանի իրավասության տակ: Բայց Գուրգենի բաժնում հիշվում են Պարսկահայք նահանգի երեք գավառներ՝ Չարեհավանը, Ըռնան և Տամբերը: Բաժանմամբ հանդերձ՝ «առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս Գագիկ»⁹, ինչը վկայում է, որ պահպանվել է Արծրունիների տոհմում հնուց

⁴ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 364:

⁵ *Տես Սայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց, Ա, Երուսաղեմ, 1966, էջ 388:*

⁶ *Սատենադարան, ծեռ, 5467, ք. 18ա, Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց Ա, Անթիլիաս, 1951, էջ 182:*

⁷ Ղ. Ալիշան, *Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 80:*

⁸ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 388:

⁹ *Նույն տեղում:*

հարատևված տանուտիրական իրավունքը, թեև նահանգի բաժանումն ինքնին խորհրդանշում էր ավատատիրական հարաբերությունների զարգացման նոր շրջափուլը, որը փաստորեն բեկման ելակետ էր դառնալու բովանդակ Վասպուրականի քաղաքական զարգացման, Արծրունիների ինքնուրույն թագավորության ստեղծման համար:

Անանունը եղբայրների միջև Արծրունյաց տիրույթների բաժանման շարժառիթ է համարում միմյանց հանդեպ նրանց տածած սերն ու երկրի բարեկարգման համար դրսևորած արարող մղումները: Ընդ որում բաժանման նախաձեռնողն էր Գագիկը, որը «որպես հայր ի վերայ որդւոյ գթայր և դռնբաց լինէր նմա հանդերձ օգնականությամբ»¹⁰: Բաժանումը նաև պետք է կատարելագործեր իշխանապետության կառավարման համակարգը:

Գագիկ Արծրունին լիաբուռն ջանքերով ձեռնամուխ եղավ նաև շինարարական աշխատանքների: Վանքեր ու եկեղեցիներ կառուցելուց զատ, նա հոգածու էր նաև պաշտպանական կառույցների շինությանը: Թովմա Արծրունու վկայությամբ նա առաջին հերթին աշխատանքներ ծավալեց Ռշտունիք և Տոսպ գավառներում, դրսևորելով Արծրունյաց իշխանապետության հարավային սահմանները պաշտպանելու, հարևան Սոկք նահանգի տերերին կախման մեջ դնելու մղումներ: Նա վերակառուցեց Ռշտունիքի Ոստան բերդաքաղաքի պարիսպները, Մահռաշտ գյուղում կառուցեց ձեռակերտ: Իսկ Արծրունիների ձմեռոց Մառական ավանում (ճուլարշուտ գավառում) Գագիկը կառուցեց «ամրական տեղի, դժուարամատչելի ասպատակող հինից», իսկ Մառականից փոքր-ինչ հարավ՝ Չորք անունով վայրում նա շուրջանակի պարսպապատեց անմատչելի մի «անձաւ, տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց»:

Գագիկ Արծրունին հատուկ ուշադրություն դարձրեց իր իշխանանիստ Վանի՝ Գովհաննես Սկիլիցեսի արտահայտությամբ՝ «Վասպուրականի մայրաքաղաքի»¹¹ կառուցապատման վրա: Նա շարունակեց հոր օրոք սկսված Վանի միջնաբերդի

¹⁰ Նույն տեղում, էջ 432:

¹¹ Գովհաննես Սկիլիցես, *թարգմ., առաջաբան և ծանոթագրութ. Գրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 161:*

(«ամրական քարանձավի»), երկու թաղամասերի շահաստանի (բուն քաղաքի) և արվարձանի մեջ կատարվող շինությունները: Միջնաբերդը վերակառուցվեց, պատվեց նոր պարիսպներով¹²: Վանում կառուցվեցին նոր եկեղեցիներ: Գագիկը ավարտեց նաև հոր սկսած պալատի շինությունը միջնաբերդում: Վան քաղաքին ջրով ապահովելու նպատակով նա անցկացրեց ջրմուղ՝ որով Վարագա լեռան ստորոտներից ջուրը հասնում էր քաղաք¹³: Օձ ձորի վերևում կառուցեց մի ձեռակերտ, որն իր անունով անվանվեց Գագկակերտ¹⁴:

Գուրգեն Արծրունին ևս որոշ շինություններ կատարեց իր բաժնում¹⁵:

*Բ. ՄՈԿՔԻ ՄԻԱՅՈՒՄԸ ԱՐԾՐՈՒՆՅԱՅ
ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ:
ՍԱՔԱՌՈՒՄՆԵՐ ՕՏԱՐ ՀՐՈՍԱԿՆԵՐԻ ԴԵՄ:
ՆԱԽՆԱՎԱՆԻ ԽՆԴԻՐԸ*

Մոկաց Բագրատունիները հրաժարվել էին Արծրունիների գերակայությունը ճանաչելուց, դադարեցրել հարկատվությունը: Գագիկը փութապես «գօր գումարեալ ասպատակեալ յերկիրն Մոկաց յաւուրս ծմերայնոյ»: Չնայած ձեռն սառնաշունչ եղանակին, Գագիկի զորքը հաղթահարեց Մոկքի լեռնոտու ղժվարանցանելի տեղանքը, «և տեարք և ազատք աշխարհին ամենայն բնակչօքն հանդերձ փախստեայ եղեալ մազապուր մնային յամրոցս բերդիցն, ոչ կարացեալ ի դիմի հարկանել հզօրին», – գրում է Անանուն պատմագիրը¹: Մոկքի գրավումը դյուրացավ շնորհիվ այն հանգամանքի, որ մինչ այդ Արծրունիներն իրենց ձեռքում էին պահում Մոկքի հարավային Ջերմածոր գավառը², որով նրանք այդ նահանգն առան աքցանի մեջ՝ Ռշտունիքի (հյուսիսային) և Ջերմածորի (հարավի) կողմից:

¹² Մատենադարան, ծեռ. 5467, ք. 10բ:

¹³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 390:

¹⁴ Նույն տեղում, էջ 396:

¹⁵ Նույն տեղում:

¹ Նույն տեղում, էջ 434:

² Նույն տեղում, էջ 432:

Իսկ արևելքում Մոկքը գոտևորում էր Արծրունիներից կախյալ Անձևացիք գավառը: Մոկքը գրավելուց հետո Գագիկը զորքը շարժեց դեպի Տուրուբերան, գրավեց Պաղա ամրոցը Երևարք գավառում, ապա իջավ հարավ՝ Աղծնիք, գրավելով Փարիուաց բերդը³, որը տեղադրվում է Ալան դերե գետի ձախափնյակում, Պիրշուս (քրդական Պիրինս, թուրք. Պյուրունուս) գյուղի տեղում⁴:

Գագիկ Արծրունին հոգ տարավ նաև Արծրունյաց իշխանապետության արևմտյան սահմանների անվտանգության մասին: Այս կողմում ռազմական կարևոր նշանակություն ուներ Ամյուկ ամրոցը, որին սակայն տիրացել էին ութմանիկները, այն վերածելով լարված որոգայթի Արծրունիների դեմ: Այն փորձեցին ազատագրել Աշոտ Արծրունին, ապա որդին՝ Դերենիկը, բայց ապարդյուն: Ամյուկը շարունակեց մնալ ութմանիկների ամուր հենակետը, որը հսկում էր Վան-Տոսպ գավառի հյուսիսային սահմանները: Ամյուկի ժայռոտ ու անմատույց հրվանդանից թշնամիները դյուրությանը կարող էին խուժել Արծրունյաց իշխանապետության սիրտը: Գագիկը զինական հնարիմացությանը ետ գրավեց Ամյուկը, Անանուն պատմիչի արտահայտությանը՝ նա «հնարեալ խորհուրդ մեծ՝ ի գիշերի գողանայ զամրոցն», ինչ՝ գրավում է հանկարծակի ու մթության քողի տակ: Ապա այն «բազում ծախսիւք և բազմագումար արուեստաւորօք յերևելիս հրաշակերտէ շինուածս: Ի ծայրից անտի գագաթանն ի խոնարհ մինչև ցեզր ծովուն լի և լի պարսպաւորէ անմերձանալի ամրութեամբ»⁵:

Հագիվ էր Գագիկն ավարտել Ամյուկի ամրակառույց շինությունները, երբ ամրոցի գրավման լուրը լսելով (անշուշտ,

³ Նույն տեղում, էջ 434:

⁴ M. Thierry, *Notes de Geographie historique sur le Vaspurakan*, p. 171.

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 400, 434: *Ամյուկը զտնվում է Վանս լճի մեջ մխրճված մեծազանգված ժայռի զագաթին: Այդ ժայռամրոցի հյուսիսային մասը ուղղահայաց ձևով իջնում է լիճը: Ամրոցի արևելյան մասը համեմատաբար ցածրադիր է: Ամյուկը զույգ կողմերից պաշտպանված է պարսպապատերով* (M. Thierry, *Notes*, p. 165): *Այժմ այդ ամրոցից կանգուն է Գագիկ Արծրունու կառուցած ամրությունների բարձրադիր մասը (տես նույն տեղում):*

ութմանիկների հրահրմամբ) «իսմայլացուց, Մարաց և Պարսից, և բոլոր Ատրպատականի» զորայինները շարժվեցին «ի վերայ քաջին Գագկայ իշխանին մեծի», երդվելով «վրէժս առնուլ քանդել աւերել գերկիրն Վասպուրական», մինչև որ կգրավեն Ամյուկը և կառնեն ութմանիկների արյան վրեժը⁶: Խառնախուժ այս զորքը գիշերով թափանցեց Վասպուրականի ճուաշ գավառ, մատնելով կոտորածի, ավերածության: Գագիկը ճուաշ գավառի տեր էր կարգել քաջարի Թադեոս իշխանին՝ Ակե գավառին իշխող տոհմից: Դիտախույզները Թադեոսին տեղեկացրին թշնամիների տեղաշարժի մասին: Նա «սակաւ զօրօք» Գերատա դաշտում գլխովին պարտության մատնեց թշնամիներին⁷:

Գուրգեն Արծրունին Կործեք նահանգի տերերից գրավեց Տամբեր, Ըռնա գավառները, այնտեղ նշանակելով իր վերակացուներին: Բայց Պարսկահայքի կողմից մի հրոսախումբ հարձակվեց Վասպուրականի վրա, թափանցեց Մարդաստան գավառ և «հանեն ընդ սուր, վարեն ի գերութիւն և առնուն աւար», ասպատակելով նաև ճուաշ, Թոռնավան, Կրճունիք և Անձևացիք գավառները: Թշնամու դեմ խոյացավ Թադևոսի եղբայր Շապուհ Ակեացին, որը «բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ», ազատեց բազմաթիվ գերիների, բայց զոհվեց մարտում, ճուաշ գավառի Գյուղիկ անունով բնակավայրում⁸:

Տեղեկանալով այս անցքերի մասին, Գուրգեն Արծրունին 1000 հոգուց բաղկացած զորաջոկատով նետվեց թշնամիների վրա, արեց ցանուցիր, հետապնդեց մինչև Ատրպատականի սահմանները⁹: Հաջորդ՝ 904թ. գարնանը Գուրգենը վերստին արշավեց Պարսկահայքի ամիրաների դեմ: 700 ռազմիկներով

⁶ Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 436:

⁷ Նույն տեղում: Այս դաշտը տեղադրվում է Արտազ գավառում՝ Մակու քաղաքի մոտերքում, վկայաբերելով Թովմա Արծրունուն (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, I, էջ 850), սակայն պատմագրի մոտ նման վկայություն չկա: Դաշտը պետք է գտնվեր ճուաշ գավառի կենտրոն Շամիրամ բերդից ոչ հեռու: Այն հիշվում է նաև Հացունյաց խաչի պատմության մեջ («Արարատ», 1888, է, էջ 402):

⁸ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 400 – 402:

⁹ Նույն տեղում, էջ 402:

նա դուրս գալով Հաղամակերտ քաղաքից, հասավ Ըռնա գավառ: Առաջին ընդհարումը հաջող ելք ունեցավ Արծրունյաց զորագնդի համար, սակայն Մղունիս գյուղում Գուրգենը պարտվեց, կորցնելով 500 զորային՝ «ի տանէ Արծրունեաց և յայլոց նախարարաց»: Հաղթութունից արբեցած թշնամին զումարեց նորանոր ուժեր, որոնք կամենում էին «ելանել ի վերայ աշխարհիս առ հասարակ յապականութիւն դարձուցանել»: Բայց նրանց մեջ կային ողջախոհ այրեր, որոնք անսալով Գուրգեն Արծրունու խաղաղասիրական առաջարկներին, դիմեցին հաշտության, որով և կանխվեց մոտալուտ պատերազմը¹⁰:

Սուքի գրավմամբ Արծրունիներն ավելի հզորացան, թուլացնելով Բագրատունիների դիրքերը հարավային Հայաստանում: Անանուն պատմիչը գրում է, որ Սմբատ I արքան չհանդուրժելով Արծրունիների զորացումը, «զարթուցանել ջանայր զայլազգիսն» նրանց դեմ, բայց հաջողության չհասավ, անշուշտ, Գագիկ Արծրունու դիվանագիտական շրջահայեցության շնորհիվ: Այնժամ Սմբատ թագավորը կաշառելով Ամյուկ բերդի վրա Գագիկի նշանակած կառավարչին, տիրացավ այդ անառիկ ժայռամրոցին, ապա այն վաճառեց Արծրունիներին, ստանալով «գանձս բազումս»: Դա սրեց հայոց թագավորի և Արծրունիների հարաբերությունները: Անանուն պատմիչը նույնիսկ գտնում է, որ Ամյուկը պատճառ դարձավ, որպեսզի այլևս թագավորն ու Գագիկ Արծրունին հաշտ ու միմյանց սատարող չլինեին, ինչպես էր նախկինում¹¹: Իհարկե, Ամյուկի շուրջը ծագած վեճը լուկ սկզբնառիթ էր, ընդ որում ոչ հիմնականը: Սմբատ I-ի ու Գագիկ Արծրունու միջև հարաբերությունները խզվեցին Նախճավանի պատճառով, երբ այդ քաղաքը թագավորը խլեց Արծրունիներից և հանձնեց Սյունիքի տերերին (հավանաբար, Աշոտ Արծրունու վախճանվելուց հետո՝ 903թ.), քանի որ Սյունաց գահերեցը «մտերմական ծառայութեամբ կատարէր զբոլոր սպասարկութիւն նորա»¹²:

¹⁰ Նույն տեղում, էջ 402 – 404:

¹¹ Նույն տեղում, էջ 438:

¹² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 209:

Նախճավանի հանձնումը Այունյաց տիրոջը խիստ խոցեց Գագիկ Արծրունուն, որը Սմբատ I-ից խնդրեց իրեն վերադարձնել այն, իբրև հնուց ի վեր Արծրունյաց «տան և ազգի պատշաճեալ» քաղաք¹³: Բայց հայոց թագավորը չկատարեց Գագիկի խնդրանքը: Դրա պատճառով, գրում է պատմագիրը, – «Յաւետ իմն իշխանին Գագկայ դժգմեալ՝ դրժողութեամբ չարահաւակ առ արքայ լինէր. և ապա բազում նուէրս ընծայից և պատարագաց պատրաստեալ՝ չուէր գնայր առ ոստիկանն Յուսուփ ի Պարսս»¹⁴:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում: Այս մասին տես Բ.Ջարությունյան, *Նախճավանյան սահմանային պայքարը և նրա քաղաքական հետևանքները* («Աշտանակ», Ա, Երևան, 1995, էջ 127 – 137):

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԹԱԳՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՕՐՈՔ**

Ա. ԹԱԳՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ

Ինչպես տեսանք, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Գագիկ Արծրունին կամովին մեկնել է Ատրպատականի ամիրա Յուսուֆ Սաջյանի մոտ: Մինչդեռ Անանունը հավաստում է, որ Յուսուֆը, որ միշտ լսել և շարունակում էր իրազեկ դառնալ «զանուն և զգործս արիական քաջութեանն միանգամայն և զիմաստակիր խոհականութիւն հանճարեղ և մեծանուն իշխանին Գագկայ», երկար ժամանակներից ի վեր ցանկանում էր տեսնել նրան: Ապա նա (Սմբատ I-ի և Գագիկի գժովելուց հետո) անմիջապես լրատարներ ուղարկեց Գագիկի մոտ՝ «իրովարտակօք և բազում խոստմամբ», թախանձագին խնդրելով հանդիպել իրեն: Հրավերին հաճությամբ արձագանքելով, Գագիկը առանց վարանելու մեկնեց կոչնակների ետևից Յուսուֆի մոտ, որը Գագիկի մեջ տեսավ «յամենայն մասունս թագաւորականս... զուտ և նազելի համեստութեամբ զարդարեալ»¹: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Յուսուֆից Գագիկի թագ ստանալը տեղի է ունեցել Նախճավանի պատճառով Սմբատ I-ի և Գագիկի գժովելուց անմիջապես հետո, երբ վերջինս մեկնեց Յուսուֆի մոտ, որը «ախորժաբար ընկալեալ՝ տայր նմա թագ արքայական և պատիւս և պարզես արքունական»²: Մինչդեռ Անանունի հավաստմամբ Գագիկ Արծրունին թագադրվել է Սմբատ I-ին Յուսուֆի կողմից գերելուց հետո, երբ վերջինս տեսնելով, որ

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 438 – 440:

² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 209:

«ոչ ոք է, որ կարողանայ տիրել և ունել «զաշխարհս Յայոց, բայց միայն Գագիկ... թագաւորեցուցանէ զնա ի վերայ ամենայն Յայոց: Եւ եղեալ թագ ի գլուխ նորա զուտ ոսկի բազմարուեստ յօրինմամբ, հիւսեալ մարգարտովք և մեծագնի ակամբք պատուականօք և գօտի սուսերաւ, հանդերձ ոսկեհուռն փայլեալ զարդու... Եւ այսպիսի փառաւորութեամբ հաստատեալ տայ ի ձեռս նորա զբոլոր Յայաստան աշխարհս...»³: Եվ Անանունը, և Դրասխանակերտցին վկայում են, որ Գագիկը Յուսուֆից երկու անգամ է թագ ստացել⁴: Առաջին անգամ Գագիկի թագադրվելը կատարվեց 908թ.: Ըստ Անանունի, դա տեղի ունեցավ խալիֆայի դեմ Յուսուֆի ապստամբության տարում, մինչդեռ Դրասխանակերտցին գրում է, որ ապստամբությունն ավելի վաղ է տեղի ունեցել⁵: Ընդ որում այդ ապստամբության ժամանակ Սմբատ I-ը զորակցեց խալիֆային ընդդեմ Յուսուֆի: Սակայն 908թ. խալիֆան Յուսուֆին նշանակեց Ատրպատականի և Յայաստանի կառավարիչ⁶: Վերջինս չէր մոռացել իր դեմ Սմբատ I-ի կողմից խալիֆային զորավիճելը: Բագրատունյաց թագավորությունը մասնատելու և թուլացնելու նպատակադրումով Յուսուֆը Գագիկին ճանաչեց հայոց թագավոր: Անանունը Գագիկին համարում է «ամենայն Յայոց» թագավոր⁷: Իհարկե նա թագավորեց միայն Վասպուրականում, Մոկքում և հարակից մի քանի գավառներում: Մյուս պատմագիրները Գագիկին հիշում են սոսկ որպես Վասպուրականի թագավոր⁸: Թեև Դրասխանակերտցին նշում է, որ խալիֆան Գագիկին «պսակեալ ի վերայ Յայաստանեայցս»⁹, բայց նրա շարադրանքից պարզ երևում է, որ Գագիկը չուներ հայոց թագավորի գործառնություն, ինչը ձեռք բերելու համար նա պետք է նաև տիրեր Այրարատին, հայոց մայրաքաղաքներին և կաթողիկանիստ Դվինին: Սակայն նա չկարողացավ գրավել Այրարատը: Յուսուֆը ևս ջանում էր

³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 442:

⁴ *Նույն տեղում, էջ 444, Գովհաննես Դրասխանակերտցի, էջ 306:*

⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 442, *Գովհ. Դրասխանակերտցի, էջ 203:*

⁶ Իբն ալ-Ասիր, էջ 173:

⁷ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 442:

⁸ *Տես Վարդան, Խ2, էջ 87, Ստեփաննոս Օրբելյան, LC, էջ 187:*

⁹ Գովհաննես Դրասխանակերտցի, էջ 306:

տիրանալ Այրարատին: Նա Գագիկի զորակցությամբ առաջին հարվածն ուղղեց Նախճավանին, որտեղ միմյանց հետ միանալով նրանց զորագնդերը հարծակվեցին Սյունիքի վրա: Այս դեպքերը պատմագիրը դնում է Յուսուֆից առաջին անգամ Գագիկի թագ ստանալու հաջորդ տարվա՝ 909-ի գարնանը¹⁰: Նույն թվականի ամռանը Յուսուֆին հարեց նաև Սմբատ արքայի եղբոր՝ Շապուհի որդին՝ Աշոտը: Յուսուֆը հաջորդ գարնանը «գունդս զօրաց բազմաց պատրաստեալ... տայ ի ձեռս թագաւորին Գագկայ և յայլ ևս իւրոց նախարարացն», ուղարկելով հայոց թագավորի դեմ¹¹:

Յուսուֆի հրոսախմբերը ասպատակում են Սյունիքը, Գուգարքը, իսկ Գագիկ Արծրունին պաշարում է Վաղարշակերտը (այժմ Ալաշկերտ): Բայց նրա զորայինները «բազում աւուրս մարտ ընդ ամրոցին եղեալ՝ ոչինչ կարէին ստնանել նմա»¹²: Գագիկին չհաջողվեց տիրանալ նաև Նախճավանին, քանի որ Յուսուֆն այն պահեց իր ձեռքում: Այդպիսով ի դերև ելան Այրարատին տիրելու Գագիկի հույսերը: Ի լրումն դրա, Յուսուֆը հովանավորում էր Աշոտ Շապուհյանին, որն իբրև Բագրատունիների տան անդամ, նույնպես հավակնում էր հայոց թագավորի գահին, փաստորեն հանդես գալով որպես Գագիկի մրցակից: Հավանաբար Յուսուֆը նախապատվություն է տվել Աշոտ Շապուհյանին և չի վստահել Գագիկին, որը ծածուկ կապվելով Սմբատ I-ի հետ, նրան խոստացել է զորակցել ընդդեմ Յուսուֆի: Դրասխանակերտցու հավաստմամբ Գագիկն ու իր եղբայր Գուրգենը, ակնհայտաբար լինելով Յուսուֆի չարագործություններից, երկյուղում էին որ նա իրենց ևս կարող է պատուհասել, ուստի «կշտամբեալ և յանդիմանեալ զանձինս իւրեանց, և զղջացեալ ի սիրտս իւրեանց», որոշեցին հեռանալ իրենց իշխանություն¹³:

Նախճավանը Յուսուֆի տնօրինության տակ լինելու հանգամանքը մեղմացրեց Արծրունյաց և Սյունյաց տերերի հակամարտությունը, նույնիսկ մերժեցրեց նրանց ընդդեմ

¹⁰ Նույն տեղում, էջ 213 – 214:

¹¹ Նույն տեղում, էջ 218:

¹² Նույն տեղում, էջ 231:

¹³ Նույն տեղում, էջ 232:

արյունոտ ոսոխի: Հատկանշելի է, որ երբ Գագիկը լքեց Յուսուֆին և վերադարձավ Վասպուրական, Սյունիքի Սմբատ իշխանը թշնամուց խույս տալով հանգրվանեց Արծրունիների մոտ¹⁴:

Յուսուֆի հետ հարաբերությունները խզելուց հետո Արծրունիները բազմիցս կռիվներ են մղում նրա զորքերի դեմ «առ ստորոտով աշխարհին Կորդուաց և Ռատակաց և Ատրպատականի», թշնամիներին պատճառելով մեծ կորուստներ¹⁵: Ստեղծված պայմաններում Գագիկ Արծրունին չէր կարող օգնություն ակնկալել հայոց թագավորից, քանի որ վերջինիս դրությունը խիստ ծանրացել էր: Այդ հանգամանքը Յուսուֆին հնարավորություն տվեց իր ուժերի մեծ մասը նետել Գագիկի դեմ: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Յուսուֆն իր չարաթույն մաղձը «ի թագաւորն Գագիկ քան յայլ ոմանս հնարէր թափել»¹⁶: Մոտավորապես 914թ. գարնանը նա հարձակվեց Վասպուրականի վրա¹⁷: Թշնամու ճնշող ուժերի առջևից նահանջելով Արծրունյաց զորայինները, բնակչությունը ստիպված հեռացան Մոկաց և Կորդվաց անմատույց լեռնաստաններ: Գագիկ Արծրունին եղբոր և Սմբատ Սյունիի հետ անցավ «ի Միջերկրեայս»¹⁸: Միջերկրայքի տակ հասկացվում է Փոքր Ասիան¹⁹: Հետևաբար, Արծրունիները մեկնել են Բյուզանդիա: Նույն թվականի սեպտեմբերին այնտեղ է մեկնել նաև Աշոտ Երկաթ թագավորը²⁰: Գուցե Գագիկն ու Սյունյաց տերը, հետևելով հայոց արքայի օրինակին, ջանացել են օգնություն ստանալ Բյուզանդիայից: Բայց այդ մասին աղբյուրները լռում են: Կայսրը Աշոտ Երկաթին զորակցելը դիտում էր իբրև բովանդակ Հայաստանին զինապես սատարելու միջոց: Աշոտ Երկաթը Հայաստան վերադարձավ օժանդակ մի զորագնդով, հավանաբար 915թ.²¹: Նույն ժամանակ, ըստ Սյունյաց պատմիչի,

¹⁴ Նույն տեղում, էջ 242, Ստեփաննոս Օրբելյան, *ԼԸ*, էջ 192 – 193:

¹⁵ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 245:

¹⁶ Նույն տեղում, էջ 270:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Ս.Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 13:

²⁰ N.Adontz, *Etudes*, p. 276:

²¹ Նույն տեղում:

«եկն ի Վասպուրականէ մեծ իշխանն Սիւնի Սմբատ առ արքայորդին Աշոտ թագաւոր»²²: Բայց Գագիկը փորձ չարեց հանդիպել Աշոտ Երկաթի հետ: Թերևս Սյունյաց գահերեցը նրա մոտ էր մեկնել ոչ առանց Արծրունիների կամակցության:

Յուսուֆի գորքերի ծավալած հարձակումների ընթացքում Գագիկ Արծրունուն մեծապես զորավիգում էին Անձևացյաց քաջակորով իշխան Ատոմը (Գուրգեն Ապուլպելճի որդին) և Մոկաց տեր Գրիգորը²³: Սակայն Գագիկ Արծրունուն չհաջողվեց դաշինքի մեջ մտնել Աշոտ Երկաթի հետ, քանի որ վերջինս մերժեցավ Յուսուֆի հետ, նրանից ստանալով «թագ արքայական» և արաբական օժանդակ զորագունդ ընդդեմ իր մրցակից Աշոտ Շապուհյանի²⁴, որի նկատմամբ փոխվել էր Յուսուֆի վերաբերմունքը: Արծրունիների դրուքունը խիստ ծանրացավ: Յուսուֆը վերստին իր ուժերի գերակշիռ մասը կարող էր նետել Գագիկ Արծրունու դեմ, որին ի հեճուկս Յուսուֆի, խալիֆան նորից թագ ուղարկեց, ճանաչելով հայոց թագավոր²⁵: Յուսուֆը «յաւէտ իմն ընդ այսոսիկ զչարեալ՝ ահագինս կրճտէր զատամունս ի վերայ թագաւորին Գագկայ, սպառնացեալ լի ապականութեամբ և մօտալուտ բանիւք», – Գրում է Հովհաննես Դրասխանակերտցին: Յուսուֆի զայրույթի պատճառն անշուշտ իր գերակայությունը Գագիկի կողմից չընդունելու հանգամանքն էր: Խալիֆան, չհանդուրժելով Յուսուֆի ինքնագլուխ արարքները, կամենում էր նրա դեմ հակակշիռ ստեղծել նաև ի դեմս Գագիկ Արծրունու: Նա ջանում էր Գագիկին թագ ուղարկել և այդպիսով ի դերև հանել Յուսուֆի կողմից նրան թագադրելու իրավական հիմքերը, Գագիկին ուղղակիորեն առնչելով իրեն հետ: Անանունը հավաստում է, որ, երբ Յուսուֆն ապստամբեց Մուկթադիր խալիֆայի դեմ, պարտության մատնելով արքունի գորքին, խալիֆան «իբրև գիտաց թագաւորելն Գագկայ ի վերայ Հայաստանեայց՝ առաքէ նմա թագ և... յանձն առնէ նմա զհարկս արքունի»²⁶: Պատմագրի կարծիքով դա հազվադեպ երևույթ էր,

²² Ստեփաննոս Օրբելյան, *ԼԸ, էջ 193*:

²³ Հովհաննես Դրասխանակերտցի, *էջ 292*:

²⁴ *Նույն տեղում, էջ 300*:

²⁵ *Նույն տեղում, էջ 306*:

²⁶ Թովմա Արծրունի և Անանուն, *էջ 442*:

քանի որ երբեք չէր պատահել, որ խալիֆան թագով պատվեր որևէ մեկին, մանավանդ քրիստոնյայի, «սեփհական և բնաբար տիրողի Չայոց», ինչը նա կատարեց Բարծրյալի կամքով²⁷: Խալիֆայի դրությունը ծանր էր, ուստի նա դիմեց նման քայլի: Նրա կողմից Գագիկին թագապսակով օժտելը կատարվել է 915թ., երբ Միջերկրաքից (Բյուզանդիայից) վերադարձավ Գագիկը, հույսեր չկապելով կայսրության հետ: Վերջինս այդ ժամանակ ծանր կացության մեջ էր²⁸: Նկատենք, որ Ասողիկը 914թ. է դնում Գագիկի թագադրվելը, նշելով, որ նա գահակալել է «ամս ԻԹ» (29 տարի)²⁹ «և վախճանի ՅՂԲ թուականին»²⁹, այսինքն Չայոց 392 (943)-ին: Գագիկի թագավորելու ժամանակի մասին սկզբնաղբյուրների տվյալները խիստ տարամիտվում են: Մի ձեռագրի մեջ նույնիսկ նշված է, որ նա թագավորել է 60 տարի³⁰: Այլ տարիներ են հիշվում մեկ այլ ձեռագրում³¹: Տարակարծությունների պատճառն անշուշտ, այն փաստն էր, որ Գագիկ Արծրունու թագավորելու ստույգ տարիները հայտնի չէին:

Դրա խոսույն վկայությունը Ասողիկի կողմից 914 թվականը Վասպուրականի Արծրունյաց թագավորության հիմնադրման տարի համարելն է: Նկատենք նաև, որ սովորաբար Աղթամար մայրաքաղաքի հիմնադրման, Ս.Խաչ վանքի և թագավորական պալատի կառուցման սկիզբ է համարվում 915 թվականը:

Բ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐ

Գագիկ Արծրունու թագադրվելուց հետո, ընդհուպ մինչև 919թ., Արծրունիների հանդեպ շարունակվեցին Յուսուֆի դավադիր ձեռնարկումները: Այդ թվականին նա պարտություն կրեց խալիֆայի զորքից և բանտ նետվեց¹: Յուսուֆին հաջորդեց նրա զորապետներից մեկը՝ Սբուկը, որն Աշոտ Երկաթի հետ

²⁷ Նույն տեղում:

²⁸ А. Васильев, *Византия и Арабы. Политические отношения за время Македонской династии*, С.Петербург, 1902, с. 198 – 199.

²⁹ Ստեփաննոս Տարոնեցի (Ասողիկ), *III, ԽԶ, էջ 281*:

³⁰ *Մատենադարան, ծեռ. 5467, ք. 22ա*:

³¹ *Նույնի ծեռ. 2293, ք. 74ա*:

¹ *Из Тарих ал Камиль Ибн ал-Асира, пер. П. Жузе, Баку, 1940, с. 81.*

դաշինք կնքեց «և շահնշահ զնա անուանէր»²: Մինչդեռ Գագիկ Արծրունին չփորձեց կապեր հաստատել նրա հետ և շարունակեց արքունի հարկն առանց միջնորդի առաքել խալիֆային: Վերջինիս կողմից Ատրպատականի կառավարիչ ճանաչվելուց հետո Սբուկը փաստորեն շարունակեց Յուսուֆի քաղաքականությունը Արծրունիների նկատմամբ: Նա զորք ուղարկեց Վասպուրականի ճուվաշ գավառ, այն ենթարկելով ավարառության, գերեվարելով «արսն և զկանայս և զմատաղ մանկտի», որոնք չէին հասցրել ապաստանել գավառի ամրոցներում³: Պատերազմին վերջ տալու համար Գագիկ Արծրունին Սբուկի մոտ ուղարկեց մի կրոնավորի՝ Գևորգ Յավնունուն, «խնդրելով զհաշտութիւն առ ի նմանէ», ինչը ձեռք բերվեց, և այդպիսով Արծրունյաց տիրույթներն «յապահովացեալք յարտաքնոց յայնցանէ հրոսակաց», – գրում է պատմագիրը⁴: Ենթադրվում է, որ այդ հաշտությամբ Գագիկն ու Սբուկը դարձան դաշնակիցներ⁵: Վերջինս հավանաբար, հաշվի առավ խալիֆայի կողմից Գագիկին թագավոր ճանաչելու հանգամանքը: Սակայն հաշտությունից հետո ևս Գագիկը շարունակեց հարկն ուղղակի մուծել խալիֆային⁶:

923թ. Յուսուֆ Սաջյանն ազատվեց բանտից և նշանակվեց վերստին Ատրպատականի կուսակալ⁷: Նույն թվականին ավարատենչ բռնակալի զորքը արշավեց Վասպուրականի և Կորդուքի կողմերը: Բռնաշունչ ոսոխից իրենց իշխանության ոլորտի բնակչությանը ձերբագերծելու մտահոգությամբ Գագիկ Արծրունին և Անձևացյաց իշխան Ատոմը նրանց գաղթեցրին Կոգովիտ, Ծաղկոտն և Անձևացիք գավառների լեռնածերպեր⁸: Անանունը գրում է, որ բանտից ազատվելուց հետո խալիֆան Յուսուֆի իրավասության տակ դրեց «աշխարհն Պարսից և զբոլոր Յայք»⁹: Ըստ իբն ալ-Ասիրի, խալիֆան 927 թվականից է

² Գովհաննես Դրասխանակերտցի, էջ 315:

³ Նույն տեղում, էջ 315:

⁴ Նույն տեղում, էջ 315 – 316:

⁵ М.Шарифли, *Государство Саджидов, Москва, 1960, с. 3.*

⁶ Գովհաննես Դրասխանակերտցի, էջ 325:

⁷ Ибн ал-Асир, с. 82.

⁸ Գովհաննես Դրասխանակերտցի, էջ 328:

⁹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 444:

Յուսուֆին արտոնել հարկ հավաքելու իրավունքներ¹⁰, կամենալով թերևս, նրա զորուժերն օգտագործել Բյուզանդիայի հայազգի Մլեի գորապետի (Դոմեստիկի) զորքերի հաջող առաջխաղացման դեմ:

Յուսուֆը չհապաղեց նախ Ատոմ Անձևացուց, ապա նաև Գագիկ Արծրունուց պահանջել «զբազուն ամաց զհարկս արքունականս», նրան հիշեցնելով առաջինը իրենից թագ ստանալու փաստը¹¹: Ատոմը կատարեց բռնակալի պահանջը, տալով նաև պատանդներ, որից հետո Յուսուֆը ներխուժեց Արծրունյաց ոստան Աղբակ գավառ և հասկանալով, որ չի կարող իրագործել Գագիկի հանդեպ իր հղացած չարադետ նկրտումները, «մօտալուտ և դիւրագորով հաշտութեան» ակնկալութեամբ Գագիկի մոտ ուղարկեց խոսնակներ, խնդրելով վճարել հարկը: Գագիկը նախ «անխնայ զիւրն ստացուածս առաջի արկաներ և առհասարակ յամենեցունց ի մերձաւորաց և յազատաց և յռամկաց և յանռամկաց ժողովեալ արծաթ և ոսկի և կարասիս բազումս և ծիս և ջորիս՝ տայր տանել նմա առատ ձեռածրիւք», որոնք ստանալով Յուսուֆը «մեծաւ շնորհակալութեամբ» հեռացավ Վասպուրականից¹²: Ըստ Անանունի Յուսուֆը վերստին թագ է ուղարկել Գագիկ Արծրունուն, տալով «ի ձեռս նորայ Յայաստան աշխարհ»¹³: Դա պետք է տեղի ունեցած լինի 923թ. հետո, քանի որ Հովհաննես Դրասխանակերտցին, որ իր երկն ավարտում է այդ թվականի դեպքերի շարադրմամբ, չի հիշում Գագիկին Յուսուֆի կողմից վերստին թագադրելու փաստը: Անանունը կարծում է, որ Յուսուֆը բանտում մնացել է ութ տարի, հավանաբար, նկատի առնելով նրա կալանվելուց (919-ից) մինչև խալիֆայի կողմից նրան հարկ հավաքելու իրավունքներով օժտելու տարին, որն, ինչպես տեսանք, 927 թվականն էր: Անանունը նույն ժամանակ է դնում Գագիկի եղբոր՝ Գուրգենի մահը, որը ևս չի նշված Հովհաննես Դրասխանակերտցու կողմից: Պատմագիրը չի հիշատակում նաև Յուսուֆի մահը, որը տեղի է ունեցել 928թ., երբ խալիֆան

¹⁰ Ибн ал-Асир, с. 82-83.

¹¹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 329-330:

¹² Տես նույն տեղում, էջ 330:

¹³ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 444:

նրա գլխավորությամբ զորք ուղարկեց ապստամբ կարմաթների դեմ, որոնք ջախջախեցին այդ զորքը, գերեցին ու գլխատեցին Յուսուֆին¹⁴:

9. ՆՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Ատրպատականի հետ հարաբերությունները կարգավորելուց հետո Արծրունյաց թագավորությունը թևակոխեց կարճատև խաղաղության ժամանակամիջոց: Այս շրջանում Գագիկ Արծրունին ավարտեց իր նոր մայրաքաղաք Աղթամարի կառուցապատումը: Եթե այն ավարտված լիներ մինչև 923 թվականը, Հովհաննես Դրասխանակերտցին, որ Գագիկի հրավերով ապաստանել էր Վասպուրականում, անպայման կհիշատակեր Աղթամարի հոյաշուք կոթողների՝ թագավորական պալատի և Ս.Խաչ վանքի կառուցումը, մինչդեռ պատմագիրը լռում է այդ մասին, թեև հիշում է Գագիկի և Գուրգենի կողմից իրեն ընդունելու մասին: Իսկ Գուրգենն, ինչպես տեսանք, պետք է վախճանված լինի 927թ.: Ամենայն հավանականությամբ, նույն թվին է վախճանվել նաև Դրասխանակերտցին, իսկ հաջորդ տարում ավարտվել է Աղթամարի վանքի ու պալատի կառուցումը:

Փաստորեն 923 թվականից կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Վասպուրական: Գագիկ Արծրունին չէր հրաժարվում «հայոց թագավորի» տիտղոսից: Նույն թվականին նա վերստին փորձեց տիրանալ Այրարատի մի մասին, պաշարելով Դարույնքը, կարողացավ գրավել Մասյացոտնի Ուղեռ բերդը¹ «և տիրե գաւառացն սկսեալ ի Կոգովտե մինչև ցմիջոց Ուղեռյ և Մասեաց ոտն»²: Կաթողիկոսանիստը Վասպուրական տեղափոխելն ինքնին հայոց եկեղեցական կենտրոնն այնտեղ հաստատելու նպատակներ էր հետապնդում: Հայոց կաթողիկոսի աթոռանիստը պետք է գտնվեր «հայոց թագավոր» Գագիկ Արծրունու թագավորանիստ քաղաքում՝ Վանում, ապա

¹⁴ Ибн ал-Асир, с 84-85.

¹ Տարբեր է Փոքր Հայքում, Գայլ գետի ափին գտնվող Ուղեռ ամրոցից:

² Թովմա Արծրունի և Անանուն, էջ 444:

Աղթամարում, ուր սակայն Դրասխանակերտցուն չվիճակվեց հաստատվել:

Աղթամարում ձեռնարկված շինարարությունը 927թ. հետո ավարտված լինելու օգտին է վկայում նաև այն փաստը, որ Անանունը Աղթամարի վանքի ու պալատի նկարագրության ընթացքում՝ բոլորովին չի հիշում Գուրգեն Արծրունուն, քանի որ, ինչպես վերը նշվեց, նա այդ թվականին արդեն վախճանվել էր: Աղթամարի կառուցապատման ավարտելը 927թ. հետո դնելու օգտին է վկայում նաև այն փաստը, որ նույն պատմիչը այդ մասին հիշատակում է միայն Յուսուֆի սպանությունից՝ 928թ. հետո:

Աղթամար կղզում շքեղակառույց մայրաքաղաքի հիմնունը նոր ու վեհաշունչ շուք պետք է հաղորդեր Գագիկի թագավորությանը: Աղթամարի մասին պատմելիս Անանունը այն անվանում է «հոյակապ և հռչակավոր և բարձրանշան քաղաք»³: Աղթամարի առնչությամբ պատմագիրը Գագիկ Արծրունուն հիշում է «հայոց մեծն թագավոր» բառերով⁴: Նա համոզված է, որ Գագիկը «միապետեալ գբուլոր աշխարհս Յայաստան... իբրև զծով բազմացուցանէ զխաղաղութիւն ի Յայաստան աշխարհի»⁵: Հատկանշելի փաստ է, որ Աղթամարի վանքի ձախակողմյան ավանդատան վրայի արձանագրության մեջ փորագրված են նաև «կտակի իմով ձեռամբ Գագկայ Յայոց արքայիս» բառերը⁶:

Աղթամարը Արծրունյաց գահանիստ դարձավ նաև իր պաշտպանական կարևոր դիրքի շնորհիվ: Անանունի հավաստմամբ Գագիկը նկատի առավ այն փաստը, որ Աղթամարը կարող է «ապաստան լինել աշխարհի ի հինից թշնամեաց», ուստի այն առաջին հերթին ամրացրեց քարահատակ ամբարտակով, որի վրա բարձրացավ «զպարիսպն շուրջանակի... պարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտա-

³ Նույն տեղում, էջ 460:

⁴ Նույն տեղում, էջ 454:

⁵ Նույն տեղում, էջ 446:

⁶ Ազգագրական հանդես, XX, 2, Թիֆլիս, 1910, էջ 210:

րակօք...»: Աղթամարում Գագիկը հիմնեց նաև «խաղաղ և անքոյթ նաւահանգիստ», որի մուտքը օտար նավերի առջև փակվում էր «ահաւորատեսս, հաստահեղոյսս, բւեռապինդս» ու երկաթակուռ դռներով⁷: Աղթամարի պարսպապատերի մեջ կառուցվեցին «տունս զինուց և ասպազինաց անհուն բազմութեանց»⁸, քաղաքն ապահովելով հարուստ զինապահեստներով: Անանուն պատմագրի վկայությամբ Աղթամարը կառուցապատվել է հինգ տարում⁹: Աղթամար կղզու տարածքը մեծ չէ (0,7 քառակուսի կմ), ուստի անհնար էր այնտեղ հոծ բնակչության հաստատվելը: Վերջինս հիմնականում բաղկացած էր արհեստավորներից, որոնք այնտեղ ժամանեցին Գագիկի հրամանով, ինչպես նաև զորականներից: Մայրաքաղաքը կարճ ժամանակում բնակեցնելու նպատակով նա արտոնություններ շնորհեց գյուղերից այնտեղ տեղափոխված արհեստավորներին, շինականներին:

Անանունի վկայությամբ Աղթամարի կառուցապատման համար Գագիկը չի խնայել անհրաժեշտ զանձերի ներդրումը շինարարներին վարձատրելու համար: Քաղաքը կառուցվեց արհեստավորների, ազատ գյուղացիների աշխատանքով: Շինարարությանը մասնակցել են նաև զինվորներ¹⁰:

Աղթամար քաղաքի միջնաբերդում, որը կղզու ամենաբարձր հատվածն էր, վեր խոյացան թագավորական և իշխանական պալատներ: Դրանցից առավել հոյաշուքը Գագիկ Արծրունու արքայական ապարանքն էր՝ շքեղաշուք հորինվածքով: Անանուն պատմիչը նրա գլխավոր դահլիճը, որպես թագավորական պալատի հիմնական մաս, կոչում է «տաճար»: Գոյակերտ այս կառույցի և ուրիշ (Ոստան, Վան քաղաքներում) շինությունների կառուցման աշխատանքները գլխավորում էր հանճարեղ ճարտարապետ, քանդակագործ և նկարիչ

⁷ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 454: *Երևանի Մաշտոցի անվան մատենադարանում պահվող մի ձեռագրում նշված է, որ Գագիկ Արծրունին կամենում էր Աղթամարում հաստատել «աթոռ ամենայն Գայոց... զի ամուր է յամենայն կողմանց» (ձեռ. 5467, ք. 2բ):*

⁸ Նույն տեղում, էջ 458:

⁹ Նույն տեղում, էջ 456:

¹⁰ Մատենադարան, ձեռ. 5467, ք. 12ա:

Մանվելը¹¹: Թագավորական պալատը ըստ Անանունի, «ի հիմանց անտի մինչև ցզլուխ նորին ի թռիչս կազմեալ՝ առանց սեան ունի հաստատութիւն»: Այն ուներ «գումբէս երկնահարթս ոսկեզարդս և լուսաճաճանչս», ինչպէս նաև դահլիճներ՝ «խորանս կամարակիցս», զեղեցիկ որմնապատկերներ, փորագիր մանր զարդերով նախշված երկփեղկ դռներ: Պալատը քառանկյուն էր՝ 40 կանգուն (20,8 մետր) լայնությամբ և նույնքան երկայնությամբ¹²:

Հրաշակառույց կոթող էր նաև Աղթամարում նույն ժամանակ վեր խոյացած Ս.Խաչ գմբեթավոր եկեղեցին, որն Անանունը բնութագրում է «գերապայծառ և պանծալի» բառերով: Տաճարի հարավակողմում, մուտքի վերևում արքայի աղոթատեղն էր՝ նախշազարդված զեղեցիկ քանդակներով¹³: Եկեղեցու իրանը պատվեց քանդակազարդ գոտիներով, որտեղ եղած պատկերներում արտացոլված է օտար բռնատիրոջների դեմ ժողովրդի մղած պայքարը, Արծրունիների քաջապանձ գործերը, գյուղացիների նիստուկացը և այլն: Գլխավոր գոտու վրա պատկերված սրբերի, հրեշտակների հետ են նաև Համազասպ և Սահակ Արծրունիները: Մեծ տեղ են բռնում նաև աստվածաշնչական թեմաներով պատկերները: Վանքի հյուսիսային պատին պատկերված է առյուծի հետ անգեն պատանի դյուցազնի մենամարտը, որը Հ.Օրբելու կարծիքով վերարտադրում է Մեծ Միերի և առյուծի կռիվը¹⁴: Հոգեկեցույց որմնապատկերները, զարդանախշերը մեծ շուք պետք է հաղորդեին Արծրունյաց թագավորանիստին, կաթողիկոսական աթոռանիստին: Վանքը դիմացավ երկար դարեր, վաստակելով փառքի պսակը: Սակայն ճակատագրի չարանենգ խաղով այն ցարդ մնում է գերության մեջ:

Աղթամարի կառուցապատման ժամանակ Գագիկ Արծրու-

¹¹ Ս.Խ.Սնացականյան, *Վարպետաց վարպետներ, Երևան, 1982, էջ 16-78*:

¹² Թովմա Արծրունի և Անանուն, *էջ 456-458*:

¹³ Նույն տեղում, *էջ 462*: *Դա բացառիկ երևույթ էր: Որևէ այլ եկեղեցի (հայ ճարտարապետության պատմության մեջ) չի ունեցել արքայական օթյակ*:

¹⁴ И.Орбели. *Избранные труды, т. I, с. 108-110*. Աղթամարի վանքի մասին մանրամասն տես նաև Ս.Տեր-Ներսեսյան, *Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975*:

նին մեծ հզորություն և ազդեցություն ունեւր Հայաստանում և հարևան երկրներում: Նա Անանունի հավաստմամբ, նեղեց «զգազանաբարոյ ազգն Իսմայէլի... պատերազմական ուժեղ արուքեամբք, իբրու դանդանաւանաւ իւիք զկզակս նոցա ճնլեալ թոշնացուցանէր, սկսեալ ի Մարաց և Պարսից զբոլոր Ատրպատական, մինչև ցիուժաստան...»¹⁵: Աղթամարի տաճարի բարձրաքանդակներում արտացոլված է նաև Արծրունիների գերազանցությունը օտար ու թշնամական ուժերի հանդէպ¹⁶: Հատկանշական փաստ է, որ Անանունը հայոց թագավոր Աբաս Բագրատունուն (929 – 953) բնավ չի հիշում «արքա» տիտղոսով: Ենթադրվում է, որ Աբասի գահակալման հենց սկզբում 929թ. Գագիկ Արծրունին իրեն վերապահեց հայոց կաթողիկոս կարգելու իրավասությունը¹⁷: Ըստ Մ.Չամչյանի, Աշոտ Երկաթի մահից հետո Գագիկ Արծրունին Վասպուրական է հրավիրել նրա եղբորը՝ Աբասին, որը մի քանի իշխանների հետ մեկնել է նրա մոտ, և գումարված իշխանաժողովում Գագիկը նրան թագադրել է հայոց թագավոր¹⁸: Կոստանդին Ծիրանածինը Բագրատունի առաջին թագավորներին թեև հիշում է «իշխանաց իշխան» տիտղոսով, բայց Աբաս արքային կոչում է «մագիստրոս»¹⁹, մինչդեռ Գագիկին տիտղոսավորում է «իշխանաց իշխան» բառերով: Իր «Արարողությունների մասին» երկում Գագիկի մասին նա գրում է. «Ասպուրականի, այն է՝ Վասպուրականի իշխանին, որ այժմ իշխանաց իշխանի պատիվն է ստացել»²⁰: Տվյալ շրջանում այս տիտղոսը համանշանակ էր հայերեն «շահնշահ» պատվանունին, որն, ինչպես հայտնի է, կրում էին առաջին Բագրատունիները, ապա հավանաբար, նաև Գագիկ Արծրունին: Դիտելի է, որ Վարդան Արևելցին «շահնշահ» է կոչում Վասպուրականի Աշոտ արքային²¹: Իսկ Անանիա Մոկացին Գագիկ Արծրունու և Աբաս արքայի մասին հիշելիս նրանց համարում է

¹⁵ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 460:

¹⁶ Հմմտ. G.Frasson. *Aghtamar: («Բազմավեպ», 1987, էջ 314 – 315):*

¹⁷ Մ.Օրմանեան, *Ազգապատում, կ.Պոլիս, 1912, հ. Ա, էջ 1072:*

¹⁸ Մ.Չամչեան, *Պատմութիւն Հայոց, Բ, էջ 822:*

¹⁹ Կոստանդին Ծիրանածին, *թարգմ., առաջաբան և ծանոթագրութ. Յր.Բարթիկյան, Երևան, 1970, էջ 11:*

²⁰ Նույն տեղում, էջ 151:

²¹ Վարդան, ԾԱ, էջ 92:

«հայոց ինքնակալ թագավորներ», բայց առաջին տեղում դնում է Գագիկին²²: Ավելացնենք նաև, որ Գագիկին «իշխանաց իշխան», «արքունտների արքունտ», իսկ Աբաս թագավորին «մագիստրոս» է կոչում նաև Ռոմանոս Լակապենոս կայսրը (919 – 944) իր թղթերից մեկում²³, որի հետ միաժամանակ նա նամակ է ուղարկել նաև Գագիկ Արծրունուն, քանի որ թղթատարն առաջին հերթին ժամանել է նրա մոտ²⁴: Հավանաբար, Գագիկը նույն թղթատարի միջոցով է նամակ ուղարկել Ռոմանոս կայսրին (931թ.), առաջադրելով միջպետական, քաղաքական առնչություններում դավանական տարակարծություններն անտեսելու սկզբունքը, խոստանալով ընդունել կայսեր գերակայությունը²⁵: Ենթադրվում է, որ իբր թե Գագիկի հիշյալ թուղթը նպատակ ուներ հասնել Հայ և Բյուզանդական եկեղեցիների դավանական միության²⁶, մինչդեռ այդ թղթով Արծրունյաց արքան կամենում էր իր թագավորությունից հեռու վանել օտար սպառնալիքը: Նշյալ թուղթը հավանորեն կայսրին է առաքվել այն պահին, երբ նրա զորքերը, նեղը լծվելով արաբներից, նահանջում էին: Կայսրն անշուշտ չի ընդառաջել Գագիկին, հատկապես դավանական հակամարտությունները վերացնելու խնդրում, ուստի չի պատասխանել նրա նամակին:

Դ. ՊԱՅՔԱՐ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԵՎ ՄԻԶԱԳԵՏՔԻ ԱՄԻՐԱՆԵՐԻ ԴԵՍ

Արծրունիների հանդեպ շարունակում էին սպառնալից դիրք գրավել հարևան ամիրայությունները, որոնք 930-ական թթ. նույնիսկ նեղում էին Բյուզանդիային: 931թ. նրանք պարտության մատնեցին հույներին, հասնելով Անկյուրա¹: Դա այն թվականն էր, երբ, ինչպես վերը նշվեց, Գագիկը թուղթ

²² Տես Անանիա Մոկացի, *Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից* («Արարատ», 1897, էջ 129):

²³ Կ.Յուզբաշյան, *Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը* («ՀՍՄՀ ԳԱ Լրաբեր (հաս. գիտ.)», 1974, 1, էջ 36 – 37):

²⁴ *Նույն տեղում, էջ 36:*

²⁵ Տես Գիրք թղթոց, էջ 295, 301:

²⁶ F. Tournebize, *Histoire politique et religieuse de l' Arménie*, Paris, 1900, p. 145.

¹ Տես Իբն ալ-Ասիր, էջ 179:

ուղարկեց Ռոմանոսին: Ըստ Իբն ալ-Ասիրի. այդ տարի Գագիկ Արծրունին և «Հայաստանի ծայրամասային (գավառների) այլ հայազգի (իշխաններ) զրեցին հռոմեներին, դրդելով հարձակվել իսլամի երկրի վրա և խոստանալով իրենց օգնությունը: Հռոմեները մեծ բազմությամբ հարձակվեցին, ավերեցին Բերկրին (Բարքարի), խլաթը իր շրջակայքով, մահմեդականներից շատերին սպանեցին և մեծ բազմություն գերեցին»²: Սակայն մահմեդականներին օգնության փութաց Ատրպատականի կառավարիչ Մուֆլիհը՝ Յուսուֆի երբեմնի օգնականը, որը ստվարաթիվ զորքով ներխուժեց «իբն ալ-Դայրանիի (Գագիկ Արծրունու) երկիրը և կռվեց նրանց դեմ... սպանեց նրա մարդկանց, կողոպտեց նրանց ունեցվածքը: Իբն ալ-Դայրանին ամրացավ իր մի բերդում: Հայերից այնքան շատ կոտորեցին, որ ասվում է, թե դրանց թիվը հասնում էր հարյուր հազարի»³: Այս չափազանցված տեղեկությունն, ինչպես նշում է Իբն ալ-Ասիրը, ինքը վերցրել է ուրիշներից, հավանորեն մարտերին մասնակից հրամանատարներից, որոնք բնականաբար պետք է ուռճացնեին իրենց հաղթանակի արդյունքները: Նկատենք, որ Անանունը չի հիշատակում Վասպուրական Մուֆլիհի զորքի թափանցման մասին և Աղթամարի մասին պատմելուց հետո կարևոր շատ դեպքեր շրջանցելով, պատմում է 940-ական թթ. սկզբի եղելությունների մասին, հավանաբար չկամենալով մթագնել իր իսկ կողմից իր պատվիրատու Գագիկի գլխին հյուսած փառապսակի տպավորությունը:

Ենթադրվում է, որ իբր բացառապես Գագիկ Արծրունու կողմից Բյուզանդիային ցուցաբերած զորակցության պատճառով էր, որ Մուֆլիհն ասպատակեց Արծրունյաց տիրույթները⁴: Վերջինս, օգտվելով բարեպատեհ առիթից, կամենում էր Արծրունիներին կախման մեջ գցել իրենից, ինչն իհարկե, չհաջողվեց նրան: Անշուշտ, Բյուզանդիայի առաջխաղացումը Արևելքում և այնտեղ ամրանալ չկարողանալը էականորեն խաթարում էին Արծրունիների անվտանգությունը:

² *Նույն տեղում:*

³ *Նույն տեղում:*

⁴ *Տես* G.Weil, *Geschichte der Chalifen, II, Mannheim, 1848, s. 638: A.Васильев, Византия и Арабы, с. 233.*

խալիֆայի արքանյակների դեմ մղած հետևողական պայքարը մեծացրեց Արծրունիների հեղինակությունը: Սակայն Ատրպատականի տերերը և Միջագետքի Յամդանի ամիրաները քաղաքական դավեր էին նյութում Արծրունիների դեմ, ջանալով նրանց ձգել իրենց ազդեցության տակ, Աբբասյան խալիֆաներին նրանց մուծած հարկն իրենց փոխանցելու հույսով: Այսպես, 935թ. Միջագետքի ամիրա Յամդանի Նասր ալ-Դաուլան նեղվելով իր նստավայր Մոսուլի վրա խալիֆայի վեզիր Իբն Մուկլայի զորքի հարձակումից, փախավ Վասպուրական, ապաստանելով Անձևացյաց գավառում, սպասելով բարեպատեհ ժամանակների՝ Մոսուլ վերադառնալու համար⁵: Երկու ամիս հետո նա դիմեց հասույթներ կորզելու սովորական եղանակին, Արծրունիներից և նրանցից կախյալ իշխաններից պահանջելով խալիֆային մուծվող հարկը վճարել իրեն: Անշուշտ, ամիրան իր համախոհների, զորքի (առանց որի նա չէր համարձակվի նման պահանջներ առաջադրել Արծրունիներից) համար ապրուստի միջոցներ հայթայթելիս չէր կարող ավերի ու կողոպուտի մատնել Վասպուրականը, որով ձեռք կբերեր նոր թշնամիներ: Ուստի նա որոշեց խաղաղ միջոցներով Վասպուրականի տերերին հպատակեցնել իրեն: Ավելին, նա հավակնում էր ձեռք բերել բովանդակ Յայաստանի տիրակալի իրավունքներ: Թեև արաբ մատենագիր Իբն Ջաֆիրը գրում է, որ իբր հայոց թագավորները ճանաչել են Նասր ալ-Դաուլայի գերիշխանությունը և մուծել են հարկ⁶, սակայն, ինչպես ճիշտ կերպով նշում է ֆրանսիացի արևելագետ Մ.Կանարը, այդ ամիրայի իշխանությունը Վասպուրականի, նույնիսկ Անձևացիքի վրա չի տարածվել⁷: Ուստի Նասր ալ-Դաուլան կարճ ժամանակ հետո վերադարձավ Ջազիրա (Յուսիսային Միջագետք)⁸:

⁵ Ibn Miskawayh, *II*, p. 368, 370

⁶ Ա.Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Յայաստանում, Երևան, 1965, էջ 150:*

⁷ M. Canard, *Histoire de la Dinastie des Hamdanides de Jazira et de Sirie, t. I, Paris, 1953, p. 478.*

⁸ В.Р.Розен, *Император Василий Болгаробойца. Извлечения из летописи Яхъи Антиохийского ("Записки Имп. АК. наук", т. 44, (1883г.), с. 104).*

Իբն Միսկավայիի վկայությամբ 938թ. Ատրպատականի քուրդ տիրակալ Դայսամ իբն Իբրահիմը պարտվեց իր մրցակից Լաշքարի իբն Մարդիից⁹: X դ. սկզբին խալիֆայությունից անջատված Ատրպատականում իշխանության համար մրցակցում էին տարբեր տոհմեր, կարճատև ժամանակամիջոցում գերիշխելով այնտեղ: 930-ական թթ. Ատրպատականում իշխեց Դայսամ իբն Իբրահիմը, որին հավանաբար սատարում էր Գագիկ Արծրունին: Ուստի իբն Միսկավայիը հետագայում Վասպուրականում Դայսամ իբն Իբրահիմի ապաստանելու մասին շեշտում է նրա և Գագիկ Արծրունու միջև եղած բարեկամական կապերի մասին¹⁰: Այդ պատճառով 938թ. Դայսամին հաղթած Լաշքարին առանց հապաղելու խուժեց Արծրունյաց թագավորություն, այն մատնելով կողոպուտի և ավերածության¹¹: Նա բանակեց Անձևացյաց գավառում, որի տերը՝ Ատոմը փորձեց Լաշքարիին ետ պահել ավերասփյուռ ձեռնարկումներից, սակայն ապարդյուն անցան նրա ջանքերը: Այնժամ Ատոմը դարանաձուլ լինելով անմատույց մի կիրճում, խիզախ գրոհով ջախջախեց թշնամուն, սպանելով նրա հինգ հազար զինվորներին և հրոսապետ Լաշքարիին¹²: Այդ կիրճը ընկած էր Տիգրիսից արևելք և սահմանակցում էր Տիգրանակերտի գավառին: Բնակեցված էր հայերով, իսկ XII դարից՝ նաև քրդերով¹³: Լաշքարիի սպանությունից հետո նրա գործը գլխավորեց որդին, որը փորձեց առնել հոր վրեժը և հարձակվեց Ատոմ Անձևացու գործերի վրա: Սակայն նա ևս անփառունակ վախճան ունեցավ, ծանր պարտություն կրելով Ատոմից¹⁴:

940թ. Արծրունիներին փորձեց կախման մեջ գցել Միջագետքի ամիրա Չանդանի Սայֆ ադ Դաուլան, որը Նասր ալ-Դաուլայի կրտսեր եղբայրն էր և Մայաֆարկիհից թափանցելով Չայաստանի հարավային շրջաններ, բանակեց Վանա լճի

⁹ Ibn Miskawayh, IV, p. 442 – 443.

¹⁰ Նույն տեղում, էջ 36:

¹¹ Իբն ալ-Ասիր, էջ 182:

¹² Ibn Miskawayh, IV, p. 447 – 448.

¹³ C. Huart. *Une razzia en Armenie au X-e siecle* ("REA", I, fasc. 4(1921), p. 420); А. Быков, *Дайсам ибн Ибрахим ал-Курды и его монеты* ("Эпиграфика Востока", X, Москва – Ленинград, 1955, с. 29).

¹⁴ Ibn Miskawayh, IV, p. 446 – 448.

ափին Դատվանում: Այստեղից նա իր մոտ հրավիրեց Գագիկ Արծրունուն և հարավային Հայաստանում իշխող ուրիշ մեծամեծների: Սայֆ ադ-Դաուլան, ըստ արաբ պատմագիր Իբն ալ-Ազրակիի, Գագիկից վերցրեց երկու ամրոց Շահրան և ալ-Համիդ անուններով¹⁵: Հավանաբար հիշյալ ամրոցները գտնվում էին Արծրունյաց տիրույթների և Պարսկահայքի սահմանագլխին: Դեռևս 937 թվականից լարված էին հարաբերությունները Սայֆ ադ-Դաուլայի և Ատրպատականի ամիրաների միջև: Գագիկ Արծրունուց հիշյալ ամրոցները խլելուց անմիջապես հետո Սայֆ ադ-Դաուլան արշավեց Ատրպատական¹⁶: Արշավանքից առաջ նա կամեցավ ամուր հենակետեր ունենալ հարավային Հայաստանում, ուստի տիրեց նաև Բաղեշին, Սասունին՝ նրա անառիկ ամրոցներով հանդերձ¹⁷: Գագիկ Արծրունուց խլած Շահրանը տարբեր է Վասպուրականի ճուշ գավառի Շամիրամ բերդից, որ հիշում են թովմա Արծրունին և Անանունը¹⁸: Այդ բերդը մերձ է Պարսկահայքին և Յակուտի մոտ հիշվում է Շամիրամ ձևով¹⁹, ինչը չի աղերսվում Շահրանին: Ալ-Համիդը նույնացվել է Ամյուկի հետ²⁰, ինչն իհարկե, դժվար է ապացուցել:

Սայֆ ադ-Դաուլան կամենում էր Հարավային Հայաստանը, այդ թվում նաև Արծրունյաց տիրույթները, հենարան դարձնել ընդդեմ Բյուզանդիայի²¹: Սակայն նրան չհաջողվեց ամրանալ այնտեղ և նույն՝ 940թ. գրավելով Խլաթը, ավերելով Մուշը, խուժեց Փոքր Ասիա, բայց Կոլոնիա քաղաքի մոտ ծանր պարտություն կրելով դիմեց նահանջի²²:

¹⁵ G.Freitag, *Geschichte der Dynastien der Hamdaniden in Mosul und Aleppo* ("Zeitschrift der Deutschen morgenlandischen Gesellschaft", X, Leipzig, 1856, s. 464 – 465).

¹⁶ I.Markwart, *Südarmenien*, s.455, 460.

¹⁷ G. Freitag, s. 480 – 482.

¹⁸ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 398, 418, 436:

¹⁹ *Տես Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին*, էջ 85:

²⁰ I.Markwart, *Südarmenien*, s. 460.

²¹ M.Canard. *Les Hamdanides et l' Arménie* ("Annales de l' institut d' études orientales", t. VII, Alger, 1948, p. 85).

²² G.Freitag, s. 467.

*Ե. ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ
ՏԱՐԻՆԵՐԸ*

940-ական թթ. սկզբին Ատրպատականի ամիրաները խախտում էին նաև Բագրատունյաց թագավորության անդորրը: Ընդհանուր թշնամիների դեմ Բագրատունի և Արծրունի թագավորները հանդես էին գալիս սերտ համադաշնությամբ: Մոտավորապես 941թ. Ատրպատականի ամիրաներից մեկը ներխուժեց Բագրատունյաց թագավորության տարածք և «յանկարծօրեն թևակոխեաց անցեալ ընդ Գողթնաստան և ընդ աւանն Նախճաւան, զբռամբ ածեալ և զգօրս Շարուրն կոչեցեալ գաւառի, գայ հասանէ մինչև ցմե՛ծ մայրաքաղաքն Դուին», որից հետո նա գրաված շրջանները՝ «յԱյրարատեան գաւառ և մինչև ցԱրագածն կոչեցեալ ոտն... ընդ իւրունն նուաճէ իշխանութեամբ», ենթարկելով հարկահանության: Աբաս Բագրատունի թագավորը հավանաբար դաշինքի մեջ էր Գագիկ Արծրունու հետ, ուստի սուրհանդակի միջոցով գրավոր դիմեց Գագիկին, որպեսզի նա գա և «փրկեսցէ զնա ի հարկապահանջ բռնութեանցն հինից»: Գագիկը «յիշեալ զգութ արեան հարազատութեանն» մեծ զորքով մեկնեց Այրարատ՝ «հարազատի վրեժն առնելու», – գրում է Անանուն պատմիչը¹: Քանի որ թշնամին բանակել էր Դվինում, ուստի Արծրունյաց զորագնդերը մարտակարգ ընդունեցին նրա մատույցներում՝ խոր վիրապ վանքի մոտ: ճակատագրական պահ էր: Հայոց կաթողիկոս Եղիշեն (հովվել է 941 թվականից) քահանայական դասով մերձակա բլրալանջից աղոթում էր հայոց զենքի հաղթության համար, խրախույս տալով թշնամու հանդիման կանգնած հայ ռազմիկներին²: Աբաս թագավորը մինչև Գագիկի զորքի ժամանելը պարտվելով թշնամու, «մագապուր անկանի յաշխարհն Վրաց»³, ուստի Գագիկ Արծրունին ինքն էր գլխավորում մարտի ընթացքը: Նա, ինչպես հավաստում է

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 464:

² Նույն տեղում, էջ 466:

³ Նույն տեղում, էջ 464:

պատմիչը, – «վառեալ ի զէն և ի զարդ արիական քաջութեան, առեալ զգօրսն զնդին հաւատացելոց, հանդարտ յառաջ մատուցեալ գունդս գունդս պատշաճաբար յօրինէ զհւրոյ ճակատուն»: Գագիկը իր զորասյունը գրոհի տարավ թշնամու կենտրոնի վրա, ուր կային չորս հազար զինվորներ, և «իբրև կայծակն ընդ եղէգն հարեալ այնպէս խորտակեաց զռազմաց զօրուն այլազգեաց»: Արծրունյաց զորքը փայլուն հաղթանակ տարավ, ոչնչացնելով ութ հազար հոգու, շատերին էլ գերի վերցրեցին և Գագիկի հրամանով շղթայակապ ուղարկեցին Դարույնք բերդը⁴:

Այնուհետև Գագիկ Արծրունին գրոհեց Դվինի վրա, «կամելով հրծիգ առնել զքաղաքն ծագէ ի ծագ, և զաշխարհն շուրջանակի», բայց Դվինի երիցանին («ծերք քաղաքին») նրան աղերսեց «զխաղաղութիւն, տալով հարկս և պատանդս»⁵, ինչը վկայում է, որ Դվինի ավագանին ընդունել է Գագիկի գերիշխանությունը: Վերջինս հարգեց քաղաքի ավագանու աղերսանքը և հարկերն ու պատանդները վերցնելով «դառնայ խաղաղութեամբ յամուրն Դարիւնս»⁶: Հավանաբար, Դվինը Արծրունիների տիրույթների մեջ է մնացել մինչև Գագիկի մահը: Ենթադրվում է, որ այն Արծրունյաց թագավորության կազմում էր նաև Գագիկի հաջորդների գահակալման տարիներին⁷: Բայց աղբյուրների տվյալները չեն հաստատում այդ ենթադրությունը⁸: Ասողիկը գրում է, որ 983թ. Գողթնի ամիրան մեծ զորքով արշավեց «յաշխարհն Վասպուրականի», պարտության մատնելով Արծրունյաց զորքին (ճուռա զավառում): Մինչ այդ նույն ամիրան տիրացել էր Դվինին, այն խլելով Սալարյան ամիրայից⁹:

Գագիկ Արծրունին շարունակում էր զինական օգնություն ցույց տալ Դայսամ իբն Իբրահիմին, որին սակայն 941թ.

⁴ Նույն տեղում, էջ 466 – 468:

⁵ Նույն տեղում, էջ 468:

⁶ Նույն տեղում:

Տես В.Васильевский, *Советы и рассказы византийского боярина XI в* ("Журнал министерства нар. просвещения", 206, С.Петербург, 1881, с. 110 – 111).

⁸ Հմմտ. V.Minorsky, *Studies in Caucasian History*, London, 1953. p 5 – 6.

⁹ Ստեփաննո Տարոնեցի, III, ԺԲ, էջ 188 – 189:

պարտության մատնեց Սալարյան Մարզուբանը¹⁰: Այնուհետև, ինչպես վկայում է «Միսկավայիը, Դայսամ Իբրահիմը «մեկնեց Իբն ադ-Դայրանիի (Գագիկ Արծրունու) մոտ, քանի որ վստահություն էր տածում նրա հանդեպ: Բացի այդ, Դայսամն իր գանձերը պահ էր տվել նրան: Մարզուբանը գրեց նրան (Գագիկին) և պահանջեց կալանել Դայսամին, բայց նա մերժեց: Յետագայում նա (Գագիկը) ստիպված էր անսալ Մարզուբանին և ձերբակալել Դայսամին, սակայն խնդրեց չհարկադրել իրեն՝ հանձնելու նրան, ինչին Մարզուբանը համաձայնեց... Իսկ երբ նա կատարեց այդ, Մարզուբանը խախտեց պայմանը և թուղթ ուղարկեց նրան, պահանջելով Դայսամին հասցնել իր նստավայր: Նա (Գագիկը) որոշ ժամանակ մերժեց այդ պահանջը, բայց հետո հարկադրված եղավ Դայսամին հանձնել»¹¹:

Փաստորեն Գագիկ Արծրունին միջամտել է Ատրպատականի ներքաղաքական որոշ գործընթացների, ջանացել է սատար կանգնել իր կողմնակից ուժերին: Նա քաջ գիտակցում էր, թե ինչ նշանակություն ունեն Արծրունյաց իշխանապետության (նաև բովանդակ Չայաստանի) համար Ատրպատականի տերերի հետ բարիդրացիական հարաբերությունները: Գագիկը քաղաքական ճկունություն ցուցաբերեց նաև Սալարյան Մարզուբանի նկատմամբ: Դրան նպաստեց այն հանգամանքը, որ տվյալ պահին երկուսին էլ սպառնում էին Միջագետքին, հյուսիսային Ասորիքին և Աղծնիքին տիրացած արաբական Չամդանի տան ամիրաները: Օտար և այլակրոն ցեղերով շրջապատված լինելու հանգամանքը Արծրունիներին հարկադրում էր ճկուն ու շրջահայաց քաղաքականությամբ չեզոքացնել հնարավոր սպառնալիքները:

Գագիկ Արծրունու մահվան տարի է համարվել 936 թվականը¹² (նաև 935-ը¹³, 937-ը¹⁴), ինչի համար հիմք է ծառայել

¹⁰ V.Minorsky, *The Caucasian vassals of Marzuban in 344/945 ("Caucasika". II, 1953, p. 515 – 516.*

¹¹ Ibn Miskawayh, p. 36 – 37.

¹² Ս. Չամչեան, *Բ, էջ 826, Ս.Օրմանեան, Ազգապատում, Ա, էջ 1078:*

¹³ Լեո, *Երկերի ժողովածու, հ. II, էջ 570, 629:*

¹⁴ M. Brosset, *Collection d' historiens arméniens, I, S.Petersbourg, 1874, p. 248, n. 2; R.Grousset, Histoire de l' Arménie, p. 466; P.Willemart, L' Etat Arménien du Yaspourakan ("Miroir de l' Histoire". 207. Paris, 1967, p. 72).*

Ասողիկի այն վկայությունը, ըստ որի Գագիկը թագավորել է 29 տարի¹⁴: Եվ որովհետև վերջինս թագ է ստացել 908-ին, ուստի նրա մահը դրվել է այդ թվականից 29 տարի հետո: Բայց ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ Գագիկը պետք է վախճանված լինի 940թ. հետո¹⁵: Դա հավաստվում է 942թ. դեպքերի ժամանակ արաբ մատենագիրների կողմից Գագիկի և Դայսամ Իբրահիմի հարաբերությունների մասին վկայող վերը նշված փաստով: Ինչ վերաբերում է Ասողիկի կողմից Գագիկի թագավորելու տարիները 29-ով սահմանափակելուն, ապա դա, ինչպես նշել ենք, հետևանք էր նրա գահակալման սկիզբը 914թ. դնելու փաստի: Ասողիկը Գագիկի մահվան թվական է համարում 943-ը¹⁶: Անանիա Մոկացի իր թղթերից մեկում գրում է, որ 942թ., երբ ինքը բազմեց հայոց կաթողիկոսի գահին, «և ի մտանել յաջորդ ամին բաղկացութիւն», վախճանվեց «հայոց թագավոր» Գագիկը՝ «եկեղեցու փառքը, քրիստոնյաների պարծանքը, արին ու հզորը, ծովահանճար իմաստությամբ տիրակալը»¹⁷:

¹⁴ Տե՛ս Ղ.Ալիշան, *Հայասպատում*, էջ 83: *Հ.Մարկվարտը նշում է Գագիկի մահվան ճշգրիտ թվական 943-ը (Sudarmenien, s. 459): Նույն կարծիքին է նաև Ս.Շալճյանը իր «Վասպուրականի թագավորության պատմությունից» հոդվածում (ՀՍՄՌ ԳԱ տեղեկագիր, 1949, N 4, էջ 50):*

¹⁶ Ստեփաննոս Տարոնեցի, *III, հւՁ, էջ 281*:

¹⁷ Անանիա Մոկացի, *Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից («Արարատ», 1897, էջ 131): Հմմտ. նաև Սամուել Անեցի, էջ 99*:

ԳԱԳԻԿԻՆ ՀԱՉՈՐԳԱԾ ԱՐԾՐՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

Ա. ԴԵՐԵՆԻԿ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գագիկ Արծրունուն հաջորդած Դերենիկ թագավորը նրա ավագ որդին էր¹, Աշոտ կրկնանունով, որը համաձայն Ասողիկի վկայության, թագավորեց «ամս ժէ և վախճանեցաւ ի Նէ թուականին»²: Հետևաբար, նա վախճանվել է 958 թվականին: Սակայն այն փաստը, որ պատմագիրը նրա թագավորելու տարիներ է նշում 17-ը, խախտում է 958 թիվը: Ուստի Ասողիկի նշած «ի Նէ թուականին» դարձվածը պետք է սրբագրել «ի Նէ թուականին» ձևով³, որով Դերենիկի գահակալման տարիներն ընկնում են 943 – 958 թթ.: Դերենիկ արքայի մահը 958թ. է դնում նաև Անանիա Մոկացիին, որը նրան հիշում է իբրև «արի արքայ», առանց թագավորելու թվականները նշելու⁴: Սակայն ո՛չ Դերենիկը, և ո՛չ էլ նրա հաջորդները չունեին ռազմի բոցերի մեջ կոփված այն ճակատագիրը, որը վիճակված էր Գագիկ Արծրունուն: Նույն Անանիա Մոկացիին Դերենիկին հիշում է սոսկ որպես «թագաւորն Վասպուրականի», այն դեպքում, երբ Աբաս Բագրատունուն անվանում է «Հայոց թագավոր»⁵: Թեև Միսկավայիը Դերենիկին կոչում է «Հայաստանի կառավարիչ»⁶, սակայն նա նկատի ունի սոսկ Վասպուրականը:

Դերենիկ Արծրունու թագավորության տարիներին

¹ Miskawayh. IV. p. 159..

² Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԶ, էջ 281:

³ Տե՛ս Ստեփաննոս Տարոնեցու երկի էջ 393-ի ծան. 146, նաև Վ.Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Բ, Երևան, 1956, էջ 31, ծան. 49:

⁴ «Արարատ», 1897, էջ 140:

⁵ Նույն տեղում, էջ 133:

⁶ Miskawayh . IV. p. 172:

չարունակվեց Արծրունիների օգնությունը Ատրպատականի Սալարյան ամիրայի դեմ ծառայած քուրդ ցեղապետներին: 953թ. Դայսամ իբն Իբրահիմը վերստին մի փորձ կատարեց Ատրպատականի իշխանությանը տիրանալու համար, սակայն այս անգամ ևս նրան վիճակված էր ճաշակել պարտության դառնությունը: Նա ապաստանեց Արծրունիների մոտ, բայց երբ Մարզուբանը զորք ուղարկեց Վասպուրական՝ նրան բռնելու, Դայսամն ստիպված հեռացավ Միջագետք⁷: 956թ. նա մի վերջին փորձ կատարեց տիրել Ատրպատականին, սակայն այս անգամ ևս բախտը չժպտաց նրան: Դայսամը պարտություն կրեց Մարզուբանից ու նորից ապաստան գտավ Դերենիկ Արծրունու մոտ, որին կանխապես պահ էր տվել իր գանձերը⁸: Ի դեմս Դայսամ Իբրահիմի, Դերենիկ Արծրունին հույս ուներ Ատրպատականում ձեռք բերել բարեհաճ կառավարիչ և ի դերև հանել այդ ամիրայության կողմից նյութվող սադրանքները: Սակայն Դերենիկին չհաջողվեց հասնել այդ նպատակի իրագործմանը: Ավելին. նա ստիպված էր Դայսամին հանձնել Մարզուբանի ձեռքը, նույնիկ հարկ տալ նրան⁹: Բայց վերջինս կամենալով Արծրունիներին հակել իր կողմը, չորս տարով նրանց ազատեց հարկատվությունից¹⁰: Մարզուբանի նման վերաբերմունքն ուներ այլ դրդապատճառներ: Նա ջանում էր Արծրունիներին ետ պահել իր ախոյաններին գորակցելուց, հակասալարյան ուժերին ապաստան տալուց: Հատկանշելի է, որ Դայսամ Իբրահիմի պարտությունից փոքր-ինչ հետո մեկ այլ քուրդ ցեղապետ Շադդադյան Մուհամմադը Դվինում պարտվելով Մարզուբանից, իր ցեղակիցների հետ հեռացավ Վասպուրական, ապաստանելով Դերենիկ թագավորի մոտ¹¹: Այստեղից նա (հավանաբար Դերենիկի հորդորով) դիմեց

⁷ Նույն տեղում, էջ 160:

⁸ Նույն տեղում, էջ 172:

⁹ V. Minorsky, *The Caucasian vassals of Marzuban, in 344-955 ("Caucasika", 1953, IV, p. 519 - 520).*

¹⁰ V. Minorsky, *The Caucasian vassals, p. 520.*

¹¹ V. Minorsky, *Studies in Caucasian History, p. 12 - 13;* Ա. Տեր-Ղևոնդյան, *Մուհամադիմ Բաշիի XI - XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Չանձակի Շադդադյանների մասին («Բանբեր Սատենադարանի», 6, Երևան, 1962, էջ 477 - 478):*

Բյուզանդիային, խնդրելով գորակցել ընդդեմ Սալարյանների, սակայն կայսրությունում նրան չարձագանքեցին, և մեկ տարի հետո՝ 955-ին Մուհամմադը վախճանվեց Վասպուրականում: Վերջինս Բագրատունիների թագավորության ախոյանն էր: Տակավին 953թ. Աշոտ Ողորմած թագավորը փորձել էր Դվինին տիրացած նույն Մուհամմադից ազատագրել այդ քաղաքը, սակայն պարտություն էր կրել: Դերենիկը անտեսեց այդ հանգամանքը և ապաստան տվեց Մուհամմադին, թեև վերջինիս մահվանից հետո նրա որդիները չկամեցան մնալ «անհավատների երկիր» Վասպուրականում և հեռացան իրենց կրոնակիցների մոտ Ատրպատական¹², գերադասելով Սալարյաններին Արծրունիներից:

Միսկավայիի վկայությամբ Դերենիկ Արծրունի թագավորին աթոռակից էր եղբայրը՝ Յամագասպ-Աբուսահլը (Յամգա): Պատմագիրը գրում է, որ Դայսամ Իբրահիմը «Յայաստան ուղարկեց իր մարդկանց, որոնք կարողացան ապահովել նրա թագավորների՝ Դերենիկ իբն -Գագիկի և նրա եղբայր Յամգայի, Իբն-Սաբատի (Աբասի) և այլոց հավատարմությունը»¹³: Այսպիսով արաբ մատենագիրը Դերենիկի կենդանության ժամանակ «թագավոր» է անվանում Աբուսահլ-Յամագասպին: Արծրունի եղբայրները հետևել են տոհմում ավանդաբար ընդունված կարգին, երբ, ինչպես նշվել է, Արծրունյաց տիրույթները բաժանում էին միմյանց միջև:

Բ. ԱՐՈՒՄԱՅԼ-ՅԱՍԱԶԱՍՊ

Դերենիկին հաջորդեց եղբայրը՝ Աբուսահլ-Յամագասպը (958 – 968), որը նրա վախճանվելուց հետո միայնակ թագավորեց Վասպուրականում (ուրիշ եղբայր նա չուներ): Անշուշտ, շփոթի տեղիք չպետք է տա Ասողիկի մի վկայությունը, որտեղ նշված է, թե իբր Դերենիկից հետո թագավորեց «Աշոտ որդի Աբուսահլի»¹: Վարդան Արևելցու հավաստմամբ, Գագիկ

¹² V.Minorsky. *Studies in Caucasian History*, p. 13.

¹³ Miskawayh. II, p. 159.

¹Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԶ, էջ 281: *Ասողիկին կրկնում է Սատթեսու Ուռհայեցին (ժամանակագրություն. Վաղարշապատ, 1898, էջ 8, 34):*

Արծրունուց հետո թագավորեցին «Դերենիկ, որդի նորա, և գկնի եղբայր նորա Աբուսահլ»²: Նույնն է վկայված նաև Անանիա Մոկացու թղթերից մեկում³: Նկատենք նաև, որ Աբուսահլ-Յամազասպին հիշում է նաև Գրիգոր Նարեկացին⁴: Ընդսմին այլ առիթով Ասողկը Աբուսահլ-Յամազասպին կոչում է «թագաւոր Վասպուրականի» 968թ., երբ նրա մոտ ապաստանեց Վահան կաթողիկոսը⁵: Անանիա Մոկացին և Ստ.Օրբելյանը նրան հիշում են սոսկ Յամազասպ անունով⁶:

Աբուսահլ-Յամազասպի օրոք Բյուզանդիան ընդհուպ մոտեցավ Արծրունյաց թագավորությանը, 966թ.՝ Տարոնը գրավելու հետևանքով: Այնուհետև կայսրությունը կարող էր ավելի ներգործուն ազդեցություն ունենալ Վասպուրականում, որին տիրանալով հնարավոր կդառնար հարավից աքցանի մեջ առնել Բագրատունյաց թագավորությունը: Յավանաբար, կայսրության հետ քաղաքական առնչությունները բարելավելու նպատակ էր հետապնդում 965թ. Աբուսահլ-Յամազասպի կողմից Պանդալեոն քահանային Պետրոս և Պողոս առաքյալների նշխարները բերելու պատրվակով Կոստանդնուպոլիս առաքելը⁷: Նպատակն, իհարկե, միայն մասունքները չէին, այլև քաղաքական շահախնդրությունները: Արծրունյաց արքան նույն առաքյալների նշխարները կարող էր ձեռք բերել Կոզովիտ գավառից, որտեղ տվյալ պահին ամփոփված էին դրանք⁸: Պանդալեոնին կայսրության մայրաքաղաք ուղարկելու բուն նպատակը հզոր և հավատակից հարևանի հետ բարիդրացիական հարաբերությունների համար քաղաքական ենթահող ստեղծելն էր մի այնպիսի ժամանակ, երբ կայսրության կողմից սպառնալիք էր սպասվում Տարոնի գրավումից հետո:

² Վարդան, ԾԱ, էջ 92:

³ «Արարատ», 1897, էջ 140:

⁴ Գ.Յովսեփյան, *Հիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 135 – 136*:

⁵ Ստեփաննոս Տարոնեցի, III, Ը, էջ 182:

⁶ Անանիա Մոկացի, *Յաղագս ապստամբութեանն տանն Աղուանից* («Արարատ», 1897, էջ 140, *Ստեփաննոս Օրբելեան, էջ 289*): Նույնն է նաև *Միսկավայիի մոտ* (Miskawayh, IV, p. 159՝ («Յամզա» ձևով):

⁷ Գ.Յովսեփյան, *Հիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 117 – 118*:

⁸ *Յուզակ հայերեն ձեռագրաց Սատենադարանին Մխիթարեանց ի վիեննա, Ա, էջ 13*:

Աբուսահլ-Յամազասպի բյուզանդամետ ձեռնարկումներն արձագանք գտան նաև Բագրատունյաց թագավորությունում: Յայոց կաթողիկոս Վահանը (Վահանիկ) քաղկեդոնական դավանությանը հարելու պատճառով հայ եկեղեցականների կողմից գահընկեց արվեց քաղաքամայր Անիում 968թ. կայացած եկեղեցաժողովի որոշմամբ և «փախստեայ անկանի ի Վասպուրական առ Ապուսահլ թագաւոր»: Ժողովը նման վճիռ ընդունեց «կամակցութեամբ Աշոտոյ Շահնշահի»⁹, իմա՝ Աշոտ Ողորմած արքայի կամքով: Նորընծա Ստեփաննոս կաթողիկոսը եկեղեցաժողովի վճռով երկու հոգևորականի հետ մեկնեց Աղթամար՝ Աբուսահլ-Յամազասպի մոտ որպեսզի հանդիմանի նրան և կարգաթող արված Վահանին: Բայց Արծրունի թագավորը նույնիսկ չունկնդրեց նրանց և փակել տվեց Աղթամարի բանտում¹⁰: Ամենայն հավանականությամբ, Աբուսահլ-Յամազասպը կամենում էր հայոց կաթողիկոսի աթոռը վերստին հաստատել Աղթամարում, ուստի Վահանին ճանաչեց կաթողիկոս, իսկ Ստեփաննոս կաթողիկոսին տեղափոխել տվեց մայրաքաղաքի բանտից Անձախի ծոր գավառի Կոտոր բերդ, որտեղ նա կնքեց իր մահկանացուն, թերևս չտանելով բանտի տաժանելի պայմանները, որ կարող էին ստեղծված լինել Վահանի սադրանքով և Աբուսահլ-Յամազասպի հրամանով: Սակայն նույն տարում վախճանվեց նաև Վահանը:

Իհարկե, Վահան կաթողիկոսին հովանավորելը բնավ չէր նշանակում, թե Արծրունյաց թագավորը կամենում էր նախապատվություն տալ քաղկեդոնական դավանությանը¹¹: Թերևս, Վահան կաթողիկոսն էլ նման մտադրություն չուներ: Նա պարզապես կամեցել է բարելավել հարաբերությունները Վրաց և Բյուզանդական եկեղեցիների հետ, ինչը չեն հանդուրժել հայ եկեղեցականները: Անշուշտ, հիմնագուրկ է այն ենթադրությունը, թե իբր Գրիգոր Նարեկացին, որ 958-ին հազիվ լիներ

⁹ Ստեփաննոս Տարոնեցի, III, Ը, էջ 181 – 182: *Տես նաև* Ստեփաննոս Օրբելեան, ԾԳ, էջ 289:

¹⁰ *Տես* Ստեփաննոս Տարոնեցի, III, Ը, էջ 182:

¹¹ *Արծրունյաց պետության մեջ ոչ Աբուսահլ-Յամազասպի և ոչ էլ որևէ ուրիշ Արծրունի գահակալի կամ իշխանի օրոք քաղկեդոնականությունը դույզն իսկ ազդեցություն չի ունեցել:*

տասը տարեկան¹², Վահանի համախոհն էր և պաշտպանում էր նրա քաղկեդոնամետ ուղեգիծը¹³: Իսկ մեկ այլ ենթադրությամբ Գրիգոր Նարեկացին «գործեաց հաւանեցուցանել զագգն ի միաբանութիւն ընդ եկեղեցւոյն Յունաց և այլոց ազգաց քաղկեդոնականաց»¹⁴: Հավանաբար, նման ենթադրության համար հիմք է ծառայել XVII դ. իտալացի միսիոներ Կղեմես Գալանոսի երկը, ուր նշվում է, որ իբր, Գրիգոր Նարեկացին «կամօք և գործով միաբան եկաց սուրբ կաթողիկե եկեղեցւոյն: Սա էր համախոհ Վահանայ և հնագանդ եկեղեցւոյն Հռովմայ»¹⁵:

Իհարկե, բյուզանդամետ Վահան Կաթողիկոսին հովանավորելը վկայում է, որ Արծրունյաց գահակալը ևս ուներ կայսրության կողմը դիրքորոշվելու միտումներ: Դա, անշուշտ, ուներ իր զորավոր հիմքերը: Նույն 968թ. բյուզանդական զորագնդերը ներխուժեցին Հայաստան¹⁶, սպառնալով նաև Վասպուրականի թագավորությանը: Պանդալեոնը հայերենին գերազանց տիրապետող հույն էր, որը կատարում էր թարգմանություններ հունարենից հայերենի¹⁷: Հավանաբար, նա պետք է միջնորդ լիներ Արծրունյաց թագավորության և Բյուզանդիայի միջև, անշուշտ շրջանցելով Բագրատունյաց թագավորին: Պանդալեոնը Աբուսահլ-Համազասպին անվանում է «երկրորդ տիեզերակալ», «արքայից արքայ մեծ պետութեանս տանս Հայոց»¹⁸, շեշտելով իր հավատարմությունը նրա հանդեպ: Նա, ամենայն հավանականությամբ «առաջին տիեզերակալ» էր համարում Բագրատունի արքային, որի հետ պետք է մերձակցեր «երկրորդ տիեզերակալ» Արծրունի թագակալը, ի հեճուկս ոսոխ ուժերի:

¹² Հմմտ. Ս.Աբեդյան, *Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 576*:

¹³ F. Tournebize, *Histoire politique et religieuse de l'Arménie*, p. 153.

¹⁴ Ս.Չանչեան, *Պատմութիւն Հայոց, Բ, էջ 852*:

¹⁵ Կղեմես վարդապետ, *Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հ. Ա, Հոռմ, 1650, էջ 211*:

¹⁶ Karl Leonhardt, *Kaiser Nicephorus II Phokas und die Hamdaniden (960-969)*, Halle-Wittenberg, 1887, s. 46.

¹⁷ *Ցուցակ ծեռագրաց Սատեն. Մխիթարեանց ի Վիեննա, Ա, էջ 14*:

¹⁸ Գ.Հովսեփեան, *Յիշատակարանք ծեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ*

4. ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

968թ. վախճանված Աբուսահլ-Համազասպին հաջորդեց որդին՝ Աշոտը, որը ըստ Ասողիկի, թագավորեց «ամսս ԻԲ և վախճանեցաւ ի ԵԼԹ թուականին»¹, իմա՝ 990-ին: Հետևաբար, ստացվում է, որ Աշոտ Արծրունին գահակալել է 968-990թթ.: Նա ուներ «շահնշահի» պատվատիտղոս²: Բայց, ինչպես հայտնի է, «շահնշահ» տիտղոսը կրում էր նաև Աշոտ Արծրունու ժամանակակից Աշոտ III Բագրատունին: Ըստ երևույթին Գագիկ Արծրունի արքայի հաջորդները նրա հետևողությամբ շարունակել են կոչվել «շահնշահ» (նշենք, որ Աբուսահլ-Համազասպը ևս կրում էր «արքայից արքա» համանշանակ տիտղոսը)³:

Ուշագրավ է անշուշտ այն փաստը, որ անգամ Աշոտ III ողորմած թագավորի դուստր Հռիփսիմեն 981թ. Նախավկայի վանքին թողած կտակագրում Աշոտ Արծրունուն հիշում է «շահնշահ» տիտղոսով: Այդ կտակագրում Աշոտ Արծրունին համարվում է նաև իշխող «մեծի տերութեան արեւելից և հարաւոյ հայոց»⁴:

Հավանաբար, Աշոտ Արծրունին հոր մահից հետո որոշ ժամանակ (թերևս մինչև 970-ական թթ. կեսերը) թագավորել է միանձնաբար, իսկ այնուհետև նրան աթոռակցել են եղբայրները՝ Գուրգենը և Սենեքերիմը, նույնպես կրելով «թագավոր» տիտղոսը, «շահնշահի» պատիվը վերապահելով ավագ եղբորը: Այսպես, Գրիգոր Նարեկացին «երգ երգոցի» մեկնության մեջ 977թ. թագավորներ է հիշում նաև Գուրգենին ու Սենեքերիմին, որոնք ավագ եղբոր՝ Աշոտի հետ «թագաւորեալք և փառաւորեալք ի մի ամանակի»⁵: Աշոտ Արծրունու թագավորության ժամանակ՝ 981թ. Սենեքերիմի կողակից Խուշուշը Վարազավանքի Ս.Սոփիա եկեղեցում թողած արձանագրության մեջ ամուսնուն հիշում է «արքայ» տիտղոսով⁶: Բայց Վարդան

¹ Ստեփաննոս Տարոնեցի, III, *կ2*, էջ 281:

² Վարդան, *ԾԱ*, էջ 92, Գ.Յովսեփեան, *Յիշատակարանք ծեռ.*, Ա, էջ 139:

³ Գ.Յովսեփեան, *Յիշատակարանք ծեռագրաց*, Ա, էջ 117:

⁴ *Նույն տեղում*, էջ 139:

⁵ Գրիգոր Նարեկացի, *Սատենագրութիւնք Վննետիկ*, 1840, էջ 386 - 387:

⁶ *Տես «Ազգագրական հանդես»*, XXI, էջ 66:

Արևելցիները եղբայրներին թագավոր է հիշում առանձին և հաջորդաբար⁷: Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնության մեջ ասվում է. «Ի ՆԻԶ (977) թուականութեանս Հայոց հարկեցայ ես Գրիգոր քահանայ ի Նարեկայ, որդի տեառն Խոսրովայ Անձաւացեաց եպիսկոպոսի, ի Գուրգենայ... արքայէ յորդոյ Աբուսահլայ Համագասպ թագաւորի... մեկնեցի զԵրգս երգոցն»⁸: Նկատենք, որ Մատթեոս Ուռհայեցիին 974թ. Վասպուրականի թագավոր է հիշում Սենեքերիմ Արծրունուն⁹, երբ, ինչպես տեսանք, թագավորում էր Աշոտ Արծրունին: Ուռհայեցու վկայությունը վերաբերում է ավելի ուշ ժամանակների: Գրիգոր Նարեկացուն Գուրգենի կողմից մեկնողական գործի պատվիրելու հանգամանքն, անշուշտ, վկայում է հանձարեղ բանաստեղծին Արծրունիների ցուցաբերած հովանավորության մասին: Վասպուրականում իբրև միայնակ թագավոր հիշվում է Սենեքերիմը նաև 986 թվականին¹⁰:

Աշոտ Արծրունու գահակալության տարիներին (970-ական թթ.) արաբա-բյուզանդական պատերազմներն իրենց ոլորտի մեջ ներքաշեցին նաև Արծրունյաց թագավորությունը: 974թ. Բյուզանդիայի հայազգի Հովհան Չմշկիկ կայսրը հարավային Հայաստանով արշավեց Միջագետք, ջանալով գրավել Ամիդ և ապա Բաղդադ քաղաքները: Կայսրը ակնկալում էր հայոց ռազմուժի զորակցությունը, երբ բանակեց Հարք գավառում և օգնակոչ ուղղեց հավատակից հայ մեծամեծներին: Կայսեր մոտ ժամանեցին Գուրգեն և Սենեքերիմ Արծրունիները, նաև Սասունի իշխանը¹¹: Բագրատունի և Արծրունի թագավորների հետ դաշն կնքելուց հետո Չմշկիկի զորքը մտավ Տարոն, բանակելով Մուշ քաղաքի մերձակայքում¹²: Ուշագրավ փաստ է անշուշտ, որ

⁷ Վարդան, *ԾԱ*, էջ 92:

⁸ Գրիգոր Նարեկացի, *Մատենագրութիւնք*, էջ 290-291: *Տես նաև* Գ.Յովսեփեան, *Յիշատակարանք ձեռագրաց*, Ա, էջ 135 - 136:

⁹ Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 17:

¹⁰ *Տես Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, Ա, էջ 77, նույնի *հ. Բ*, էջ 557; *A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum*. London 1913, p. 261, *Մայր ցուցակ ձեռագրաց Ա.Հակոբեանց, Երուսաղեմ, 1968*, էջ 142:

¹¹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 17:

¹² *Նույն տեղում*, էջ 18:

Աշոտ Արծրունին անձամբ չժամանեց կայսեր մոտ: Հավանաբար, նա տարակուսում էր նրա հաղթանակի նկատմամբ, քանի որ նախորդ տարում ևս կայսրը փորձ էր արել գրավել Ամիղը, սակայն պարտվել էր նրա մոտ¹³: Բացի այդ, կայսեր հաղթանակը չէր կարող ոգևորել Արծրունի գահակալին, քանի որ նույն Չմշկիկն էր, որ տակավին 966թ. որպես Արևելքի դոմեստիկ (գորապետ) բյուզանդական զորքի գլուխ անցած գրավեց Տարոնը¹⁴: Կայսեր հաղթանակի դեպքում ոչ մի երաշխիք չկար, որ նրա զորագնդերը չէին գրավի նաև Վասպուրականը: Իսկ նրա պարտության պարագայում Արծրունիները վաստակելու էին հարևան ամիրայությունների թշնամանքը:

Հովհան Չմշկիկին չհաջողվեց գրավել Միջագետքը և շտապեց Կ.Պոլիս, որին սպառնում էին բուլղարները: Վերջիններս, խիստ նեղը լծելով բյուզանդական զորքերին, խուժել էին Հունաստան¹⁵: Դեպի Արևելք Չմշկիկի ձեռնարկած արշավանքից հետո Արծրունյաց թագավորության հանդեպ հարևան ամիրայությունները դիմեցին նորանոր ոտնձգությունների: Հետագայում դրանք շարունակվեցին նոր ուժով: 983թ. Վասպուրականի Գողթն գավառը բռնատիրած Ապուտլուսի (ԱբուԴուլաֆ) ամիրան հանկարծակի խուժեց Արծրունյաց թագավորություն և ճուշ գավառում պարտության մատնեց հայոց զորքին, որին գլխավորում էր Արծրունյաց պետության իշխանաց իշխան Ապլարիբը¹⁶: Ասողիկը ընդհարման վայր է նշում Բակեար անունով վայրը, որը Ուռհայեցու մոտ ունի «Բակ» ձևը: XIIIդ. ժամանակագիր Հովհաննես Ավագերեցը ևս այն գիտե Բակ անունով¹⁷, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ սկզբնապես հիշյալ գյուղը կրել է Բակեար անունը, իսկ հետագայում պահպանել է այդ անվան հայերեն «բակ» արմատը: Գյուղը տեղորոշվում է Հեր քաղաքից հյուսիս, ճվաշոտ գավառում:

¹³ Նույն տեղում, էջ 15-16:

¹⁴ E.Honigmann. *Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, s. 148-149.*

¹⁵ G.Moravcsik. *Byzantinoturcica, I, Die byzantinischen Quellen der Geschichte der Türkölker, Berlin, 1958, s. 110.*

¹⁶ Ստեփաննո Տարոնեցի, III, ժԳ, էջ 189 – 190:

¹⁷ Մանր ժամանակագրություններ, Բ, էջ 26:

988թ. Ատրպատականին տիրացած Ռավվադյան Աբլիաճ ամիրան «ցասմամբ մեծաւ ի վերայ աշխարհին Վասպուրականի», Արծրունիների դեմ ձեռնարկեց արշավանք: Ամիրայի ցասման պատճառը Յեր քաղաքի մոտերքում վերջինիս ամիրայի որդու ընդհարումն էր հայ զորականների հետ: Ապահունյաց ամիրայի մոտից վերադարձող Յերի ամիրայի որդին առևանգում է Յեր քաղաքի մերձակայքում խաղացող հայ երեխաներին «գայլաբար արշաւեալ»: Դեպքին ականատես Սարգիս անունով հայ զորականը հետապնդում է առևանգիչներին, պահանջում ազատ արձակել երեխաներին: Կոպիտ մերժմանը նա պատասխանում է խիզախ հարձակմամբ, կոտորում է ավագակներին, փրկելով գերված երեխաներին¹⁸: Յերի ամիրան Աբլիաճին գրգռում է Արծրունիների դեմ, «տալ ցնա խոստանայր զքաղաքն Յեր, միայն թէ զվրէժ արեան որդւոյ նորա խնդրեսցէ յաշխարհէն Վասպուրականի», – վկայում է Ասողիկը: Աբլիաճը վստահ իր զորքի սովորաթվության վրա, «անմարդացուցանել խոստանայր զաշխարհն...» և զորքով հասնելով Վասպուրականի սահմանագլուխ, պատրաստվում է հաջորդ առավոտ ներխուժել այնտեղ, սրածել նրա բնակչությանը: Սակայն նույն առավոտ նա վախճանվում է, որով և «խափանեցաւ խորհուրդ չարութեան նորա»¹⁹: Վասպուրականի հանդէպ Յերի ամիրայի և նրան զորակցող Աբլիաճի վրիժավառ մղումներն ուղղված էին Արծրունիների դեմ: Վերը նշված Սարգիս զորականը Արծրունիների ստորադրյալներից էր, հավանաբար նրանց տոհմակիցը:

Այս իրադարձությունը այլ կերպ է վերապատմված Մատթեոս Ուռհայեցու կողմից²⁰, ըստ որի Անձևացյաց թագավոր Դերենիկը իր սպարապետ Ապլղարիբից խլելով այդ պաշտոնը, հանձնում է Սարգսին: Դրանից հույժ խոցվելով Ապլղարիբը այլազգիներին դրդում է հարձակվել Անձևացիքի վրա: Թշնամին անակնկալի է բերում Դերենիկ թագավորին, որը գերվում և տարվում է Յեր՝ Աբլիաճ Ռավվադյանի մոտ: Ապլղարիբը խղճի

¹⁸Մտեփաննոս Տարոնեցի, III, ժԹ, էջ 199 - 200:

¹⁹Նույն տեղում, էջ 200:

²⁰Մատթեոս Ուռհայեցի, էջ 31 - 33:

խայթ զգալով ազատում է Դերենիկ արքային: Ուռհայեցու մոտ նկատելի է անհամաժամանակություն, քանի որ մատենագիրը նշված անցքը դնում է 976թ., մինչդեռ ըստ Ասողիկի, դա տեղի է ունեցել 988թ.: Բացի այդ, ինչպես նշել ենք, Ասողիկը Արծրունյաց թագավորության իշխանաց իշխան Ապլդարիբին հիշում է 983թ. տեղի ունեցած դեպքերի հետ կապված:

Ենթադրվում է, որ Անձևացյաց թագավոր Դերենիկի գերեվարման հետ առնչվող դեպքերը տեղի են ունեցել 1003թ. հետո²¹: Սակայն դրանք, ինչպես տեսանք, ավելի վաղ են կատարվել: Անձևացյաց Դերենիկ թագավորը նույնացվել է Արծրունյաց թագավոր Դերենիկի հետ²², որը սակայն գահակալել է ոչ թե Անձևացիքում, այլ ամբողջ Վասպուրականում և ավելի վաղ (943 – 958թթ.):

Դ. ՍԵՆԵՔԵՐԻՄ ԱՐԾՐՈՒՆԻ

Աշոտ Արծրունու մահից հետո Վասպուրականում թագավորեցին նրա եղբայրները, առաջնություն վերապահելով Սենեքերիմին (հավանաբար, եղբոր՝ Աշոտի կտակով): 998թ. Ատրպատականի Ռավվադյան ամիրա Մամլանի զորքը Յերի վրայով ներխուժեց Վասպուրական և բանակեց Ապահունիք գավառում: Ըստ երևութին Մամլանը կարողացել է Արծրունի արքաներին հարկադրել, որ նրանց ռազմուժը չի մասնակցի Ատրպատականի հետ հայ-վրացական ուժերի զինաբախմանը: Ուստի Արծրունիները չեզոք դիրք բռնեցին Ծումբ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ, երբ հայ-վրացական միացյալ զորուժը ջախջախեց Մամլանի հրոսակներին¹: Երկու տարի հետո վախճանվեց Տայքի տեր Դավիթ կյուրապաղատը, որն իր իշխանության մեջ ընդգրկված հողերը կտակել էր Բյուզանդիայի Վասիլ II կայսրին: Այդ կտակը գործադրելու նպատակով 1000թ. կայսրը զորքով ժամանեց

²¹ Տես Ս. Շալճյան, *նշվ. հոդվածը*, էջ 61-62:

²² Մ. Չամչեան, *Պատմութիւն Հայոց, Բ, էջ 826*, Ս. Օրմանեան, *Ազգապատում, Ա., էջ 1083*, Գ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 20-21*:

¹ Ստեփաննոս Տարոնեցի. *III. ԽԱ, էջ 271-273*:

Տայք, հավանաբար ապրիլ ամսին²: Իհարկե, նրա նպատակը միայն Տայքի կյուրապաղատության հողերին տիրանալը չէր, այլև ամբողջ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի գրավումը³: Վասիլ կայսեր գործը ներխուժեց նաև Հարք և Ապահունիք գավառներ: Կայսրը դեռ Հարքից չէր հեռացել, երբ նրա մոտ ժամանեց Սենեքերիմ Արծրունին, փոքր-ինչ հետո նաև նրա եղբայր Գուրգենը⁴: Արծրունիներն այդ քայլով ջանում էին շահել կայսեր բարյացակամությունը: Առժամապես դա, իհարկե, նրանց հաջողվեց: Նույն ժամանակ Վասիլ կայսրը դաշինք է կնքել Արծրունիների հետ, որոնց ընծաներ շնորհելուց զատ նա «հրովարտակ առաքեալ առ մերծաւոր ամիրայսն տաճկաց, զի մեղիցեն աշխարհին Վասպուրականի՝ դադարեցոյց զառ և զգերութիւն և զհարկապահանջ բռնութիւն», – գրում է Ասողիկը⁵: Մատթեոս Ուռհայեցու հավաստմամբ «Յամի ՆԽԹ (449) թուականութեանս Հայոց եղել սէր և միաբանութիւն մեծ ընդ թագաւորն Վասիլ և ընդ Սենեքարիմ արքայն Հայոց»⁶: Այդ դաշինքն ուղղված էր ամիրայությունների դեմ, որոնց կամենում էր հնազանդեցնել Վասիլ II կայսրը: Այդ ամիրայությունները գրեթե մշտական սպառնալիք էին Արծրունի գահակալների համար: Տակավին Գագիկ Արծրունին ջանալով ի դերև հանել այդ սպառնալիքը, նպատակադրվել էր Վանա լճի ոլորտը մաքրել օտար տարրերից, գրավել Խլաթը, Մանազկերտը և Արճեշը⁷:

Այն փաստը, որ կայսրը հրովարտակով Վասպուրականի հարևան ամիրայություններին կոչ է արել դրական դիրքավորում ունենալ Արծրունիների հանդեպ, վկայում է, որ այդ ամիրայություններն ընդունել էին Վասիլ II-ի գերակայությունը, երբ նա ժամանել էր Հարք և Ապահունիք: Հնարավոր է, որ կայսեր կամքով հիշյալ ամիրայությունները ճանաչել են Արծրունիների

² N.Adontz, *Etudes Armeno-byz.*: p. 306.

³ E.Honigmann, *Die Ostgrenze*, s. 147.

⁴ Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԳ, էջ 277, ԽԶ, էջ 281; Մատթեոս Ուռհայեցի, էջ 42:

⁵ Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԶ, էջ 281:

⁶ Մատթեոս Ուռհայեցի, էջ 42:

⁷ Տես Ցուցակ ձեռագրաց Աշոյ Ա.Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967, էջ 196, 209:

գերիշխանությունը: Ըստ մի հայսնավուրքի, 1021թ. Արծրունյաց թագավորության կազմում էին Խլաթը, Մանազկերտը, Արճեշը, Արծկեն և հարակից վայրերը⁸: Այս վկայությունը թեև կասկածի տակ է առնվել⁹, սակայն չի բացառվում, որ 1000թ. հետո Վասիլ կայսեր կամքով հիշյալ վայրերը դրվեին Արծրունիների իշխանության տակ, որով կայսրը կկարողանար Վասպուրականի թագավորության մեջ մտնող հողերի հետ դյուրությամբ տիրանալ նաև այդ շրջաններին: Է.Յոնիզմանը ենթադրում է, որ իբր Վասիլ II-ը Խլաթը, Մանազկերտը խոստացել էր Դավիթ Կյուրապաղատին, ուստի հազիվ թե նա այդ վայրերը չհանձնե՞ր նրան¹⁰: Վ.Յարությունովա-Ֆիդանյանը հավանական է համարում, որ Մ.Թ. սկզբին Խլաթի, Բերկրիի, Արճեշի և Արծկեի ամիրաները կարող էին ընդունած լինել Արծրունիների գերիշխանությունը¹¹: Արիստակես Լաստիվերտցին գրում է, որ Արճեշը Բյուզանդիային է միացրել Նիկեփոր Կոմնենոսը¹², որը Վասպուրականի կատապան էր 1022 թվականից¹³: Յնարավոր է, որ Արճեշի ամիրան 1021թ. հրաժարվել է կամովին իր տիրույթը կայսրին հանձնելուց, բայց հետագայում տեղի է տվել կատապանի գործընթացը:

Մի ձեռագիր հիշատակարանի հավաստմամբ Արծրունիները («Սեննեբերիմյանները») տիրում էին նաև Սասունին ու հարևան Խուս գավառին¹⁴: Հավանաբար 973թ., երբ բյուզանդական զորքի ու Սասունի միջև տեղի ունեցավ ընդհարում¹⁵,

⁸ *Տես Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթ. Սատեն. ի Վիեննա, Ա, էջ 100:*

⁹ *Տես* I. Markwart, *Südarmenien*, s. 473; E. Honigmann, *Die Ostgrenze*, s. 169. M. Thierry, *Notes de geogr. hist. sur le Vaspurakan*, p. 171, n. 65.

¹⁰ E. Honigmann, *Die Ostgrenze*, s. 157, n. 3. *Բայց դրանք կայսրը Արծրունիներին հանձնեց Դավիթ Կյուրապաղատի մահից հետո:*

¹¹ В. Арутюнова-Фиданян, *Фема Васпуракан* ("Византийский Временник", т. 38, М. 1977, с. 84).

¹² *Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցույ, աշխ., 4, Յուզբաշյանի, երևան, 1963, էջ 41:*

¹³ K. Yuzbashian, *L'Administration Byzantine en Arménie aux Xe-XIe siècles* ("REA", t. X (1973), p. 148).

¹⁴ *Տես Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի, էջ 197: Գնմտ. նաև Ցուցակ հայ. ձեռագրաց Մխիթ. մատեն. ի Վիեննա, Ա, էջ 77, Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Փարիզ, 1960, էջ 21:*

¹⁵ Մատթեոս Ուռհայեցի, էջ 18:

վերջինիս տերերը գերադասեցին ընդունել Արծրունիների գերիշխանությունը, թերևս հույս ակնկալելով, որ այդ կերպ չեն կիսի Տարոնի ճակատագիրը, որին 966 թ. բռնակցել էր Բյուզանդիան: Բացի այդ, Արծրունիների հովանու տակ Սասունը ապահովվում էր հարևան ամիրայությունների ոտնձգություններից:

Ասողիկի վկայությամբ Գուրգեն Արծրունին վախճանվում է Յայոց ՆԾԲ (452) թվականին (1003-ին), որից հետո «Սենեքերիմ ունի զաթոռ թագաւորութեանն անս Ի»¹⁶: Սակայն վերջինս գահակալել է մինչև 1021թ., ուստի Ասողիկի նշած ՆԾԲ թվականը, պետք է սրբագրել ՆԾ թվականի (450-ի), որով Գուրգենի մահն ընկնում է 1001 թվին: Հավանաբար, գրիչների մեղքով Ասողիկի «ի ՆԾԲ թուականին» դարձվածում վերջընթեր բառի առաջին տառը Թ-ն ընթերցելով Բ, միացրել են ՆԾ-ին: Փաստորեն 1001 թվականից մինչև 1021թ. Սենեքերիմը թագավորել է միայնակ: Ընդամին Գագիկ Արծրունուց հետո սկզբնաղբյուրներն ամենից շատ հիշատակում են Սենեքերիմին (հատկապես 1021թ. արտագաղթի առնչությամբ): Բյուզանդացի մատենագիրները հայոց արքաներին երբեք չեն հիշում «թագավոր» տիտղոսով, այլ լուր անվանում են «իշխան» կամ «իշխանաց իշխան»: Մինչդեռ Կեկավմենոսը Սենեքերիմին հիշում է իբրև «թագավոր և հին արքաների զարմից»¹⁷: Մի ենթադրության համաձայն, 1003 թվականից հետո Արծրունյաց թագավորությունը բաժանվել է երեք մասի¹⁸, ինչը հակասում է սկզբնաղբյուրների տվյալներին: Վասպուրականի թագավորությունը երեք մասի բաժանվելու մասին, ինչպես նշել ենք, խոսք կարող է լինել 970-ական թթ. հետո ընկած շրջանում:

Սենեքերիմի թագավորության տարիներին Արծրունյաց պետությունը հիմնականում պահպանեց իր ամբողջականությունը: Պարսկահայքից Վասպուրականին միացած շրջանները տակավին Գագիկ Արծրունու մահվանից փոքր-ինչ հետո արդեն անջատվել էին Արծրունիների թագավորությունից: Հերի

¹⁶ Ստեփաննո Տարոնեցի, III, Խ2, էջ 281:

¹⁷ *Советы и рассказы Кекавмена*, пер Г.Литаврин, Москва, 1972, с. 283.

¹⁸ В.Степаненко, *О причинах и датировке передачи Васпуракана Византии* ("Византийский Временник", т. 38, Москва, 1977, с. 75).

ամիրաները նույնիսկ պատերազմում էին Արծրունիների դեմ¹⁹: Անջատվել էին նաև Այրարատից Վասպուրականին միացրած գավառները: Անանուն պատմիչը նշում է, որ 941թ. Գինո բլրի մոտ տարած հաղթանակի ժամանակ Գագիկ Արծրունին գերիների մի մասին ուղարկում է Կոգովիտ (Դարույնք բերդ), ուր փոքր-ինչ հետո մեկնում է նաև ինքը²⁰: Բայց Գագիկից հետո Դարույնքում արդեն կար առանձին իշխանություն²¹:

Սենեքերիմ Արծրունին խնամիական կապերի մեջ էր Մուփարդիհի Մրվանյան ամիրա Աբու Ալի ալ-Յասսանի (991-996թթ.) հետ, որին կնության էր տվել իր դստերը: Ամիրայի մահից հետո նրա եղբայր Աբու Նասր Ահմադը (1010 – 1061թթ.) ամուսնացավ եղբոր այրու հետ²²: Սենեքերիմի մյուս դուստրը՝ Մարիամն ամուսնացած էր վրաց թագավոր Գեորգի I-ի հետ²³:

Ըստ մի տեղեկության, Սենեքերիմ Արծրունին հովանավորել է գիտությունը: Արաբ պատմագիր Բար Չեբրեսուը (XIIIդ.) գրում է, որ Սենեքերիմն իր մոտ է հրավիրել արաբ մելքիտ (երկաբնակ քրիստոնյա), հայտնի գիտնական, թարգմանիչ և բժիշկ Կոստա իբն Լուկա Բաալբեկցուն, գիտական, թարգմանական աշխատանքներ կատարելու համար²⁴: Սակայն

¹⁹ Ստեփաննոս Տարոնեցի, III, ԺԹ, էջ 200:

²⁰ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 466 – 468:

²¹ Կոստանդին Ծիրանածին, էջ 151:

²² H. Amedroz. *The Marvanid dynasty at Mayyafariqin in the X and XI centuries* ("Journal of Royal Asiatic Soc.", 1903, p. 138 – 139).

²³ Ղ. Ալիշան, *Շիրակ, Վենետիկ, 1887, էջ 149*, Կ. Կոստանեանց, *Վիմակաև տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 18*; В. Розен, *Император Василии Болгаробойца* ("Записки Имп. Академии наук", т. 44, с. Петербург, 1883 (*Извлечение из летописи Яъзи Антиохийского*), с. 70. XI դարի վրաց պատմագիր Սմբատն իր «Պատմության» մեջ Մարիամի մասին գրում է. «...երանելի Մարիամ թագուհին՝ Բագրատ թագավորի մայրը, որը կորովամիտ և քաջարի էր... զնաց Կոստանդնուպոլիս Ռոմանոս թագավորի մոտ, խնդրելու՝ խաղաղություն մտցնի արևելքում, որպեսզի պատերազմ չլինի այլևս հունաց (բերձենների) և վրաց (քարթվելների) միջև» (տես Լ. Սելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Չայաստանի և հայերի մասին*, հ. Ա, Երևան, 1934, էջ 138): Մարիամին նույն առաքելությամբ հիշում է նաև վրաց անամուն հեղինակը (XI դարի): (Տես նույն տեղում, էջ 205): Մարիամը Կոստանդնուպոլիս է մեկնել Ռոմանոս III Արգիրոս կայսեր գահակալության երրորդ տարում (նույն տեղում, էջ 138, 205), իմա՝ 1030թ.:

²⁴ H. Mapp. *Ани, Ереван, 1939, с. 69*

Կոստա Բաալբեկցին ապրել է ավելի վաղ՝ մոտավորապես Մ. Խ. Բար Զեբրեոսը գրում է, թե «պատմում են, որ Սենեքերիմը նրան հրավիրել է իրեն մոտ՝ Զայաստան, ուր նա մնացել է մինչև իր մահը: Սենեքերիմը նրա շիրիմի վրա կառուցել է դամբարան»²⁶: Զնարավոր է, որ արաբ պատմագիրը Սենեքերիմին շփոթել է Գագիկ Արծրունու հետ, որի ժամանակակիցն էր Կոստա Բաալբեկցին: Այդուհանդերձ, այդ փաստը վկայում է, որ Արծրունյաց թագավորությունում հովանավորվել է գիտությունը: Մխիթար Այրիվանեցու հավաստմամբ 1001թ. հետո «Ս.հայրն Ատոմ Վաղագեցի գիշոմադիրն կարգաւորէր. իսկ հայրն Սիմէոն արար զԱդամագիրքն հարիւր և մետասան ճառ ի խնդրոյ Սենեքերիմայ՝ թագաւորին Վասպուրականի»²⁷: Սենեքերիմի զուգակից Խուշուշ թագուհին 981թ. կառուցել տվեց նշանավոր գրչության կենտրոն Վարագա վանքի Ս.Սովիա եկեղեցին²⁸:

1000 թվականից հետո Արծրունիների վրա Բյուզանդիայի Վասիլ II կայսեր ազդեցությունը մեծացավ: Արծրունիների թագավորությանը հետզհետե սկսում են նեղել օտար ու անժանոթ ցեղերը: Ըստ Սամվել Անեցու, 1002թ. այդ ցեղերը արշավել են Վասպուրական, սակայն հակահարված են ստացել Արծրունիների կողմից և նահանջել²⁹:

Ե. ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԱՅԱԳՆԱԿՈՒԼ ՅՈՐՁԱՆՔԻՆ ԴԵՍ ՀԱՆԴԻՄԱՆ

1016 թվականին օտար և դժնաբարք ցեղերը, որոնց Ուռհայեցին անվանում է «թուրք», ներխուժեցին Վասպուրական և «անողորմ ի բերան սրոյ կոտորէին զհաւատացեալքս քրիստոսի»¹: Մի ձեռագիր հիշատակարանում նշվում է, որ

²⁵ Զասմիկ Սկրտչյան, *Զայերի և մեթիստների փոխհարաբերությունները միջմադարում («Զայաստանը և քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000թ., էջ 144)*:

²⁶ Н. Марр, *Ани*, с. 69.

²⁷ Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Զայոց, Մոսկուա, 1860, էջ 57:

²⁸ «Ազգագրական հանդես», XXI, էջ 66:

²⁹ Սամուել Անեցի, էջ 104:

¹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 47:

նման արշավանք տեղի է ունեցել նաև 1018 թվականին²: Ենթադրվում է, որ 1016, նույնիսկ 1021 թվականներին Վասպուրականի թագավորության դեմ արշավող ցեղերը Ատրպատականի քուրդ ամիրաները՝ Բավվադյաններն էին և Գանձակի Շադդադյանները (դարձյալ քրդական ծագումով): Վերջիններիս զորքում ծառայում էին Կասպից ծովի հարավային ռուրտի իրանալեզու ցեղերը՝ դայլամցիները (հայկ. աղբյուրներում՝ դելնիկներ)³: Սալարյանների ցեղակիցները: Այդ զորքում ընդգրկված էին նաև թուրքեր, իսկ սելջուկյան թուրքերը Անդրկովկասում առաջին անգամ հայտնվել են սուկ 1030 - 1032 թվականներին³: 1016-ին և հետագայում (1021-ին) Հայաստանի վրա օտար ցեղերի հարձակումների ընթացքում հիմնական ուժերը թուրքերն էին, որոնց էին հարել նաև դելնիկները: Ուստի 1021թ. Հայաստանի դեմ կատարված արշավանքը Վարդան Արևելցին վերագրում է թուրքերին⁴, իսկ Ուռհայեցին՝ դելնիկներին⁵: Այդ հարձակումները 1016թ. հետո կատարվել են ամեն տարի և ուղղված են եղել Բյուզանդիայի դեմ⁶: Հարձակումներին թերևս մասնակցել են նաև Խորասանում իշխող, ծագումով թյուրք Ղազնևյան տոհմի սուլթանները, կամենալով իրենցից հեռացնել շարժման մեջ դրված թյուրքական ցեղերին, որոնք նոր հայրենիք գտնելու հույսով ամբողջ գերդաստաններով դիմում էին դեպի Փոքր Ասիայի բարեբեր դաշտերը: Թյուրք բնակչության գաղթաշարժին նպաստում էր այն հանգամանքը, որ նրանց ցեղակիցները ծառայում էին Պարսկաստանում ստեղծված ամիրայությունների բանակներում: Հավանաբար հենց այդ վարձկան թյուրք զորայիններն են հարձակվել 1016թ. Վասպուրականի վրա: Ս.Բոռնազյանը վկայաբերելով Թովմա Արծրունու և Անանունի երկերին կցված հավելյալ գլխի XII դ. անանուն հեղինակի

² Մայր ցուցակ ձեռագրաց Ա.Հակոբեանց, Գ, էջ 291.

³ С.Агаджанов, К.Юзбашян, *К истории тюркских набегов на Армению в XI в.* ("Палестинский сборник", вып. 12 (76), Москва-Ленинград. 1965, с. 147 и сл...: Ավելի վաղ նույն տեսակետին էր Յ.Սամանդյանը (Երկեր, Գ, Երևան, , 1977, էջ 40-41):

⁴ Վարդան, ԾԴ, էջ 98:

⁵ Մատթեոս Ուռհայեցի, էջ 11:

⁶ E.Honigmann, *Die Ostgrenze*, s. 177.

վկայությունը (որը նա թյուրիմացաբար վերագրում է Արծրունի պատմիչին), նշում է, որ «Իրանի և Ատրպատականի ամիրայությունների բանակներում ծառայող թուրք հրոսակները, դեռևս 1016թ., ներխուժել էին Վասպուրականի Արծրունյաց թագավորության տարածքը»⁷:

Ուռհայեցու հավաստմամբ, 1016թ. երբ տեղի ունեցավ այդ ներխուժումը, Վասպուրականի զորականները «մինչև յայնմ ժամանակին չէին բնաւ տեսեալ թուրք զօրք հեծելոց, ...և չէին սովոր պատրաստ լինիլ ընդդէմ նետիցն»⁸: Որ 1016 և 1021թ. հարձակումները Արծրունյաց թագավորության վրա կատարվել են թուրքական ցեղերի կողմից, վկայում է նաև XII դարի վերոնշյալ անանուն հեղինակը⁹, նշելով, որ Սենեքերիմ Արծրունու օրոք Հայաստանը մատնվեց «ի ձեռս անօրէն արծաթակուրծ եղեռնաթիր և մեղսասէր զարմին Ելիմայ, որ են ազգք թուրքաց»: Նույն հեղինակը 1021թ. Արծրունյաց արտագաղթի պատճառ է համարում թուրքական ցեղերի հարձակումները, որոնց դեմ «ոչ էր ձեռնհաս թագաւորն Յունաց ի վերայ աշխարհին Հայոց»¹⁰:

Քանի որ թյուրքական ցեղերն սպառնում էին նաև Բյուզանդիային, ուստի Արծրունիները բնական մղումով ապավինում են հավատակից այդ պետությանը, որը սակայն հետամտում էր քաղաքական հետին նպատակներ, ջանալով հարմարադեպ պահին տիրանալ Արծրունյաց թագավորության մեջ ընդգրկված գավառներին: Թյուրքական հարձակումները Արծրունիներին նետեցին կայսրության գիրկը: Անշուշտ, Արծրունյաց հողերի բռնակցմանը էականորեն նպաստել է 1015թ. Մակեդոնիայի Մոզլենա ամրոցից Վասպուրական տեղափոխված բուլղար ռազմագերիներից կազմված զորքը: 1016թ. Սենեքերիմն իր որդի Դավթին ուղարկեց Կ.Պոլիս, հավանաբար, կայսրությունունից թուրքերի դեմ օգնություն ստանալու նպատակով: Կայսրության մայրաքաղաքում նրան

⁷ Տե՛ս Ս.Բռնագյան, *Հայաստանը և սելջուկները XI - XII դդ., Երևան, 1980, էջ 35*:

⁸ Մատթեոս Ուռհայեցի, *էջ 47*:

⁹ Թովմա Արծրունի և Անանուն, *էջ 474 - 476*:

¹⁰ Նույն տեղում, *էջ 476 - 478*:

փառաշուք կերպով ընդունեցին¹¹: Չավանաբար, կայսրը Արծրունիներին զորակցելու քողի տակ Վասպուրական է ուղարկել բուլղար ռազմագերիներին¹², որոնք սակայն տրոյական ծիուդեր կատարեցին, ներսից կազմալուծելով Վասպուրականի թագավորությունը¹³: Անշուշտ, եթե կայսրն անկեղծ լիներ Արծրունիների նկատմամբ, ապա Վասպուրական կուղարկեր ոչ բուլղարների, այլ իր կանոնավոր զորքի ռազմիկներին: Արիստակես Լաստիվերտցին վկայում է, որ բուլղար զինվորներին կայսրը «խաբանօք ի մի վայր ժողովէ... առաքէ զնոսա յարեւելս անդառնալի եկիւք. որք եկեալ զաշխարհս յաւեր դարծուցին: Վա՛յ նոցա զալոյն յարեւելս...»¹⁴: Բուլղար ռազմագերիների միջոցով կայսրը կամենում էր ավելի անկայուն դարձնել Արծրունյաց թագավորության ներքաղաքական կացությունը: Մոզլենայի ռազմագերիներից բացի, կայսրն այնտեղ առաքեց նորանոր և ավելի ստվարաթիվ բուլղար ռազմագերիների¹⁵, որոնց մասին է Արիստակես Լաստիվերտցու վերը բերված վկայությունը:

Ենթադրվում է, որ Դավիթ Արծրունու դիվանագիտական առաքելության ժամանակ՝ 1016թ. Արծրունիների և կայսեր միջև համաձայնություն է կայացել հողերի փոխանակման շուրջ, իսկ Վասպուրականի ազատանու արտագաղթը տեղի է ունեցել հետագայում՝ 1021թ.¹⁶: Մեկ այլ ենթադրության համաձայն, 1016թ. Սենեքերիմ Արծրունին համաձայնվել է Վասիլ II-ին զիջել Վասպուրականը ի տրիտուր 1000թ. նրանից ստացած օգնության¹⁷: Բայց նման համաձայնության համար հազիվ թե Սենեքերիմը դեսպանություն առաքեր Կ.պոլիս:

¹¹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 49:

¹² Չովհաննես Սկիլիցես, էջ 84:

¹³ Р.Бартикян, *О болгарском войске в Васпуракане и последних годах царства Арцрунидов (ЗУУЗ ԳԱ Լրիւթեր, N 10, 1973, էջ 93-94)*:

¹⁴ Արիստակես Լաստիվերտցի, *Ա*, էջ 24 - 25:

¹⁵ Г.Литаврин. *Армянский автор XI столетия о Болгарии и болгарях ("Славяне и Россия", Москва, 1972, с. 27-31)*.

¹⁶ С.Агаджанов и К.Юзбашян, *ук. ст.*, с. 152; В.Степаненко, *ук. ст.*, с. 74 - 77.

¹⁷ С. Toumanoff, *The Background of Manzikert ("Proceedings of the XIII th international Congress of Byzantine Studies". Oxford. 1966, p. 425)*.

2. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ինչպես նշվել է, Սենեքերիմ Արծրունու դուստր Մարիամին կնության էր առել վրաց թագավոր Գեորգի I-ը, որը 1015թ. ծառայացավ Վասիլ II-ի դեմ, տիրանալով դեռևս 1000 թ. Դավիթ Կյուրապաղատի կողմից կայսրին կտակած հողերին: Նա նույնիսկ պարտության մատնեց իր դեմ ուղարկված բյուզանդական զորաբաժնին¹: Սակայն կայսրը մեծ ուժեր նետեց Գեորգի թագավորի դեմ, ճնշեց նրա ընդդիմությունը, գրավելով նրա գյուղերն ու քաղաքները: Համաձայն ժամանակակից պատմագիր Յահյա Անտիոքացու չափազանցված վկայության, Վասիլ II-ի զորքերը այդ պատժարշավի ընթացքում կոտորել են 200 հազար վրացիների, «ամայացնելով նրանց գյուղերն ու քաղաքները»²: Այդ բախտորոշ պահին Սենեքերիմը զորակցեց Գեորգի I-ին³, ուստի Վասիլ II-ը հարկ է որ հաշվեհարդար տեսներ նաև նրա հետ: Ի լրումն դրա, 1021թ. թուրքական ցեղերը վերստին արշավեցին Հայաստան⁴: Դա ավելի դյուրացրեց Վասպուրականին տիրելու Վասիլ II-ի մտահոլացման իրագործումը: Արծրունի թագավորը, Վասպուրականի ազատանին հայտնվեցին երկու կրակի արանքում և իրենց անծուկ շահերին հետամուտ լինելով նախընտրեցին դիմադրության թույլ ուղին և իրենց հայրենիքը առանց կռվի հանձնեցին նվաճողին: Հովհաննես Սկիլիցեսի հաղորդման համաձայն, 1016թ. «Վերին Մարաստանի (որին այժմ Վասպուրական են անվանում) արխոնտ Սենեքերիմը, ամբողջ տոհմով կայսեր կողմն անցավ, նրան հանձնեց իրեն պատկանող համայն երկիրը...»⁵: Բյուզանդական հեղինակները, ինչպես նկատել է Հ.Մարկվարտը, առաջնորդվելով աշխարհագրական սխալ պատկերացումներով, Միգ.

¹ Արիստակես Լաստիվերտցի, *Ա*, էջ 25:

² В.Розен, *Император Василий Болгаробойца с. 61 - 62.*

³ Տես Ի. Ջավախիշվիլի, *Վրաց ժողովրդի պատմություն, II, Թբիլիսի, 1965, էջ 134 - 155 (վրացերեն):*

⁴ Վարդան, *ԾԴ, էջ 98*, Մատթեոս Ուռհայեցի, *էջ 13 - 14:*

⁵ Հովհաննես Սկիլիցես, *էջ 86:*

Վասպուրականն անվանում են Վերին Մարաստան⁶: Ենթադրվում է, որ Վերին Մարաստանը Սենեքերիմ Արծրունու տիրույթն էր, իսկ ստորինն ընդգրկում էր Անձևացիքը և Մանազկերտի գավառը⁷: Սովորաբար բյուզանդացի մատենագիրները X-XI դդ. Վասպուրականը չեն մտցնում Բագրատունիների թագավորության մեջ: Կոստանդին Ծիրանածինը Բագրատունյաց Հայաստանի մեջ է նշում Սյունիքը, Մոկքը և այլ շրջաններ, սակայն Վասպուրականն հիշում է առանձին⁸, քանի որ իր ապրած ժամանակներում այն առանձին թագավորություն էր, մինչդեռ Սյունիքը դեռ Բագրատունյաց թագավորության կազմում էր: Սկիզբիցս, թեև սխալ անվանումով, Վասպուրականը գիտե որպես առանձին և մեկ աշխարհագրական-վարչական միավոր:

Հայկական սկզբնաղբյուրները Արծրունյաց արտագաղթը դնում են 1021թ.: Սմբատ Սպարապետի և Մատթեոս Ուռհայեցու վկայության համաձայն, Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտը հոր Գագիկ I-ի մահից հետո մեկնել է Վասպուրական «և առեալ գորս ի նմանե»⁹: Դա տեղի է ունեցել 1020 թ., կամ հաջորդ տարում, քանի որ Գագիկ I-ը վախճանվել է 1020-ին: Հետևաբար, այդ թվականին Սենեքերիմ Արծրունին դեռևս չէր հեռացել հայրենիքից: Ավելին. նա այնքան զորեղ էր, որ զինական աջակցություն էր ցույց տալիս Բագրատունի արքայի գահի հավակնորդին: Սամվել Անեցին ևս գաղթի թվական է համարում 1021-ը¹⁰: Թովմա Արծրունու և Անանունի պատմությանը կցված հավելյալ գլխում ասվում է, որ «փոխեցին զհայրենի տունսն իւրեանց Հայկազունքն Արծրունիքն Սենեքերիմ ի թուին հայկազնեան տունարին ՆՀ (470/1021), և դէմ եղեալ զնացին յաշխարհն Յունաց...»¹¹: Յահյա Անտիոքացու հավաստմամբ, վրաց ապստամբությունը ճնշելուց հետո Վասիլ II-ը մեկնել է Տրապիզոն: «Նույն ժամանակ Ասֆարագանի (Վասպուրականի)

⁶Ի. Մարկվարտ, *Պարսկահայք նահանգը («Պատմա-բանաս. հանդես», 1961, N 2, էջ 242)*:

⁷К. Yuzbashian, *l' administration Byzantine...* ("REA", X, p. 149).

⁸ Կոստանդին Ծիրանածին, *էջ 151*:

⁹ Մատթեոս Ուռհայեցի, *էջ 8, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 27*:

¹⁰ Սամուել Անեցի, *էջ 104 – 105*:

¹¹ Թովմա Արծրունի և Անանուն, *էջ 478*:

թագավոր Սինախերիբը (Սենեքերիմը) իր բոլոր բերդերը, հողերը և ամբողջ Ասֆարագանի երկիրը զիջեց Վասիլ թագավորին, որին իր բերդերն ու դոյակները զիջեց նաև Իբն ալ-Դայրանին, Սենեքերիմի հարևանը»¹²: Իբն ալ-Դայրանին Սենեքերիմի եղբոր Գուրգենի որդին էր¹³, որն իշխում էր Անձևացյաց գավառում և ընդունում Սենեքերիմի գերագահությունը:

Հովհաննես Ավագերեցը ևս գաղթի թվական է համարում Հայոց ՆՅ (470), ինչ 1021-ը, երբ «թագաւորն Սինաքերիմ փոխէ զգաւառաւ Հայոց և որդաւքն իւրովք գնաց ի Հոռոմս»¹⁴: Վարդան Արևելցին չի նշում գաղթի թվականը, բայց շեշտում է դրա պատճառը օտար ցեղերի հարձակումները, նշելով, որ Սենեքերիմը «նեղեալ ի Պարսից՝ ետ զերկիր իւր ի Վասիլն...»¹⁵:

Ուսումնասիրողների ճնշող մեծամասնությունն ընդհանում է, որ Արծրունիների արտագաղթը տեղի է ունեցել 1021 թվականին: Հ.Սարկվարտը, Սկիլիցեսի հետևողությամբ, գաղթի թվական է համարում 1016թ.¹⁶, ինչը վիճարկվում է Է.Հոնիգմանի կողմից¹⁷: Հ.Մանանդյանը ևս սկզբում գաղթը դնում էր 1016թ.¹⁸, բայց հետագայում ընդունեց 1021 թիվը¹⁹: Ռ.Գիյյանը սկզբում արտագաղթը թվագրում էր 1016-ով²⁰, բայց հետագայում նշեց, որ թեև Սկիլիցեսի մոտ Արծրունյաց գաղթը դրված է 1016 թվականին, սակայն իրապես այն տեղի է ունեցել 1021-ին²¹: Արծրունիների արտագաղթը դրվում է նաև 1022թ.²², ինչն

¹² В.Розен, *Император Василий Болгаробойца* с. 62.

¹³ Վարդան, *ԾԱ*, էջ 92:

¹⁴ *Մանր ժամանակագրություններ*, Բ, էջ 27:

¹⁵ Վարդան, *ԾԱ*, էջ 92:

¹⁶ I.Markwart, *Südarmenien*, s. 97, 515 - 516.

¹⁷ E.Honigmann, *Die Ostgrenze*, s. 177.

¹⁸ Հ.Մանանդյան, *Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922, էջ 16 - 17:*

¹⁹ *Նույնի Երկեր*, 9, էջ 28:

²⁰ R. Guiland, *Recherches sur les institutions byzantines*, Berlin- Amsterdam, 1967, p. 106.

²¹ R. Guiland, *Contribution a la prosopographie de l'empire Byzantin: les patrices* (*"Jahrbuch der Osterreichischen Byzantinistik"*, Wien, 1971, p. 95).

²² Վ.Իսկանյան, *Արծրունյաց արտագաղթի մասին («Պատմաբանասիրական հանդես», 1965, N3, էջ 79-82):*

հիարկե, չի վկայված սկզբնաղբյուրներում: Էլ ավելի անհավանական է արտագաղթը 1021 - 1022թթ. ծնոանը դնելը²³, քանի որ այդ եղանակին գաղթելը կապված էր մեծ դժվարությունների հետ, ուստի կգերադասեին մեղմ եղանակը: Արծրունիների գաղթաշարժը դրվել է նաև 1023թ. սկզբին²⁴: Արտագաղթը 1021-ով են թվագրում նաև այժմյան ուրիշ հետազոտողներ²⁵:

1021 թվականի արտագաղթը ճակատագրի եղերական խաղ էր, որն այնքան հատկանշական էր հայոց պատմության այդ հույժ բախտորոշ դարաշրջանի իրադարձությունների համապատկերում: Արտագաղթի հետևանքով Վասիլ II կայսրը մի հարվածով տիրացավ Արծրունիների թագավորության լայնատարած հողերին, որոնց մեջ կային ավելի քան 4000 գյուղ, 72 բերդ և 10 քաղաք²⁶: Վասպուրականից գաղթեցին 14 հազար տղամարդիկ, չհաշված կանայք ու երեխաները, ընկնելով «ընդ լծով ծառայութեանն Գողոմոց»²⁷: Գաղթողները գլխավորապես ազատներն էին, մասամբ՝ ռամիկները²⁸:

Թեև Արծրունյաց ռազմուժը հիմնականում դուրս հանվեց հայրենիքից, սակայն ժողովրդի ճնշող գերակշռությունը մնաց

²³ G.Dedecyan. *L' immigration Armenienne en Cappadoce au XI-e siecle ("Byzantion", t. 45, fasc. I, Bruxelles, 1975, p. 64-65).*

²⁴ W. Seibt, *Die Eingliederung von Vaspurakan in des Byzantinische Reich («Հանդես Ամսօրեայ», 1978, էջ 64):*

²⁵ *История Византии, т. II, с. 225, Р.Бартикян, ук. ст., с. 92; В.Степаненко. ук. ст., с. 78-79, В. Варданян, Аннексия юго-восточной Армении Византийской империей ("Кавказ и Византия", вып. 6, Ереван, 1988, с. 47-48; С. Toumanoff. op. cit. p. 425, R.Thomson. The influence of ther Environment on the Armenians in Exile in the eleventh Century ("Proceedings of the XIII-e intern. Congress of Byzantine Studies", Oxford, 1966, p. 433).*

²⁶ Սատթեսու Ուռհայեցի, էջ 49, Սամուել Անեցի, էջ 104 և ուրիշների մոտ: Այս առնչությամբ նշենք, որ մեր «Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը» (Երևան, 1969, էջ 149) աշխատության մեջ հրատարակչության կողմից արված մի հավելումով Վասպուրականի քաղաքների թիվը ուռճացվել և հասցվել է 20-ի, հղելով Բ.Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Գայաստանում IX - XIII դդ.» աշխատության I հատորի (Երևան, 1958) 121-րդ էջը, ուր սակայն նման տվյալ չկա: Այդ գրքի էջ 92-ում Վասպուրականում նշված են ոչ թե 20, այլ 12 քաղաքներ:

²⁷ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 478:

²⁸ Սատթեսու Ուռհայեցի, էջ 49:

այնտեղ: Այդ է պատճառը, որ հայ հոգևորականությունը (սակավ բացառությամբ) չի եռացավ Վասպուրականից, և Արծրունյաց թագավորության մեջ եղած վանքերն ու եկեղեցիները մնացին նրա իրավասության տակ²⁹: Այս փաստը վկայում է, որ հողերի փոխանակման ժամանակ Արծրունիների և Վասիլ II կայսեր միջև դավանական խնդիրների շուրջ համաձայնություն ձեռք չի բերվել (նշելի է, որ Սեբաստիայի գավառ գաղթած Արծրունիները շարունակեցին կառչած մնալ Հայ առաքելադրոշմ եկեղեցու միաբնակ դավանությանը):

Արտագաղթից հետո Վասպուրականը վերածվեց բյուզանդական առանձին բանակաթեմի (կատապանության): Տեղի բնակչությունը դժկամությամբ ընդունեց բյուզանդական տիրապետությունը: Հովհաննես Սկիլիցեսի վկայությամբ Վասպուրականի առաջին կատապան Վասիլ Արգիրոսը պաշտոնանկ արվեց: Նրան փոխարինած Նիկեփոր Կոմնենոսը միայն «գործի դնելով և՛ քաղցր խոսքը, և՛ բռնությունը, կարողացավ երկիրը կայսրին հպատակեցնել»³⁰: Կատապանի նստոցը հավանաբար Հայոց ձորի Կատապանց գյուղն էր, որն ըստ երևույթին իր անունն ստացել է այդ պատճառով³¹: Թեև Կայսրությունը փորձեց դավանական նկատառումներով Վասպուրականում հիմնել քաղկեդոնական եպիսկոպոսություններ (բյուզանդական ցուցակներում հիշվում են Վանի, Արճեշի, Ամյուկի, Ոստանի, Մարմետի, Արծկեի և Աղթամարի քաղկեդոնական եպիսկոպոսությունները)³², սակայն դրանք էական ազդեցություն չունեցան Արծրունյաց թագավորության մեջ ընդգրկված գավառների կրոնա-դավանական իրադրության վրա:

²⁹ Սամուել Անեցի, *էջ 107*, Մատթեոս Ուռհայեցի, *էջ 49*, *Անանուն ժամանակագրություն, Երևան, 1940, էջ 16*, *Ցուցակ հայ. ձեռագրաց մատեն. Մխիթարեանց ի Վիեննա, Ա, էջ 100*:

³⁰ Հովհաննես Սկիլիցես, *էջ 86*:

³¹ Տես Վ.Վարդանյան, *Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 241*; M.Thierry, *Notes de Geogr. hist. sur le Vaspurakan*, ("Revue des Etudes Byzantines", t. 34, Paris, 1976, p. 168.

³² Տես Զր.Բարթիկյան, *Վասպուրականցիների Բյուզանդական կայսրության ծառայության մեջ XI - XII դարերում* («Պատմա-բանասիրական հանդես», 2000թ., N3, էջ 138-139):

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ԱՎԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ԳԱՎԱՌՈՒՄ

Ա. ՍԵՆԵՔԵՐԻՄ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արծրունիների մի մասը հրաժարվեց հեռանալ հայրենի եզերքներից և շարունակեց իշխել իր տիրույթներում: Բայց Արծրունիների իշխող ճյուղը, հողերի փոխանակման ժամանակ հանդես գալով որպես իրավատեր կողմ, հեռացավ իրեն շնորհված բյուզանդական բանակաթեմ, որի կենտրոնը Սեբաստիան էր: 1021թ. հետո այդ բանակաթեմը միացվեց Կապադովկիա բանակաթեմին: Սեբաստիայի գավառը պատմական Փոքր Հայքի մեջ էր մտնում և վաղնջական ժամանակներից ուներ հոծ հայ բնակչություն, որը XI դ. ենթարկվում էր Հայոց եկեղեցուն¹: Սեբաստիայի (Կապադովկիայի) բանակաթեմում Սենեքերիմն ու իր որդիները պահպանեցին «թագավոր» պատվատիտղոսը²: Հովհաննես Սկիլիցեսը գրում է, որ Սենեքերիմ Արծրունին «ամբողջ տոհմով կայսեր կողմնանցավ, նրան հանձնեց իրեն պատկանող համայն երկիրը և ստացավ պատրիկի պատվաստիճանը և Կապադովկիայի գորավարի [պաշտոնը], տվածի դիմաց որպես տիրություն ստանալով հետևյալ քաղաքները. Սեբաստիան, Լարիսան, Աբարան և այլ բազում տիրույթներ»³: Կեկավմենոսի հավաստմամբ Վասիլ II-ը Սենեքերիմին «պատվեց մագիստրոսի աստիճան և ուրիշ ոչինչ, թեև նա թագավոր էր և հին արքաների

¹ Ուշագրավ է, որ 1968թ. Սնգլիական հնագիտական արշավախումբը Սեբաստիայի գնվառում կատարած պեղումների ժամանակ մի ավերակ եկեղեցուն հայտնաբերել է Գրիգոր Լուսավորչի պատկերը՝ վրան մակագրված «Սեծ Հայքի Սուրբ Գրիգորիոս» (հունարեն), (տես «Anatolian Studies», vol. XIX. London, 1969, p. 24):

² Մատթեոս Ուտիայեցի, էջ 55:

³ Հովհաննես Սկիլիցես, էջ 86:

զարմից»⁴: Հայկական սկզբնաղբյուրները ևս վկայում են, որ Սենեքերիմ Արծրունին բացի Սեբաստիայից, ի տիրություն է ստացել նաև այլ հողատիրույթներ, ըստ Արիստակես Լաստիվերոսու՝ «զբաղաքն Սեբաստիա և որ շուրջ զնովաւ գաւառք»⁵: Ուռհայեցին ևս վկայում է, որ Վասիլ կայսրը Արծրունիներին տվել է «Սեբաստիա բազում գաւառօք»⁶: Իսկ Վարդան Արևելցին նշում է, որ Սենեքերիմն ի գին արտագաղթի, կայսրից «առնու փոխան զՍևաստ և զԼառիս, և յոլով պռաստինս»⁷, (իմա՝ կալվածներ):

Սենեքերիմ Արծրունու հետ զաղթածների թվում հիշվում է նաև Դերենիկ Արծրունին՝ Անձևացյաց տերը, որին Վարդան պատմիչը համարում է Սենեքերիմի եղբորորդի⁸: Համաձայն Յահյա Անտիոքացու հաղորդման, Դերենիկը Վասիլ կայսրին զիջեց «իր բերդերն ու դոյակները, և այդ բոլորը թագավորը միացրեց իր պետությանը: Այդ բերդերի ու դոյակների թիվն անցնում էր քառասունից»⁹ (անշուշտ, նկատի ունի Արծրունյաց թագավորության բերդերն ու դոյակները, որոնց թիվը լրիվ չէ, քանի որ, ինչպես նշվեց, հայ մատենագիրները այնտեղ հիշում են 72 բերդ և 10 քաղաք): Յահյա Անտիոքացին ևս հավաստում է, որ կայսրը «Սինաքերիբին և Իբն ալ-Դայրանիին իրենց գերդաստանի ու ազգականների հետ նվիրաբերեց լայնատարած կալվածներ, մեծագումար դրամ և բարձր տիտղոսներ»: Ընդսմին Բյուզանդիա գաղթած Ապլղարիբ իշխանը 1042թ. Կոստանդին Սոնոմախ կայսրից ստացավ «զՄսիս և զԱտանա, զՊապառօնն և զԼամբրոնն»¹¹: Ապլղարիբը Բյուզանդիա էր գաղթել Վասպուրականից և սերում էր Արծրունիների երկրորդական ճյուղերից: Հետևաբար, Արծրունիները հողատիրույթներ են ստացել նաև Կիլիկիայում և, ըստ երևույթին, նպաստել են այնտեղ հայկական իշխանապետության ստեղծմանը: Ապլղարիբ Արծրունին 1021թ. հետո Վասպուրականում մնացած

⁴ *Советы и рассказы Кекавмена*, с. 283.

⁵ Արիստակես Լաստիվերոսի, 4, էջ 34:

⁶ Սատթեսու Ուռհայեցի, էջ 49:

⁷ Վարդան, ԾԱ, էջ 92:

⁸ *Նույն տեղում*:

⁹ В.Розен, *Император Василий Болгаробойца* с. 62.

¹⁰ *Նույն տեղում*:

¹¹ Վարդան, 4, էջ 106:

Խաչիկ իշխանի («Խուլ», «առյուծ» մականվանյալի) որդին էր, ճնճղուկի եղբայրը: ճնճղուկն ու իր եղբայր Հասանը ծառայում էին Բյուզանդիայում: ճնճղուկից էր սերում Բյուզանդիայում հայտնի Ցինցիլուկների արիստոկրատական գերդաստանը¹²:

Սենեքերիմ Արծրունին և որդիները Սեբաստիայի գավառում օժտվեցին իշխանությամբ, կատարելով նաև զինվորական գործառույթներ, ուստի Սենեքերիմը հիշվում է որպես Կապադովկիայի զորավար¹³: Արծրունիները պաշտպանում էին կայսրության սահմանները արևելքում՝ Կեսարիայից մինչև Եփրատ և Պոնտոսից մինչև Մալաթիա ձգվող տարածքներում: Իր նոր տիրույթներում Սենեքերիմ Արծրունին շարունակեց կրել «թագավոր» տիտղոսը: Ընդհուպ մինչև 1071թ. անընդհատ հայ բնակչության հոսք է տեղի ունեցել Արծրունիներին ենթակա տարածքներ, նպաստելով հայոց պետականության վերածննդը¹⁴:

Սենեքերիմ Արծրունու հետ Սեբաստիայի բանակաթեմ գաղթած վասպուրականցիներն այնտեղ հիմնեցին նոր բնակավայրեր՝ Արաբկիր, Ակն քաղաքները և շատ գյուղեր, վանքեր, եկեղեցիներ¹⁵: Սենեքերիմը Սեբաստիայում կառուցել տվեց Ս.Նշան գմբեթավոր եկեղեցին՝ իր տեղափոխվելու հաջորդ տարում¹⁶: Սեբաստիա գաղթած Ս.Նարեկա վանքի միաբանները Ակն քաղաքի մերձակայքում կառուցեցին վանք, տալով նրան «Նարեկ» անունը¹⁷:

Արծրունյաց արտագաղթի հաջորդ՝ 1022 թվականին Կապադովկիայի բանակաթեմում ապստամբություն բռնկվեց Նիկեփոր Փոկասի գլխավորությամբ, որը «յոյժ սիրելի գՊալիթ եւ խոստանայր նստուցանել զնա յաթոռ թագաւորութեան

¹² N. Adontz, *Etudes arméno-byzantines*, p. 35; А.Каждан, *Армяне в составе господствующего класса византийской империи в XI - XII вв.*, Ереван, 1975, с. 107 - 108; Զր.Բարթիկյան, *Վասպուրականցիներ...*, էջ 145:

¹³ Հովհաննես Սկիլիցես, էջ 86:

¹⁴ Հմմտ. Ա.Ալպոյաճեան, *Պատմութիւն Եվդոկիոյ Հայոց, Գահիրե, 1952, էջ 167*:

¹⁵ *Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, կազմեց Յ.Թոփճեան, վեներտիկ, 1962, էջ 204, Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 277, 295*:

¹⁶ *Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, էջ 204*:

¹⁷ Ա.Ալպոյաճեան, *Պատմութիւն Եվդոկիոյ Հայոց, էջ 168*:

Հայոց, բայց Դաւիթ ոչ կամեցաւ լուծանել զղաշինս Վասիլին» և զորակցեց ապստամբության ճնշմանը, ինչի դիմաց Վասիլ II կայսրը «տայր պարգես Դաւթի զԿեսարիա և զԾամնդաւ և Խավատանէք հանդերձ սահմանօքն»¹⁸: Պատմագիրների վկայություններից երևում է, որ Դավիթ Արծրունին սկզբնապես հարել է Նիկեփոր Փոկասի («Ծռվիզի») ապստամբությանը, բայց հետո այն անհեռանկար համարելով, սատարել է Վասիլ II-ին, ըստ Լաստիվերտցու, նույնիսկ անձամբ սպանել է նրան¹⁹: Նիկեփոր Ծռվիզի ապստամբության տարում Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Տրապիզոնից ժամանեց Սեբաստիա, ամենայն հավանականությամբ, Վասիլ II-ի հանձնարարությամբ: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Տրապիզոնի գործարքից հետո «հրամայեաց կայսրն հայրապետին դնել զաթոռ իւր ի Սեբաստիա և անտի հովուել զհօտ իւր»²⁰: Կաթողիկոսը Սեբաստիայում մնաց մինչև Վասիլ II-ի մահը և, հավանաբար, նույն թվին վերադարձավ Անի:

1025թ. վախճանվեց Սենեքերիմ Արծրունին, որի դին նրա կտակի համաձայն տարվեց Վասպուրական և ամփոփվեց Վարագա վանքում²¹: Որոշ աղբյուրներ Սենեքերիմի շիրիմը ցույց են տալիս Ներքին Վարագի Ս.Գևորգ եկեղեցում՝ «Այս է հանգիստ Սենեքերիմ թագաւորին» մակագրությամբ²²: Նույն եկեղեցում է ամփոփված նաև Սենեքերիմի կողակից Խուշուշի աճյունը²³:

Բ. ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՈՐԴԻՆԵՐԸ ՍԵԲԱՍՏԻԱՅՈՒՄ

Վարդան Արևելցին հաղորդում է, որ Սենեքերիմ Արծրունին 1021թ. տեղափոխվել է Սեբաստիայի գավառ իր չորս

¹⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 51, տես նաև Սմբատ, Տարեգիրք, էջ 48:

¹⁹ Արիստակես Լաստիվերտցի, Գ, էջ 34:

²⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 95:

²¹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 55, Հովհաննես Սեբաստացի («Դիվան Հայոց պատմության», գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 383):

²² Վիմական տարեգիր, էջ 16, Ազգագրական հանդես, XXI, էջ 62:

²³ Վիմական տարեգիր, էջ 16, Զ.Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա, Վիեննա, 1940, էջ 273:

որդիներով «որոց անուանքն՝ Դաւիթ և Աբուսահլ, Ատոմ և Կոստանդին»¹: Ավագ որդին Դավիթը փոխարինեց հորը, որպես Կապադովկիայի բանակաթեմի կուսակալ: Տեղացի հայերն ի դեմս Դավթի, տեսնում էին «հայոց թագավորի», նկատի առնելով հայերով բնակեցված բանակաթեմում նրան վերապահված ռազմական, պետաիրավական գործառույթները: Այդ մտայնության հետնախորքի վրա Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ հոր մահից հետո «հաստատեալ լինէր թագաւորական իշխանութիւնն տանն Չայոց յաւագ որդին իւր ի Դաւիթ, վասն զի էր այր փառավոր և պատուական և ահարկու ի վերայ երկրի»²: Փաստորեն Կապադովկիա բանակաթեմի հայությունը Արծրունիներին է ուղղել հայոց թագավորության վերականգնման հույսերը:

Դավիթը տնօրինում էր նաև Սեբաստիայի գավառի եկեղեցական գործերը: Այսպես, 1027թ. վախճանվում է Սեբաստիայի Սիոն արքեպիսկոպոսը: Դավիթ Արծրունին հայոց Պետրոս Գետադարձ կաթողիկոսից խնդրում է նրա փոխարեն նոր հովվապետ կարգել Սեբաստիայի գավառում: Կաթողիկոսն իր հերթին գրում է Գրիգոր Մագիստրոսին խնդրելով ուղարկել հարմար թեկնածու: Գրիգոր Մագիստրոսն անսալով կաթողիկոսին, Սեբաստիա ուղարկեց իր երկու աշակերտներին, որոնցից եղիշե անունով հոգևորականը ձեռնադրվեց Սեբաստիայի արքեպիսկոպոս³:

1035թ. վախճանվեց Դավիթ Արծրունին, որը «տայ զիշխանութիւնն հայրենեաց իւրոց ի յեղբայրն իւր յԱտոմ», որին Ուռհայեցին բնութագրում է իբրև առաքինի, սրբակենցաղ ու արդարախույզ անձնավորություն, «ողորմած ի վերայ տառապելոց... և շինող եկեղեցւոյ և բազմացուցիչ վանորէից»⁴: Ըստ երևույթին Դավիթ Արծրունու վախճանվելուց հետո նրան հաջորդած եղբայրների՝ Ատոմի և Աբուսահլի իրավունքները սահմանափակվել են, ի հետևանս որի, վերջիններս ծառացել են բյու-

¹ Վարդան, *ԾԱ, էջ 92*:

² Մատթեոս Ուռհայեցի, *էջ 55*:

³ Տես Գրիգոր Մագիստրոսի «*Թղթերը*», *Ալեքսանդրապոլ, 1910, էջ 18-21, 107 - 109*:

⁴ Տես Մատթեոս Ուռհայեցի, *էջ 65*:

զանդական իշխանությունների դեմ: Այդ մասին է վկայում Ուռհայեցու մոտ տեղ գտած մի տեղեկությունը, ըստ որի Արծրունյաց ազատներից մի վատոգի այր 1040թ. մեկնել է Միքայել IV Պափլագոնացի կայսեր (1034 – 1041) մոտ «և չարաչար մատնեաց զԱտոմ և զԱպուսահլ... և ասէր, եթէ կամին ապստամբել ի վերայ քո...»⁵: Պահի լրջությամբ էր, անշուշտ, թելադրված այն փաստը, որ կայսրը Արծրունիների դեմ առաքեց 15-հազարանոց զորք, նրա զորապետին հանձնարարելով Ատոմին և Աբուսահլին բերել իր մոտ՝ «զի մի փախիցեն»⁶: Վերջիններս տեղեկանալով այդ մասին, «զարհուրեցան», բայց Շապուհ զորապետը ոգեվառեց նրանց ասելով, որ կարող է նրանց դեմ ուղարկված զորքն անել ցանուցիր⁷: Ատոմն ու Աբուսահլը ետ պահեցին նրան և զորապետին ընծայելով բազում նվերներ, մեկնեցին կայսեր մոտ և կարողացան տարհամոզել նրան, շահելով նրա բարեհաճությունը⁸: Բազմազգ կայսրության մեջ հայությունը ծանրակշիռ տարր էր, ուստի կայսրը պետք է ջանար շահել նրա քաղաքական համակրանքը, մանավանդ, երբ, հավաստվում էր հայերի օրինահարգ դիրքորոշումը, ինչը տվյալ պարագայում դրսևորեցին Արծրունի եղբայրները: Ուշագրավ է, որ 1047թ. Կոստանդին Մոնոմախ կայսրը իրեն մոտ բերել տվեց Պետրոս Գետադարծ կաթողիկոսին և պահեց արգելական վիճակում ընդհուպ մինչև 1051 թիվը, «քանզի, – գրում է Լաստիվերտցին, – կասկած էր թողուլ ի Չայս՝ թե երթեալ ապստամբեցուցանէ զԱնի»⁹: Հավանաբար, կաթողիկոսը, որ պահպանել էր հայոց դավանանքը, հիասթափված էր Չայաստանի հանդեպ կայսեր վարած նեղ քաղաքականությունից:

Ատոմ Արծրունու միջնորդությամբ Պետրոս կաթողիկոսը կայսեր մոտից տեղափոխվեց Սեբաստիա, որտեղ Ատոմը «տուեալ նմա տեղի բնակութեան զհանգիստ սրբոյ Նշանին»¹⁰:

⁵ Նույն տեղում, էջ 83:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 83-84:

⁹ Արիստակես Լաստիվերտցի, *ԺՂ*, էջ 82:

¹⁰ Նույն տեղում, տես նաև Սատթեսու Ուռհայեցի, էջ 106-107:

Նույն վանքում նա մոտավորապես 1058թ. կնքեց իր մահկանացուն¹¹:

Արժուրնիները թուրքերից խույս էին տվել Սեբաստիա, բայց դժնաբարք այդ հորդանները 1059թ. հասան նաև այնտեղ: Այդ թվին, գրում է Ուռհայեցին, պարսից կողմից թյուրքական ցեղերը «գային ահագին բազմութեամբ առանց համարոյ՝ որպէս զաւագ ծովու» դիմելով Հայոց աշխարհի վրա, մահ ու ավերներ սփռելով ամենուրեք: Նրանց մի մասը՝ «արք չարք և արինարբուք առաւել քան զգազանս և սևագունդ զօրօք և մահաբեր նշանօք հասանէին ի վերայ բազմամբոխս և նշանաւոր քաղաքին Սեբաստիոյ»: Նրանք ջանացին ձերբակալել Ատոմ և Աբուսահլ Արժուրնիներիին, որոնք, սակայն, կանխավ տեղեկանալով թյուրքերի հարձակման մասին, հեռացել էին Սեբաստիայի հարավ-արևմուտքում գտնվող իրենց տիրույթները, ամրանալով խավատանք բերդում¹²: Նրանք չկարողացան ամրանալ Սեբաստիայում, քանի որ այն զուրկ էր պարիսպներից¹³: Սեբաստիայի բնակչությունը դարձավ արյունռուշտ բարբարոսների զոհը. քաղաքը հիմնիվեր ավերվեց, ողջ մնացած բնակչությունը գերեվարվեց, նրանք ավ հարստությունները թալանվեցին¹⁴:

Բյուզանդիան չկարողացավ պաշտպանել Սեբաստիան, որը ժամանակակիցները համարում էին մի քաղաք, որը «տուն էր... Հայոց թագավորացն»¹⁵: Արժուրնիների այդ բույնը դարձել էր նաև կայսրերի անվստահության առարկան: Թուրքական հարձակման տարում Կոստանդին X Դուկաս կայսրը (1059 – 1067) «խորհեցաւ խորհուրդ չար և կամեցաւ բառնալ և խափանել զաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի ի տանէն Հայոց»¹⁶: Կայսրը սկսեց հալածել հայածես եկեղեցուն, որի գահանիստն այդ ժամանակ դարձել էր Սեբաստիան: Հայաստանին լիովին տիրացած կայսրությունը ջանում էր

¹¹ Արիստակէս Լաստիվերոսցի, էջ 82:

¹² Մատթէոս Ուռհայեցի, էջ 133:

¹³ Նույն տեղում, էջ 134:

¹⁴ Նույն տեղում, էջ 134-135:

¹⁵ Նույն տեղում, էջ 134:

¹⁶ Նույն տեղում, էջ 137:

վերացնել նաև նրա եկեղեցական իշխանությունը: Կայսրը հրամայում է Սեբաստիայի կաթողիկոսական գանձերը Խաչիկ կաթողիկոսի հետ բերել Կ.Պոլիս¹⁷: Նպատակն, իհարկե, Հայ եկեղեցին Կ.Պոլիսի պատրիարքությանը ենթարկելն էր, նրա ապահարկության վերացումը, ինչը կտրուկ մերժվեց հայոց կաթողիկոսի կողմից¹⁸: Խաչիկ կաթողիկոսը և Սեբաստիայի եղիշե արքեպիսկոպոսը երեք տարի աքսորում անցկացնելուց հետո ազատվեցին, շնորհիվ Գագիկ II-ի, Ատոմ և Աբուսահլ Արծրունիների ներդրած ջանքերի¹⁹:

Կայսրն այդքանով չսահմանափակվեց և հենց նույն տարում իր մոտ հրավիրեց Ատոմ և Աբուսահլ Արծրունիներին, որոնք հետները վերցնելով Հակոբ Սանահնեցի վարդապետին մեկնեցին Կ.Պոլիս: Կայսրը նրանց հրամայեց Հայոց աշխարհի բոլոր իշխանների հետ ընդունել քաղկեդոնական հավատը: Բայց Արծրունի եղբայրները պատասխանեցին, որ առանց Գագիկ II-ի ոչինչ չեն կարող անել, քանզի «նա այր քաջ է և թագաւոր և մեր փեսայ» և խնդրեցին նրան ևս հրավիրել Կ.Պոլիս²⁰: Նրա տիրույթները Սեբաստիայի հարավում էին: Գագիկ II-ը կնության էր առել Դավիթ Արծրունու դստերը²¹: Գագիկ II-ը պերճաբան փաստարկումներով պաշտպանում է հայոց դավանությունը: Կայսրն ստիպված ընկրկում է իր դիտավորությունից: «Եւ, – գրում է մատենագիրը, – արար թագաւորն Տուկիժ սէր և ընդունելութիւն նոցա և շնորհեաց բազում պարգես Գագկայ և Ատոմայ և Ապուսահլի և այլոց իշխանաց»²², որից հետո նրանք «մեծաւ փառաւորութեամբ» հեռանում են կայսեր մոտից:

Թուրքական ցեղերի ահագնացող հարվածներն արդեն սասանում էին կայսրության հիմքերը, ուստի թվում էր, թե նա պետք է համախմբեր հավատակից երկրներին ընդդեմ օտար նվաճողների: Ռոմանոս IV Դիոգենես կայսրը (1068 – 1071)

¹⁷ Արիստակես Լաստիվերոցի, *ԺՂ*, էջ 82:

¹⁸ Նույն տեղում, էջ 83:

¹⁹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 138:

²⁰ Նույն տեղում, էջ 161:

²¹ Արիստակես Լաստիվերոցի, *Ժ*, էջ 63:

²² Մատթեոս Ուռհայեցի, էջ 179-180:

ստվար զորքով 1071թ. շարժվեց թուրք-սելջուկների դեմ, կամենալով հետ շարտել նրանց կայսրության սահմաններից, հասկանալի է, առաջին հերթին Հայաստանից: Նրա զորքի կազմում հիշվում են նաև հայեր²³, անգամ հայազգի բարձրաստիճան զորապետներ²⁴: Սակայն դավանամուլ կայսրը սարսափի նշանակ դարձած թուրքական սպառնալիքի պահին ի զորու չեղավ հրաժարվել իր կարծրացած մտայնությունից և «իբրև զամպս կարկտաբերս» զորքով մտավ Սեբաստիա, որտեղ նրան դիմավորեցին Ատոմ և Աբուսահլ Արծրունիները «մեծաւ հանդիսիւ»: Հավատալով չարախոսներին, կայսրն սպառնաց, որ պատերազմից վերադառնալուց հետո վերացնելու է հայոց դավանանքը: Նա իր գինվորներին հրամայեց ավարի մատնել Սեբաստիան, պատիվներից զրկել Ատոմին ու Աբուսահլին²⁵:

Մատթեոս Ուռհայեցիին 1079թ. դեպքերի առնչությամբ հիշում է Ատոմին և Աբուսահլին, որոնք Գագիկ Աբասյանի և ուրիշների հետ մարտնչում են Կիզիստրա բերդի (Կիլիկիայից հյուսիս-արևելք) տերերի դեմ, կամենալով ազատել նրանց կողմից կալանված Գագիկ II-ին²⁶: Այս փաստը թույլ է տալիս ենթադրելու, որ 1071թ. հետո Ատոմն ու Աբուսահլը Սեբաստիայից ստիպված հեռացել են Կիլիկիա, որտեղ արդեն մեծամասնություն էին կազմում հայերը և հայ իշխանների գլխավորությամբ կամենում էին վերստեղծել հայկական պետություն: Սակայն 1079-ին սպանվում է Գագիկ II-ը, իսկ հաջորդ տարի վախճանվում են Ատոմն ու Աբուսահլը, «որով բարձաւ թագաւորութիւնն Արծրունեաց և ամենևին անձանթ եղև կարգ ազգի նոցա ՇԻԹ (529)»²⁷, (իմա 1080 թվականին)²⁸: Սեբաստիայի Արծրունիների մասին պատմությունն այլևս լռում է:

²³ Садр ад-Дин ал-Хусайни, *Сообщения о сельджукском государстве, Москва, 1980, с. 57.*

²⁴ Մատթեոս Ուռհայեցի, *էջ 201*:

²⁵ *Նույն տեղում, էջ 198*:

²⁶ *Նույն տեղում, էջ 220, Սմբատ, էջ 88-91*:

²⁷ *Դիվան Հայոց պատմության, Ժ, էջ 384 – 385*:

²⁸ S.Girard, *Sivas huit siecles d' Histoire 1021-1820 ("Revue de l' Orient Chretien", X, Paris, 1905, p. 176 - 178)*: *Հեղինակը Սենեքերիմի մահը դնում է 1027 թ. (Նույն տեղում, էջ 170), ինչն իհարկե, ճիշտ չէ. Սենեքերիմն, ինչպես նշել ենք, վախճանվել է 1025թ.:*

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՉ

1021թվականի արտագաղթից հետո Արծրունյաց տոհմի որոշ անդամներ անցան Բյուզանդիա և հետզհետե աչքի ընկնելով զբաղեցրին պետական բարձր պաշտոններ: Այստեղ նրանք հիշվում են Սենեքերիմյաններ, Սենեքերիմ և Ցինցիլուկներ անուններով: Յայտնի իրողություն է, որ Բյուզանդիայի բազմազգ բնակչության երկրորդ տարրը (հույներից հետո) հայերն էին: Կայսրության 300 ազնվագարն գերդաստանների 15 տոկոսը կազմում էին հայազգի կամ հայկական ծագում ունեցող բարձրազոցեցիկ պաշտոնյաները, որոնք փայլեցին հատկապես զինվորական ծառայության մեջ, աչքի ընկնելով քաջությամբ ու զորահրամանատարի տաղանդով¹, ինչին անմասն չէին նաև Արծրունի ծագում ունեցող գործիչները, որոնց զգալի մասը հավատարմորեն ծառայեց կայսրությանը: Արծրունի ծագում ունեցող Լևոն V կայսրը (813 - -820)²: Արծրունիները հիմնականում Բյուզանդիա անցան 1021-ից մինչև 1081թ. ընկած ժամանակահատվածում:

Թեև Սենեքերիմ Արծրունու որդիները դիտվում էին իբրև կայսրության պաշտոնյաներ, բայց բնավ չեն հիշվում բյուզանդական մատենագիրների կողմից, որոնք, սակայն, չեն անտեսել այն Արծրունիներին, ովքեր մերձավոր կապերի մեջ էին բյուզանդական արքունիքի հետ, կամ պատասխանատու պաշտոններ էին վարում կայսրության եվրոպական տիրույթներում: Ալեքսիոս I կայսեր (1081 - 1118) մերձավոր օգնականն էր Թեոդորոս Սենեքերիմը, վանական

¹ А.Каждан, *Армяне в составе господствующего класса Византийской империи в XI - XII вв.*, с. 147 и сл.

² N.Adontz, *Sur l'origine de Leon V, Empereur de Byzance* ("Etudes arméno-Byzantines", p. 45-46).

հաստատությունների հողաբաշխը: XIIIդ. սկզբին բյուզանդական նշանավոր զորապետ է հիշվում մեկ ուրիշ Արծրունի, Սենեքերիմ անվամբ, որը գլխավորում էր Մակեդոնիայում տեղաբաշխված զորաբաժիններից մեկը³: Էպիրոսի Նիկոպոլիս քաղաքի կառավարիչը XIII դ. սկզբին Սենեքերիմ անվամբ պաշտոնյան էր⁴: Միքայել VIII Պալեոլոգոս կայսեր (1259-1282) օրոք բարձր պաշտոնների էր տիրացել Միքայել Սենեքերիմը, որը նաև նշանավոր գիտնական էր և հռետոր: Նա մեկնեց Յոնիոսի «Իլիական» և «Ոդիսական» դյուցազներգությունները (ցարդ պահպանվում են նրա ուսումնասիրության ձեռագրերը)⁵: Կայսեր մատռվակի պաշտոնը Անդրոնիկոս II Անգելոսի (1282 - 1328) օրոք հանձնված էր Անգելոս Սենեքերիմին⁶: Սենեքերիմ անվամբ իր կնիքով XI - XIIդդ. հայտնի է միանձնուհի Ջոյե Սենեքերիմը⁷: Հայտնի է նաև ենթադրյալ Արծրունին, իր «Սինաքերես» մակագրությամբ կնիքով⁸:

Բյուզանդական ծառայության մեջ ուրույն հետագիծ թողեցին նաև «Ցինցիլուկ» անվամբ հիշվող Արծրունիները, որոնց Ն.Ադոնցը համարում է 1021թ. հետո Բյուզանդիա գաղթած Գնճղուկի (Խուլ Խաչիկի որդու) ժառանգներ⁹: Մատթեոս Ուռհայեցին Վասպուրականի Թոռնավան գավառում 1040-ական թթ. ծավալված իրադարձությունների առնչությամբ նշում է, որ գավառի իշխան Խաչիկի («Խուլ», «առյուծ» մականվանյալի) որդիներ Հասանն ու Գնճղուկը ծառայության մեջ էին Բյուզանդիայի Միքայել IV Պափլագոնացի կայսեր մոտ¹⁰: «Ցինցիլուկ» անունով ազնվական գերդաստանի հիմնադիրն այս Գնճղուկն էր: Հովհաննես Սկիցիլեսը վկայում

³ А.Каждан, с. 35-36; Հր.Բարթիկյան, Վասպուրականցիներ բյուզանդական ծառայության մեջ XI -XII դարերում («Պատմաբանասիրական հանդես», 2000թ., 3, էջ 144):

⁴ А.Каждан, с. 36.

⁵ Հր. Բարթիկյան, էջ 144, ծան. 72.

⁶ Նույն տեղում:

⁷ А.Каждан, с. 36.

⁸ Նույն տեղում:

⁹ N. Adontz, Etudes, p. 35.

¹⁰ Մատթեոս Ուռհայեցի, էջ 90:

է, որ մահվան մահճում Միքայել IV կայսրը «վանական խուզվեց վանական Կոսմաս ճնճղուկի կողմից, որը մշտապես իր հետ էր լինում և անհրաժեշտ խրատներ տալիս»¹¹: Կոսմաս ճնճղուկը 1046թ. Կոստանդին IX Մոնոմախ կայսեր կողմից ուղարկվեց Ագիոն Օրոսի (Սուրբ Լեռ) Աթոս վանք (Արևելյան Հունաստան), որտեղ նա ուրիշ վանահայրերի ու վանականների հետ կազմեց վանքի նոր «Կանոնադրությունը», որը պահպանվեց մոտ 350 տարի: Վատիկանի ձեռագրատանը պահվում է Կոսմաս ճնճղուկի իմաստասիրական ձեռագիր աշխատությունը: Առկա է նաև նրա անունը կրող կնիքը¹²: Ալեքսիոս I կայսեր օրոք հայտնի էր Անդրոնիկ ճնճղուկը, որը Ասորիքի Լաոդիկե (Լաթաքիա) քաղաքի կառավարիչն էր¹³ և 1102թ. խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ կազմակերպեց քաղաքի պաշտպանությունը Սիկիլիայի խաչակիրներից, բայց ստիպված եղավ տեղի տալ նրանց գերագանց ուժերի առջև: Մանուիլ I կայսեր օրոք բարձրագոյեցիկ պաշտոնյա էր Վասիլ ճնճղուկը, որին կայսրը 1154թ. վերջին ուղարկեց Բոսնիա, այնտեղ ծագած խռովությունը ճնշելու համար¹⁴: 1163 թվակիր մի գրության մեջ Սերբիայում որպես հարկային պաշտոնյա է հիշվում մեկ ուրիշը՝ ճնճղուկների գերդաստանից, դարձյալ Վասիլ անունով¹⁵: Աթոսի վանքի առաջնորդն էր Գրիգոր ճնճղուկ անունով հոգևորականը, որից պահպանվել է XI - XII դդ. վերագրվող մի կնիք¹⁶: Բուլղարիայի Սելիստրա քաղաքում գտնվել է Լևոն ճնճղուկի անվանք կնիք¹⁷:

Բյուզանդական պատմադրյալներում չի հիշվում նաև Ապլղարիք Արծրունու անունը, թեև նա նույն խաչիկ իշխանի որդին էր (ճնճղուկի և Հասանի եղբայրը), որը 1042թ. Կոստանդին Մոնոմախ կայսրից ի տիրություն ստացավ Մամեստիան,

¹¹ Հովհաննես Սկիլիցես, *էջ 131*:

¹² Հր. Բարթիկյան, *էջ 146*:

¹³ А.Каждан, с. 107.

¹⁴ А.Каждан, с. 108, Հր. Բարթիկյան, *էջ 146 - 147*:

¹⁵ А.Каждан, с. 108.

¹⁶ *Նույն տեղում, էջ 108*, Հր. Բարթիկյան, *էջ 147*:

¹⁷ Հր. Բարթիկյան, *էջ 146*:

Աղանան, Պապեռոնը և Լամբրոնը¹⁸: Ապլղարիբի մի դուստրն ամուսնացած էր Գագիկ II-ի որդու՝ Դավթի հետ, մյուսը՝ Օշին Գանձակեցի իշխանի հետ, որը Կիլիկիա էր գաղթել 1073թ. և ամուսնությունից հետո աներոջից ստացել Լամբրոն անառիկ բերդը հարակից գավառով¹⁹: Ուշագրավ է, որ Ուռհայեցին և Սամվել Անեցին Ապլղարիբին անվանում են «Յայոց իշխան»²⁰, ինչը թերևս վկայում է Կիլիկիայում նրա ունեցած ազդեցության, հայկական անկախության կայացման գործում նրա խաղացած աչքառու դերի մասին:

Բյուզանդական սկզբնաղբյուրներում XIդ. 2-րդ կեսից հիշատակվում են «վասպուրականցի» տոհմանունով հայտնի անձնավորություններ: Բարձրաստիճան վասպուրականցիներից հայտնի է իր արճիճե կնիքով Կոստանդինը, որը հավանաբար, Սենեքերիմի որդին էր և 1021թ. հոր հետ արտագաղթել էր Վասպուրականից²¹: Նշյալ կնիքը թվագրվում է XI դարով²²: Ըստ երևույթին Կոստանդինը 1021թ. հետո կայսեր կամքով պահվել է Կ.Պոլսում և օժտվել բարձր աստիճանով: Կայսրը կամեցել է այդ կերպ ապահովել Արծրունիների օրինապահությունը: Ուշագրավ է, որ Մատթեոս Ուռհայեցին նշում է, որ Վասիլ II-ը իր եղբորը՝ Կոստանդինին թագադրելիս նրան հանձնարարեց «հայրաբար սիրով» հոգալ Յայոց աշխարհի մասին, նրան հանձնեց Սենեքերիմի որդիներին՝ Դավթին, Ատոմին, Ապուսահլին և Կոստանդինին...»²³: Նորընծա կայսրը կատարել է եղբոր պատվիրանը՝ Արծրունի եղբայրներից կրտսերին պահելով մայրաքաղաքում: Ուշագրավ է նաև այն փաստը, որ հայ մատենագիրները ոչ մի անգամ Կոստանդինին չեն հիշում Սեբաստիայում կամ հայկական սեղմ միջավայր

¹⁸ Վարդան, 4, էջ 106: Ուռհայեցին (էջ 219) այս Ապլղարիբին համարում է Խաչիկի թոռ, Յասանի որդի: Տվյալ դեպքում ստույգ է Վարդանի վկայությունը:

¹⁹ Г.Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 70.

²⁰ Մատթեոս Ուռհայեցի, էջ 219, Սամուել Անեցի, էջ 116:

²¹ Վարդան, ԾԱ, էջ 92:

²² А.Каждан, с. 106 - 107.

²³ Մատթեոս Ուռհայեցի, էջ 55:

ունեցող որևէ այլ վայրում, այն դեպքում, երբ նրա եղբայրները քանիցս հիշատակվում են Սեբաստիայում:

1151թ. Կիլիկիայի հայկական իշխանության դեմ նետված բյուզանդական բանակի կազմում կային նաև հայ իշխաններ, որոնցից մեկը կրում էր Դերին անունը²⁴, որը հավանաբար նույնական է Արծրունիների տոհմում ավանդաբար ընդունված Դերենիկ անձնանվան հետ: Նկատենք, որ կարծեցյալ Շապուհը Դերենիկ անվամբ Արծրունի իշխաններին սովորաբար հիշում է Դերեն ձևով²⁵:

²⁴ А.Каждан, с. 132.

²⁵ Պատմութիւն Անանուն զրուցագրի, էջ 113, 115, 133, 155-171 և այլն:

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայկական և վրացական աղբյուրներում XII դարից հիշվում են Մահկանաբերդի իշխանները, որոնցից Սաղուն II-ին (վախճանվել է 1282թ.) Արծրունի տոհմանունով են նշում Գրիգոր Ակներցին և Մխիթար Այրիվանեցին¹, նկատի ունենալով անշուշտ, նրա ծագումը: Արծրունիների այս ճյուղի ներկայացուցիչները հավանաբար Գուգարք են գաղթել 1071թ. հետո, երբ սելջուկ-թյուրքերը պարտության մատնեցին Բյուզանդիային: Վրաց թագավորները հաշվի առան նրանց ծագումը, ելնելով նաև այն իրողությունից, որ Սենեքերիմ Արծրունու դուստրը ժամանակին ամուսնացած էր եղել վրաց թագավորի հետ: Գուգարք գաղթած Արծրունիները հաստատվեցին Աղստև գետի հովտում Մահկանաբերդ ամրոցում և հարակից գավառում (հետագայում նրանք հողատիրույթներ ունեցան նաև Կարին գավառում, անգամ Արագածոտնում, Շիրակում, որոշ ժամանակ նաև Սասունում, Կարսի շրջանում և այլուր)²: Նրանցից հիշվող առաջին իշխանը Վահրամն էր, որն հավանաբար XII դ. սկզբին արդեն տիրում էր Մահկանաբերդին³: Քաղաքական տարամերժ ճակատագիր ունեցավ նրա որդի Վասակը, որը 1150-ական թթ. սկզբներից վրաց թագավոր Դեմետրե I-ի գահակալության տարիներին Թիֆլիսի քաղաքագլուխն էր և բարեհաճ վերաբերմունք ցուցաբերեց

¹ Գրիգոր վարդապետ Ակներցի, *Պատմութիւն Թաթարաց, երուսաղեմ, 1974, էջ 42, 48*, Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն Հայոց, էջ 68*:

² Գ.Մարգարյան, *Մահկանաբերդցիների (Սաղունյանների) իշխանական տունը ժր-ժԴ դարերում («Հայկազեան հայագիտական հանդես», Բեյրութ, 1998, էջ 17)*:

³ Նույն տեղում, էջ 19:

Կարնո Սալդուխ ամիրայի նկատմամբ, որին գերել էին վրացիները: Հայաստանի ամիրայական տների հետ Վասակի մերձեցումը չհանդուրժվեց վրաց արքունիքում հատկապես այն պահին, երբ վրաց զորքերը Օլթիում հաղթական մարտեր էին մղում (1160թ. հոկտեմբերին) Շահի-Արմենների դեմ⁴: Հավանաբար, այդ թվականից հետո էր, որ Վասակն իր եղբայրների հետ փախավ Սալդուխ ամիրայի մոտ՝ Կարին⁵ (ենթադրվում է, որ այդ մարտերի ժամանակ Վասակը զորակցել է Շահի-Արմեններին, թեև այդ մասին ուղղակի վկայություններ չկան)⁶: Վասակի որդի Ամիր-Քրդի հետ վրաց Գեորգի III թագավորի հարաբերությունները լավ էին: Վերջինիս Ամիր-Քուրդը պետք էր կենտրոնախույս ուժերի դեմ մղած պայքարում: Ուստի նա կարգվեց Թիֆլիսի քաղաքագլուխ, ինչին հավանաբար նպաստեց Սարգիս Երկայնաբազուկը՝ Ջաքարեի և Իվանեի հայրը, որն ամուսնացած էր Ամիր-Քրդի քրոջ՝ Սահակդուխտի հետ⁷: Փաստորեն Թիֆլիսի քաղաքապետի և նրա հետ կապված արքունի գանձարանապետի պաշտոնը դարձավ Արծրունիների մենաշնորհը⁸: Ամիր-Քուրդը նպաստում էր Հայաստանի եկեղեցիների նորոգման աշխատանքներին, ապահովում նրանց ապահարկությունը (իրենց տոհմական դամբանատեղի Հաղպատի, Սանահնի և այլ վանքերի):

Ամիր-Քրդի որդիներից Սադուն I-ը ժառանգեց հոր հողատիրույթները, նաև իշխանությունը: Վերջինիս հոգևոր - մշակութային կենտրոն Մակարավանքի (Իջևանի շրջան) գլխավոր եկեղեցու հարավային որմի մոտ ընկած խաչքարի վրա թողած արձանագրության մեջ նշվում է, որ եկեղեցին կառուցվել է Հայոց ՈԾԴ (654/1205) թվին, Թամար թագուհու և

⁴ Սատրեոս Ուռհայեցի, *էջ 425*:

⁵ Կիրակոս Գանձակեցի, *էջ 208*:

⁶ Հ.Մարգարյան, *Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ժԲ դարի պատմության մի քանի հարցեր*, Երևան, 1980, *էջ 146*:

⁷ Կիրակոս Գանձակեցի, *էջ 210*, *Դիվան հայ վիճազրության, I, կազմեց Հ.Օրբելի*, Երևան, 1966, *էջ 57*:

⁸ С.Еремян, *Юрий Боголюбский в армянских и грузинских источниках («Երևանի պետիամալսարանի գիտական աշխատություններ», XXIII, Երևան, 1946, էջ 399)*:

«Մեծ և հզար իշխանին Կայենոյ Սաղունին» օրոք⁹: Եղբոր՝ Դավթի և քրոջ՝ Արզու խաթունի հետ (ամուսնացած էր Արցախի Յաթերք գավառի իշխան Վախթանգ II-ի հետ) մասնակցել է Նոր-Գետիկ վանքի շինությանը¹⁰: Սաղունի թոռ Սաղուն II-ը, վրաց ժամանակագրի հավաստմամբ, «իմաստուն ու խելոք մարդ էր, բարեխոհ, բարետես, ուժով հույժ զորեղ, նշանավոր, ընտիր ըմբիշ, վարպետ նետածիգ»։ Նա մինչև 1259թ. Ավագ Ջաքարյանի դուստր Խոշաքի խնամակալն էր¹¹ և հիշվում է «աթաբակ» տիտղոսով («տէրանց մերոյ Խոշաքին և աթաբակ Սաղունին», նշվում է Գեղարքունիքի Նորադուզ գյուղի Ս.Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ)¹²: Մերձավոր կապեր ուներ մոնղոլական իլխան Յուլափուի հետ, որի զորքի կազմում 1259թ. մասնակցեց Յալեպի գրավմանը¹³ և կարգվեց Սասունի կառավարիչ։ Այս առթիվ Կիրակոս Գանձակեցին նշում է, որ «ամրագոյն երկիրն Սասնու եկին ի հնագանդութիւն ծառայութեան թաթարին, ապաւինեալք յիշխանն Սաղուն՝ յորդի Շերբարոքին, ի թոռն Սաղունին, քրիստոնեայ հաւատով և մեծ պատուով առ Յուլաւուն. զի այր անձնեայ և քաջամարտիկ էր, մինչ զի ընդ առաջին արտոյանիցն կարգեալ էր զնա Յուլաւուն»¹⁴:

Յուլափուի հաջորդ Աբաղան (1265 – 1282) Սաղուն II-ին կարգեց վրաց թագավոր Ուլու Դավթի կառավարչակից¹⁵: Նա վրաց թագավորության աթաբեկն էր Դեմետրե II-ի (1271 – 1289) օրոք, ստացավ ընդարձակ տիրույթներ Վրաստանում (Թելավ, Բելաքան, Դմանիս) և Յայաստանում (Կարս և այլն)¹⁶: Հիշվում

⁹ *Դիվան հայ վիմագրության, VI, կազմեցին Ս.Ավագյան և Զ.Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 159:*

¹⁰ Կիրակոս Գանձակեցի, *էջ 215:*

¹¹ *Վրաց ժամանակագրություն, թարգմ. առաջաբանը և ծանոթագրութ.* Պ.Մուրադյանի, *Երևան, 1971, էջ 110:*

¹² *Դիվան հայ վիմագրության, IV, կազմեց Ս.Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 13:*

¹³ Рашид ад-Дин, *Сборник летописей, Москва-Ленинград, 1946, с. 49-50.*

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, *էջ 386:*

¹⁵ Рашид ад-Дин, *III, с. 67.*

¹⁶ Զ.Մարգարյան, *Սահկանաբերդցիների (Սաղունյանների) իշխանական տունը, էջ 24:*

է նաև «ամիրսպասալար» տիտղոսով¹⁷: Ամուսնացած էր Դեմետրե II-քրոջ՝ Թամարի հետ¹⁸: Սաղունը վախճանվեց 1282թ.:

Սաղուն II-ի որդի Խուբլու Բուղան, թեև հոր մահից հետո Դեմետրե II-ի կողմից կարգվեց ամիրսպասալարի պաշտոնում՝ ժառանգելով հոր կալվածները¹⁹, սակայն հայտնվեց քաղաքական բարդ հանգույցներում: Քանի որ աթաբեկի պաշտոնը չվերապահվեց Խուբլու Բուղային, ուստի նա հրաժարվեց ենթարկվել վրաց արքային և ծառայության մտավ մոնղոլական Ահմեդ իլխանի մոտ, մասնակցեց նրա ախոյան Արղունի դեմ ձեռնարկված արշավանքին²⁰: Թեև 1284թ. հաղթանակ տարավ վերջինս, այդուհանդերձ Խուբլու Բուղան կարողացավ շահել թե Արղունի և թե Դեմետրե II-ի բարեհաճությունը և պահպանեց իր հողատիրույթները, նաև վրաց արքայորդու խնամակալի պաշտոնը: Սակայն շարունակվեց Դեմետրե II-ի և Խուբլու Բուղայի միջև եղած հակամարտությունը, որը 1288թ. հանգեցրեց վերջինիս բանտարգելության:

1289թ. մոնղոլների կողմից գլխատվեց Դեմետրե թագավորը: Ազատվելով կալանքից, Խուբլու Բուղան կարողացավ վերստանալ մոնղոլների մոտ ունեցած վստահությունը, խոստանալով Վրաստանի գահին բազմեցնել նրանց թեկնածուին: Իր հերթին մոնղոլ խանը Խուբլու Բուղային վստահեցրեց, որ նրա իրավասության տակ է դնելու ամբողջ Վրաստանը: Խուբլու Բուղան մեկնեց Աբխազիա՝ Դավիթ արքայի մոտ և նրա որդի Վախթանգին (Արղուն իլխանի համաձայնությամբ) բազմեցրեց վրաց թագավորների գահին: Վախթանգը արժանին հատուցեց իր բարերարին: «Նա Խուբլու Բուղային բարձրացրեց աթաբեկության ու ամիրսպասալարության պատվի, երկու պաշտոնն էլ շնորհեց, նաև՝ թագավորության (արքունիքի) վարումը», – գրում է վրաց ժամանակագիրը²¹: Խուբլու Բուղան շարունակեց հավատարմորեն ծառայել մոնղոլներին: Նրանց հանձնարարությամբ, վրաց իշխանների հետ 1291թ. ամռանը նա զորք

¹⁷ Կ.Ղաֆադարյան, *Հաղթատ, Երևան, 1963, էջ 193*:

¹⁸ *Վրաց ժամանակագրություն, էջ 147*:

¹⁹ *Նույն տեղում, էջ 150*:

²⁰ *Նույն տեղում, էջ 152*:

²¹ *Նույն տեղում, էջ 158-160*:

տեղակայեց Մուղանում, Ոսկե Հորդայի հարձակումներին դիմագրավելու համար²²: Սակայն խուժելու Բուղայի գերագդեցիկ դիրքը ճակատագրական եղավ նրա համար: 1292թ. Վրաստանի գահին բազմեց Դեմետրե II-ի որդին՝ Դավիթը: Թե վերջինս, և թե մոնղոլները չէին հանդուրժում խուժելու Բուղայի ամենագոր դիրքը: Ուստի Դավիթ արքայի և մոնղոլների կամքով 1293թ. օգոստոսի սկզբին նա գլխատվեց²³, առանց ժառանգ թողնելու: Բայց Մահկանաբերդի Արծրունիները հարատևեցին, ի դեմս նրա եղբայրների, և ընդհուպ մինչև XIVդ. 2-րդ կեսը պահպանեցին իրենց տիրույթներն ու ազնվականի պատիվները: Ջաքարյանների և Մահկանաբերդի Արծրունիների միջև եղած խնամիրության պատճառով Մահակդուխտ Արծրունու որդիներ Ջաքարեն և Իվանեն Ամբերդի արաբատառ արձանագրության մեջ իրենց կոչել են Արծրունի²⁴, թերևս կամենալով յուրացնել այդ տոհմի թագավորական իրավունքները: Երկու տոհմերի միջև խնամիրական կապերը նորոգվեցին նաև հետագայում, երբ Սադուն II-ի դուստր Վանենին ամուսնացավ Մխարգրծել Ջաքարյանի հետ և 1270 – 80-ական թթ. ծավալեց եկեղեցանպաստ գործունեություն²⁵:

²² Նույն տեղում, էջ 162:

²³ Рашид ад-Дин, III, с. 134.

²⁴ Ա.Տեր-Ղևոնդյան, *Ջաքարիայի և Իվանեի արաբատառ արձանագրությունն Ամբերդում* («Պատմաբանաս. հանդես», 1971, N 1, էջ 185 – 188):

²⁵ Կ.Ղաֆաղարյան, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 125, նույնի՝ Հաղթատ, էջ 171, Պ.Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները Երևան, 1977, էջ 177:*

ԱՐԺՐՈՒՆԻՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ 1021Թ. ԱՐՏԱԳԱՂԹԻՑ ՀԵՏՈ

1021 թվականից Բյուզանդիային անցած Արծրունյաց տիրույթներից կազմված ռազմավարչական միավորի կատապանության առաջին կառավարիչը Վասիլ Արգիրոսը համարվել է հայ Արծրունի (հունարենում Արգիրոս (Արղիյրոս))¹: Բայց Արգիրոսը բնիկ հունարեն բառ է «արծաթ» իմաստով: Բացի այդ, Արգիրոսները Բյուզանդիայում հին արիստոկրատական տուն էին շատ ավելի վաղ, քան Արծրունիներն էին հայտնվել այնտեղ²: Վասպուրականում 1021թ. հետո մնացին Արծրունիների երկրորդական տոհմաճյուղերի որոշ ներկայացուցիչներ: Ըստ Մատթեոս Ուռհայեցու, այդ իշխաններից էր Թոռնավան գավառի տեր Խաչիկը, որին Ուռհայեցին անվանում է «մեծ իշխանն Չայոց... այր քաջ և յաղթող ի պատերազմի»: Նրա որդիները Չասանը և ճնճղուկը, ինչպես նշվեց վերևում, ծառայում էին Միքայել կայսեր մոտ: Խաչիկն ու իր որդին՝ Իշխանը սպանվում են Պարսկահայքից Թոռնավան ներխուժած հրոսակների դեմ մղած անհավասար մարտում: Փոքր-ինչ հետո Վասպուրական վերադարձած Չասանն ու ճնճղուկը մի քուրդ գյուղապետի միջոցով տեղեկանում են նույն հրոսախմբի կողմից Վասպուրական կատարելիք ներխուժման մասին, հաջողությամբ մարտնչում են նրա դեմ, սրի քաշելով չորս հազար հոգու³:

Թովմա Արծրունու և Անանունի երկերին կցված հավելյալ գլխում եղած տվյալներից երևում է, որ 1021թ. հետո Արծրունիների որոշ շառավիղներ, հանձինս Խեղենեկ

¹ Տես «Բազմավեպ», 1906, էջ 367:

² Տես R.Guilland, *Contribution a la prosopographie de l'empire Byzantin. Les patrices sous les regnes de Basile 1-er (877 - 886) et de Leon I' (886 - 912)*. "Byzantinische Zeitschrift", 63, 1970, p. 304 - 305.

³ Մատթեոս Ուռհայեցի, էջ 90 - 92:

Արծրունու և նրա հետնորդների (Խեղենեկյանների), պահպանել են իրենց իշխանությունը Աղթամար կղզում և հանդիպակաց ափի հայկական գյուղերում: Խեղենեկը հիշվում է որպես «մեծ իշխան», «ի թագաւորազն ցեղիցն Արծրունեաց», նրա որդի Թոռնիկ I իշխանը՝ «այր հզօր և պատերազմօղ և քաջ ի գործ արութեան»⁴: Վերջինիս որդի Թադեոսը ժառանգեց հոր իշխանությունը (1050 - 1060-ական թթ.) և արի էր ռազմի դաշտում, թշնամիներին թույլ չէր տալիս ասպատակել իր տիրույթները: Նրա որդի Թոռնիկ II-ի օրոք (XII դ. 2-րդ կես) Արծրունիները հարկատու էին սելջուկ-թուրքերին: Նույն կացությունն էր վերջինիս որդու՝ Աբղլմսեհի իշխանության տարիներին (XII դ. վերջ – XIII դ. -ի սկիզբ): Աբղլմսեհը անանուն մատենագրի հավաստմամբ «իւրով աստուածիմաստ գիտութեամբ առաւելեալ քան զամենայն հարս իւր», որոնք պատերազմում արի էին ու քաջ, «իսկ սա լի իմաստութեամբ և հանճարով»⁵: Աբղլմսեհը կրում էր առաջին կուրապաղատի բյուզանդական պատվաստիճան: Սրա օրոք՝ 1118թ., ինչպես նշվում է մի ձեռագիր հիշատակարանում, թուրքմենական ցեղերը ասպատակեցին Վասպուրականի Տոսպ գավառը և «զբազումս անողորմաբար և առ ի պաշտան մատուցանել կոտորեցին», ողջ մնացածներին ենթարկելով «յանտանելի հարկապահանջութեան և յառի և յաւարի...»⁶:

Աբղլմսեհն իր իշխանությունն ընդլայնելու նպատակով ամուսնացել էր Կոգովիտ և Ծաղկոտն գավառների իշխան Ալուզի թոռ Մարիամի («Արևելքի դուկ» աստիճանը կրող Գրիգորի դստեր) հետ⁷: 1113թ. Աբղլմսեհի որդի Դավիթը պատրվակելով հայոց կաթողիկոս Գրիգոր Պաիլավունու փոքրահասակությունը, իրեն հռչակեց Ամենայն հայոց կաթողիկոս: Բայց 1114թ. Կիլիկիայի Սև Լեռան վանքերից մեկում գումարված եկեղեցաժողովը չճանաչեց Դավթի կաթողիկոսությունը: Վերջինս մերժեց ժողովի որոշումը և Աղթամարի կաթողիկոսությունը հռչակեց առանձին և ինքնուրույն աթոռ:

⁴ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 482:

⁵ Նույն տեղում:

⁶ «Արարատ», 1913, էջ 50:

⁷ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 480:

Արդվանսեհի իշխանությունը 1121-ից ժառանգած մյուս որդին՝ Ստեփաննոս-Ալուզը իշխում էր անառիկ Ամյուկ ամրոցում, ուներ իր այրուծին, «փայլէր ի մէջ տիեզերաց իւրով ազատագունդ հեծելովքն», նրա շուրջն էին հավաքվել «գորդիս ազատաց» զմեծամեծաց և զնախարարաց յամենայն գաւառաց»⁸:

Ստեփաննոս-Ալուզի որդի Խեղենեկ II-ը շարունակեց իշխել Աղթամարում և Ամյուկում, սակայն Վասպուրականը ողողած թյուրքական ցեղերը հանգիստ չէին տալիս նրան: Մոտավորապես 1133թ. Շահի Արմենների ամիրան Խեղենեկ II-ից խլեց Ամյուկը⁹: Թերևս այդ գնով էր, որ Արծրունյաց տիրույթ Աղթամարն ու ափամերձ հայկական գյուղերը մի որոշ ժամանակ կարողացան ազատ շունչ քաշել: Մատենագրողի հավաստմամբ, Խեղենեկ II-ը դարձել էր «փախուցելոց պատսպարան... գերելոց գերեդարձ... հաստատութիւն հաւատոց և պսակ պարծանաց սուրբ եկեղեցւոյ... գողոց և աւազակաց հերքիչ և ամենայն անօրէնութեան հալածիչ»¹⁰: Նրան հաջորդեց որդին՝ Խեղենեկ III-ը, որը արու ժառանգ չուներ: Շիրակի Հռոռոնոսի վանքի արծանագրության մեջ հիշվում են Խեղենեկ III-ը և իր կողակից Մարջանը¹¹ (1140-ական թթ.):

Խեղենեկն իր դստերն ամուսնացրեց Սեֆեդինի հետ, որը հիշվում է իբրև «ազատ և յազատ ծնողաց ծնեալ... քրիստոսադաւան խոստովանութեամբ»: Խեղենեկը իբրև «վարձք և բաժինք», փեսային հանձնեց Աղթամարը¹²: Սեֆեդինի հետնորդներն իրենց համարում էին Գագիկ Արծրունի արքայի տոհմից սերածներ¹³: Նրանցից Ստեփաննոսը 1272թ. բազմեց Աղթամարի կաթողիկոսության գահին, որը մինչև 1580-ական թթ. մնաց նրա տոհմակիցների իրավասության տակ: Վերջիններս ջանում էին հարություն տալ Արծրունյաց փառքին: Նրանցից

⁸ Նույն տեղում, էջ 490:

⁹ Վարդան, ԴԲ, էջ 124:

¹⁰ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 492:

¹¹ Տես Վիմակյան տարեգիր, էջ 88:

¹² Թովմա Արծրունի և Անանուն, էջ 498:

¹³ Տես Նոտարք Հայոց, կազմեց Ղ.Փիրղալեմյան, Կ.Պոլիս, 1888, էջ 208, ժե դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, կազմեց Լ.Խաչիկյան, մասն II, Երևան, 1958, էջ 154, 172, 308:

Ստեփաննոս IV կաթողիկոսը (1465 – 1489թթ.) Կարա կոյունլու Ջհանշահի թույլտվությամբ 1466թ. թագավոր օծեց իր տոհմակից Սմբատին՝ «ըստ նախնեաց իւրոց Գագկայ»¹⁴: Բայց դա ձևական նշանակություն ունեցավ: XVI դ. վերջերից այս գերդաստանը վերացավ պատմաբեմից: Սակայն Արծրունիների շառավիղները Վան-Տոսպում գոյատևեցին մինչև XIXդ. և հայտնի էին Պոչոլյան-Արծրունիներ ազգանվամբ¹⁵: Հավանաբար, նրանց մի մասը համակերպվեց իսլամի պարտադրած իրավահարաբերություններին և քրդացավ, այդ գնով պահպանելով ազնվականի կարգավիճակը: Ուշագրավ փաստ է, որ Թովմա Մեծոփեցին, պատմելով 1387թ. սեպտեմբերին Լանկ-Թամուրի կողմից Վանի բերդի գրավման մասին, նշում է որ վերջինիս տերն էր «ամիրայն եզդին, յազգէ Սենեքարիմանց»¹⁶, իմա՝ Արծրունիների:

Ամյուկում ու Աղթամարում ամփոփված Արծրունիների ժառանգները հարատևեցին մինչև նոր ժամանակները: Նրանց շառավիղներից էր Հովհաննես աղա Արծրունին՝ մեծահարուստ վաճառականը և կալվածատերը, որը բնակարաններ, խանութներ ուներ Վանի քաղաքամիջում: Նա և իր չորս որդիները կրում էին «ամիրա» պատվանունը: Հովհաննես Արծրունին Վանի նահանգապետի խորհրդատուն էր: XIXդ. սկզբին նահանգապետի միջնորդությամբ (մոտ 1808թ.) նա Մահմուդ II սուլթանից ստացավ օսմանյան բարձր պատվանշան, որը ոսկե մի փունջ էր՝ բաղկացած ձիու պոչի կամ բաշի մազերից և զետեղվում էր գլխարկի վրա: Դա պատճառ դարձավ, որպեսզի վանեցի մեծատունները նրան կոչեն Պոչով մականունով: Մեկ այլ կարծիքի համաձայն, Արծրունիները Պոչոլյան են կոչվել պոչավոր ոսկեդրամ ծուլելու պատճառով¹⁷:

Հովհաննես Արծրունու բազմանդամ գերդաստանը նահատակվեց 1811թ.: Չոհվեց նաև ինքը՝ Հովհաննեսը,

¹⁴ Հանդես Ամսօրեայ, 1915, էջ 19;

¹⁵ Լեո, Երկերի ժողովածու, VI, Երևան, 1987, էջ 208 – 209:

¹⁶ Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխ. Լ.Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 37 - 38:

¹⁷ Ե.Տէր-Սկրտչեան, Գանձեր Վասպուրականի, հ. 1-ին, Պոսթոն, 1966, էջ 140 – 141:

արիաբար մերժելով հավատափոխության առաջարկը: Վայրագ ջարդարարների ձեռքով սպանվեցին նաև Ավետ և Հակոբ Արծրունիները (հետագայում Ավետի անունով Արծրունիների շառավիղները կոչվեցին Ավետյաններ): Այս կոտորածից փրկվեցին սոսկ Հովհաննեսի մի որդին՝ կնոջ ու մանկահասակ որդու հետ: Այդ ընտանիքի 40 մանուկներից փրկվեց (դայակի միջոցով) ևս մեկը:

Եղերամահ արված Հովհաննես Արծրունու դստերը կնության էր առել վանեցի մեծահարուստ Գևորգ Երամյանը, որը սպասվող նոր կոտորածից խուսափելու համար 1813թ. Վանից հեռացավ Թիֆլիս, ընդունելով ռուսական հպատակություն: Ռուսական իշխանությունների առջև ապացուցելով իր ընտանիքի Արծրունի ծագումը՝ իգականի (իր կնոջ) ճյուղավորությամբ, 1820թ. նա պաշտոնապես ստացավ ազնվականի և իշխանի պատվատիտղոս, որը փոխանցվելու էր ժառանգաբար: Այդուհետև նա ու իր ժառանգները կոչվեցին Արծրունի տոհմանունով¹⁸:

Թիֆլիսում Գևորգ Արծրունին ծավալեց հասարակաշահ լայնահուն գործունեություն: 1819թ. նա Ամստերդամում գնեց հայկական տպարան, նվիրելով Ներսես Աշտարակեցուն, նպաստեց նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի բացմանը: 1821թ. Քուռ գետի ափին կառուցեց իջևանատուն, կատարեց բարեգործություններ¹⁹: Նրա որդին՝ Երեմիա Արծրունին զինվորական էր, մասնակցեց 1826 – 1828թթ. ռուս-պարսկական և 1828 – 1829թթ. ռուս-թուրքական պատերազմներին: 1836թ. նա նշանակվեց Անդրկովկասի բոլոր մաքսատների կառավարիչ, 1838-ին՝ Կովկասյան բանակի գլխավոր ինտենդանտ: Երեմիայի որդին էր Գրիգոր Արծրունին, ականավոր հրապարակախոսն ու գրական-հասարակական գործիչը, հայկական ազատամտության մտավոր առաջնորդը, որը 1872թ. հունվարի մեկից Թիֆլիսում հրատարակեց «Մշակ» պարբերաթերթը, ցլյանս (մինչև 1892թ.) մնալով նրա գլխավոր խմբագիրը:

¹⁸ Նույն տեղում, էջ 141, Լեո, Երկերի ժողովածու, VI, Երևան, 1987, էջ 214:

¹⁹ Լեո, Երկերի ժողովածու, VI, էջ 216 - 223:

Գրիգոր Արծրունու եղբայր Անդրեաս Արծրունին (1847 – 1898) տաղանդավոր երկրաբան-քիմիկոս էր, Պետերբուրգի, Թուրինի թագավորական և Բավարիայի գիտությունների ակադեմիաների թղթակից-անդամ: Նրա մահվամբ սպառվեց Արծրունիների այդ տոհմաճյուղը:

Պոչոլյան-Արծրունիների ժառանգները հարատևեցին ավելի երկար ժամանակներ: 1811թ. կոտորածից փրկվածի (Պոչոլյան մանկան) թոռ Հովսեփ Պոչոլյանի գերդաստանը Ավետյան ազգանվամբ այժմ բնակվում է Թեհրանում: Հովսեփի քույրը կնության տրվեց բոստոնցի Մ. Տեր-Սահակյանին, որի ժառանգներն այժմ բնակվում են Բոստոնում²⁰:

Արծրունիները դեռևս XIX. սկզբին հաստատվեցին Դարույնքում (հետագայի Բայազետում): Արծրունիներն իրենց ազգաշահ գործունեությամբ այնտեղ աչքի ընկան նաև հետագայում, հատկապես XXդ. սկզբներին: 1810-ական թթ. Բայազետում հայտնի էր մեծահարուստ Հակոբ Արծրունին, որը նաև հայոց կաթողիկոսի հանձնակատարն էր²¹: 1828 – 1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բայազետ քաղաքի համար մղված մարտերում աչքի ընկան Սկրտիչ և Բարսեղ Արծրունիները²², որոնց առաջնորդությամբ հինբայազետցիները 1829թ. գաղթեցին Սևանի ավազանի Գավառ ավան, այն վերակոչելով Նոր Բայազետ (այժմ Գավառ): Ռուսական կառավարչության կողմից Սկրտիչ Արծրունին 1830թ. նշանակվեց ՆորԲայազետի գավառի ժամանակավոր կառավարիչ, այդ պաշտոնը վարելով մինչև 1833թ.²³: Նրա և եղբայրների՝ Բարսեղի ու Մարգարեի ջանքերով հիմնովին կառուցապատվեց ՆորԲայազետը, վերածվելով քաղաքի²⁴:

²⁰ Տես Լենվել Ասետեան-Արծրունի, *Տոհմագրություն, Թեհրան, 1990, էջ 71 – 75*:

²¹ Սերովբե Կարնեցի, *Ուղեգրություն Բաղդադից Էջմիածին 1812թ., Երևան, 1968, էջ 153, 157*:

²² Ղ.Ալիշան, *Այրարատ, էջ 504*:

²³ Ս.Սմբատեանց, *Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 79*:

²⁴ *Նույն տեղում, էջ 449 և հտ.:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ասորեստանյան և ուրարտական արձանագրությունների մեջ պարունակված տեղեկությունները հավաստում են, որ Արծրունիները Չայկական լեռնաշխարհի բնիկ հայկական տոհմերից մեկն էին՝ Արծրունիունի կենտրոնով: Նրանք աչքառու դեր խաղացին Չայաստանի քաղաքական և հոգևոր-մշակութային գործընթացներում, լայն մասնակցություն ունեցան երկրի անկախության պահպանման գործում: Չայոց Արշակունի թագավորության պետական համակարգում Արծրունիները դասվում էին Մեծ Չայքի ավագ նախարարների շարքը: Նրանք նույնիսկ հակադրվում էին հայ Արշակունի արքաների օրոք գերազդեցիկ դիրքերի հասած և թագավորահոր իրավագործությամբ օժտված մարդպետներին, թանկ վճարելով այդ գորեղ տան հետ ունեցած մրցապայքարում: Արշակունի թագավորների կողմից հովանավորվող մարդպետի և Արծրունիների միջև եղած հակամարտությունը հող նախապատրաստեց 360-ական թթ. Արծրունի որոշ նախարարների պարսկամետ դիրքորոշման համար, որը պայմանավորված էր նաև Արևելքում խմորված ռազմաքաղաքական կացությամբ: Արշակունի հայոց թագավորների անկումից հետո մարդպետները զրկվեցին իրենց ազդեցությունից և հողատիրություններից, որոնք (ինչպես և մարդպետի պատվանունը) զիջեցին Արծրունիներին: Մարզպանության շրջափուլում զորեղացած Արծրունիները դիմադիր դիրքավորում ունեին Սասանյան Պարսկաստանի նկատմամբ: Նրանք գորակից եղան 450 – 451թթ. ժողովրդաազատագրական պատերազմի դաշտ նետված հայ քաջորդիներին, հակադրվելով Չազկերտ II արքայի կրոնահալած քաղաքականությանը: Պատերազմի բոցերը ճարակեցին նաև Արծրունյաց տիրույթները: Արծրունի նախարար Ներշապուհը Ավարայրի դյուցազնամարտում զլխավորեց Վարդան Մամիկոնյանի առաջնորդած հայոց ռազմիկների կենտրոնի զորաթևը: Արծրունիները սատար կանգնեցին հայրենասեր ուժերին նաև

481 – 484 թթ. ազատագրական ապստամբության ժամանակ:

Արաբական խալիֆայության տիրապետության պայմաններում Արծրունիները կարողացան պահպանել իրենց ինքնավար իրավունքները, երկրամասը ձերբագերծելով ուժացման վտանգից: Յետգիտե տե իրենց շուրջը համախմբելով Վասպուրականի և հարակից շրջանների հայ ազատանուն, նրանք ընդլայնեցին իրենց իշխանապետության սահմանները և դարձան Չայաստանի գորեղագույն տներից մեկը, որի հետ հաշվի էին նստում նաև արաբական խալիֆայության արքայակները: Արծրունյաց ազատագործը կարևոր գործոն էր հարավային Չայաստանի ներքին ինքնավարության պահպանման համար: Արծրունիները Բագրատունիների, Մամիկոնյանների, Սյունյաց իշխանների հետ միասին կարողացան Չայաստանը զերծ պահել գորեղ պետությունների ազդեցությունից: Խալիֆայության դեմ հարուցված ազատագրական պայքարում կոփվեց Արծրունիների և Բագրատունիների զինադաշինքը, որը հիմք դարձավ Չայոց թագավորության վերականգնման համար:

Մ. սկզբներին Արծրունյաց իշխանապետության տնտեսական ու քաղաքական աննախադեպ վերելքի պայմաններում Արծրունիները տիրացան նաև հարևան Մոկք նահանգին և հարակից մի քանի գավառների: Միաժամանակ իրենց զգալ տվեցին ավատատիրությանը բնորոշ ներքին տարածայնությունները, որոնք հատկապես սրվեցին Նախճավան քաղաքի շուրջն արծարծված վեճի հետևանքով, երբ Սմբատ I Բագրատունին այդ քաղաքը խլելով Արծրունիներից, հանձնեց Սյունիքի տերերին: Ցավալի այդ միջադեպից օգտվեց Ատրպատականի Յուսուֆ ամիրան, որը Չայաստանի նախարարներին պառակտելու և այդպիսով երկիրը թուլացնելու նպատակադրումով Գագիկ Արծրունուն թագ ընծայելով հանեց Սմբատ I արքայի դեմ: 908թ. հիմնված Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, չնայած Ատրպատականի տերերի դավադիր ձեռնարկումներին, պահպանեց իր ինքնուրույնությունն ու քաղաքական կշիռը, հետագայում նաև զորակից եղավ Բագրատունյաց թագավորությանը:

Այն կարևոր դեր խաղաց հարավային Հայաստանի հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում: Արծրունյաց թագավորության կազմում ընդգրկված գավառները թևակոխեցին տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման բուռն վերելքի դարափուլը: 920-ական թթ. հիմնված Աղթամար մայրաքաղաքում վեր խոյացան հրաշակառույց կոթողներ թագավորական պալատը, ցարդ կանգուն Ս.Խաչ վանքը և այլ շինություններ: X դ. 2-րդ կեսին Արծրունի թագավորների հովանու ներքո փայլատակեց Գրիգոր Նարեկացու հանճարը:

Սակայն XI դ. սկզբներին Արծրունիների թագավորությունը ենթարկվեց Հայկական լեռնաշխարհ մագլցող նոր ու անծանոթ ուրբական հորդաների հարձակումներին: Այդ օրհասական պահին Արծրունիներն ստիպված եղան ապավինել հավատակից Բյուզանդիային, որը, սակայն, օգտվելով հարմարադեպ իրավիճակից, 1021թ. տիրացավ Վասպուրականի Արծրունյաց թագավորության մեջ ընդգրկված լայնատարած շրջաններին, Արծրունիներին շնորհելով Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքը հարակից գավառով: Արծրունիներն աչքի ընկան նաև բյուզանդական ծառայության մեջ, զբաղեցնելով պետական բարձր պաշտոններ:

XII – XIII դդ. Արծրունի տոհմանունն էին կրում Աղստևի հովտում Մահկանաբերդ ամրոցում և շրջակա տարածքներում հաստատված իշխանները, որոնք մեծ դեր խաղացին Վրաստանի և հյուսիսային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում:

Արծրունիների շառավիղները (Խեղենեկյանները) Վասպուրականի անմատույց վայրերում գոյատևեցին նաև 1021թ. արտագաղթից հետո և 1113թ. հիմնեցին Աղթամարի կաթողիկոսությունը: Սակայն XIX դ. սկզբին թուրքական իշխանությունների հարուցած հալածանքներից ու կոտորածից խուսափելով, Արծրունիների վերջին բեկորներն ստիպված հեռացան հայրենի տունուտեղից, ապաստանելով Արևելյան Հայաստանում, Իրանում և այլուր:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

1. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ.Տեր-Սկրտչեան և Ստ.Կանայեանց, Տփղիս, 1909:

Անանիա Մոկացի, Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից («Արարատ», 1897):

Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Փարիզ, 1960:

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:

Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840:

Գրիգոր վարդապետ Ակներցի, Պատմութիւն Թաթարաց, Երուսաղեմ, 1974:

Դիվան հայ վիմագրութեան, I, կազմեց Դ.Օրբելի, Երևան, 1966:

Դիվան հայ վիմագրութեան, IV, կազմեց Ս.Բարխուդարյան, Երևան, 1973:

Դիվան հայ վիմագրութեան, VI, կազմեցին Ս.Ավագյան, Դռ.Ջանփոլադյան, Երևան, 1977:

Դիվան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912:

Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ. Ե.Տեր-Մինասյանի, Երևան, 1957:

Թովմա Արծրունի և Անանուն; Պատմութիւն Տանն Արծրունեաց, աշխ. Վ.Ս.Վարդանյանի, Երևան, 1985:

Թովմա Մեծովեցի, Պատմագրություն, աշխ. Լ.Խաչիկյանի, Երևան, 1999:

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն II, կազմեց Լ.Խաչիկյան, Երևան, 1958:

Իբն ալ-Ասիր, թարգմ., առաջաբան և ծան. Ա.Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

Լաբուրնեա դիւանագիր դպրի Եղեսիոյ թուղթ Աբգարու, Վենետիկ, 1868:

Կանոնագիրք Հայոց աշխ., 4. Հակոբյանի, հ. Ա-Բ, Երևան, 1964, 1971:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ., 4. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

Կոստանդին Ծիրանածին, թարգմ., առաջաբան և ծան. Զր.Բարթիկյանի, Երևան, 1970:

Հայաստանի վրացերեն արձանագրությունները, աշխ. Պ.Մուրադյանի, Երևան, 1977:

Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862:

Հովհաննես Սկիլիցես, Համառոտություն պատմութեանց, թարգմ.,

- առաջաբան և ծան. Յր.Բարթիկյանի, Երևան, 1979:*
- Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմ., առաջաբան և ծան. Ա.Կրկյաշարյանի, Երևան, 1976:*
- Հովսեփյան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951:*
- Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց, հ. Ա. կազմեց Լ.Պողարեան, Երուսաղեմ, 1966:*
- Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց, հ. Բ, կազմեց Լ.Պողարեան, Երուսաղեմ, 1967:*
- Մանր ժամանակագրություններ XIII - XVIII դդ., կազմեց Վ.Հակոբյան, հ. 1 - 11, Երևան, 1951, 1956:*
- Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մ.Էմին, Մոսկուա, 1860:*
- Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ.Առաքելյանի, Երևան, 1983:*
- Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ.Աբեղեանի և Ա.Յարութիւնեանի, Տփղիս, 1913:*
- Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ. Ա.Աբրահամյանի, Երևան, 1941:*
- Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:*
- Պատմութիւն Անանուն զրուցագրի, Կարծեցյալ Շապուհ, աշխ. Մ.Դարբինյանի, Երևան, 1971:*
- Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխ., Կ.Յուզբաշյանի, Երևան, 1963:*
- Պատմութիւն Ղևոնդեայ Սեծի վարդապետի Հայոց, Ա.Պետերբուրգ, 1887:*
- Պատմութիւն Սեբեոսի, աշխ. Գ.Աբգարյանի, Երևան, 1979:*
- Պլուտարքոս, Կենսագրություններ, կազմեց, թարգմ., առաջաբանը և ծան. Ա.Գրքաշարյան, Երևան, 2001:*
- Սամուելի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:*
- Սերովբե Կարնեցի, Ուղեգրություն Բաղդադից Էջմիածին, 1812, Երևան, 1968:*
- Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Փարիզ, 1859:*
- Սովետրք Հայկականք, ԺԲ, Վենետիկ, 1854:*
- Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ա.Պետերբուրգ, 1885:*
- Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910:*
- Սրբոյ հօրն մերոյ Մովսեսի Խորենացւոյ Մատենագրութիւն, Վենետիկ, 1843:*

- Վրաց աղբյուրները Չայաստանի և հայերի մասին, հ. Ա, թարգմ.
 Լ.Սելիքսեթ-Բեկ, Երևան, 1934:
- Վրաց ժամանակագրություն, թարգմ., առաջաբան և ծան.
 Պ.Սուրադյանի, Երևան, 1971:
- Տաշեան Յ., Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին
 Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895:
- Տեր-Ղևոնդյան Ա., Մունաջջիմ Բաշիի 11 – 12-րդ դդ. ամանուն աղբյուրը
 Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին («Բանբեր
 մատենադարանի», № 6, Երևան, 1962):
- Ցուցակ հայերեն ձեռագրաց Չմնառի վանքի մատենադարանին, կազմեց
 Ս.Քեչիշյան, Վիեննա, 1964:
- Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, կազմեց Յ.Թովիճեան, Վենետիկ,
 1962:
- Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պր. 1, կազմեց
 Ե.Լալայեան, Թիֆլիս, 1915:
- Ցուցակ ձեռագրաց Ս.Նշանի վանուց ի Սերաստիա, կազմեց
 Թ.Գուշակեան, Վիեննա, 1961:
- Ցուցակ ձեռագրաց Աշոյ Ս.Առաքելոց-Թարգմանչաց վանքի և
 շրջակայից, Երուսաղեմ, 1967:
- Абу Мухаммад ибн Асам ал Куфи, Книга завоевания, Баку, 1981.
- Дьяконов И., Ассиро-вавилонские источники по истории Урарту
 (“Вестник древней истории”, 1951, № 3).
- Ибн-ал-Асир, Из Тарих-ал-Камиль, пер. П.Жузе, Баку, 1940.
- Из сочинения Якуби История, пер. П. Жузе, Баку, 1927.
- Извлечения из Летописи Яхъи Антиохийского, пер. В.Розен
 (“Записки имп. Академии наук”, т. 44, С.Петербург, 1883).
- Рашид-ад-дин, Сборник летописей, т. 3 (пер. с персидского), Москва-
 Ленинград, 1946.
- Садр ад-Дин ал-Хусайни, Сообщения о сельджукском государстве
 (перевод), Москва, 1980.
- Советы и рассказы Кекавмена, введение, пер. и комментарии
 Г.Литаврина, Москва, 1972.
- al-Baladhuri. The origins of the Islamic state (Kitab futuh al Buldan). Vol.1.
 By P.Hitti. New York, 1916.*
- al-Baladhuri. The origins of the Islamic state (Kitab futuh al Buldan). Vol.11.
 By F.Murgotten, New York, 1924.*
- Broeset M. Collections d'historiens armeniens. T.I(Th. Ardzrouni, Histoire des
 Ardzrouni, trad. par M.Brosset). S.Petersbourg, 1874.*

- Denys de Tell-Mahre. Publ, et trad. J. Chabot. Paris, 1895.*
Genesisii Regum ex recognitione Caroli Lachmani. Bonnae, 1834.
Michel le Syrien. Chronique, t.II. Ed. et trad. en francais par J.Chabot. Paris, 1901.
Michel le Syrien. Chronique, t.III. Ed. et trad. en francais par J.Chabot. Paris, 1905.
Miskawayh. The Concluding Portion of the Experiences of the Nations. Transl. from the arabic by D.Margoliouth, vol. II. (The eclipse of the Abbasid Caliphate, Oxford, 1921).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբեղյան Ս., *Երկեր, հ. Գ, Երևան, 1968;*
 Ադոնց Ն., *Հայաստանի պատմություն, Երևան, 1972:*
 Ադոնց Ն., *Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:*
 Ալիշան Ղ., *Այրարատ: Բնաշխարհի Հայաստանեայց, Վեներտիկ, 1890:*
 Ալիշան Ղ., *Հայապատում, Ա, Վեներտիկ, 1901:*
 Ալիշան Ղ., *Շիրակ, Վեներտիկ, 1881:*
 Ալպոյաճեան Ա., *Պատմութիւն Եվդոկիոյ Հայոց, Գահիրե, 1952:*
 Աճառյան Յր., *Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971:*
 Աճառյան Յր., *Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1948:*
 Անասյան Հ., *Հայկական մատենագիտություն, հատ. Ա-Բ, Երևան, 1959, 1976:*
 Առաքելյան Բ., *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX - XIII դդ., գիրք I, Երևան, 1958:*
 Արմեն Հ., *Մարզպանը և սպարապետը, Լոս Անձելըս, 1952:*
 Աւետեան-Արծրունի Լ., *Տոհմագրութիւն, Թեհրան, 1990:*
